



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Handb. 1882  
Nacht in der Nacht

Ullrich  
870



5  
31

W 12  
XIV



ԱՆՔԸՐ  
870

ԲԱՅՅԻ



# ՈՍԿԻ ԱՔԵՂԱՂ

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

(Առաջադած «Մշակ» լրագրից)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄ

1882



ԻՐ ԲԱԶՄԵՐԱԽՅ ՍՕՐԵՂՐՈՐԸ

ՄԻԽԱՅԷԼ Բ. ՍԱՓԱՐԵԱՆՑԻՆ

ԵՒ ՆՈՐԱ ԱՄՈՒՍՆՈՅՆ

ՆԱՏԱԼԵԱՅ Ն. ՍԱՓԱՐԵԱՆՑԻՆ

ԱՄԵՆԱԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏՈՎ

ՆՈՒՐՈՒՄԷ



ՐԱՏԱՐԱԿԻԶԸ

Дозр. ценз. Тифлист, 14-го Мая 1882 года.

(Перепечатано изъ газеты „Мшакъ“)



870-2011  
h. 863





## ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Բ...գիւղի մէջ ամենի ուշադրութիւնը գրաւել էր մի փոքրիկ տղայ, որ դեռ նոր էր մտել իր տասներկու տարեկան հասակը: Ժամասէր գիւղացիները նրա ձայնովն էին զմայլած, դաշտից անցնելիս, նա էր, որ այնպէս քաղցր երգելով, վաղ-առաւօտեան գառները արածացնելու էր տանում:

Նրա անունը Գալուստ էր, բայց գիւղացիները կրճատելով Կալօ էին կոչում: Մի հաստ ու պինդ տղայ էր Կալօն, որի ամուր կազմուածքը խոստանում էր հարուստ մարմնական զօրութիւն: Կալօի դէմքը նոյնպէս վատ չէր. արեւից այրված և համարեա սևացած երեսի վրա կարելի էր տեսնել մի քանի գեղեցիկ և կանոնաւոր գծեր, որոնց մէջ կրակոտ և վայրենի աչքերը արտայայտում էին խիստ զուարթ բնավորութիւն:

Կալօն որբ էր: Ծնողքը մեռել էին վերջին





խօլերայից, թողնելով միակ զաւակը դառն աղքատութեան մէջ: Նրա հօրեղբայրը, բարեսիրտ Աւետը «հոգու համար» վեր առաւ իր մօտ որբին և սկսեց հայրական խնամք տանել: Աւետը, որին բոլոր գիւղացիները «ապեր» (եղբայր) էին կոչում, վայելում էր առանձին յարգանք իր դրացիներից: Նա հանգարտ և աշխատասէր մարդ էր, և քիչ չէր պատահում, որ խաղաղացնում էր զանազան վէճեր որ ծագում էին իր դրացիների մէջ:

Աւետ ապօր ընտանիքը շատ մեծ չէր: Ինքը, իր կին Նդիսաբէթը և երկու փոքրիկ երեխաներ կազմում էին ամբողջ գերդաստանը, որի գլխին բարձրացած էր, որպէս ընտանիքի մայր, Շուշան տատը, եօթանասուն տարեկան մի պառաւ, որ իր ծերութեան հեղինակութեամբ իշխում էր բոլորի վրա: Պառաւները առհասարակ բարեսիրտ են լինում, և մանաւանդ Շուշան տատը, որ մի առանձին գուլթ ունէր գէպի իր թոռնիկը, Կալօն, որի մէջ գտնում էր մեռած որդու սիրելի պատկերը:

Փոքրիկ Կալօն տարվայ երեք եղանակներում օգնում էր իր հօրեղբօրը նրա տնտեսական գործերի մէջ, իսկ ձմեռը գնում էր տէրաւերի մօտ և ժամագիրք էր կարդում: Կարդալ ասելով, պէտք է հասկանալ, որ նա անգիր սերտել էր այս գրքից մի քանի «փոխեր»,

շարականներ, աղօթքներ, թէև տառերն անգամ չէր ճանաչում:

Կալօի տնային ծառայութիւնները, նայելով, թէ որքան շատ աշխատացնում են գիւղացի երեխաներին, մեծ չէին: Վաղ առաւօտեան նա վեր էր կենում, աղբիւրից սափորով ջուր էր բերում, մարագից թոնիրի համար վառելիք էր բերում, գաւիթը մաքրում էր և Նդիսաբէթին օգնում էր կովերը կթելու: Թէև այս գործերը աղջիկներն են կատարում, բայց Աւետ ապերը զուրկ էր աղջիկ զաւակից և նրա երկու որդիքը գեռ շատ մանրիկներ էին: Նրբ տանը նրա յարմար այլ ես գործ չը կար, նա հագնում էր տրեխները, և մի կտոր ցամաք հաց զրպանը դնելով, ձեռքն էր առնում հովուական ծանր ցուպը, որ իր հասակի կրկին երկարութիւնն ունէր, և գառները քշում էր դաշտը արածացնելու համար: Տանեցիք, հագիւ էր պատահում, որ ծեծէին նրան, որովհետև չափազանց կամակատար տղայ էր Կալօն:

Փոքրիկ հովիւը սիրելի էր և իր ընկերներին, որոնց հետ միանալով, գառները խառնում էին միասին, և տանում էին Արաքսի ափերի մօտ արածացնելու: Այս գետից հեռու չէր նրանց գիւղը: Նա իր ընկերների ուրախութիւնն էր. ինչ խաղեր ասես, չէր սարքում



նա. ինչ հանաքներ ասես, չէր անում նա: Շատ անգամ զուարճացնում էր նրանց իր քաղցրը երգերով, և շատ անգամ ուրախացնում էր նրանց իր եղեգնեայ սրինգի ձայնով, որ բաւական վարպետութեամբ ածում էր: Կալօն իր ընկերների մէջ ստացաւ հերոսական փառք, սկսեալ այն օրից, երբ մի անգամ Սրաքսի ծանծաղուտներում լողանալու միջոցին, խեղդվելուց ազատեց իր ընկերներից մէկին: Այնուհետեւ նա պաշտելի դարձաւ:

— Կալօ, եկ մեր հացիցը կեր, դու մայր չունես... մեր մայրը կարագ է դրել, սեր է դրել, եկ միասին ուտենք, ասում էին երեսաները և նրան հրաւիրում իրանց համեստ սեղանին բաժանորդ լինել, երբ կէսօրին նստոտում էին կանաչ խոտերի վրա ճաշելու:

Բ.

Մեծ պասի վերջին շաբաթվայ օրերից մէկն էր: Այս շաբաթում գիւղացիները իրանց բոլոր լաւ բաները կրում են քաղաքը, որ հարուստները լաւ գատիկ անէին: Աւետ ապերն էլ, աքաղաղը կանչելուն պէս, կէս գիշերին վեր կացաւ, ճրագը վառեց, լուացվեցաւ, երեսը խաչակնքեց և սկսեց իր էշերը համետել: Ամբողջ ընտանիքը դեռ քնած էր, միայն Եղիսաբէթը օգնում էր ամուսնին: Նա դեռ մի օր առաջ պատրաստել էր երկու տիկ իւղ, մի

բեռ նոր պանիր, երկու կթոց ձուաներ և մի քանի հատ հաւեր, որ պէտք էր տանել քաղաքը ծախելու համար:

Մի այսպիսի նշանաւոր խորհուրդը չէր կարող ծածուկ մնալ Կալօի հետաքրքիր ուշադրութիւնից, որ իր հօրեղբօր առաջին ոտնաձայնը լսելով, գլուխը վեր բարձրացրեց վերմակի տակից, և ճրագի պէս վառվող աչքերը լայն բաց անելով ասաց.

— Ինչ էլ պիտի տանես:— Ես էլ կը գամ:

— Ո՛ւր, հարցրուց հօրեղբայրը մի փոքր վրդովված ձայնով:

— Քաղաքը, ասաց Կալօն:

Աւետ ապերը, չը նայելով իրան յատուկ սառնասրտութեանը, այն գիշեր ինչ որ բանի վրա բարկացած էր, և շատ տխուր էր երեւում: Այսպիսի մարդիկ երբեմն իրանց բարկութիւնը թափում են մի բոլորովին անմեղ առարկայի վրա, և այդ առարկան եղաւ ողորմելի Կալօն:

— Զէնդ կտրի, լակոտ, գոռաց նա կատաղի կերպով, — քաղաք գնալդ էր պակաս...

Կալօն լռեց և գլուխը կրկին դրեց բարձի վրա, երեսը թագցրուց վերմակի տակ, և սկսեց խուլ ձայնով լաց լինել: Նրա ձայնը զարթեցրուց պառաւ Շուշանին, որ մի և նոյն անկողնի մէջ իր թոռնիկի հետ միասին էր պառկած:



—Այ տղայ, ինչ կայ, ինչու ես լաց լինում,  
հարցրուց նա:

Կալօն յայտնեց պատճառը:

Նոյն միջոցին խրճիթը ներս մտաւ Աւետ  
ապերը, մնացած վերջին բեռը դուրս տանե-  
լու համար:

—Աւետ, որդի, ինչու ես լացացնում խեղճ  
տղային, հարցրուց պառաւը:—Ուզում է քեզ  
հետ գալ, դու էլ տա՛ր. էլ ինչու ես սիրտը կոտ-  
րում:

—Ախար նրա ինչ քաղաք գնալու ժամա-  
նակն է, պատասխանեց Աւետը մի փոքր մեղ-  
մացած կերպով:

—Հրէն Պետրոսենց Գիւքին էլ է գնում...նա  
ինձանից խօ մեծ չէ...վերմակի տակից լսելի  
եղաւ Կալօի լալաչին ձայնը:

—Տա՛ր քեզ հետ, որդի, կրկնեց պառաւը  
համոզական եղանակով:—Տա՛ր, թող աշխարհ  
տեսնի. խօ աղջիկ չէ, որ միշտ առիթի տակը  
մնայ, տնից դուրս չը գայ. տղայ է, սիրտը  
ուզում է, բան կը սովորի, աչքը կը բացվի:

Պառաւի խօսքերը առանց հետեւանքի չը  
մնացին, մանաւանդ երբ Աւետի կինը, Եղի-  
սաբէթը միւս կողմից սկսեց իր ամուսնին  
համոզել, որ Կալօին իր հետ տանէ, աւելաց-  
նելով, թէ ճանապարհին պէտք կը գայ, է-  
շերը կը քշէ:

—Դէ, վեր կաց գնանք, մի ուշայիւր, վեր-  
ջապէս ասաց Աւետ ապերը:

Զատիկին մօտ օրերում քաղաք գնալը գիւ-  
ղացի երեխաների համար մի մեծ գուարճու-  
թիւն է. այնտեղ նրանց համար գնում են  
արխալուղ, գգակ, տրեխներ, և վերջապէս  
մի բան, որ նրանց ուրախացնում է: Այս ա-  
ռաջին անգամն էր, որ Կալօն քաղաք պիտի  
տեսնէր, և այս պատճառով նրա ուրախու-  
թեանը չափ չը կար, երբ ստացաւ իր հօրեղ-  
բօր համաձայնութիւնը: Նա ծտի պէս դուրս  
թռաւ իր քնաշորերի միջից, մի քանի ըոպէ  
այս կողմ և այն կողմ վազեց, ինքն էլ չիմա-  
նալով թէ ինչ բանի համար, և լետոյ սկսեց  
իր երկայն ցուպը պտռել:

Կալօի համար երկար պատրաստութիւն  
պէտք չէր, նա շատ չուշացաւ, որովհետեւ իր  
սովորութեան համեմատ առանց հանվելու էր  
քնել. հարկաւոր էր միայն տրեխները կապել,  
այնուհետեւ ամեն ինչ վերջացած էր: Րոպէս-  
կան արագութեամբ կատարվեցաւ բոլորը, լե-  
տոյ նա վեր առաւ իր հովուական ցուպը,  
մօտեցաւ պառաւ տատին, և փաթաթվելով  
նրա վզին, հարցրուց.

—Քեզ համար ինչ բերեմ քաղաքից:

Պառաւը ոչինչ չը պատասխանեց, միայն



Համբուրեց նրան, և խորշումած աչքերը լցվեցան արտասուքով:

Աւանակները արդէն բեռնած, պատրաստ էին բակումը. Եղիսաբէթը ճրագը ձեռին կանգնած էր այնտեղ, իսկ Աւետը մտել էր ոչխարների գոմը: Նա դուրս բերեց մի չաղ երկու ամսական գառն, և կապելով բեռան վրա իր մտքումը ասաց, — էդ կը տանենք «աղալի» Համար...

Գեռ բաւական ժամանակ կար մինչև լուսանալը, երբ փոքրիկ քարաւանը ճանապարհ ընկաւ:

Գ.

Ճանապարհին միացան Աւետի Հետ մի քանի ուրիշ գիւղացիներ, որոնք նույնպէս ծախելու բան էին տանում քաղաքը, և Հետգհետէ նրանց խումբը ստուարացաւ:

Եղանակը Հանդարտ էր: Աստղերը խիստ անուշ ժպիտով փայլում էին պարզ երկնքից: Օդի մէջ տիրում էր զարնանային փափուկ թարմութիւն: Մի քանի օր առաջ եկած անձրեւը բոլորովին ցամաքել էր, և աւանակները իրանց ծանր բեռների տակ կարողանում էին առանց խրվելու առաջ գնալ: Կալօն մի քանի իր Հասակակից և իրանից մեծ տղերքի Հետ քշում էին աւանակները, իսկ նրանց ետևից կամաց-կամաց գալիս էին նրանց Հայրե-

րը, որոնք նույն միջոցին զբաղված էին մի այսպիսի խօսակցութեամբ:

— Տեսնենք, ինչպէս կը գնայ ալիւրը, ասաց գիւղացիներից մէկը:

— Ասում են, գլուխը բարձրացրել է (թանգացել է) պատասխանեց միւսը:

— Հիմա էլ լաւ չը ծախվի, ապա երբ պիտի ծախվի, մէջ մտաւ երրորդը, — այս ձմեռ ձիւնի երես չը տեսանք, ամառը վա՛յ մեր Հալին... խմելու ջուր էլ չենք գտնի...

— Բայց այս վերջին անձրեւը բանը շինեց, թէ չէ, արտերը իստակ կը չորանային:

— Մի անձրեւով ի՞նչ կը դառնայ. ուղտը քթալով չես ջրի... Մեր մեղքից երկինքը կապվել է:

— Տէրտէրն էլ խաչ-աւետարան չէ ման ածում, կարելի է Աստուած խղճալ, մէջ մտաւ մի ուրիշ գիւղացի երեսը խաչակնքելով:

— Տէրտէրը անջախ անէծքի տօպրակը թեկ տակը դրած, շուտ շուտ «գործակալի» մօտե է վազում, ու ամեն օր մի նոր Հրաման է բերում, — էս տուէք, էն տուէք... տալով Հոգիներս դուրս եկաւ... չես իմանում որի՞ դարդը քաշես... ամեն կողմից ուզում են... բայց մի կօպէկի խէր չունենք...

Այս խօսքերը վերաւորեցին մի ծերունի գիւղացու ջերմեռանդութիւնը և նա պատասխանեց.





— Դէ էդպէս էք խօսողմ, որ Աստուած քարկանում է, երեսը մեզանից դարձնում է, ոչ ձիւն է տալիս, ոչ անձրև: Տէրտէրը, ինչպէս էլ որ լինի, մեր հոգեւոր հայրն է, նրա աղօթքն է մեզ պահում:

— Իւրը, ասում են, շատ է թանգացել, խօսակցութիւնը ընդհատեց մի ուրիշը: — Ի՞նչ քանով ծախեցիր, Մարկոս:

— Տասը մանէթով:

— Զուէն քանով:

— Հարիւրը մէկ մանէթով:

— Լաւ է:

Այս բոլոր խօսակցութեան ժամանակ Աւետ ապերը լուռ էր, յետոյ նա էլ մէջ մտաւ, ասելով.

— Ի՞նչ էք խելքներդ զօռ տալիս, թէ թանգ ծախէք, թէ էժան ծախէք, — դիւի մէկ է: Ի՞նչ պէտք է տուն տանէք: Մենք որ կանք, քաղաքացիների ճորտերն ենք: Տարին-տասներկու ամիս աշխատում ենք, վարում ենք, ցանում ենք նրանց համար: Մեր ալիւրը, մեր իւրը, մեր պանիրը առնում են, ուտում են, փողն էլ իրանց ջիբն են դնում: Հին պարտքը մնում է ու մնում: Ամեն անգամ բեռներով քաղաք ենք գնում, ու դարտակ լետ դառնում, և ամօթով մտիկ ենք տալիս մեր կնիկների, մեր երեխերի երեսին, երբ մեզանից հարցնում են, թէ «քաղաքից» ի՞նչ բերեցիր մեզ համար:

Այս խօսքերը ամենի վրա տխուր ազդեցութիւն գործեցին, և կայծակնահարի նման բոլորը լռեցին: Ոչինչ բան այնքան դառն կերպով չէ խոցում գիւղացու սիրտը, որպէս այն տխուր լիշողութիւնը, երբ նա միտն է բերում, թէ պարտքեր ունի: Այստեղից հասկանալի էր Աւետ ապօր մի քանի ժամ առաջ ունեցած վրդովմունքի պատճառը, երբ նա իր աւանակները դեռ նոր էր բեռնում քաղաքը տանելու համար, երբ նա մտածում էր, թէ այն բեռները, — իր քրտինքի և աշխատութեան արդիւնքը, — իրան չեն պատկանում...

Բայց Կալօի ուրախ խումբը, որ առաջ ընկած քշում էին աւանակների քարաւանը, զբաղված էր բոլորովին այլ խօսակցութեամբ: Նրանք ազատ էին իրանց ծնողների հոգսերից, որովհետեւ դեռ ոչ ոքի պարտամուրհակ տուած չուէին:

— Սաքի, հարցրուց Կալօն, դու քաղաքը տեսել ես, այնտեղի գառները սրտեղ են արածացնում:

Սաքին, որ հասակով իր ընկերներից մեծ էր, որ քանի տարի մնացել էր քաղաքում, պատասխանեց.

— Քաղաքացիները ոչխար չունեն, գառներ չեն պահում:

— Բա, նրանց տղերքը ի՞նչ են շինում, որ



գառներ չեն արածացնում, կրկին հարցրուց  
Կալօն:

— Կարդում են:

— Նրանց տէրտէրը ինչով է ծեծում, երբ  
դասը չեն սովորում:

— Նրանք տէրտէրից դաս չեն առնում, ըշ-  
կօլումն են կարդում:

— Ըշկօլը ինչ է:

Սաքին չը գիտէր ինչ պատասխանել և հա-  
րեանցօրէն ասաց.

— Ըշկօլը ըշկօլ է... չէն իմանում:

Մի ուրիշ տղայ հարցրուց.

— Քաղաքի տղերքը, ով գիտէ, ինչ լաւ տը-  
րեխներ կուենան:

— Նրանք տրեխներ չեն հագնում, սապօկ-  
ներ են հագնում, պատասխանեց Սաքին:

— Սապօկը ինչ է:

— Այն էլ ռսի տրեխ է:

— Այնտեղ մօշ կա՞յ, զկեռ կա՞յ, հարցրուց  
ուրիշը:

— Չը կայ, ծմակը հեռու է քաղաքից:

— Բա՛, քաղաքի տղերքը ինչ են ուտում:

Սաքին չը գիտէր ինչով գոհացնել իր ըն-  
կերների հետաքրքրութիւնը, որ գառնում էին  
նրան զանազան հարցերով: Նա կարճ կերպով  
նկարագրեց քաղաքի կեանքը, որքան իրան  
հասկանալի էր, ասաց, թէ այնտեղ մեծ տներ

կան, բազար կայ, թէ եզան ու գոմէշի տեղ  
ձի են լծում, սալերը (կառքերը) բանեցնում  
են միայն նստելու համար, և աւելացրուց,  
թէ քաղաքացի տղերքը գիւղացի տղային ծաղ-  
րում են, և պատահած ժամանակ, ծեծում են:

Վերջին խօսքը զրգուեց Կալօի բարկութիւնը  
և նա իր երկայն ցուպը բարձրացնելով սպառ-  
նացաւ:

— Տեսնում ես մըհակս, էնպէս կը չափեմ  
նրանց բարակ մէջքից, որ «վայ, նանի» կը  
կանչեն:

Դ.

Ե... քաղաքը գտանվում էր այն գետի ա-  
փի մօտ, որ իր սկիզբը առնում է Գեղամայ  
լճից: Նա այն քաղաքներից մէկն էր, որ իս-  
պառ չէր թօթափել իրանից պարսկական փո-  
շին, և ուր հայն էլ թուրք է, իսկ թուրքն ա-  
ւելի թուրք է, և որտեղ կնիկները իրանց ծա-  
մերը ներկում են հինալով, իսկ տղամարդիկը  
նեղ պանտալօնի հետ քօշեր են հագնում:

Երկրորդ աւուր երեկոյեան պահն էր, երբ  
Աւետ ապերը գիւղից բերած մթերքը ծախե-  
լուց լետոյ, եկել, կանգնել էր մի հարուստ  
կրպակի առջև, և զլուխը ծռած, իր երկայն  
մահակը կուրծքին նեցուկ տուած, անհամար-  
ձակ կերպով նայում էր զէպի խանութը, չիշ-  
խելով այնտեղ մտնել: Նա նոյն ժամում նը-



մանում էր մի մարդու, որ սպասում է իր դատապարտութեան վճռին:

Երկար սպասում էր նա, մինչև իր վրա ուշադրութիւն դարձնէին և ներս կանչէին: Նրա մօտ, նոյնպէս անմեռնչ և հանդարտ կերպով, կանգնել էր աղայի համար բերած զատկացու գառը, կարծես, նա էլ տխուր էր, կարծես, նա էլ մոռանալով իր սովորական կայտառութիւնը, շատ չէր զանազանվում իր տէրից, որ նոյն միջոցում գտանվում էր հոգեկան դառն տրամադրութեան մէջ: Գառան մօտ նստած էր փոքրիկ Կալօն և բռնել էր նրա ոտից, որ չը փախչէ: Նա միայն ուրախ էր, նա միայն անհոգ էր, և հետաքրքիր աչքերով նայում էր իր շուրջը, ուր ամեն մի առարկայ նրան զարմացք և հիացում էր պատճառում:

— Ապեր, աղան պստիկ տղայ ունի՞, հարցրուց նա:

— Չունի, պատասխանեց Աւետը անուշադիր կերպով:

— Բա՛, էգ գառան հետ ո՞վ պիտի խաղայ:

Աւետը ոչինչ չը պատասխանեց:

Նոյն միջոցին մի ձայն զարկեց գիւղացու ականջներին.

— Հը՛մ, Աւետ ապեր, եկե՛լ ես:

Այս ձայնը արթնացրուց նրան, նա լետ

նայեցաւ և տեսաւ իր մօտ մի պատանի, որը հարուստ կրպակի գործակատարներից մէկն էր: Գիւղացին լետ-լետ քաշկեցաւ և խոնարհ կերպով գլուխ տուեց:

— Երեւի, աղային տեսնելու ես եկել, հարցրուց պատանին:

— Առանց տեսնելու ո՞նց կարամ գնալ, պատասխանեց Աւետը:

— Դրանից, դրանից բերել ես, հարցրուց պատանին, աջ ձեռքի ցուցամատը և բլթամատը միմեանց հետ շօշափելով:

Աւետը հասկացաւ, որ փողի մասին էր հարցը և դրական կերպով շարժեց գլուխը:

Պատանին մտաւ կրպակը և մի քանի ընկէից լետոյ Աւետին ներս կանչեցին մուտքի առջևը: — Երկու զոհեր միասին սպասում էին մի ճակատագրական վախճանի....

Աննկարագրելի ահ ու դողով Աւետը ներս մտաւ և հեռուից խորին կերպով գլուխ տուեց մի կարճահասակ ալեւոր մարդու, որ նստած էր գրասեղանի մօտ և քրքրում էր իր առջևը ածած թղթերի կոյտը:

Նրա առաջին երկրպագութիւնը աննկատելի մնաց, որովհետև աղան զբաղված էր: Յետոյ գիւղացին ծոծրակը քորելով, մի քանի անգամ հազաց, որ ցոյց տալ իր ներկայութիւնը: Աղան գլուխը վեր բարձրացրուց և



տեսաւ նրան: Աւետը կրկնեց իր երկրպագութիւնը:

Աղան քաղաքավարի էր, և մանաւանդ դէպի այն մարդիկը, որոնց հետ հաշիւներ ունէր: Հաշուի ժամանակ նրա մարդահաճութիւնը հասնում էր մինչև ցած կեղծաւորութեան: Տեսնելով գիւղացուն, նա իր կոշտ դէմքի վրա ձևացրուց մի անսովոր ժպիտ և հարցրուց.

— Բարով, Աւետ ապեր, ո՞նց ես, լաւ ես, աղերքդ, տանեցիքդ լաւ են:

— Աղօթարար ենք, աղայ, պատասխանեց գիւղացին. — Թող Տէր Աստուած մեր կեանքիցը կտրէ, ձերի վրա դնէ:

— Անասուններդ, ցանքերդ լաւ են:

— Անասունները, փառք Աստուծոյ, վատ չեն, բայց ցանքերը, Տէրը ինքը մի ողորմութիւն անէ, ցամաքել, մնացել են: Մեր մեղքից ջուրը պակաս է այս տարի. անձրև էլ չէ գալիս. գնացին տէրտէրի մօտ, նա գիրը բացեց, ասաց, երկինքը կապել են...

— Աղան մտածեց գիւղացու սնահաւատութիւնից օգուտ քաղել:

— Ապա որ ես ձեզ ասում եմ, թէ ինչ պարտք որ անում էք, իր ժամանակին բերեցէք, բայց ձեր ականջը չէ մտնում: Տեսնում ես Աստուած էդպէս կը բարկանայ: Ասել են՝ «ան և տո՛ւր, չեն ասել՝ ան և կո՛ւլ»: — Զեր

վրա չէ խօսքս, Աւետ ապեր, դու լաւ մարդ ես, քո հանգուցեալ հայրն էլ լաւ մարդ էր, բայց էն անիրաւ Թաթոսենց Գէվօն, մի տարի է երեսը չեմ տեսել. քսան մանէթս տարաւ, ինքն էլ կորաւ, փողս էլ:

— Սւերես է, աղայ, պատասխանեց գիւղացին ողորմելի ձայնով. — պէտք է եօլայ տանես, խեղճ է, քուլֆաթի (ընտանիքի) տէր է, ինչ անէ, որ չունէ. ունենայ, կը տայ, իր հոգին կազատէ:

— Ես խեղճ չեմ, ես քուլֆաթ չունեմ, պատասխանեց աղան բարկացած ձայնով:

— Աստուած ձեզ տուել է, թող աւելի շատ շատ տայ, բայց նա աղքատ է:

— Զէ, Աւետ ապեր, դու խելօք մարդ ես, բայց այսքանը չես հասկանում, գիւղացու խօսքը կտրեց աղան մեղմութեամբ. — ախար ամեն մարդ, որ տարածը յետ չը բերէ, ես էլ ձեզ նման կը լինիմ:

— Դրուստ ես հրամայում, աղայ, բայց ոնց որ ըլի, պէտք է եօլայ տանես. գեղըցին փող չի ուտի, երբ ունենայ, կը տայ: Մեր տէրը դու ես, վերևում Աստուծոն ենք ճանաչում, ցածումը քեզ... չենք ուտում, չենք խմում, մեր երեխերքի բերնիցը կտրում ենք, ու բերում քեզ տալիս, որ մեր հոգին հաշտական չը մնայ:





Աղան կրկին սկսեց գրասեղանի վրա ածած թղթերի կոյտը քրքրել, և նրա միջից գտնելով Աւետի պարտամուրհակը, տուեց գործակատարներին մէկին, ասելով:

— Գիտեմ, Աւետը փող բերած կը լինի, նրա հաշիւը տես:

Գիւղացին հասկանալով, որ իր խօսակցութիւնը աղայի հետ վերջացած էր, մօտեցաւ գլխաւոր գործակատարին, և հանելով իր ծոցից մի բուռն թղթադրամ առանց համբարելու ածեց նրա առջևը:

Գիւղացու հաշիւը գործակատարին յանձնելը մի տեսակ խորամանկութիւն էր աղայի կողմից, որպէս որսորդը երբեմն իր որսը շան առջևն է ձգում նրան լաւ գզգզելու համար, որ իր բարակը աւելի խամռոտի\*) և աւելի արեան սովորի:

Գործակատարը համբարեց իր առջևը ածած թղթադրամները, նայեց պարտամուրհակին, համրիչի հատիկները այս կողմը դարձրուց, այն կողմ դարձրուց, և ապա ասաց:

— Բերած փողերդ դուրս գալուց յետոյ, կը մնաս յիսուն բուբլ պարտական:

\*) Խամռոտի ժողովրդական բառ է, նշանակում է արեան խմելու կամ մարմին յօշոտելու սովորել:

Գիւղացին սարսափի մէջ ընկաւ:

— Իմ պարտքը առաջ յիսուն բուբլուց աւելի չէր, ասաց նա սրտի նեղութիւնիցը խեղդված ձայնով. — ապա էդ նոր տուած փողերս ուր է գնում:

— Բն տօկոսը չե՞ս հաշվում, կոշտ կերպով պատասխանեց գործակատարը. — քո այժմ բերած փողը հազիւ տօկոսը կը լրացնէ:

Աղան նկատելով գիւղացու և գործակատարի վիճաբանութիւնը, հեռուից ձայն տուեց:

— Աւետ ապեր, քեզանից խօ աւել չեն առնի, որդի, ի՞նչու ես նեղացնում:

— Գրիգոր, դարձաւ նա դէպի գործակատարը, տօկոսից մի բան բաշխիր Աւետին, մեր մարդն է, թող շնորհակալ լինի: Դուքնիցն էլ մի բան տուր, թող տանէ իր երեխերքի համար, զատիկ օր է գալիս, թող ուրախանան:

Հաշիւում աւել վեր առնել, խաբել, և կրքալից մի բան ընծայելով, գիւղացու աչքերը կապել, — աղայի առեւտրական տան հին սովորութիւնն էր: Աւետին ընծայեցին երկու գունաւոր աղլուխ, և մի քանի արշին էփանազին չիթ: Նա ընդունեց ընծաները և օրհնեց աղայի կեանքը:

Գործակատարը զրեց մի նոր պարտամուրհակ, և գիւղացու առջևը դնելով, ասաց, որ մատը թաթախէ մելանի մէջ և կնիքի փոխա-



րէն դնէ թղթի վրա: Աւետը կատարեց պատ-  
ւէրը, որովհետեւ վաղուց սովորածէր այս գոր-  
ծողութեանը:

Կալօն դրսումը վաղուց արդէն ձանձրացել  
էր, մենակ սպասելով, նա շուտ շուտ գլուխը  
ներս էր բերում կրպակի դռնից, երկչոտ կեր-  
պով նայում էր, և իսկոյն յետ քաշվում, որ  
իրան չը տեսնեն: Վերջացնելով իր գործը,  
Աւետը նոր յիշեց իր բերած գառը, և կանչեց  
Կալօին, որ ներս բերէ:

— Զատիկվայ Համար գառն էլ ես բերել,  
շատ ապրիս, ասաց աղան, Հետաքրքիր աչքով  
նայելով Կալօի վրա: — Այդ ո՞վ է, Հարցրուց  
Աւետից:

Զեր ծառայի, մեռած եղբօրս որդին է:

— Տղայ, արջի քօթօթ, մօտ եկ, տեսնեմ,  
կանչեց աղան:

Կալօն ամաչելուց կարմրել էր և քրտինքը  
կաթիլ-կաթիլ նրա ճակատից ցած էր թափ-  
վում: Նրա կեանքում առաջին անգամն էր,  
որ իր վրա ուշադրութիւն էին դարձնում այն-  
պիսի մեծ մարդիկ:

— Քանի՞ տարեկան է, Հարցրուց աղան,  
դառնալով դէպի Աւետը:

— Տասներկուսի մէջ նոր է ոտ դրել, պա-  
տասխանեց նա:

— Տեսնողը կասէ, տասն և հինգ տարեկան

է. ինչ ասել է գիւղացի... անկարգ կերել է,  
անկարգ մեծացել...

Աղայի Հետաքրքրութիւնը փոքրիկ Կալօի  
մասին ունէր իր առանձին պատճառները. վա-  
ղուց նրա կինը միշտ ասում էր, որ մի գիւղացի  
երեսայ գտնէ տանը սպասաւորութիւն անելու  
Համար, պատճառ բերելով, թէ քաղաքացի  
տղերքը շատ սատանայ են լինում, ամեն բա-  
նից գողանում են, բայց անկարելի է լինում  
գողութիւնը բռնել, իսկ գիւղացին միամիտ  
կը լինի և պարզ, նրան կարելի է ամեն ինչ  
հաւատալ: Այս մտքով աղան մտածեց կորզել  
Աւետի ձեռքից նրա եղբօր որդուն:

— Գիտէս, ինչ կայ, Աւետ ապեր, ասաց նա  
իր սովորական մեղմ ձայնով. — քո Հանգու-  
ցեալ եղբայրը շատ լաւ մարդ էր, թող Աս-  
տուած իր Հոգին լուսաւորէ. դուն էլ լաւ մարդ  
ես, բայց նա ուրիշ էր: — Ես ուզում եմ իմ Հո-  
գու Համար նրան մի լաւութիւն անել, իմա-  
նում ե՞ս, լաւութիւն անել... Ես ուզում եմ  
նրա որդին վեր առնել ինձ մօտ պահել, մե-  
ծացնել և «մարդ» շինել... Հասկանում ե՞ս, —  
մարդ, ինձ նման մարդ, ոչ թէ տգէտ գիւղացի...

«Մարդ» բառը աղայի լեզուում բոլորովին  
ուրիշ նշանակութիւն ունէր. մարդ ասելով,  
նա Հասկանում էր Հարուստ վաճառական. ո-



ըովհետեւ, նրա կարծիքով, ով որ փող չուներ, նա մարդ չէր:

Լսելով աղայի խօսքերը, Աւետը մի քանի ըրպէ մտատանջութեան մէջ մնաց, չը գիտէր, թէ ինչ պէտք է պատասխանել: Վերջապէս անորոշ կերպով ասաց.

— Ինչ ասեմ, աղայ, դու ես իմանում. ինչ որ քո ոտը գիտէ, այն մեր գլուխը չը գիտէ:

— Օրհնեալ լինիս, որդի, լաւ հասկացար, խօսեց նա ծանր կերպով: — Դու խելացի մարդ ես, դու չես թողնի որ քո եղբօր որդին անբախտ մնայ: Մի բան էլ կայ, էն էլ պիտի գիտենաս, երբ որ քո եղբօր որդին մեզ մօտ կը մնայ, դու աւելի կը շահվիս մեզանից. կը գաս, կը գնաս, կուտես, կը խմես, — մեր դուռը քո առջևը միշտ բաց կը լինի:

Կալօն համարեա չէր լսում, թէ որպիսի վճիռ է կատարվում իր վիճակի փոփոխութեան վերաբերութեամբ. նրա ուշադրութիւնը գրաւել էին խանութում գտնված առարկաները: Նա իր աչքը չէր հեռացնում կարգօնից շինած փոքրիկ ձիուց, որ կանգնեցրած էր նեղ տախտակի վրա:

— Ինչ լաւ պատիկ ձի է, ասաց նա իր մօտ կանգնած խանութի փոքրիկ աշակերտին: — Ի՞նչ է ուտում:

Փոքրիկ աշակերտը ժպտելով գիւղացու միա-

մտութեան վրա, նկատեց, որ սուս կենայ, ամօթ է:

— Հիմայ հասկացար, շարունակեց աղան, — դու կը թողնես այս տղային մեզ մօտ, կը հագցնեմ, կը պահեմ, ինչպէս իմ որդիս. երբ մեծացաւ, խելքը բանի հասաւ, ամսական էլ կը տամ:

Աւետը մի կողմից ուրախ էր, որ իր եղբօր որդին կը բաղդաւորվի, և աղայի ասածին պէս՝ «մարդ» կը դառնայ, բայց միւս կողմից, մտածում էր, թէ ինքը կը զրկվի մի լաւ գործիքից, որովհետեւ Կալօն շատ բանում օգնում էր նրան: Բայց վերջին մտածութիւնը, որքան և գործնական լինէր, այսու ամենայնիւ, նա արտայայտել չէր կարող, քանի որ ինքը պարտական էր աղային. «պարտականի երեսը սև կը լինի, իսկ լեզուն — կարճ»:

Պայմանների մէջ համաձայնվեցան, և իսկն ասած, ամենևին պայման չը դրվեցաւ, միայն աղան խոստացաւ կերակրել, հագցնել Կալօն, և ժամանակով, երբ նա կարող կը լինի «օրինաւոր գործ» կատարել, ամսական մի բան կը ստանայ: Նւ այսպէս բոլոր յոյսը մնաց ապագայի վրա...

Բայց Կալօն կամքը ոչ ոք չէր հարցնում: Երբ Աւետը յայտնեց նրան իրա խորհուրդը, նա խիստ տհաճութեամբ պատասխանեց:

— Ես այստեղ չեմ մնայ:



Աւետը քաղցրութեամբ նրան համոզել սկըսեց, թէ քաղաքը լաւ էր գիւղից, թէ աղայի տանը նրան լաւ կը պահեն, թէ ինքը շուտ-շուտ կը գայ նրան տեսնելու, և ուրիշ շատ խօսքեր ասաց, բայց համոզել չը կարողացաւ:

— Ես այստեղ չեմ մնայ, կրկնեց երեխան:

— Ես քեզ հետ կը գամ:

Երբ հօրեղբայրը սկսեց աւելի թախանձել, խեղճ տղայի աչքերում երևացին արտասուքի կաթիլներ: Այդ արտասուքն էր, որ սկիզբն դրեց մի արտասուալի ապագայի...

Կալօին համարեա զօռով բաժանեցին իր հօրեղբօրից և տարան աղայի տունը:

Հեռանալով քաղաքից, Աւետ ապերը միշտ այն տխուր մտածութեան մէջն էր գտանվում, թէ ինչ ասէ Շուշան տատին, որպէս հանգստացնէ նրան: Որովհետեւ դիտէր, որ խեղճ պառաւը առանց Կալօին մի օր տեսնելու, ապրել չէր կարող: Ե.

— Տարեցիք երեխիս, կորցրիր... ասաց նա, երբ լսեց Աւետի խօսքերը:

Ե... քաղաքի մի լեռ ընկած փողոցում գրտանվում էր մի յարկանի տուն, որ որոշվում էր բոլոր տներից իր մաշված պատերով, ցած դրնով և նեղ լուսամուտներով, որոնց նմանը կարելի է տեսնել միայն բանտերի մէջ: Երեւի, նա շինված է եղել այն դարերում, երբ գեո-

եւրօպական ճարտարութիւնը մուտք չէր գործել այդ քաղաքում. և այժմ հարեւան տները փոխել էին իրանց կերպարանքը, իսկ նա մնացել էր իր պարսկական հին ձևի մէջ: Նեղ դուռը ներս էր տանում մի բաւական ընդարձակ բակ, որ հովանաւորված էր դարեւոր թթենիներով, որոնց միջուկը բոլորովին փտել և դուրս էր թափվել, իսկ ծառերը իրանց պատուված փորով ստացել էին հրէշաւոր կերպարանք: Նրանց հետ խառն, այստեղ ու այնտեղ, անկանոն կերպով, տնկված էին մի քանի ընկուզենիներ, ծերացած ուռիներ և կիսաչոր ծիրանիներ: Խաղողի որթը, փաթաթվելով այս գօսացած ծառերի բունին, և վեր բարձրանալով մինչև նրանց կատարը, իր սաղարթախիտ ոստերով թազցրել էր նրանց մերկութիւնը, զարդարելով իր գեղեցիկ կանաչութեամբ: Չը նայելով, որ այս ծառատունկը մարդկային բնակութեան մէջ էր գտանվում, բայց կարծես, ագամորդու ձեռքը նրան բնաւ չէր դիպել, և ամեն ինչ բուսել, աճել, մեծացել էր իր վայրենի համարձակութեան մէջ:

Բակի զանազան կողմերում, նույնպէս անկանոն կերպով, գտանվում էին, գետնից հագիւ բարձրացած, մի քանի ծածկոյներ, հնացած, ծխի մէջ սևացած, և ժամանակից քայքայված շինուածքով, որոնք իրանց ողորմելի



հերպարանքով լրացնում էին ընդհանուր պատ-  
կերի տխրութիւնը:—Առհասարակ այդ տուներ  
այն տպաւորութիւնն էր գործում, որպէս թէ,  
նրա մէջ բնակվում էր այն լեգենդային ոգի-  
ներից մէկը: որ ինքնահաճ յամառութեամբ չէ  
ներում ոչինչ նորոգութիւն, որ սիրում է ան-  
շարժ աւերակներ, ուր տիրում է փտութիւնը  
մշտական փլատակների վրա....

Այդ տան մէջ բնակվում էր քաղաքի ամե-  
նահարուստ մարդը, որին բոլոր գաւառում  
«աղայ» էին կոչում:—Այդ տան մէջ բնակվում  
էր Պետրոս Մասիսեանը, որի հետ ընթեր-  
ցողը ծանօթացաւ նախընթաց գլուխներում:

Մասիսեանի անհոգութիւնը իր տան վերանո-  
րոգութեան վերաբերութեամբ չէր առաջ գա-  
լիս ժլատութիւնից. — իսկապէս, նա ժլատ  
մարդ չէր,—այլ մի նախապաշարմունքից, որ  
նրա համար աւանդական էր դարձել: Նրա կար-  
ծիքով ամեն մի տուն ունէր իր խորհրդական  
ներգործութիւնը բնակիչների վիճակի վրա,  
այսինքն, տան գերբնական յատկութիւնիցն  
էր կախված նրանց թէ բախտաւորութիւնը  
և թէ անբախտութիւնը: Կան տներ, որոնց  
մէջ բնակիչների գաւառները մեռնում են,  
տէրերը շատ չեն ասլրում, չքաւորութիւնը  
միշտ կապված է լինում այն տան ճակատա-  
գրի հետ, և եթէ հարուստ մէկը բնակվելու

լինի այնտեղ, շուտով կաղքատանայ: Եւ ընդ-  
հակառակն, կան տներ, որ բարի ազդեցութիւն  
ունեն: Մասիսեանի տունը վերջին տեսակնե-  
րից էր: Այսպիսի տների բախտը կապված է  
լինում մի աներևոյթ էակի կեանքի հետ. ըստ  
մեծի մասին նա լինում է մի օձ, որ գլխին  
գոհարեղէն պսակ ունէր, և հազիւ անգամ  
աչքի էր երևում: Բայց Մասիսեանի տան բախ-  
տը մի «ոսկի աքաղաղ» էր իր ոսկի հաւի  
հետ, որոնք շատ անգամ երևացել էին նրա  
պապերին իրանց ոսկի ձտերով: Այդ մասին  
Մասիսեանի բնտանիքի մէջ մնացել էր առաս-  
պելական աւանդութիւնների մի ամբողջ շարք,  
որ անցել էր սերունդից սերունդ:

Մասիսեանի հօր ժամանակ «ոսկի աքաղա-  
ղը» անյայտացաւ և այս պատճառով նրա  
«բախտը քնեց», նա աղքատացաւ. իսկ իր օրե-  
րում կրկին նա սկսեց գործ դնել իր բարերար  
ազդեցութիւնը: «Ոսկի աքաղաղը» կրկին յայ-  
տնվելով, կրկին նրա «օջախի» բախտը փոխ-  
վեցաւ դէպի բարին. —տունը «վրա եկաւ»  
նրան,—և դրա համար, այս տան ամեն մի  
մաշված աղիւսը, ամեն մի կտոր փտած փայ-  
տը ստացաւ նրա համար նուիրական նշանա-  
կութիւն, որ պէտք էր պահպանել իրանց ան-  
փոփոխ ձևի մէջ, որ պէտք էր անշարժ թող-



նել, չիցէ թէ խանգարվէր տան խորհրդական  
զադտնիքը:

Մասիսեանը այն տեսակ հարուստներից էր,  
որ մեր մէջ սովորաբար կոչվում են պարսկա-  
կան բառովս «նովքիսայ», այսինքն՝ նոր քսա-  
կի տէր, որ նշանակում է՝ աղքատութիւնից  
բարձրացած և փողի տէր դարձած մարդ: Այս  
տեսակ հարուստները զանազանվում են ժա-  
ռանգական դրամատէրներից մի քանի յատկու-  
թիւններով: Դրանք, իբրև «չրտեսներ», ամեն  
արժանաւորութիւն, ամեն կատարելութիւն ար-  
ժաթի մէջն են գտնում: Դրանք երևակայում  
են, թէ խելք, գիտութիւն, ազնւութիւն, պա-  
տիւ, մի խօսքով, ամեն բան ունեն, որովհե-  
տե փող ունեն, և սիրում են այս վերջինը  
իւրաքանչիւր դէպքում երևան հանել, աչքի  
ձգել:

Դրանք մի տեսակ հրէշներ են, որ իրանց  
այլանդակութիւնը ծածկում են ոսկի դիմակով:

Բայց Մասիսեանը լիշեալ տեսակներից չէր:  
Նա իր հարստութեամբ ոչ պարծենում էր և  
ոչ հպարտանում, այլ ընդհակառակն, նա  
խիստ համեստ մարդ էր, և աշխատում էր,  
որքան կարելի էր, սակաւ ցոյց տալ ժողովր-  
դի աչքին այն, որքան ինքն ունէր:—«Ներսս  
ինձ է այրում, դուրս՝ ուրիշին»:—«Գումբազ  
էք տեսնում, բայց մէջը զօրութիւն չը կայ»:—

«Լաւ է մարդու աչքը դուրս գայ, քան թէ  
անուներ:»—Ահա այսպիսի առածներով էր բա-  
ցատրում նա իր վիճակը:

Մասիսեանը այլապէս էր մտածում փողի  
վրա: Ոչ ոք չէ պարծենում, ասում էր նա,  
օրինակ, այսպիսի հարստութիւններով, որ եր-  
կու աչք ունի, երկու ականջ ունի, երկու  
ձեռք ունի և այլն, որովհետեւ բոլորովին բնա-  
կան է համարում: Այնպէս էլ պէտք չէ պար-  
ծենալ փողի վրա, որովհետեւ դա մի կենսա-  
կան անհրաժեշտութիւն է, առանց որին, նրա  
կարծիքով, մարդը ապրել կարող չէր, և ա-  
ռանց որին պակաս էր մարդու համար մի ա-  
մենագլխաւոր գործիչ:

Բայց փող ձեռք բերելու և փող պահպա-  
նելու համար, բացի «ոսկի աքաղաղից», այ-  
սինքն, բացի բախտից, Մասիսեանը ունէր իր  
յատուկ օրէնքները: Նրա բարոյականութեան,  
նրա ամբողջ գործունէութեան նշանաբանը բո-  
վանդակվում էր հետեւեալ հայկական առածի  
մէջ, թէ «Աշխարհս դմակ է, իսկ մար-  
դը—դանակ», պէտք է աշխատի այս իւղա-  
լի պատառից կտրել և ուտել, եթէ ոչ քաղ-  
ցած կը մեռնի: Իսկ միջոցների մէջ նա զա-  
նազանութիւն չէր դնում. ամեն միջոց նրա  
համար սուրբ էր, երբ հասցնում էր նպատա-  
կին: Եւ այդ բոլորը անում էր նա ոչ թէ գի-



տակցաբար, ոչ թէ չարամտութեամբ, այլ բոլորովին բնական էր համարում, և այս պատճառով նրա խիղճը միշտ հանգիստ էր:

Մասիսեանը մսավաճառի որդի էր: Նա մանկութեան հասակում օգնում էր հօրը իր արիւնոտ գործի մէջ: Մսավաճառը և դահիճը շատ չեն զանազանվում իրանց արհեստով: Մէկը մարդիկ է մորթում, միւսը՝ անասուններ: Այստեղից Մասիսեանը ստացաւ իր բնաւորութեան խստութիւնը, որ երբեմն նրա մէջ բարբարոսութեան էր հասնում: Բայց նրա խստասրտութիւնը աւելի տնային էր և ընտանեկան: Նա այն տեսակ մարդիկներից էր, որոնց մասին ասում են «տանը սատանայ, դուրսը քահանայ»: Ընտանեկան շրջանում նա բռնակալ էր, որպէս գազան, իսկ դրսումը—գառն: Նրա մարդահաճութիւնը օտարների հետ հասնում էր մինչև ստորաքարշ ցածութեան: Նա ունէր սողունի բոլոր յատկութիւնները: Օձի պէս դիւրաթեք և առաձգական էր. դէպի ամեն կողմ գալարվում էր, ծովում էր: Եւ նոյնպէս օձի նման իր թոյնը թագցրած ունէր խաթոցի մէջ...

Այսպիսի յատկութիւններով Մասիսեանը նպատակ չունէր ոչ ոքին խաբելու, ոչ ոքի առջև կեղծաւորվելու, և ոչ մտածում էր, թէ մեղանջում է պատուի դէմ,—այլ համոզված

էր, թէ ուրիշ կերպ լինել կարելի չէ, թէ աշխարհը այդ է պահանջում, և իր վարմունքը արդարացնում էր այն սովորական խրատով,— «եթէ մտնելու լինիս մի քաղաք և տեսնես, որ մարդիկը միականի են, դու էլ աչքերիցդ մէկը դուրս հան, որ նրանց նմանես»:— «Սարթ (դիւրաբեկ) ամանը շուտով է կոտրվում», ասում էր նա, պէտք է փափուկ լինել, ճկուն լինել, պէտք է ամեն կողմ ծալվել, որ կարելի լինի պահպանել իր ամբողջութիւնը: Մասիսեանի մէջ մտացածին, կեղծ, ոչինչ չը կար: Ամեն ինչ բղխում էր նրա մէջ հաստատ համոզմունքից: Նա հետևում էր իրերի և կեանքի պահանջների ընթացքին, և եթէ այդ ընթացքը ձգել էր նրան ծուռ ճանապարհի վրա, նա մեղաւոր չէր, այլ մեղաւոր էր այն հոսանքը, որ նրան իր հետ էր տանում:...

Մասիսեանը իր ասպարէզը սկսեց «չօդարութիւնով», այսինքն, թողնելով հօր արհեստը, մսավաճառութիւնը, սկսեց այնուհետև եղջիւրաւոր անասուններ գնել գիւղերից, և բերել քաղաքը, ծախել մսավաճառներին: Դա մի տեսակ գերեվաճառութիւն է: Ով որ ճանաչում է «չօդարին» — անասնավաճառին,—նա մեզ հետ կը համաձայնվի, որ չօդարը բնաւորութեամբ շատ չէ զանազանվում այն մարդիկնե-



րից, որ Ա.Ֆրիկայի ավերի վրա կատարում են ամօթալի առևտուր:

Փոքր ինչ Հարստանալով, Մասիսեանը ձեռք առեց ուրիշ զանազան տեսակ առևտրական գործեր, և ամենի մէջ «ոսկի աքաղաղը» օգնում էր նրան, մինչև նա եղաւ իր գաւառի ամենահարուստ մարդը:

Բայց ստոր ծագումից բարձրացած մարդիկ, որպէս էր Մասիսեանը, միշտ աշխատում են իրանց տոհմային անցեալը մոռանալ տալ և մի կերպով ազնուացնել նրան: Մասիսեանը թէև Հեռու էր ամեն տեսակ փառասիրութիւնից, բայց այդ ախտից ազատ մնալ չը կարողացաւ: Ինչը դրդեց նրան, յայտնի չէ, միայն ցանկացաւ ունենալ փոքր ինչ փայլուն տոհմանուն: Եւ դրա համար մի մեծ դժուարութիւն չը կար, բաւական էր միայն նայել Հայոց տարեգրութիւնների ցանկին, և այնտեղից ընտրել մի պատմական անուն: Նա ընտրեց Մասիս անունը, որովհետև մնացեալ բոլոր անունները բռնված էին:

Իր նախնիքների փառաւոր անունները գողանալ, և Հեռու մնալ նրանց առաքինութիւններից,— դա մեր, այժմեան Հայերիս մէջ, նոր բան չէ: Մենք ունենք այժմ Արշակունիներ, Բագրատունիներ, Մամիկոնեաններ, Ամատունիներ, Պահլավունիներ, Կամսարականներ,—

և ինչ պէտք է մի ըստ միով թուել, — մեր լեռների, դաշտերի, և գետերի անուններն անգամ միացած են սինքլիքոր մարդկանց տոհմանունների հետ, այնպէս որ, եթէ Հայոց պատմագիրները նորից աշխարհ դալու լինէին, շատ պիտի զարմանային, տեսնելով, որ մեր բոլոր սպառված նախարարական սերունդը կրկին յարութիւն էր առել:

## Զ

Մասիսեանի ընտանիքը փոքր էր: Նրա եղած որդիներից այժմ մնացել էին երկու աղջիկներ և մի տղայ միայն: Նրա առջինեկը, մեծ աղջիկը, մեռաւ մի ցաւալի մահով: Նա իրան խեղդեց, պարանոցէն կախ ընկնելով փայտանոցի առաստաղից: Պատճառը մի գաղտնիք է, որը երևան հանելով, մենք չենք ուզում վիրաւորել անբախտ գոհի յիշատակը...

Մեծից փոքրը, երկար ժամանակ սպասելով, բաւական պառաւելով, երբ նկատեց, որ Հայրը իրան մարդու տալու միտք չունի, ծածուկ փախաւ Հօր գործակատարներից մէկի հետ և զիւղումը պսակվեցաւ: Հայրը անիծեց նրան, բայց շուտով մոռացաւ, միայն երբեմն մտաբերում էր այս նախատական բառերով. «այն անզգամը»... Այն օրից աղջիկը բոլորովին զրկված էր Հօր տնից. մի քանի անգամ միայն բախտ ունեցաւ ծածուկ մտնել Հօր տունը մօրը տեսնելու հա-



մար, որին շատ սիրում էր: Որդին, Ստեփանը, աւարտել էր գիմնազիայում, հայրը արգելեց նրան համալսարան մտնել, մտածելով թէ ուսումը վնասակար բան է, կարող է բոլորովին փչացնել նրան: Վերադառնալով հօր տունը, որդին երկար տարիներ անգործ ման էր գալիս գիմնազիստի համազգեստով, և միշտ թախանձելով հօրը, որ իրան կրկին ուղարկէ ուսումը շարունակելու: Հայրը լսել անգամ չէր ուզում, և ստիպում էր, որ խանութը մտնէ և աշտեղ առւտուր սովորէ: Այստեղից ծագեցան հօր և որդու մէջ անհամաձայնութիւններ, որ պատճառ տուեցին անվերջ դժգոհութիւնների:

Մասիսեանի մնացած աղջիկներից երէց քոյրը կոչվում էր Գայիանէ, իսկ կրտսերը՝ Հռիփսիմէ. առաջինը տասն տարեկան էր, վերջինը՝ եօթն: Այդ երկու քոյրերի վրա բնութիւնը կարծես կամեցել էր գործ դնել իր բոլոր յամառութիւնը, մէկին ստեղծելով որպէս գեղեցկութեան օրինակ, իսկ միւսին՝ նրա հակառակ: Բնաւորութեան կողմից նոյնպէս նման չէին: Գայիանէն, տգեղը, չափազանց մեղմիկ և բարեսիրտ էր: Հռիփսիմէն, գեղեցիկը, նոյնքան հպարտ և չար էր: Տգեղի տգեղութիւնը լրացնում էր երկու ոտների ևս կաղուղիւնը, որի պատճառով ման գալու ժամանակ սաստիկ օրորվում էր: Մարմնով արատաւորները միշտ

լեզուանի, հեզնող և երբեմն կծող են լինում: Գայիանէն իր բարեսրտութեան հետ զուրկ չէր այդ յատկութիւններից:

Երկու քոյրերի մայրը կոչվում էր Մարիամ: Շատ անգամ բախտը, ճակատագիրը, նախանամութիւնը, — վերջապէս ինչ որ կուգէք անուանեցէք, — բայց կայ մի բան, որ զարմանալի կատակներ է խաղում ամուսնական զուգաւորութեան մէջ: Տեսնում ես, գեղեցիկ կնոջը տալիս է տգեղ ամուսին, իսկ օրուռն տղամարդին՝ տգեղ կին: Տեսնում ես, խելացի կինը լիմար մարդ է ունենում, իսկ լիմար կինը՝ խելացի մարդ: Տեսնում ես, կարճահասակ տղամարդը բարձրահասակ կին է ունենում, իսկ բարձրահասակ տղամարդը՝ կարճահասակ կին: Կարծես, բախտը ամուսնութեան մէջ ներդաշնակութիւն չէ սիրում: — Այսպէս էլ պատահել էր անբախտ Մարիամի հետ: Որքան նրա ամուսին այրը ժանտ, դաժան և անտանելի էր, — ինքն այնքան հեզ, բարի և համակրական էր: Գայիանէն մօր սիրտն ունէր, իսկ Հռիփսիմէն փոքր ինչ նման էր հօրը: Բայց Ստեփանը ոչ մէկին նման չէր:

Ահա այդ ընտանիքի մէջ ընկաւ Կալօն, այն գիւղական ուրախ և անհոգ թռչնիկը, — այդ ընտանիքի հետ կապվեցաւ նրա ապագան, որ մեր վէպի գլխաւոր նիւթը պէտք է լինի:



Մինչև Կալօի յայտնվիլը, Մասիսեանի ընտանիքը երբէք ոչ մի ծառայ կամ սպասաւոր չէր ունեցել. մանաւանդ այն խայտառակ անցքից յետոյ, որ նրա աղջիկներից մէկը փախաւ գործակատարի հետ, Մասիսեանը միշտ հեռու էր պահում իր տունը օտար տղամարդներից։ Ամեն ինչ, որ պէտք էր տնտեսութեան համար, ինքն էր գնում բազարից. շատ անգամ կարելի էր տեսնել նրան որ իր քնի աղու խի մէջ միս, կանաչի, միրգ, կամ մի ուրիշ բան դրած, տուն էր բերում։ Եւ եթէ պատահում էր, խանութի աշակերտներից մէկի ձեռով ուղարկել, նա պէտք է դրնից տար բերած բանը և յետ դառնար. ներս մտնելու իրաւունք չունէր։ Մասիսեանը խստութեամբ էր պահպանում այն պայմանները, ինչ որ վերաբերում էր ընտանիքի անմատչելութեանը, կամ կանանց սեռի հեռու պահելուն օտար տղամարդի հասարակութիւնից։

Բայց «խանա-բիշակները», այսինքն՝ տնային, փոքրիկ, տղա-սպասաւորները, ընդունված են մինչև անգամ պարսկական հարեմների մէջ։ Մինչև 12—15 տարեկան հասակը այդ անմեղ արարածները ընդունվում են կանանոցների մէջ։ Կալօի տարիները բոլորովին համապատասխանում էին այդ վիճակին։

Առաջին օրը, — մեծ պասի աւագ ուրբաթ

երեկոյեան, — երբ նրան տուն բերեցին, ռամիկ գիւղացու օտարոտի կերպարանքը բարձրացրեց ընդհանուր ծիծաղ։

— Դա է նոր բռնած ծառան, հարցրեց տիկին Մարիամը հեգնական կերպով իր ամուսնից, ոտքից ցլուխ չափելով Կալօին, որ նույն ժամում ցարմացած նայում էր իր շուրջը։

— Ի՞նչպէս է, չէ՞ս հաւանում, պատասխանեց նրա ամուսինն այրը մի առանձին բաւականութեամբ. — տեսնում ես, օխտը մարդու բան կը բանի. ղօջաղ տղայ է. դու մէկ նրա ձեռք ու ոտքին մտիկ տո՛ւր, կասես, նոր խամից դուրս բերած եզը լինի\*):

Վերջին նկատողութիւնը դուր չեկաւ Կալօի ինքնասիրութեանը և նա ասաց.

— Ես եզն չեմ...

Երկու ամուսինները սուր կերպով նայեցան նրա վրա և ոչինչ չը պատասխանեցին։

Կալօին հրամայեցին տանել խոհանոցը և հաց տալ ուտելու։

— Լեզուն երկար է երևում... նկատեց Մասիսեանը. — կոշտ — կոպիտ է մեծացել... չէր վար-

\*) Խա մից դուրս բերել նշանակում է երկրագործական լշարած և ուժից ընկած անասունները ամբողջ ձմեռը ախոռի մէջ պարարտացնելով և կրկին զօրացնելով. գարնանը դուրս բերել բանացնելու համար։



պետի ապտակ չի կերել... Բայց լաւ բանուոր է:

— Բանելը եօլայ կը գնայ, պատասխանեց տիկինը. — Աստուած տայ, գող չը լինի:

— Հիմայ, ի հարկէ, չի լինի, հալայ նոր է ձուկըը դուրս թուել: կամաց-կամաց կը սորվի, յետոյ կը գողանայ:

— Ես չեմ թողնի, որ սորվի, ասաց տիկինը:

Մասիսեանը անհաւան կերպով գլուխը շարժեց և ծիծաղելով ասաց:

— Դու չես թողնի, բայց նա էլի կը սորվի. — շատ բան կայ, որ մենք արգելում ենք, բայց մարդիկ սովորում են առանց վարժապետի: Ղազի ճտին որքան արգելես, որ գետը չը մըտնի, չես կարող, հէնց որ ձուկը դուրս եկաւ, կը վազէ դէպի ջուրը: Ո՞վ սովորացրեց նրան լեղ տալը:

Այս խօսակցութիւնը անց էր կենում բակումը, ուր այր և կին նստած էին մի քառանկենի թախտի վրա, որ դրած էր նոր տերւեները բացած ուռնու տակ և ծածկած էր կապերտով: Նրանց որդին, Ստեփանը, ծնողներից փոքր ինչ հեռու, ածուխ մօտ նստած, խոշորացոյցով զննում էր մի փոքրիկ միջատ: Լսելով հօր վերջին խօսքերը, նա մէջ մտաւ, ասելով:

— Ղազի ճուտը բնագոյում ունի, և դրա համար վազում է դէպի ջուրը, բայց մարդը

մի այնպիսի բնագոյում չունի, որ դրդէր նրան դէպի գողութիւն. այդ ախտին սովորում է նա վատ օրինակից, անկրթութիւնից, և վերջապէս կեանքի ուրիշ պայմաններից:

Հայրը, ի հարկէ, չը հասկացաւ որդու խօսքերը, և մի խոժոռ հայացք ձգելով նրա երեսին, ասաց:

— Դա քո խելքի բան չէ. սուս կ'աց....

է

Կալօին թէև սկզբում դառն երևեցաւ գիւղական ազատութիւնից զրկվելը, թէև նրան շատ դժուար էր իր սիրելի ընկերներից բաժանվելը, թէև նա շուտով չէր կարող մոռանալ իր սիրելի գառները, — բայց այսու ամենայնիւ, այդ կիսավայրենի «արջի քօթօթը», որպէս առաջին տեսնելիս կոչեց նրան աղան, հետզհետէ սովորեց քաղաքին և մանաւանդ Մասիսեանի տանը: Նա յայտնվեցաւ այս տանը, որպէս յիշում է ընթերցողը, զատկի տօների օրերում: Շատ հասկանալի է, որ տօն օրերում տան շներն և կատուներն անգամ ուրախ և երջանիկ են լինում, որովհետև անմասն չեն մնում այն բարիքներից, որ վայելում է ուրախ գերդաստանը: Մասիսեանի ընտանիքը, որքան և չափաւոր լինէր իր տնտեսութեան մէջ, դարձեալ մի գիւղական աղքատ խրճիթի գաւակի



Համար կը ներկայացնէր ամեն բարեքներով լի առատութիւն:

Սկզբում նրա վրա նայում էին և խօսացնում էին միմիայն հետաքրքրութեան համար. կոպիտ գիւղացու ամեն մի շարժմունքը ծիծաղ էր պատճառում: Բայց յետոյ կամեցան փոքր-առ-փոքր կրթել և տաշել նրան: Այդ հոգածութիւնը լանձն առաւ գլխաւորապէս տիկին Մարիամը:

Մի բանի օրից լետոյ Կալօին դժուար էր ճանաչել, զոնեա արտաքին կերպարանքից: Ահագին մօթալ-փափախի տեղ կրում էր Ստեփանի գիմնազիստի հին կէպին. տրեխների տեղ հագել էր աղայի քրքրված քօշերը, որոնք իրանց մեծութեամբ դժուարացնում էին նրան ազատ մանգալ: Իր զաղաքէ արխալուղի վրա հագել էր նոյնպէս աղայի թերմաշ կաբան, որի փէշերը անցնում էին ոտների կրունկներից, և որովհետեւ իր հասակից աւելի երկար էր, այս պատճառով մէջքը պնդել էր սե փոկով, և գապայի աւելորդ մասը թողել էր գօտիից վերեւ, և այսպէսով այս պարսկական վերնազգեստը ստացել էր մի ահագին տօպրակի ձև, որի մէջ ձգած էր խեղճ տղան:

Մի խօսքով, նա ոտքից ցզլուխ փոխված էր: Նրա անունն անգամ փոխել էին. ռամկական կրճատված Կալօ անունն տեղ այժմ

կոչում էին Միքայէլ: Նա փոխված էր դրսից միայն, բայց սրտով մնացել էր դարձեալ նոյն ուրախ և միամիտ Կալօն իր գիւղական կոշտութեան մէջ, որպէս մի անտաշ քար, որ հմուտ արհեստագէտի ձեռքի տակ կարող էր գեղեցիկ փայլ ստանալ:

Զատիկի տօների հետ անցան և նրա ուրախ օրերը:

Աւետ ապօրը թէև խոստացել էին խանութում պահել փոքրիկ Կալօին, առևտուր սովորացնել և «մարդ շինել», բայց այդ խոստմունքները անկատար մնացին հէնց սկզբից: Նրան պահեցին տանը ծառայելու համար: Փոքրիկ ծառայութիւնների մէջ նա շատ անշնորք էր. ամեն մի առարկայ նրա ձեռքից թռչում էր, ընկնում էր, կոտրվում էր, և ամեն բանի դիպչելիս, ցած էր գցում: Օրինակ, մի բաժակ թէյ նա չէր կարող առանց վիթելու տեղ հասցնել, բայց եթէ տայիւր նրան մի փոքրիկ տակառ լիքը ջրով, կը տանէր, և որտեղ ասես, կը հասցնէր: Նա մանր բաների համար գլուխ չունէր, կարծես, ստեղծված էր խոշոր գործերի համար:

Միքայէլի—մենք էլ այսպէս պիտի կոչենք այսուհետեւ—այս տեսակ անընդունակութիւնները սակաւ ցաւեր չը պատճառեցին նրան: Ամեն մի բան կոտրելիս, ամեն մի բան վիթե-



չիս, խիստ հազիւ էր պատահում, որ մի ամբողջ օրով քաղցած չը թողնէին: Սկսեալ աշախից, մինչև վերջին աղախինը, բոլորը նրան յանդիմանում էին, անդադար կրկնելով, — «արջի քօթօթ» — «էջ գիւղացի» և այլն: Եւ այսպէս, օր չէր անցնում, որ նա մի լաւ «շնաթակ» չուտէր: Բայց Մասիսեանի ընտանիքի մէջ նա ունէր մի պաշտպան միայն, դա էր տիկին Մարիամը, որ ներում էր նրան, որպէս մի անփորձ երեխայի, և պատուիրում էր՝ նրա անմեղ յանցանքները չը յայտնել աղային, որ չը ծեծվի:

Միքայէլը, որպէս մեզ յայտնի է, լաւ ձայն ունէր, քաղցը երգում էր, երբ դեռ գիւղումն էր, բայց այդ ուրախ թռչնիկը իսպառ լուեց, երբ մի չար բախտով ընկաւ երկաթի վանդակի մէջ: Մի քանի անգամ այն աստիճան յուսահատվեցաւ նա, որ փորձ փորձեց փախչել և կրկին գիւղը գնալ. — գնալ իր սիրելի ընկերների և տատի մօտ, այնտեղ ոչ ոք չէր ծեծում նրան: Բայց տիկին Մարիամը կէս ճանապարհից յետ բերել տուեց, մխիթարեց և կրկին համոզեց մնալ:

Մասիսեանի ընտանիքի մնացեալ անդամներից, Գայիանէն նոյնպէս լաւ էր Միքայէլի հետ, թէև երբեմն ծաղրում էր, բայց պատահած ժամանակ իր ստացած մրգեղէնից

նրան բաժին էր հանում: Իսկ Հռիփսիմէին բոլորովին անտանելի էր նա. այդ գեղեցիկ և հպարտ արարածը մի առանձին ատելութիւն ունէր դէպի գիւղացի տղան, որին ստիպեցնում էր երբեմն զանգատով դիմել տիկին Մարիամին: Ստեփանը, աղայի որդին, իր եղբօր պէս սիրում էր նրան. նա գնեց Միքայէլի համար մի ընթերցարան և պարապ ժամերում դաս էր տալիս, բայց մի օր այդ նկատեց աղան, և գիրքը առնելով տղայի ձեռքից, մի կողմ ձգեց, և դառնալով դէպի որդին, ասաց. «ուզում ես դրան էլ փչացնես քեզ նման»....

Միքայէլի մեծ մխիթարութիւնը նրանումն էր, որ երբեմն բազարում տեսնում էր իրանց գիւղացիներից մի քանիսին, երբ քաղաքը բան էին բերում ծախելու: Մի անգամ մէյդանի միջով անցնում էր նա, յանկարծ տեսաւ իր ընկերներից մէկին:

— Ա. Թուն, ա՛ Թուն, կոչեց նա, իր վաղեմի ընկերի մօտ վազելով:

Ընկերը չը ճանաչեց: Միքայէլը քարշ ընկաւ նրա վզից և սկսեց համբուրել:

— Խաչը վկայ, չը ճանաչեցի, խօսեց գիւղացին: — Եդ ի՞նչ ես դառել, Կալօ, դրուստ որ, «չամչի խաթունի» նման ես...

— Ի՞նչ անեմ, Թունի ջան, քաղաքումը էդ-



պէս են հազցնում, պատասխանեց Միքայէլը,  
— անուհս էլ փոխեցին... էլ Կալօ չեն կան-  
չում... — Դու էն ասա, Թուհի ջան, մեր տու-  
նը գնում էիր, տատս ո՞նց է, ի՞նչ էին անում  
երեսերքը, Կիճին մեծացե՞լ է, Պապին հիմա  
ման գալիս կը լինի... (Վերջին անունները իր  
հօրեղբօր փոքրիկ երեսաների անուններն  
էին:)

Նա առանց պատասխան սպասելու խօսքը  
փոխեց:

— Դու ի՞նչ էիր շինում, Թուհի ջան, ամեն օր  
լեղանում էիր գետումը. ախ, էստեղ չեն թող-  
նում, որ մարդ ջրի երես տեսնի... — Հիմա խոտը  
հնձում կը լինեն, էնպէս չէ. ո՞վ էր հաւաքում  
մեր խուրձերը: — Նս եկել եմ բազարից կանա-  
չի առնելու, հացն էլ ինձ են առնել տալիս,  
ասում են, առուտուր սորվիր: (Նա կրկին  
խօսքը փոխեց: ) — Մեր շորենիքը հասել են: —  
Մեր շուներ տեսա՞ր: — Ո՞վ էր արածացնում մեր  
գառները: — Էստեղ լաւ չէ, Թուհի ջան, սիր-  
տըս տրաքում է, չեմ իմանում, թէ ինչ անեմ...  
Տատիս ասա, թէ Կալօին տեսա՞յ: Ո՞ւմ հետ  
եկար: — Ե՞րբ ես գնալու: — Էստեղ շատ վատ  
է, Թուհի ջան....

Միքայէլը իր բազմաթիւ և անկապ հարցե-  
րով բոլորովին շուարացրեց ընկերին, և նա չը  
գիտէր, թէ ո՞ր մէկին պէտք էր պատասխանել:

— Հօրս հետ եմ եկել, ասաց նա, պանիր  
էինք բերել, ծախեցինք, էսօր պիտի գնանք:

— Ի՞նչ ես կերել, առ քեզ քաղաքի իւղով  
հաց տամ. առաւօտեան խանութս (տիկինը)  
տուեց, չը կերալ, սլահեցի, լաւ էր, որ քեզ  
նասիք էլաւ:

Այս ասելով, Միքայէլը գրպանից հանեց մի  
կտոր նագուք և տուեց ընկերին: Նա համեղ  
հացի մի ահագին կտորը ամբողջապէս կոխե-  
լով բերանը, կիսախեղդ ձայնով ասաց.

— Ի՞նչ լաւ հաց է, ամեն օր դրանից ես  
ուտում, Կալօ:

— Ո՞վ կը տար, որ ուտէի. էս էլ խանութը  
թագուն տուեց, որ աղան չը տեսնի, ասաց  
Միքայէլը վշտալի ձայնով: — Լաւ կը լինէր, որ  
ցամաք հացով կշտացնէին, էն էլ չեն տալիս:

Միքայէլի աչքերը լցվեցան արտասուքով,  
բայց նա թագցրուց իր սրտի ցաւը: Նրա գիւ-  
ղացի ընկերը հարցրուց.

— Ե՞րբ պիտի գաս գիւղը, գիտե՞ս, Կալօ  
ջան, մեր դուրսմաները հասել են, էնքան ու-  
տում եմ, էնքան ուտում եմ, էնքան ուտում  
եմ, հէրս ոչինչ չէ ասում: Քո բաժինը կը  
պահեմ. ե՞րբ ես գալու:

— Չեն թողնում, Թուհի ջան, պատասխա-  
նեց Միքայէլը տխուր ձայնով. — շատ եմ ուզում  
գալ, տատիս տեսնել, մեր տանը մնալ, բայց



չեն թողնում, ասում են, «արջի քօթօթ» ձեր ծմակները չե՞ս մոռանում... Դէ, ո՞նց մոռանամ, Թունի ջան, ախար էստեղ ի՞նչ կայ... Հէնց տներ են ու տներ... մարդիկը, խօ, գիւղացուն էշի տեղ են դնում... թէ բերանդ բաց ես անում, խօսում ես, մի լաւ ծեծում են...

Թունին հասակով մի քանի տարով մեծ էր Միքայէլից, լսելով իր ընկերի խօսքերը, խրդճաց նրա դրուժեան վրա, և մտածեց օգնել նրան:

— Եկ, ես քեզ կը տանեմ գիւղը, ասաց նա:

— Ի՞նչպէս գամ, էստեղ էլ ապերը (հօրեղբայրը) գլխիս կը տայ, կասի. ի՞նչու եկար: Ձէ, Թունի ջան, խօսքը փոխեց նա, լաւն էն է, գնամ, ջուրը, ընկնեմ, միանգամով պռծնեմ...

Թունին մխիթարեց նրան, սիրտ տուեց, և խօստացաւ, թէ Աւետ ապօրը կասէ, որ նրան գիւղը տանէ: Միքայէլը ուրախացաւ, մանկական բարեսրտութեամբ ուզեց իր ընկերին մի բանով վարձատրել:

— Գիտե՞ս, Թունի ջան, ասաց նա, լաւ միտս եկաւ, ես ճաներս (վէգ) խորել էի մեր մարազի դրան տակին, այնտեղ, որ մի քօթուկ (կոճղ) է դրած, կը գնառ, կը հանես, հարիւր հատից աւել է, ինչքան կուզես, դու վեր առ, մնացածը բաժանիր մեր ընկերներին:

Ես որ չեմ կարողանում խաղալ, դուք էլաւ խաղացէք:

— Թօմասին բաժին չեմ տայ, ասաց ուրախացած Թունին, — նա լաւ տղայ չէ, անցեալ օր ինձ հետ կուռեց:

— Նրան էլ տուր, մեր ընկերն է, բարիչեցէք, խօսեց խրատական կերպով Միքայէլը: Ի՞նչ կայ, ընկերը ընկերի հետ կը կուռի, ու էլի կը բարիչի. անցեալ գիշեր ես էլ Պօղոսի հետ կուռեցայ՝ մահակով խփեցի, գլխիցը արիւն գնաց:

— Պօղոսի հետ, հարցրեց Թունին զարմանալով. — Պօղոսը էստեղ ի՞նչ էր շինում:

— Երազումս կուռեցայ, Թունի ջան, հէնց որ զարթեցի, էնքան լաց էլայ, էնքան լաց էլայ, որ նրա գլուխը պատուեցի: — Դուստրն ասա, Թունի ջան, նրան խօ մի բան չի՞ էլել: — Ոչինչ չի էլել, երէկ չէ, մէկէլ օրը ինձ հետ խօսում էր, լետոյ միասին գնացինք իրանց բաղը, ծիրան կերանք:

Երկու փոքրիկ գիւղացիների խօսակցութիւնը ընդհատեց Թունիի հայրը, որ հեռուից յայտնվելով, կանչեց նրան:

— Էն ո՞ւմ հետ ես խօսում, եկ, գնում ենք:

— Թունի ջան, հիմայ որ գնում ես, ասաց Միքայէլը նրա փէշից բռնելով, — տատիւ, ապօ-



րը, ամենին շատ բարե տար, ասա, որ տեսայ  
Կալօին:

— Կասեմ պատասխանեց Թունին և հեռացաւ:

Միքայէլը երկար կանգնած, նայում էր իր  
ընկերի ետևից, յանկարծ մտաբերեց, թէ բա-  
ւական ուշացել է, և սկսեց վազել դէպի ա-  
ղայի տունը:

Ը.

Անցաւ երեք տարի:

Միքայէլի վիճակի մէջ այս երեք տարվայ  
ընթացքում բաւական փոփոխութիւն էր եղել:  
Այժմ նա տան Հասարակ սպասաւորից դառել  
էր «գուռքնի աշակերտ». դա մեծ յառա-  
ջադիմութիւն է, բայց սրբէս յաջողեցաւ:

Զարմանալի նախապաշարմունքներ կան այն  
կարգի մարդիկների մէջ, որոնց պատկանում  
էր Մասիսեանը: Շատ անգամ մէկը մի նոր ձի  
է գնել,\*) մի նոր շուն կամ կատու է բե-  
րել տանը, պատահում է, որ նոյն միջոցնե-  
ներում նրա գործերը լաւ են գնում. «շան,

(\*) Որպէս ձիերը, նոյնպէս շները, կատուները  
և բոլոր ընտանի անասունները ունեն ատանձին  
նշաներ, որոնցով ճանաչում են նրանց չար կամ  
բարի ազդեցութիւն ունենալը տիրոջ բաղդի վրա:  
Մենք մի օր առիթ կունենանք խօսելու այդ սնա-  
հաւատութիւնների մասին, որոնք երևի խորին կապ  
ունեն մեր հեթանոսական անցեալի հետ:

կատուի կամ ձիու ոտը խերով է», ասում է  
նա, և այն անասուններին չէ հեռացնում իր  
տնից: Այսպիսի անասունը դառնում է մի  
նուիրական արարած այն տան համար, այն-  
տեղ ծերանում է, այնտեղ մինչև մահը ծա-  
ռայում է, և մեռնելուց յետոյ, նրա գլուխը  
թաղում են նոյն տան գլխաւոր մուտքի դրան  
շէմքի տակ: Նոյնը նկատվում է և մարդկանց  
վերաբերութեամբ: Տեսնում ես, մէկը ամուս-  
նանում է, պատահում է, որ կնոջ ոտը նոյն-  
պէս «խերով» է լինում, տղամարդի գործերը  
լաւ են գնում, և կինը սիրվում է: Շատ ան-  
գամ ընդհակառակն է պատահում: Կինը իր  
հետ դժբաղդութիւն է բերում, նրա ոտը «շա-  
ռոտ» է լինում, ամեն բան «նասացնում» է  
և նա ատելի է դառնում... Նոյնը պատահում է  
և նոր ծնված երեխաների յայտնվելով. ոմանք  
բաղդաւորութիւն, իսկ ոմանք դժբաղդութիւն  
են բերում: Տան այն անդամը, որ իր հետ  
բաղդաւորութիւն է բերում, նրա համար ա-  
սում են՝ «տան դովլաթը (հարստութիւնը)  
նրա գլխին է կապած»:— Դա էլ մի տեսակ  
«ոսկի աքաղաղ» է, որ իր ազդեցութեամբ  
բարիքներ է արտադրում:

Մի կողմ թողնելով այս տեսակ նախապա-  
շարմունքների քննութիւնը, այսքանը միայն  
կասենք, որ այն օրից, երբ Միքայէլը մտաւ



Մասիսեանի տունը, նրա գործերը սկսեցին անսպասելի կերպով լաւանալ: Եւ սնահաւատ Մասիսեանը չէր կարող չը նկատել այդ և դրա համար սկսեց նա հետզհետէ լաւ աչքով նայել մանուկ գիւղացու վրա: Եւ այդ էր պատճառը, որ տարաւ նրան իր առւետրական խանութը:

Միքայէլի դրութիւնը այժմ մի աստիճան բարձրացել էր. նա տնային ստոր ծառայից դարձել էր «դուքնի աշակերտ»: Բայց նա այժմ այն չէր, ինչ որ էր երեք տարի առաջ. այժմ բաւական տաշվել և կոկվել էր նա. այժմ նրա մօտ չէին երևում գիւղացու կոպտութիւնները: Նրա դէմքն անգամ փոխվել էր. գիւղական լիքը և կարմիր թշերը մաշվել էին, նուրբ և գեղեցիկ գծագրութիւն էին ստացել, և առաջվա զուարթ գոյնը տեղի էր տուել խիստ ախորժ գունատութեան: Անփոփոխ մընացել էին միայն կրակոտ աչքերը:

Խանութի բոլոր յաճախորդները ճանաչում էին Միքայէլին: Նա այն տեսակ տղերքից չէր, որ անյայտ մնար, որ նրա վրա ուշադրութիւն չը դարձնէին: Ամեն մարդ ախորժում էր խօսեցնել նրան և լսել նրանից մի քանի խօսքեր: Միքայէլը չափազանց կամակատար տղայ էր. դեռ մէկը իր ծխախոտի գլանակը չը շինած, նա արդէն լուցկին ձեռքում

պատրաստ ունէր, որ պարոնին մի ծառայութիւն անէ: Եւ մէկը մի բան գնելիս, շուտով պոռնում էր, շնորքով փաթաթում էր, շատ անգամ առանց նրանից խնդրելու, տանում, հասցնում էր գնողի տունը:

Բայց երբեմն ծագում էին փոքրիկ անհամաձայնութիւններ Միքայէլի և իր աղայի՝ Մասիսեանի մէջ: Պատճառները յառաջ էին գալիս վարպետի և աշակերտի հասկացողութեան անմիաբանութիւնից: Օրինակ, խանութը մտել է մի տիկին և կամենում է գնել մի քանի պրշին չիթ կամ մի քանի ֆուստ թէյ: Մասիսեանը սկսում է տիկնոջ հետ մի ամբողջ պատմութիւն, թէ նրա հանգուցեալ այրը իր լաւ բարեկամն էր, թէ ինքը նրա լիշատակը պատուելու համար պէտք է զիջումներ անէ և ապրանքի լաւը տայ, և այլն: Յետոյ նա դառնում է Միքայէլին, ասում է:

— Այ տղայ, այն լաւ տեսակիցը բեր:

Միքայէլը բերում է ամենալաւ տեսակիցը, բայց աղան մի խոժոռ հայեացք ձգելով անփորձ աշակերտի երեսին, ասում է.

— Յիմար, այդ է լաւը, դու երբ պէտք է ճանաչես ապրանքները:

— Դրանից լաւը չունենք, աղայ, պատասխանում է աշակերտը միամտութեամբ:

— Ո՞նց թէ չունենք, լակոտ, բարկանում



է աղան, և ինքն է գնում բերելու խնդրած ապրանքը:

— Եդ խօ վատիցն է... նկատում է աշակերտը:

Աղան ուշադրութիւն չէ դարձնում, չափում է, կշռում է իր ընտրած ապրանքիցը և «մուշտարուն» ճանապարհ է գցում: Յետոյ նա դառնում է դէպի անփորձ աշակերտը:

— Անպիտան, դու երբ պէտք է մարդ դառնաս, դու երբ պէտք է բան սորվես: Երբ քեզ ասում են «լաւիցը» բեր, դու պէտք է «վատը» հասկանաս... Իմանում ես...:

— Ինչպէս իմանամ: Լաւը լաւ է, վատը վատ է: Ես բոլոր ապրանքները ճանաչում եմ:

— Սարսաղ, մուշտարուն առաջ լաւը ցոյց կը տան, յետոյ վատը կը տան... Հասկացա՞ր...:

— Եդ ես չեի իմացել... խօսում է ինքն իրան Միքայէլը: — Յետոյ մարդու հոգին ուր կը գնայ, խօ կը կորչի...:

Աղան սկսում է կարդալ նրա գլխին մի ամբողջ շարական...:

Թ.

Մասիսեանի խանութը և նրա ամբողջ առևտրական գործավարութիւնը ոչ սակաւ ուշադրութեան արժանի էին իրանց ինքնուրոյնութեամբ: Խանութը, որ աւելի նման էր մեծ ամբարի, ներկայացնում էր ամեն տեսակ իրե-

դէնների մի խառնաշփոթ մթերանոց: Այնտեղ կարելի էր գտնել ամեն ինչ սկսեալ մանուֆակտուրայի ամենանուրբ գործուածներից, սկսեալ գալանտերական թանգագին իրեղէններից, մինչև դարբինների համար երկաթի շերտեր, մինչև կոշկակարի համար կաշիներ, նաւթ, շաքար, թէյ, երեսանների խաղալիքներ և այլն: Այնտեղ կարելի էր տեսնել ձուկը, սալեանի դօշը, Մօսկվայի քաղցրաւենիքի հետ մի կարգում դարսված: Այնտեղ կարելի էր գտնել զանազան եւրօպական խմելիքներ և տեղային արաղ: Այնտեղ կարելի էր ամեն բան գտնել. ծիծեռնակի կաթը միայն պակաս էր այնտեղ: Խոհարարը իր խոհանոցի համար կարող էր ձուլաներ և ձաւար գտնել, իսկ պէնասէր տիկինը իր մագերի համար անուշահոտ իւղեր: Այնտեղ պակաս չէր հիւանդների համար խինայի փոշի և անանուխի իւղ: Այս բոլորը այնպէս խառնափնթոր կերպով ածած էին մինը միւսի հետ, որ Մասիսեանի խանութը ամբողջ գաւառի մէջ առակ էր դարձել, ամեն մի խրճրճված և խառնաշփոթ բանի համար ասել, թէ դա պարոն Մասիսեանի խանութն է:

Ինքը Մասիսեանը անգրագէտ մարդ էր:

Գիրը նրան այնքան ատելի էր, որքան սատանան: Հաշուապահութիւն ասած բանը չը



կար նրա խանութում: «Առ—և—տուր» — այս բառի իմաստը նա լաւ էր հասկացել, — մի ձեռքով առնել, միւսով տալ, այսպէս էր հասկանում նա վաճառականութիւնը: «Նիսիալի» հետ գործ չունէր նա: Հաշիւ, ասացինք, չէր պահում. նրա ամբողջ առւտրական գործողութիւնների հաշուէտօմարը իր գլուխն էր: Մի զարմանալի լիշողութիւն իշխում էր ամեն բանի վրա: Նա գիտէր քանի տեսակ ապրանքներ կան իր խանութում, այս ինչ տեսակից որքան է ծախվել, որքան մնացել, ինչ է իւրաքանչիւրի գինը, քանիով պէտք է ծախել, որ վատակ մնայ, — բոլորը գիտէր նա: Գիրը նա գործ էր դնում միայն պարտականների համար, երբ չար մարդիկ սովորացրին նրան պարտամուրհակներ առնել: Այս բանի մէջ նրա լիշողութիւնը նոյնպէս հրաշալի գործ էր կատարում: Երեւակայեցէք ձեզ մի արկղիկ, լցված հազարաւոր թղթերի կտորտանքով. — դրանք բոլորը զանազան անձների պարտամուրհակներ են, որոնք խանութի ապրանքների նման անկարգ խառնած են միմեանց հետ: Բայց Մասիսեանը բոլորը ճանաչում էր, թէ որը ումն է պատկանում, թէև ինքը կարգաւ չը գիտէր: Եւ երբ յայտնվում էր մի պարտական, նա իսկոյն ջուրում էր շատերի միջից նրա մուրհակը, և առանց կարգաւ տալու, ասում էր, թէ որքան է

անցել ժամանակից, որքան կը լինի տոկոսը, որքան իսկական գումարը և այլն: Ոչ միայն այդ, այլ տասն տարվայ հնացած մի հաշիւ նա կարող էր կօպէկներով տեղն ի տեղը տալ: Եւ իր կեանքի մէջ պատահած բոլոր անցքերը նա կարող էր մանրամասնաբար պատմել, թէ ինչպէս, կամ որտեղ պատահեց, որ թուին, որ օրը, որ ժամին, ով կար այնտեղ, ինչ խօսեցին և այլն: Յիշողութիւնը նրա մէջ այն աստիճան զարգացել էր, որ գերբնական բնաւորութիւն էր ստացել: Եւ այս պատճառով նա հաշուապահութեան կարօտութիւն չէր զգում. երբ մի բան պակաս էր խանութից, կամ մի բան զողացվել էր, անկարելի էր, որ նրա նկատողութիւնից անյայտ մնար:

Յիշեալ լատկութիւնների հետ չափազանց իր գործին արի և զգույշ էր Մասիսեանը: Ժամատան դեռ առաջին զանգակի ձայնը չը լսված, նա միշտ հազնված և պատրաստ էր: Տանից դուրս դալով, իր անխափան սովորութեան համեմատ, նա առաջ գնում էր ժամ: Այնտեղ մնում էր մինչև վերջը: Ժամից ուղղակի դիմում էր բազար, երբ արեղակը դեռ ծագած չէր լինում: (Ժամը այս կողմերում սովորաբար շուտ է արձակվում:) Միքայէլը մի մեծ գամբիւղ թւէից քարշ գցած, վաղուց արդէն սպասող է աղային, մէլշանում (հրա-



պարակում) կանգնած: Աղան նույնպէս առաջ կը դար մէլդանը, որ տեսնէր, թէ գիւղացիք ինչ են բերել ծախելու: Բոլոր գիւղացիներին ճանաչում էր նա անուններով, հօր, որդիների և մինչև անգամ նրանց կնիկների անուններով: Ամենին կը մօտենար, ամենի հետ քաղցրութեամբ կը խօսէր, ամենի քէյֆը կը հարցնէր և նրանց բերած մթերքի գները կը տեղեկանար, թէ և իրան պէտք չէին և գնելու միտք չունէր: Գիւղացիք միշտ ուրախանում էին, որ այնպիսի մեծ աղայ, այնքան բարի էր, որ իրանց մարդի տեղ էր դնում:

Բայց արջը միայն գիտէ, թէ ինչու է այնքան սիրով պտըտովում մեղրի փեթակի շուրջը: Բաւական էր, որ գտնէր մի «խամ» գիւղացի, որ ձուկն, նոր կարագ, պանիր, կամ հաւ էր բերել ծախելու. նրան բոլորովին կը յոգնեցնէր զանազան խօսքերով, թէ նրա «հանգուցեալ» հօր հետ լաւ բարեկամ է եղել, թէ նրան շատ լաւութիւններ է արել, և ով գիտէ, հազարումէկ խոստմունքներով առատ—առատ յոյսեր կը տար, մինչև նրան խելքից կը հանէր, և ուզած բանը սովորականից մի քանի կօպէկ սլակասով կառնէր: Մասիսեանը սիրում էր իր տան ամենօրեայ պաշարեղէնը իր ձեռքով գնել: «Օտարի ձեռքով միայն լաւ է փուշ քաղել» — այդ էր նրա սովորական առա-

ծը: Մէլդանում իր գործը վերջացնելուց յետոյ, նա ամբողջ ժամերով քարշ կը դար մրգավաճառների, մսավաճառների, և հացթուխների խանութների առջևը, և լաւ բեռնաւորելով Միքայէլին, կուղարկէր տուն:

Գալով խանութը, Մասիսեանը նրա դրանը կանգնած և միշտ պատրաստ կը գտնէր իր աշակերտները: Առաջ մոմով կնքած փակ կողպէքները ուշադրութեամբ կը քննէր, յետոյ բանալիները, որ միշտ իր մօտ էր պահում, կը տար աշակերտներից մէկին, որ դռները բաց անէին: Իսկ ինքը երեսը կը խաչակնքէր և կը մտնէր խանութը: Միքայէլը արդէն ծոխ նման իր տարած բաները տանը հասցրած և վերադարձած էր լինում: Նա սկսում էր խանութի դռների առջևը աւելով մաքրել, ջուր սրսկել, ապրանքների փոշին թափ տալ, և միւս գործակատարներին օգնել, ապրանքները դարսելու և կարգի դնելու: Որպէս հայ վաճառական, Մասիսեանը սովորութիւն ունէր ամեն առաւօտ իր խանութի ապրանքները մի նոր ձեւով դարսել տալ, որ «մուշտարու» աչքին ցոյց տայ, թէ նոր ապրանքներ է ստացել: Այս աշխատութիւնը փոքր հոգս չէր պատճառում նրա առեւտրական տան ծառայողներին: Բայց մի բան լաւ էր, որ նա խանութի լուսամուտների ապակիները երբէք մաքրել չէր տալիս. «ինչ-



քան դուքանը մութ լինի, այնքան ապրանքը աչքի լաւ կերեալ», ասում էր նա:

Այս գործողութիւնները կատարվում էին ամեն օր և ամեն առաւօտ, միշտ անփոփոխ, միշտ մի և նոյն եղանակով: Մասիսեանը չափազանց ճշդութիւն սիրող մարդ էր, մանաւանդ այն պարտաւորութիւնների մէջ, որ ինքը իրաւունք էր համարում ուրիշներից պահանջելու: Իսկ իր պարտաւորութիւնների մէջ նա միշտ բացասական եղանակին էր հետևում:

Զմեռվայ սաստիկ ցրտերին (նա իր խանութում երբէք կրակ չէր վառում) և ամառվայ սաստիկ տաքերին Մասիսեանը առաւօտից մինչև իրիկուն իր խանութումն էր գտնվում: Ոչ մի դէպք չէր կարող նրան հեռացնել իր սիրելի ապրանքների մօտից: Մասիսեանը չափից դուրս կասկածոտ մարդ էր. ոչ ոքի վրա հաւատարմութիւն չունէր. նա մինչև անգամ չէր հաւատում իր կնոջը, որդուն և աղջիկներին, — բոլորին գողեր էր համարում: Նրա կարծիքով, գող չէին միայն գիւղացիները, որովհետև լիմար էին, ոչինչ չէին հասկանում: Իսկ ով որ խելք ունէր, անպատճառ, կը գողանար: Այս էր պատճառը, որ Մասիսեանը սաստիկ հսկողութիւն ունէր իր խանութի վրա: Այնտեղ նստած կը նայէր ամեն բանի վրա. ինչ որ ծախէին, իսկոյն պէտք է փո-

ղերք նրան տալին, և նա իսկոյն կը գցէր կասսայի մէջ: Նրա կասսան նման էր այն փոքրիկ արկղիկներին, որ շատ անգամ կարելի է տեսնել ժամատների և մատուռների դռների մօտ, ամրացրած մի փայտի վրա, կողպած կողպէքով և կնքած: Մի նեղ ծակ միայն բաց է թողած այդ արկղիկների վերևից, որտեղից բարեպաշտ մարդիկ փող են գցում նրա մէջ: Նրա նման էր և Մասիսեանի կասսան, որին նա կոչում էր «գախլը», որ նշանակում է մուտք: Ստացած փողը նա իսկոյն գցում էր այդ մուտքի դրամարկղի մէջ, որը ամբողջ շաբաթով կողպած էր լինում, և բացվում էր միայն եօթն օրն միանգամ, այսինքն շաբաթ երեկոները, որ հաշուէր, թէ որքան ապրանք է ծախվել և որքան փող է մուտք գործել: Եւ բացի կասսայի բացվելու օրից, այսինքն բացի շաբաթ երեկոներից, մնացած միւս օրերում նա ոչ ոքի փող տալու սովորութիւն չունէր, և այս շաբաթ երեկոների վճարված փողը նա կոչում էր «ղրստ»: Մասիսեանը ունէր իր զանազան վաճառականական սնահաւատութիւնները: Օրինակ, երկուշաբթի առաւօտեան անկարելի էր նրանից մի կօպէկ ստանալ, ոչ ոքի փող չէր տալ, որովհետև հաւատացած էր, որ եթէ երկուշաբթի առաւօտեան մէկին փող տալու լինի, ամբողջ շա-



բաթ փողը դուրս կը գնայ և բնաւ մոռտք չի գործի:

Ամբողջ օրը, ինչպէս ասացինք, Մասիսեանը իր խանութում նստած կը լինէր և նրա արգոսի աչքերը կը հսկէին ամեն գործողութիւններն Վրա: Երբեմն, մանաւանդ ամառվայ երկար ու տաք օրերում, բնութիւնը կը յաղթէր երկաթի կամքին և նա կը սկսէր նստած տեղը նիրհել: Բայց անկարելի էր գիտենալ, արդեօք նա քնած էր, թէ արթուն: Որովհետև հէնց մի «մուշտարի» ներս մտնելիս, մի բան պահանջելիս, երբ աշակերտները ուշ կը շարժվէին, նա իսկոյն աչքերը բաց կանէր, կասէր. «լակոտներ, քօռացել էք, ինչ է, չէք տեսնում, բան են ուզում»:

Բայց միանգամ մի դէպք Մասիսեանին այնքան կոտրեց, որ նա իր բոլոր աշակերտներէն իրան խաբված և յաղթված համարեց: Իր մըտերիմ բարեկամներից մէկը վախճանվել էր, նա պարտք համարեց թաղմանը ներկայ գտնվել: (Կրօնական պարտաւորութիւնների մէջ ճիշդ էր Մասիսեանը:) Բոլորովին յոգնած վերադարձաւ նա խանութը, տեսաւ, միւս աշակերտները գործի էին գնացել, այնտեղ մնացել էր միայն Միքայէլը: Պատուիրելով նրան նայել խանութին, ինքն գնաց, նստեց իր սովորական տեղը: Սաստիկ տաք օր էր: Յոգնա-

ծութիւնը մէկ կողմից, իր մտերմի մահուան տխրութիւնը միւս կողմից, նրան խիստ թուլացրել էին: Պէտք է խոստովանվել, որ հանգուցեալի հոգու համար մի քանի բաժակ աւել էր խմել: Եւ այս պատճառով, հէնց որ նստեց իր տեղը, սկսեց խորին կերպով նիրհել: Նոյն միջոցին մի բաւական լաւ հագնված երիտասարդ ներս մտաւ, նայեց իր շուրջը և հանդարտ մօտեցաւ աղային: Նրա ոտքերի ձայնից աղան զարթնեցաւ:

— Առէք այդ բանը, ասաց անծանօթը շտապով հանելով իր ծոցից մի ոսկեայ ժամացոյց: — Ինչ կը տաք, տուէք, փողի սաստիկ կարօտութիւն ունեմ. կինս մեռնելու վրա է, շտապում եմ բժշկի մօտ:

— Մասիսեանը ուշադրութեամբ նայեց անծանօթին, նայեց ժամացոյցին և ասաց.

— Յիսուս ըուբլուց աւելի չի աժի:

— Տուէք փողը, Աստուած ձեզ խէր տայ, բայց հաւատացէք, որ Մօսկվայում ութսունով եմ գնել, ասաց անծանօթը դարձեալ շտապեցնելով:

Մասիսեանը համբարեց յիսուն ըուբլին, անծանօթը շուտով հեռացաւ:

Միքայէլը, որ զարմացած նայում էր այս առևտուրին, խօսեց անծանօթի հեռանալուց յետոյ:



— Այդ մարդը մի ժամ առաջ մտաւ մեր խանութը, ժամացույցներին շատ նայեց, շատ այս կողմ և այն կողմ տուեց, յետոյ ոչինչ չառեց, ասաց, ես ուզում էի միայն գները իմանալ, ես մի հատ ունեմ ծախելու:

— Տարաւ յիսուն ըուբլին...կոչեց Մասիսեանը:

— Ի՞նչպէս թէ տարաւ, հարցրեց Միքայէլը զարմանալով:

— Աչքդ հանեց, այնպէս տարաւ, պատասխանեց աղան բարկութեամբ. — այդ ժամացույցը մերն է:

— Բնա նա գողացաւ, Տէր Աստուած, մի այնպիսի մարդը գողութիւն կանի, այնպէս լաւ հազնված, այնպէս շնորքով:

— Հա, այնպէս շնորքով մարդը գողութիւն կանի, և ոչ թէ քեզ նման յիմարը...պատասխանեց աղան առաջին բարկութեամբ: — Ի՞նչ ղօչաղ տղայ, խօսեց Մասիսեանը ինքն իրան, հալալ ըլի քեզ քո մօր կաթը, ինձ ջէր սատանան չէր խաբել, բայց դու լաւ խաբեցիր, եթէ ձեռքս կրնկնէիր, հազար մանէթ կը տայի քեզ, եթէ ուզենայիր ինձ մօտ ծառայել:

Յետոյ նա կրկին դարձաւ դէպի Միքայէլը:

— Տեսնում ես, լակոտ, էսպէս կը լինի ղօչաղ տղան, մարդու աչքի միջից մազը կը

թուցնէ և մարդը չի իմանայ. տեսնում ես...

Միքայէլը ոչինչ չը խօսեց:

Մասիսեանի բնակարանը, նրա հնազարեան տունը, չէր զանազանվում նրա խանութից: Որպէս խանութումը վաճառքի էր տրված ամեն տեսակ փտած, բորբոսած և գործածութիւնից ընկած հին մթերք, — այնպէս էլ նրա տան մէջ տիրում էր նոյն բորբոսը, նոյն փրտութիւնը, նոյն հնացած կեանքը իր բոլոր մաշված կողմերով:

Մասիսեանի տունը մի կիսաւեր ամրոցի տպաւորութիւն էր գործում նայողի վրա, որի բնակիչները շատ տարիներից առաջ անհետացել էին, և այն ամենը, ինչ որ կառուցել էր մարդկային ձեռքը, և որ պիտի պահպանվէր մարդու խնամքով, անտէր մնալով, ժամանակի կործանիչ ներգործութիւնից հնացել, տրորվել և թափվել էին: Ամբողջ (կամենում ենք ասել բոլորովին չը կործանված) մնացել էին մի քանի շէնքեր միայն. — թո՛ղ րատուենք, որ ծառայում էր որպէս պաշարեղէնների ամբար և մի և նոյն ժամանակ որպէս խոհանոց և հաց թխելու տեղ. մասնաւոր, ուր պահվում էին գինու կարասները, մրգեղէն և զանազան տեսակ թթուեցրած արմատիք. և բացի դրանցից կային երեք սենեակներ, որոնցից մէկը աղայի համ քնարանն էր, համ



Հիւրանոցը, Համ կաբինետը, միւսի մէջ զետեղված էին աղայի տիկինը իր աղջիկներով, դա ներկայացնում էր կանանոցը, իսկ երրորդ սենեակի մէջ բնակվում էր աղայի որդին՝ Ստեփանը: Բոլոր երեք սենեակներն էլ մի յարկանի էին, բոլորի էլ յատակը հաւասար էր բակի յատակին, կոտւրները ծածկած էին հողով, որի վրա աճել էին զանազան բոյսեր: Սենեակների երեքն էլ շինված էին մի կարգի վրա, մինը միւսին կից, բայց ոչինչ հաղորդակցութիւն չունէին, երեքն էլ առանձին դռներ ունէին, որ բացվում էին դէպի բակը: Լոյսը ներս էր ցոլանում աւելի դռներից, քան թէ լուսամուտներից, որ փակված էին խուլ, ցանցատեսակ «փէնջէրէներով», որ անկարելի էր բաց անել: «Փէնջէրէները», այդ պարսկական հիւսնութեան գիւտը, առանց ապակիների, ձմեռը միայն պատում էին թղթով, որ աղան ընտրում էր իր խանութի հին նամակներից, որոնք աւելի թանձրացնում էին սենեակների մէջ տիրող մռայլը և միայն արգելում էին քամու և ցրտի ազատ մուտք գործելը: Սենեակները դրսից ծեփած էին ցեխից և յարդից պատրաստած սփաղով, որ տալիս էր նրանց՝ ողորմելի մոխրագոյն կերպարանք, իսկ ներսից ծեփած էին գաճով, որ վաղուց դեղնացել, մասամբ սևացել, բոլորովին կորցրել էր իր

սպիտակութիւնը: Տեղ-տեղ գաճը թափվելով, երևում էին անթուրժ աղիւսները: Սենեակների առաստաղը ոչինչով պատած չէր, և զահվէի գոյն ստացած, մերկ գերանները երևում էին: Սենեակների յատակը նոյնպէս՝ մերկ էր, ոչ տախտակով և ոչ աղիւսով էր պատած, այլ պնդացրած կաւով, որպէս լինում է գիւղացոյ խրճիթներում: Եւրօպական կարասիներ չը կային սենեակներում, ոչ աթոռ, ոչ սեղան, ոչ դիւան, միայն պատերին կից, յատակից մի արշին բարձրութեամբ, և մի ու կէս արշին լայնութեամբ, շուրջանակի, շինված էր մի տեսակ տախտակամած, որ կոչվում էր «տախտ» և որի վրա կապերտներ սփռելով, դռակներ և մուկաքաներ դնելով, ծալապատիկ նստում էին բնակիչները:

Բացի լիշեալ երեք սենեակներից, բացի «թոնրատնից» և մառանից, մնացած բոլոր շէնքերն աւերված էին: Ախուատան առաստաղը վայր էր թափվել և գերանների մի կողմի ծայրերը դեռ մնացել էին պատի վրա՝ իրանց նախկին տեղում, իսկ միւս ծայրերը ցած ընկել, թեքվել էին գետնի վրա: Ախուատունը վաղուց զրկված էր անասուններից, դա ծառայում էր այն ժամանակ, երբ աղայի հայրը մտափաճառութեամբ էր պարապվում: Աւերված էր և մարազը. դա ներկայայնում էր մի փոքրիկ



Հողային բլուր, որի մէջ դեռ երևում էին շինուածքի փայտեղէն մասները: Ամեն տեղ նրկատվում էր աւերմունք, փլատակներ և անխնամ թողված շինուածներ: Կարծես, այդ ողորմելի շինութիւնների մէջ հարկւր տարուց աւելի մի ուրիշ վարպետ չէր մտել, ոչ մի կարկատան կամ նորոգութիւն չէր եղել,—ինչ որ մաշվել էր, ինչ որ քանդվել էր, ինչ որ թափվել էր, այնպէս էլ մնացել էր: Իսկ այստեղ բնակվում էր ամբողջ գաւառի առաջին հարուստը, քաղաքի գլխաւոր աղան: Այստեղ «ոսկի աքաղաղը» իր հրաշալի գորութեամբ ոսկու կոյտեր էր գիցում....

Մի փոքր կենդանութիւն երևում էր պարտեզի մէջ: Պարտեզը բաւական ընդարձակ էր: Թէև բոլոր ճեմելիքները պատած էին վայրենի կերպով, դա էլ թողած էր անխնամ, թէև աճած բոյսերով, բայց հնադարեան ծառերը դեռ մաքառում էին մահուան հետ, կարծես ասելով, «մենք դեռ ևս, պիտի ապրենք...մենք մարդու ձեռքերին աւելի կարօտութիւն չուենք»....

Կեանքը այդ տխուր և անասլատացած աւերակների մէջ բոլորովին համապատասխանում էր իր շրջապատին: Կեանքը սահում էր նոյնպէս միօրինակ, նոյնպէս անփոփոխ և նոյնպէս դատարկ կերպով, որպէս անփոփոխ և

դատարկ էր մնացել տան բոլոր շէնքը, որ իր վրա ոչ մի նորոգութիւն չէր ընդունում: Օրերը, ամիսները, տարիները անցնում էին միմեանց ետևից, շատ բան աշխարհի մէջ փոխվում էր, շատ սովորութիւններ նոր ձև էին ստանում: Բայց Մասիսեանի տան կեանքի և ապրուստի ձևերի մէջ ոչինչ նորութիւն չէր մտնում: Աւերակների անշարժութեան հետ տիրում էր և քարացած և մեռած կեանքի անշարժութիւնը: Մասիսեանը նոյն հայեացքն ունէր կեանքի վրա, ինչ հայեացք որ ունէր իր տան շէնքերի վրա.—ինչ որ հին է, այն նուիրական է, ուրեմն պէտք է մնայ և անփոփոխ մնայ, թէև մաշված լինէր, թէև փտած լինէր: Նա որպէս չէր փոխում այն հնացած և ջարդված դուռը, որի միջով ներս էր մտել և դուրս էր եկել նրա հայրը, պապը և պապի պապը,—այնպէս էլ չէր փոխում այն սովորութիւններից և ոչ մի կէտ, որով ապրել էին նրա նախնիքը:

Մասիսեանի ամբողջ ընտանիքը նմանում էր մի բաղադրեալ մեքենայի, որի գլխաւոր ճախարակը էր ինքը—աղան: Նա դէպի որ կողմը և պտըտվում էր, բոլորին իր հետ մի և նոյն ուղղութեամբ պտոյտ էր տալիս: Վայ նրան, որ լետ կը մնար, կը հակառակէր... Նա էր ամենի համար կեանքի օրինակելի պատկե-



ըր, մնացած բոլորը պէտք է հետևէին նրա օրինակին. — պէտք է ուտէին, ինչ որ նա սիրում էր ուտել, պէտք է խօսէին, ինչ որ նա սիրում էր խօսել, պէտք է քնէին, երբ նա էր քնում, պէտք է վերկենային, երբ որ նա էր վերկենում, մի խօսքով, նրա ճաշակը ամենի ճաշակն էր, նրա խելքը ամենի խելքն էր...

Ամեն առաւօտ, երբ նա գնում էր բազար, առնում էր ճաշի և ընթրիքի համար այն պաշարները միայն, որ ինքը սիրում էր ուտել, և ամեն օր, խիստ սակաւ բացառութեամբ, պատրաստել էր տալիս մի և նոյն կերակուրները: Այսպէսով կարելի էր զգուել, կարելի էր ախորժակը կորցնել, բայց ինչ փոյթ, երբ աղան սիրում էր մի շաբաթ շարունակ խաշ ուտել, մի շաբաթ տօլմա կամ քուփթա ուտել: Երբ տրտունջ էր բարձրանում «ան, եդ ինչ է, ամեն օր մի և նոյն խաշը, մի և նոյն սխտորը... մեռանք ուտելով»... Սովորական պատասխանը լինում էր. «Ինչու ես չեմ մեռնում»: Նա ամեն ինչ փորձում էր իր «եսի» տեսակետից. ինչ որ նրա «եսին» չէր վնասում, ուրիշին էլ չէր կարող վնասել. ինչ որ նրա «եսի» համար լաւ էր, ախորժակի էր, պէտք է ամենի համար լաւ լինէր: — Ահա այդ է եսականութեան ճիշդ պատկերը, որ երբ

խառնվում է բռնակալութեան հետ, ստանում է հրէշաւոր կերպարանք: Մասիսեանը կատարելատիպն էր այդ պատկերի:

Մասիսեանի տնտեսութեան մէջ բոլոր սովորութիւնները մնացել էին իրանց նահապետական պարզութեամբ: Դանակը և պատառաքողը դեռ ես մուտք չէին գործել նրա սեղանի վրա. նա հացը դանակով կտրելը մեղք էր համարում: Ամեն թանձր կերակուր ուտում էին ձեռքերով, միայն ջրալի կերակուրների համար դրգալ էր գործ ածվում: Աղան միշտ մենակ էր ճաշում, և այն ժամանակ, երբ տանը հիւրեր չը կային, բայց հիւրեր նա միշտ ունենում էր, օտարների վերաբերութեամբ նա ժլատ չէր. «Հացը շատ բան կարող է շինել»... ասում էր նա սովորաբար: Բայց բանն այն է, որ հիւրերին ես մի և նոյնն էր ուտացնում, ինչ որ ինքն էր սիրում: Մասիսեանի տան ամեն օրվայ խաշը և քուփթան առակ էր դարձել: Ստեփանը սկզբում հօր հետ էր ուտում, երբ նոր աւարտել էր և նոր էր դարձել Թիֆլիսից, բայց այն օրից, երբ նա իր հօրը ատելի դարձաւ, հետևապէս և զրկվեցաւ նրա սեղանից: Նա ուտում էր այնուհետև, մօր հետ, որը իր աղջիկների հետ առանձին սեղան էր նստում: Ասիական սովորութիւններից առաջ եկած այդ առանձնութիւնը մի բախտ էր ա-



մեն վայելչութիւնից զրկված գերդաստանի համար: Տիկին Մարիամը երբեմն իր զաւակների աղաչանքին զիջանելով, գալտնի պատրաստել էր տալիս մի կերակուր, որ աղան չէր պատուիրել, բայց երբ յայտնվում էր «գողութիւնը», այն ժամանակ լիշոցները և կռիւր վերջ չունէին:

Աստուծոյ առանձին ողորմութիւնը պէտք է համարել, որ աղան—ընտանիքի հրէշը—ամբողջ օրը տանը չէր գտանվում: Վաղ առաւօտեան նա գնում էր ժամ, այնտեղից դիմում էր խանութը, ուր մնում էր բոլոր ցերեկը մինչև արևի մտնելը և երեկոյեան դառնում էր տուն: Նրա բացակայութեան ժամանակ ընտանիքը աւելի ազատ էր զգում իրան, կարող էր հանգստանալ, կարող էր զուարճանալ: Իսկ այդ զուարճութիւնը սահմանափակված էր տան չորս պատերի մէջ, որին աւելի նպաստում էր պարտէզը: Պարտէզի մէջ կար մի հին լճակ, որ միշտ լիքն էր լինում ջրով, նրա բոլորտիքը շրջապատած էր ահագին ծառերով, որոնք աճելով, իրարանցնելով, կազմել էին լճակի վրա խիստ զեղեցեկ կամարներ սաղարթախիտ ոստերով: Արեգակի ճառագայթները երբեք մուտք չէին գործում այնտեղ, և ամառվայ սաստիկ տոթերի ժամանակ միշտ կարելի էր գտնել այդ լճակի հովանաւոր փերի մօտ

խիստ ախորժելի զովութիւն: Այնտեղ տիկին Մարիամը իր զաւակների հետ անցուցանում էր ցերեկվայ հանգստի ժամերը, երբ ազատ էր լինում տնային գործերից: Գայիանէն և Հռիփսիմէն, նստած մէկը միւսի մօտ, ծառերի շուաքի տակ տարածված գորգի վրա, իրանց մանրիկ մատիկներով կամ կարում էին, քրչփրչում էին, ծիծաղում էին, և կամ ձանձրանալով, կարը մի կողմ թողնելով, սկսում էին հացի փշրանք շաղ տալ լճի մէջ, դուրս հրաւիրել ձկներին, որոնց թութալը աւելի էր զուարճացնում երեխաներին: Մայրը նայում էր նրանց վրա և ուրախանում էր: Այնտեղ հանգստանում էր և Ստեփանը, երբ յոգնած, թուլացած տուն էր դառնում իր մասնաւոր դասերից, որ տալիս էր զանազան տներում:

Արեւելեան տաք երկրներում, որոնց թուում կարելի է համարել և Ե...քաղաքը, առատ ջուրը և ընդարձակ պարտէզը բակերի մէջ մի առանձին միջիւրութիւն է փակված ընտանիքի համար, որ տնից դուրս գուրկ է մնում բոլոր զուարճութիւններից: Մասիսեանի տան մէջ այդ կարեւորութեանը մասամբ բաւակաւութիւն էր տալիս նրա պարտէզը: Եթէ ոչ, խոնաւ, օդից և լոյսից զրկված, նեղ սենեակները բոլորովին կը մաշէին, կը սպանէին բնակիչներին, եթէ պարտէզը չը լինէր: Տա-



քուայ երեք եղանակներէ մեծ մասը—գարու-  
նը, ամառը և աշունը—Համարեա այնտեղ էին  
անցկացնում: Այն տեղ ծառերի Հովանու տակ,  
լճակի ափերի մօտ ճաշում էին, հիւրեր էին  
ընդունում, այնտեղ պարապվում էին, և այն-  
տեղ գիշերները քնում էին առանձին պատ-  
րաստված «քէթիւրներ»\*) մէջ: Ընկերու-  
թիւնը ծառերի, խոտերի, ծաղիկների և թըռ-  
չունների հետ, մօտեցնում է մարդուն այն  
երանական կեանքին, որ աւելի մօտ է բնու-  
թեանը:

ՁԱ.

Տօթալին օր էր. յուլիսեան արեգակը սաս-  
տիկ այլում էր: Տիկին Մարիամը ճաշի սեղա-  
նը պատրաստել էր փոքրիկ լճակի ափի մօտ,  
սպասում էր Ստեփանը տուն դառնայ, որ միա-  
սին ճաշեն: Անցաւ սովորական ժամը, անցաւ  
մի ժամ ևս, երկու ժամ ևս, նա չը յայտնվե-

\*) Քէթիւր մի տեսակ քառանկիւնի, մեծ արկղի  
ձև ունեցող տախտակներով շինված, շարժական  
սենեակ է, որ բարձրացնում են չորս երկայն սիւ-  
ների վրա, աների պարտէզների մէջ, կամ կտուր-  
ների վրա: Նրա մէջ քնում են ամառը, որովհե-  
տե համ զով է լինում: Համ պահպանում է մօ-  
ծակներից և այլ թունաւոր միջատներից:

ցաւ: Աղջիկները չը կարողանալով համբերել,  
իրանց բաժինը կերան և սկսեցին խաղալ պար-  
տէզի մէջ: Խեղճ կինը մի պատառ անգամ  
բերանը չը դրեց և սպասում էր որդուն:

Վերջապէս եկաւ նա, լուռ և տխուր, որ-  
պէս լինում էր միշտ: Առանց մի բառ խօ-  
սելու, նա անցաւ և պառկեց գորգի վրա, որ  
փռած էր ծառի տակ: Մայրը «թոնրատանն»  
էր և պատրաստում էր նրա բաժին ճաշը.  
Գայիանէն և Հռիփսիմէն խոտերի վրա նստած,  
հագցնում էին իրանց «տիկիներին» նոր կար-  
ված հագուստներ, զարդարում էին, պատրաս-  
տում էին, որովհետեւ միւս առաւօտեան կի-  
րակի էր և դրացի աղջիկները պէտք է «տիկի-  
ների» հարսանիք ունենային: Ստեփանի ուշա-  
գրութիւնը գրաւեց իր քոյրերի ժրջան աշ-  
խատութիւնը:

—Հռիփսիմէ, եկ ինձ մօտ, սասց նա:

—Ի՞նչ ես ասում, ես այստեղ գործ ունեմ,  
պատասխանեց փոքրիկ Հռիփսիմէն:

—Ե՛կ, ասում եմ քեզ:

Փոքրիկ աղջիկը մօտեցաւ եղբօրը և ընկաւ  
նրա կուրծքի վրա:

—Ինձ հետ խաղայ, Հռիփսիմէ:

—Ի՞նչ խաղամ, դու «տիկին» չունես:

—Կոխ տուր ինձ, մագերիցս քաշէ, ինչ որ  
ուզում ես, արա՛, Հռիփսիմէ:



— Ինչ չէ՞ն ծեծի:

— Չեմ ծեծի:

Փոքրիկ Հուփսիմէն ծիծաղեց և փախաւ Եղբոր մօտից:

Լինում են րօպէներ, երբ մարդ վրդովված է լինում և աշխատում է բոլորովին երեսխալական զուարճութիւններով իր բարկութիւնը ցրվել: Պատանի Ստեփանը այդ դրութեան մէջն էր նոյն ժամում: Նա աւելի երկար ձգվեցաւ գորգի վրա և սկսեց նայել դէպի վեր, կարծես, ծառերի սօսափիւնից աշխատում էր նախագուշակել, թէ որպիսի ապագայ էր սպասում իրան: Այդ նիհար, մելամաղձոտ պատանին, բաւական շնորհալի և համակրական դէմքով, իր հասակից աւելի ծերացած էր երևում: Նա այժմ տասն և ութ տարեկան էր. մի փոթորկալի հասակ, երբ մանկական կրակը սկսում է բորբոքվել: Բայց ընդհակառակն, այն աստիճան սառն, այն աստիճան մտամոլոր և լուռ ու մունջ էր նա, որ հէնց առաջին տեսքից կարելի էր կարծել, որ մի գաղտնի ցաւ ներսից նրան տանջում էր: Երբեմն նա մոռանում էր իրան, մանաւանդ երբ լինում էր մի լաւ ընկերութեան մէջ. այդ միջոցում կարելի էր տեսնել նրան ուրախ, սովորականից աւելի խօսող, առօրէ, փայլում էր մանկական ջերմ աշխուժութեամբ: Կարդալով զանազան գրքեր, Ստեփանը շատ

վաղ ընկաւ գաղափարի մոլորութեան մէջ, այն տեսակ գաղափարի, որ հրապուրելով մանուկների եռանդը, յափշտակելով նրանց երեւակայութիւնը, շինում է նրանցից մի տեսակ ցնորամիտ էակներ, որոնք թողնելով տոկուն աշխատութիւնը, դեռ մի հիմնաւոր բան չը սորված, դեռ լաւ չը տիրապետած գիտութեան որ և է ճիւղին, ընկնում են երեւակայութիւնների ետեւից, թէ անպատճառ պէտք է կատարեն մի մեծ գործ, առանց մտածելու նրա համար առաջուց պատրաստված լինել: Դա մի տեսակ հիւանդութիւն է, որ ընդհատում է մանուկների յառաջադիմութիւնը և պատրաստում է դատարկամիտ թերութների մի հասարակութիւն, որոնք փոխանակ իրանց անպատրաստականութիւնը ճանաչելու, սկսում են ատել, արհամարհել, պախարակել հասարակական կազմակերպութիւնը, թէ նրանց չէին գնահատում, թէ նրանց չէին հասկանում, և այս պատճառով նրանք չէին կարողանում անել այն, ինչ որ ցանկանում էին, ինչ որ աւելի լաւ և օգտաւէտ էր... Բայց Ստեփանը մասամբ զերծ մնաց այդ հիւանդութիւնից: Նա դեռ ևս հասարակութեան հետ գործ չէր ունեցել, և նրան ոչ սիրել և ոչ ատել կարող էր: Նա գործ էր ունեցել ընտանիքի հետ, որի մէջ ծնվել, որի մէջ սնվել և որի բնակալութեան բոլոր դառ-



նութիւնը փորձել էր իր անձի վրա: Նա ատում էր միայն ճնշող և հարստահարող ընտանիքը, բայց դեռ ևս չը գիտէր, որ ընտանիքը մի օղակ էր հասարակական կազմակերպութեան ամբողջ շղթայակապի մէջ և թէ ընտանիքի վատ յատկութիւնները տարածվում են ամբողջ հասարակութեան վրա:

Ստրկութիւնը տանելի է լինում և մինչև անգամ անցնում է անզգալի կերպով, երբ մարդ դեռ չէ հասկացել, թէ ինչ բան է ազատութիւնը: Այնպէս էլ ընտանեկան բռնակալութիւնը տանելի և բոլորովին սովորական է դառնում ճնշված, հարստահարված անդամների համար, երբ կեանքի աւելի լաւ և աւելի վայելուչ կողմերը նրանց ծանօթ չէին: Անցկացնելով իր թշուառ երեխայութիւնը, Ստեփանը, որպէս տղայ, սկզբում չէր կարող հասկանալ բոլոր ճնշումը, բոլոր ապականութիւնը այն մթնոլորտի, որի մէջ վարել էր նա իր կեանքի առաջին տարիները: Բայց երբ կտրվեցաւ նա ընտանիքից, երբ ուղարկվեցաւ մի ուրիշ քաղաք, երբ դպրոց մտաւ, երբ բաւական զարգացաւ, — այն ժամանակ միայն հասկացաւ, թէ որպիսի շրջանի մէջ դժբախտութիւն էր ունեցել ինքն ծնված լինել: Այն ժամանակ ամբողջ անցեալը, դառն և սարսափելի անցեալը միանգամով ծանրացաւ նրա

սրտի վրա: Դա մի սոսկալի լեղափոխութիւն է մարդու կեանքի մէջ: Դա արբած մարդու այն դրութիւնն է, որ իր մարմնի վերքերը տեսնում է այն ժամանակ և նրանց ցաւը ըզգում է այն ժամանակ, երբ լանկարծ սթափվում է: Նոյնը պատահեցաւ և Ստեփանի հետ: Երբ ինքնաճանաչութիւնը բաց արեց նրա աչքերը, այն ժամանակ յիշողութիւնը մի հարուստ և բաղադրեալ պանօրամայի նման սկսեց միմեանց ետևից երևան հանել անցեալ կեանքի ծածկված պատկերները, մինը միւսից աւելի տխուր և աւելի սև գոյներով նկարված: Այն ժամանակ ծագեց նրա սրտի մէջ խաբված մարդու դառն ատելութիւնը, որ հասնում է կատաղի վրէժնդրութեան զգացմունքի, երբ մտաբերում է, թէ իրան խաբել էին, թէ օգուտ էին քաղել իր անհասկացողութիւնից, ճնշել էին, հարստահարել էին, և չէին տուել այն, ինչ որ պետք էր, ինչ որ արժանն էր:

Ստեփանի ատելութիւնը գէպի հօր բռնակալութիւնը աւելի սաստկանում էր այն ժամանակ, երբ տեսնում էր, որ ինքը ունէ մայր, որ միշտ բարի է եղել գէպի նա, որ միշտ սիրել է նրան մայրական սրտի բոլոր քնքշութեամբ, բայց նա ևս աւելի վատթար քան թէ ինքը անբախտ էր և նոյն բռնակալութեան զոհ: Նա տեսնում էր իր քոյրերին, այն ան-



մեղ և նազելի արարածներին, որ երբէք չեն լսել Հօր բերնից մի ուրախացուցիչ խօսք, երբէք չեն վայելել նրա զգուանքը, երբէք չեն տեսել նրա ժպիտը, այլ միշտ հանդիպել են սառն, կոշտ, կոպիտ խստութեան: Հօր երկիւղը նրանց մէջ միշտ աւելի սաստիկ է եղել, քան երկիւղը սատանայից, կամ կատաղած գայլից:

Ստեփանը դեռ պառկած լճակի մօտ, նայում էր ծառերին, Գայիանէն և Հռիփսիմէն դեռ խաղում էին այնտեղ, երբ մայրը դուրս եկաւ թոնրատնից, և մօտենալով նրան, ասաց, արգեօք կը կամենար մի բան ուտել:

— Ես կուզէի քնել, սաստիկ յոգնած եմ, պատասխանեց որդին սառն կերպով:

— Գուհիւանդ ես, ի՞նչ է, դէմքդ սաստիկ փոխվել է, ասաց մայրը երկիւղով լի ձայնով և նստեց նրա մօտ, աչքերը չէր հեռացնում որդու երեսից:

— Հիւանդ չեմ, թողէք ինձ հանգստանալ:

— Ի՞նչու մի բան չես ուտում:

— Ես ճաշել եմ:

Ստեփանը պատմեց, թէ գնացել էր ճանապարհ գցելու իր ընկերներից մէկին, որ գնում է Պետերբուրգ համալսարան մտնելու. ծանօթները մի այգում ճաշ էին պատրաստել նրա համար, ինքն էլ մասնակից էր այն ու-

րախութեանը. կերան, խմեցին, երգեցին և ուրիշ շատ զգուծիւններ արեցին:

— Քէֆից լետոյ այսպէս տխուր չեն լինում, նկատեց մայրը ժպտելով:

— Պատահում է... Այս ընկերս ինձանից մի տարով ուշ է աւարտել դիմնագիւյում, նա հիմալ գնում է շարունակելու իր ուսումը, բայց ես դեռ այստեղ եմ:

Վերջին խօսքերը փոխեցին մօր զգացած ռուպէական ուրախութիւնը:

— Բաւական է, որդի, թող տուր այդ մըտքերը, ինչ որ սովորել ես, այն էլ բաւական է, ասաց մայրը:

Որդին ոչինչ չը պատասխանեց և տակաւին նայում էր ծառերի վրա, լսում էր նրանց խուլ սօսափիւնը, որ առաջ էր գալիս տերևների մեղմիկ շարժվելուց:

Մայրը սկսեց խրատել նրան, թէ ուսումը սովորում են բժիշկ, չինովնիկ լինելու համար, կամ մի ուրիշ ծառայութիւն գտնելու համար, իսկ այդ բոլորը մի կտոր հացի կամ փողի համար է, բայց ինքը, փառք Աստուծոյ, փողի կարօտութիւն չունի, թէ նրա հայրը քաղաքի առաջին հարուստն է, էլ ի՞նչ է ստիպում թողնել տուն, տեղ, մայր, քույրեր, ազգական և գնալ նորից չարչարվել, թէ ի՞նչ է, ես պէտք է բոլոր գրքերը սովորեմ:



— Թող տուր, մայր, խօսեց որդին տհաճութեամբ, ես չեմ կարող քեզ հասկացնել, թէ ուսումը, գիտութիւնը չեն սովորում միայն չինովնիկ դառնալու կամ փող վաստակելու համար, և ոչ կարող եմ քեզ համոզել, թէ Վան նպատակներ, որոնք աւելի բարձր են փողից և չինովնիկութիւնից, իսկ ինչ որ վերաբերում է իմ հօր հարստութեանը, խնդրում եմ այդ մասին ինձ հետ չը խօսել:

— Ախար էլ ո՞ւմ համար է, ասա ո՞ւմ համար, քեզանից աւելի խօ մի ուրիշ որդի չունի, էլ ո՞ւմ պէտք է մնայ այնքան փողը:

Ստեփանը, որին երբեք չէր պատահել խնայողութեամբ խօսել մօր հետ, լսում էր նրա խրատները բաւական վրդոված կերպով. նրա երեսի գոյնը հազար տեսակ փոխվեցաւ, նրա շրթունքները դողդողում էին և աչքերի մէջ արտայայտվում էր սարսափելի խռովութիւն:

— Ես թքել եմ այն հարստութեան վրա, որի մասին դու խօսում ես, մայր, ասաց նա խորին արհամարհանքով. — ինձ պէտք չէ նա, նրա վրա անէծք կայ, որ լաւիտեան կը մընայ, նրա ամեն մի կօպէկի մէջ հազարաւոր մարդու արտասուք և արիւն կայ. զգուշի՛ր է այս տեսակ հարստութիւնը:

Եւ աւելացրուց նա, թէ ինքը դեռ գիմնագիւյի վեցերորդ դասատւումն էր, երբ մեր-

ժեց հօրից փող ստանալը, և եթէ մինչև այն օր ստանում էր, պատճառն այն էր, որ դեռ երեսայ էր, չէր հասկանում, դեռ լաւ չէր ճանաչել հօրը: Այնուհետև նա յոյսը դրեց իր սեփական աշխատութեան վրա, և ապրում էր յիսուն կօպէկանոց դասերով, և այնպէս էլ կը շարունակէ, մինչև բոլորովին կաւարտէ իր ուսումը:

— Ուրեմն դու էլի՞ պիտի գնաս, կոչեց մայրը ողորմելի ձայնով:

— Պիտի գնամ, և գուցէ շուտով, եթէ ես ձեզ այսքան չը սիրէի, եթէ քոյրերիս տեսնել չուզէի, ես այստեղ չէի գալ: Մայրը արտասուքը աչքերում ասաց, թէ ինքը ամենևին ցանկութիւն չունի հակառակել որդու նպատակներին, որին «իր աչքի լոյսի պէս սիրում է», միայն աղաչում է չը զրկել իրան այն մխիթարութիւնից, որ գտնում է ամեն օր նրան տեսնելով: Եւ բաց անելով իր սրտի խորին վերքերը, յայտնեց, թէ ինքը դժբախտ է և շատ դժբախտ, թէ նա իր ամբողջ կեանքում մի ուրախ օր չի ունեցել, թէ նա շատ կը ցանկանար մեռնել և միշտ այդ ցանկութիւնը նրա սրտում եղել է, միայն չէ ուղեցել իր երեխերքը անտէր և անխնամ թողնել «որովհետև հայրը նրանց վրա չէ մտածում»... Թէ նա իր յոյսը դրել էր միայն որդու վրա, հիմայ որ նրանից էլ զրկվի, ին-



քը հազիւ կարող է դիմանալ այդ ցաւին:

Որդին տեսնում էր մօր խօսքերի մէջ խիստ տխուր ճշմարտութիւններ և ոչինչ խօսք չէր գտնում պատասխանելու, միայն ակնոտում էր, որ պատճառ տուեց նրան տխրելու:

Մայրը աւելացրուց, թէ հօրը այսուհետև փոխել չէր կարելի, թէ նա որպէս կայ, այնպէս էլ կը մնայ, միայն որդին աւելի խելօքութիւն արած կը լինէր, եթէ աշխատէր նրա հետ հաշտվել: Թէ հայրը իսկապէս վատ սիրտ չունէր դէպի որդին, սիրում է նրան, բայց չէ ուզում իր սէրը ցոյց տալ, ծածուկ գոլում է նրան ուրիշների առջև, բայց որդուն չէ ուզում ցոյց տալ, թէ ինքը հաւանում է նրան: Եւ այդ բոլորը առաջ են գալիս նրա անձնասիրութիւնից, որովհետև նա չէ կարող ներել, որ որդին հակառակ է իրան, այլ պահանջում է անպայման հնազանդութիւն: Նա ծածուկ գոլում է նրան ուրիշների առջև, որպէս գոլում է իր ապրանքը մուշտարուն ցոյց տալու ժամանակ, թէ և ինքն էլ համոզված է, որ այնքան լաւ չէ: Մօրը, ի հարկէ, ցաւեցնում են հօր այս տեսակ վարմունքները, բայց ոչինչով օգնել չէ կարող, միայն խորհուրդ է տալիս, թողնել այն բաները, որոնք բոլորովին հաճելի չեն հօրը, օրինակ, նա շատ է բարկանում, որ որդին դասեր է տալիս, և այնպի-

սի մարդկանց տներում, որոնցից աւելի հարուստ գործակատարներ ունի հայրը, և նա որդու այս վարմունքը «խիստ ամօթ է համարում» իր համար: Ինչ կասեն տեսնողները: Բացի դրանից հայրը աւելի բարկացած էր այն բանի վրա, որ որդին թատրօնում ինչ որ «օլինբազութիւններ» է անում, թէ այդ շատ ամօթ էր հօր համար. թէ նա աղայի որդի է և պէտք է որ «աղավարի» պահէ իրան,—ամեն մարդու հետ չը խօսէ, ամեն մարդու բարև չը տայ, ամեն մարդու տուն չը մտնի, միշտ իրան ծանր պահէ, որ տեսնողը ասէ, ինչ շնորքով տղայ ունի Մասիսեանը...

—Այդ բոլորը դարդակ խօսքեր են, պատասխանեց որդին, իսկ ինչ որ վերաբերում է իմ մասնաւոր դասատուութիւններին, այդ նրա համար է, որ մի քանի մանէթ ձեռք ձգեմ ճանապարհի ծախսի համար: Իսկ այն ներկայացումը, որ տուեցինք, և որի պատճառով ես բեմ դուրս եկայ, սիրողների ներկայացում էր, յօգուտ այն ուսանողի, որին այսօր ճանապարհ դրեցինք:

Լսելով որդու խօսքերը, թէ նա մասնաւոր դասեր է տալիս, որ ճանապարհի ծախս ունենայ, մայրը կրկին վշտացաւ, և արտասուքը աչքերում հարցրուց.



—Դու պիտի գնաս ուրեմն...

—Անպատճառ պիտի գնամ:

ՅԲ.

Պետրոս Մասիսեանը բաւական ինքնուրոյն մարդ էր. նա ներկայացուցիչ էր այն ծանրագլուխ «խօջայների», որոնք պարսից տիրապետութեան ժամանակ նշանաւոր դեր էին խաղում վաճառականութեան մէջ, յարգանք էին վայելում ոչ նրա համար, որ արդար և հաւատարիմ մարդիկ էին, այլ գիտաւորապէս նրա համար, որ կապիտալիստներ էին և գիտէին կապիտալի գործածութեան բոլոր խաբէյական ձևերը: Մասիսեանը լիշեալ սերունդի մնացորդներէց էր, որ պարսից իշխանութիւնը այն երկրից անցնելէն յետոյ, նոր տիրապետողի նոր քաղաքակրթութիւնը ամենեւին չը կարողացաւ փոխել նրան: Հագուստը մինչև անգամ մնացել էր մի և նոյնը, որպէս հագնում էին պարսիկների ժամանակ հայ «խօջայները». մի և նոյն դաբան, որ հասնում էր մինչև ոտները, մի և նոյն արխալուղը, որ կարճ չէր դաբայից, մի և նոյն լայն շալվարը, կապոյտ կտաւից կարած, և մի և նոյն քօշերը: Դուրսը նոյնպէս մշտապէս ծածկված էր բուխարայի սև մորթից պատրաստած քառանկիւնի

տափակ գդակով, որի նմանը մինչև այսօր կարելի է տեսնել գիւղացի տէրտէրների գլխին: Բոլոր եղանակներում թէ ամառը և թէ ձմեռը, նրա հագուստը մի նոյնն էր: Նա ունէր մի ձեռք հագուստ միայն, որ շարունակ հագնում էր, և փոխում էր այն ժամանակ միայն, երբ բոլորովին մաշվում էր, բայց երբ էր փոխում, այդ դժուար է որոշել, որովհետև նրա վրա նոր հագուստ երբէք չէր կարելի տեսնել:

Ինքը Պետրոս Մասիսեանը միջահասակ մարդ էր, հաստիկ, կլօրիկ, փորը դուրս ընկած, գլուխը դէպի յետ թեքված, որ կարծել էր տալիս, թէ ահա—ահա հէնց իսկոյն կընկնի քամակի վրա: Դէմքը կատարեալ գաղանային արտայայտութիւն ունէր. ածելած թըշերը նոյնպէս ուռած և կախված էին, որպէս փորը. վիզը կարճ էր, իսկ խորամանկ աչքերը խրված էին թաւ յօնքերի տակ. ահագին գլուխը միշտ սափրած էր լինում: Մի մոլգդեղին գոյն, որ յատուկ է մօնղօլական ցեղերին, ներկել էր նրա ալյանդակ դէմքը, մինչև անգամ ականջները, նոյն դեղնութիւնը կարելի էր տեսնել և նրա աչքերի սպիտակուցի մէջ:

Պետրոս Մասիսեանը բացի զանազան տեսակ առևտրական ձեռնարկութիւններից, մի և նոյն ժամանակ էր մի նշանաւոր վաշխառու



ամբողջ գաւառի մէջ: Այդ գործունէութեան մէջ նա որոշվում էր միւս վաշխառուներէից նրանով միայն, որ չը նայելով իր ահագին հարստութեանը, նա երբէք մի խոշոր գումար միանգամով մէկին տօկոսով չէր տալիս, այլ բաց էր թողնում մանր գումարներ միայն, սկսեալ հինգ ըութըց մինչև հարիւր ըութը, և առաւելապէս հաւատում էր գիւղացիներին: Այս պատճառով նրա պարտականները անթիւ էին: Մանր փոխառութիւնները այն նպատակով օգտաւէտ էր համարում նա, որ համ տօկոսը ծանր էր լինում, համ էլ, եթէ կորչելու լինէր, մի մեծ բան չէր: Իսկ գիւղացիներին հաւատում էր, որովհետև գիւղացին նրա կարծիքով ռամիկ էր, ուրիշի փող ուտելը դեռ սովորած չէր. դրանց Մասիսեանը համարում էր իր «կաթնատու կովերը» և այդ էր պատճառը, որ տօկոսը նրա լեզվում կոչվում էր «կաթ»:

Ամեն անգամ, երբ մի գիւղացի յայտնվում էր նրա մօտ փողի համար, Մասիսեանը պէտք է տեղեկանար նրա ամբողջ պատմութիւնը, թէ ո՞վ է նա, ո՞ւմ որդին, ունի՞ արդեօք հայր, մայր, որդիներ, եղբայրներ, բաժանված են ապրում, թէ միասին, ի՞նչպէս է կոչվում իւրաքանչիւրի անունը, ի՞նչ կայք ունի և ո՞րտեղ են գտնվում. կամ կառաջարկէր այս տեսակ

հարցեր, թէ իր կեանքում ի՞նչ տեսակ պարամունքներ է ունեցել, ի՞նչ գործի մէջ յաջողվել է նրան, և ի՞նչ գործի մէջ վնասվել է, և կամ այդ փողը, որ ուզում է, ի՞նչ բանի համար պէտք է գործ դնէ: Երբ գիւղացին կը յայտնէր, թէ այս ինչ պէտքի համար է, օրինակ, եթէ ասելու լինէր՝ մի եղն պիտի առնեմ,—նա կը սկսէր եզան մասին հազար ումէկ հարցով փորձ անել, թէ նրա այս ինչ հիւանդութիւնը ի՞նչով է բժշկվում, ի՞նչ ճար պէտք է անել, երբ եզը թարմ առնուտ ուտելիս փորը ուռչում է, ի՞նչ ճար պէտք է անել «դաբաղ» հիւանդութեան ժամանակ, եզան ո՞ր տեսակն է լաւ լինում և այլն, և այլն: Խաբել նրան և փող առնել, անկարելի էր, նրա հարցաքննութիւնից ամենաճարպիկ խաբբեան չէր կարող չը կտրվել:

Մի երեկոյ յայտնվեցաւ նրա տանը մի անծանօթ պարոն, ալեխառն մագերով, խորշոմներով պատած դէմքով, մաշված, բայց բաւական մաքուր պահված հագուստով, և պահանջում էր մի գումար բամբակի առևտուրի մէջ գործ դնելու համար: Դա այն անյաջողակ թշուառներից մէկն էր, որ կեանքի մէջ իր արդարութեան և ճշմարտասիրութեան զոհ է դառնում, և չը կարողանալով մաքառել տիրող անողորմութեան հետ, ամեն գործի մէջ



խաբւում է: Որովհետեւ երբ կեանքի մէջ մարդկանց յարաբերութիւնները ապականված են լինում, այն ժամանակ բարոյական խելքը կորցնում է իր նշանակութիւնը, երբ աւելի խորամանկութեան և խաբէյութեան պահանջ կար: Այս տեսակ մարդիկ միշտ գանգատվում են բախտի վրա, բայց մի և նոյն ժամանակ յոյսն էլ ձեռքից չեն թողնում, թէ մի օր հարստանալու են,—ամեն գործի մէջ խրվում են, ամեն բան փորձում են, բայց միշտ անխաբաւ բախտը նրանց հակառակում է...

Պարոնը ընտրել էր երեկոն Մասիսեանի հետ տեսնվելու համար և եկել էր նրա տունը, որովհետեւ խանութում նրա հետ երկար խօսել չէր կարելի: Աղան միշտ քաղաքավարի էր դէպի այս տեսակ հիւրերը, մանաւանդ երբ խմանում էր, թէ փողի համար են եկել:

Մասիսեանը մենակ էր իր սենեակում, ծալապատիկ նստել էր տախտի վրա, նեղ լուսամուտի հանդէպ, որ մի փոքր զովանայ խեղդող տօթից: Նրա մօտ դրած էր մի մեծ ամանով ջուր, սառուցը մէջը ձգած, որից շուտ շուտ խմում էր: Թէյ խմելու սովորութիւն չունէր և տան մնացած անդամները խմում էին կամ զաղտնի, կամ երբ մի պատուելի հիւր էր պատահում: Նա նստել էր մի մաշված խալիչայի կտորի վրա համարեա

թէ կիսամերկ դրութեան մէջ: Հագին ունէր արխալուղը միայն, որի կօճակները արձակած էին, և շապկի բացված օձիքից երևում էր թաւամազ կուրծքը: Շալվարը և գուլքաները նոյնպէս հանել էր, և մերկ ոտները մինչև սրունգները բաց էին: Միայն թանձր մօրթէ գդակը նա գլխին ունէր, որ հին մարդերի սովորութեամբ, երբէք չէր առնում գլխից, մինչև անգամ եկեղեցում եղած ժամանակ: Սենեակում մուլթն էր, երբ անծանօթը ներս մտաւ, նա հրամայեց ճրագ վառել:

Անծանօթը, գտնելով աղային մի ծիծաղելի դրութեան մէջ, մտածեց արդարացնել նրա անքաղաքավարութիւնը, և սկսեց եղանակից:

— Տօթից խեղդվում է մարդ, ամենևին քամի չէ փչում, դուք լաւ էք արել, այսպիսով կարելի է յաղթել տաքութեանը:

— Ե՛հ, որդի, (Մասիսեանը ամեն մարդու որդի էր կոչում, ինչ հասակում և լինէր նա) պէտք է շնորհակալ լինել Աստուծուց, եթէ ամառվայ տօթը չը լինէր, զարնան պատիւը չէինք հասկանալ, եթէ ձմեռվայ ցուրտը չը լինէր, աշնան պատիւը չէինք հասկանալ: Աստուած ամեն բան և լաւ և վատ է ստեղծել և չար և բարի է արել. գիշերվայ խաւարի դէմ ցերեկվայ լոյսն է ստեղծել. այնպէս էլ մէկին աղքատ է արել, միւսին հարուստ, եթէ



աղքատութիւնը չը լինէր, փողի պատիւը չէինք հասկանալ:

Մասիսեանի բոլոր դատողութիւններն մէջ վերջին խօսքը փողի վրա էր լինում: Անծանօթը, որ իրան խիստ նեղված էր գգում, փողի անունը մէջ գալով, յայտնեց իր խնդիրքը: Մասիսեանը թողեց խրատները և նրա դէմքը աւելի գործնական և սառն արտայայտութիւն ստացաւ:

— Դու ուզում ես բամբակի առևտուր անել, (հա, նա դուքով երբէք չէր խօսում, ում հետ և լինէր): Ասա, տեսնեմ, ի՞նչ գիտես այդ առևտուրի մասին:

Անծանօթը պատմեց, թէ բամբակի վաճառականութիւնը բաւական ծանօթ էր իրան, թէ Ամերիկայի պատերազմի ժամանակ (ըստրուկների ազատութեան մասին) շատ փող վաստակեց բամբակից, բայց չետոյ կորցրեց, իսկ այժմ ցանկանում էր կրկին փորձել իր բաղձը:

— Առևտուրը բաղձի բան չէ, խելքի բան է, պատասխանեց Մասիսեանը գործադէտ մարդու նախատեսութեամբ, — դու էն ասա, թէ ինչպէս պէտք է բանացնես իմ փողերը:

Անծանօթը յայտնեց, թէ այդ գործի մէջ ինքը բաւական հմտութիւններ ունի, և յուսով է, որ աղայից վեր առած փողը իր փորձ-

ված ձեռքում մեծ օգուտներ կը բերէ, և աւելացրուց, թէ իրան ծանօթ է Ե...գաւառի գիւղերի մեծ մասը, ուր պարապվում են բամբակի մշակութեամբ, թէ իւրաքանչիւր գիւղում գտանվում են փոքրիկ դրամատէրներ տեղացիներից, որոնք հաւաքում են իրանց գրացիների արգիւնաբերած բամբակը, և այսպէսով բերքը ամբարվում է մի մարդու ձեռքում, և այս վերջիններից հեշտ է բաւական քանակութեամբ գնել, բերել քաղաքը և ծախել մեծ վաճառականներին: Եւ այսպիսով ինքը միջնորդի դեր կը կատարէ գիւղացի մանր «չարջիների» և քաղաքացի խոշոր կապիտալիստների մէջ, և մի տարվայ ընթացքում կարող է իր ձեռքում գտնված դրամագլուխը մի քանի անգամ շրջաբերութեան մէջ դնել և ալլն:

— Տեսնում ես, որ ոչինչ չես հասկացել, ասաց Մասիսեանը և սկսեց բացատրել իր կարծիքը անծանօթի անհասկացողութեան մասին:

Թէ գիւղացի մանր դրամատէրներից — «չարջիներից», — որպէս երկրորդական ձեռքերից բամբակ գնելը և վաճառելը չէր կարող շահաւետ լինել, որովհետեւ այդ խաբեբայ «չարջիները» իրանք «հիւլթը ծծում են և միայն չեջն են տալիս ուրիշին»: Ով որ կամենում է բամբակից օգտվել, պէտք է ինքը անմիջական յա-



րաբերութիւն ունենայ արդիւնարեւոյ գիւղացու հետ, այսինքն, անէ այն, ինչ որ «չարչին» է անում:

— Դա խիստ ձանձրալի և միանգամայն դժուար գործ է ռամիկ և լիմար գիւղացու հետ առևտուր անել, պատասխանեց անծանօթը:

— Դու շատ միամիտ մարդ ես երևում, էլ չեմ ասում, թէ խելքդ պակաս է, ասաց աղան մի փոքր վրդովված ձայնով. — աս, ողորմելի, փողը հէնց այն ռամիկ և լիմար գիւղացիներից պէտք է դուրս բերել, սա տանայ «չարչիից» ինչ կարող ես վաստակել:

Պէտք է նկատել, որ սա տանայ բառը Մասիսեանի լեզուով բոլորովին ուրիշ նշանակութիւն ունէր. սատանայ ասելով, նա հասկանում էր խելացի, իմաստուն, խորամանկ և մեծ հմտութիւններ ունեցող մարդ: Ով որ սատանայ չէր, նրա կարծիքով լիմար էր, ոչինչ բանի պէտք չէր:

Մասիսեանը սովորութիւն ունէր երկար խօսելու, և եթէ մէկի խնդիրքը մերժում էր և փող չէր տալիս, գոնեա իր «բարի խրատները» չէր խնայում նրանից: Նա սկսեց ծանօթացնել պարոնին բամբակի վաճառականութեան օգտաւէտ ձևերի հետ. յայտնեց, թէ ինքը սովորութիւն չունի այս տեսակ ձեռնարկութիւնների համար զուտ (նաղդ) փող տալ

խնդրողներին, այլ տալիս է իր խանութից այնպիսի վաճառելի մթերք, որ գիւղացիների համար պէտք են, օրինակ, էթանագին չթեր, կտաններ, զանազան տեսակ մանրուքեղէն, կնիկների զարդարանքի համար յուլունքներ, և դրանց նման բաներ: Այս տեսակ ապրանքը աւելի օգտաւէտ էր քան թէ զուտ փողը բամբակի հետ փոխելու համար. միայն պէտք է ճարպիկութիւն ունենալ, գիւղացու «խասիաթը» գիտենալ, նրա վիճակի և պահանջների հետ ծանօթ լինել: Գիւղացին ջիւղումը փող չունի, միշտ «նիսիա» է նրա առևտուրը, բայց պէտք չէ վախենալ, ինչ ապրանք, որ ուզելու լինի, պէտք է տալ, նա իր «հոգու պարտքը» կը վճարէ, ուրիշի փողը չի ուտի: Բանը նորանումն է, որ գիւղացին հէնց պարտքի վճարելու ժամանակն էլ «նաղդ» փող չի տալ, այլ կը տալ հում բերք, որ արդիւնաբերել է իր տնտեսութիւնից, օրինակ, եթէ նա բամբակի մշակութիւն ունի, պարտքի փոխարէն բամբակ կը տալ: Հիմայ վաճառականի խելքիցն (այսինքն սատանայութիւնիցն) է կախված, թէ նա, օրինակ, չիթը ի՞նչ գնով կարող է խցկել գիւղացուն, և նրա արժէքի փոխարէն քանի ֆունտ կամ պուղ բամբակ կը պարտաւորացնէ, որ վճարէ իր ժամանակին: Այս տեսակ առևտուրի մէջ կարելի է «երկու



գլխիցն էլ» շահվել. — մէկը չթից, որ գիւղացին փող չունենալով, ստիպված է անհամեմատ թանգ գնով առնել, միւսը՝ բամբակից, որ դեռ ևս պատրաստ չը լինելով, գիւղացին ստիպված է խիստ էժան գնով գնահատել: Որովհետեւ, բամբակը մի մեծ արժէք չունի գիւղացու աչքում, երբ դեռ նոր էր սերմանված, կամ դեռ չէր հասունացել, և կամ դեռ չէր հաւաքված: Նա վաճառում է իր աշխատութեան պտուղը, որ պիտի ստանայ ժամանակով. իսկ գիւղացու աշխատութիւնը միշտ կարելի է էժան գնահատել, երբ նա փողի կամ կենսական անհրաժեշտ պէտքերի կարօտութիւն ունի:

Անձանօթը լսում էր առանց ընդմիջելու աղայի խօսքերը, վերջապէս ասաց նա:

— Այդ ձեր պատմածը առեւտուրի մի և նոյն ձևն է, ինչ որ գործ են դնում «չարչիները»:

— Հա, մի և նոյնն է, և դրա մէջն է գրաւոր շահը. գիտես, մի ուրիշ բան էլ ասեմ քեզ, մեծ, զանազանութիւն կալ քարի և կըշեռքի մէջ, պէտք է այդ բանում շատ վարպետ լինել: Գիւղերում երկաթից ձուլված կըշեռքի քարեր չը կան, այլ գործ են ածում հասարակ քարեր միայն. դու պէտք է ունենաս քո առանձին ֆունտանոց քարը, կարող

է դա մի կտոր աղիւս լինել, — է հարկէ, մի փոքր ծանր քան թէ լինում է ընդունված երկաթէ ֆունտանոցը, — գիւղացին շատ չէ հետաքրքրվում գիտենալ արդեօք քարը ուղիղ էր, թէ ծուռն, և եթէ քո աղիւսի կտորը լինէր, օրինակ,  $1\frac{1}{4}$  ֆունտ և դու գործ ածէիր նրան մի ֆունտի տեղ, այն ժամանակ մէկ փութի մէջ կը ստանայիր 10 ֆունտով աւելի բամբակ. հասկանում ես, այսպիսով մեծ զանազանութիւն կանէ, եթէ մի քանի հազար փութ հաւաքելու լինես:

— Դա խօ... դա խօ...

— Ի՞նչ ես ուզում ասել, — ուզում ես ասել դա գողութիւն է, դա անիրաւութիւն է, դա խաբեբայութիւն է, է՞դ ես ուզում ասել: Ի՞նչ գողութիւն, երբ բոլոր բամբակ գնողներն այդպէս են վարվում, երբ դու մի և նոյնը չանես, չես կարող նրանց հետ մրցութիւն անել, դու կը սնանկանաս:

Անձանօթը ոչինչ չը խօսեց:

— Գիւղացին, շարունակեց աղան, շատ բարի մարդ է, նա մի լաւ սովորութիւն ունի, որ ասում է, թէ «առնողի աչքը ծախողի ձեռին կը լինի», և միշտ աւելորդով է տալիս իր մթերքը, քան թէ հարկաւոր էր, ի՞նչու օգուտ չը քաղել նրա բարեսրտութենից:

— Այդ լաւ, բայց...



— Բայց նրան խաբել պէտք չէ, ուզում ես ասել, ընդմիջեց աղան ծիծաղելով. — Եդ է հիմիկվայ «աղաթը», բոլորը եղպէս են անում, դու ուրիշ տեսակ առւտուր ստեղծել չես կարող:

Մինչ Մասիսեանը անծանօթ պարոնի հետ վաճառականական «սատանայութիւնների» վրա էր խօսում, տիկին Մարիամի սենեակում, որ կից էր աղայի սենեակին, տիրում էր խորին տըխրութիւն: Օրիորդ Գայիանէն սաստիկ հիւանդ էր, նրա մի քանի տարի առաջ ստացած հազը այժմ ցոյց էր տալիս բարակացաւի բոլոր նշանները: Հիւանդի մայրը, քույրը, եղբայրը շրջապատել էին նրա անկողինը: Հայրը գիտէր իր դստեր վտանգաւոր հիւանդութիւնը, բայց քաղաքից դառնալէն լեռնոյ չը մտաւ նրա մօտ, որովհետեւ սպասում էր պարոնին, որի հետ այժմ խօսում էր:

— Այսպէս չէ կարելի թողնել, ասաց Ստեփանը:

— Ի՞նչ անենք, հարցրուց շուարած մայրը:

— Պէտք է շուտով կանչել բժշկին, պատասխանեց որդին:

— Դու չե՞ս իմանում քո հօր խասիւթը...

— Իմանում եմ... բայց թողնել այսպէս, որ մեռնի, նրա համար միայն, որ նա մի քանի մասնէթ չը տայ բժշկին...:

— Փողի բան չէ...

— Ել ի՞նչ կայ:

Մայրը ոչինչ չը խօսեց, և թաշկինակը աչքերին դնելով, սկսեց լաց լինել:

— Ես այս բոսկիս կը գնամ հօրս մօտ, կը պահանջեմ, որ անպատճառ բժիշկ հրաւիրէ, ասաց Ստեփանը վրդովված ձայնով:

Մայրը բռնեց նրա ձեռքից, ասելով.

— Ի սէր Աստուծոյ, դու մի գնա. թող ես գնամ, եթէ ինձ վրա բարկանալու էլ լինի, ես ձայն չեմ հանի, բայց դու, ով գիտէ, մի զալմաղալ կը սարքես:

Տիկին Մարիամը մտաւ ամուսնի սենեակը, պատմեց նրան Գայիանէի դրութիւնը և խընդրեց, թէ պէտք էր բժիշկ հրաւիրել: Աղան կատաղեց:

— Ախար ի՞նչ բան է բժիշկը, ասաց նա բարկութեամբ, եթէ Աստուած նրա ճակատին գրել է, որ այս հիւանդութիւնով մեռնի, այն ժամանակ հազար բժիշկ գալու լինի, ոչինչ ճար անել չէ կարելի. բայց եթէ նրա «աջալը» (օրհասը) չի կատարվել, սարիցն էլ ցած գլորես, էլի չի մեռնի: Բժիշկը էլ ի՞նչ բանի է պէտք:

Կինը սկսեց դարձեալ աղաչել նրան, թէ պէտք էր հրաւիրել բժշկին, թէ բոլոր աշխարհը լիմար չէր, որ հիւանդութեան ժամանակ



դիմում էր բժշկին: Աղան չը համոզվեցաւ: Անծանօթ պարոնը անգամ, որ զարմանալով լսում էր այդ խօսակցութիւնը, խորհուրդ տուեց դիմել բժշկին: Աղան դարձեալ չը համոզվեցաւ, և առանց ուշադրութիւն դարձնելու նրա խօսքերին, ասաց կնոջը:

— Թէ բժիշկ ես ուզում, էդ հիւանդութեան բժիշկը ես եմ. գնա՛, մի քանի գլուխ սոխ լաւ խորովիր, վրան աղ ածիր, տուր թող ուտէ, կուրծքը կը փափկացնէ, էլ չի հազայ: Դու չես իմանում, որ ես հազալիս միշտ եգպէս եմ անում:

— Քո հազը ուրիշ է, նրանք ուրիշ, պատասխանեց կինը:

— Տօ, ինչ բան ես սովորացնում, ինչպէս թէ ուրիշ է, հազը—հազ է, հազով մարդ չի մեռնի, քսան տարուց աւելի է, որ ես հազում եմ, ինչու չեմ մեռնում:

Դարձեալ «ես», դարձեալ իր «եսի» կէտիցն էր նայում աղան իր դստեր հիւանդութեան վրա. երբ հազը նրա «եսին» վնաս չէր տալիս, և խորոված սոխ ուտելով հանգստանում էր, ուրեմն դստեր համար ի՞նչ իրաւունք ունէին ուրիշ դարմանների վրա մտածելու. երբ հազից նա չէր մեռնում, աղջիկն էլ իրաւունք չունէր մեռնելու...

Տիկինը գիտենալով իր ամուսնի յամառու-

թիւնը, առանց երկար խօսելու, թողեց նրան և վշտացած դուրս եկաւ: Նա իմացաւ, որ Ստեփանը արդէն գնացել էր բժշկին բերելու. այժմ ողորմելի կինը մտածում էր ոչ այնքան դստեր մահուան մասին, որքան այն խռովութեան մասին, որ պիտի կատարվէր բժշկի պատճառով:

Կնոջ դուրս գնալուց յետոյ կրկին վերադարձաւ Մասիսեանի սրտի խաղաղութիւնը, որպէս թէ ոչինչ չէր պատահել, և կրկին իր սովորական սառն և հանգիստ տրամադրութեան մէջ նա դարձաւ դէպի անծանօթ պարոնը, և ասաց նրան.

— Ճշմարիտ են ասել, որ «կնոջ ծամը» երկար կը լինի, բայց խելքը—կարճ», ոչինչ չես կարող հասկացնել դրանց:

Անծանօթը ոչինչ չը խօսեց:

— Ստանայի պէս եկաւ, մեր խօսակցութիւնը կտրեց, ասաց աղան:— Ինչ էինք խօսում:

— Դուք խօսում էիք, թէ ինչպէս պէտք է 1<sup>1</sup> Ֆուռտի ծանրութիւն ունեցող աղիւսի կտորը գործ ածել մէկ ֆուռտի տեղ բամբակ գնելու ժամանակ:

— Հա, այդ էի ասում, հիմա քեզ մի բան պատմեմ:

Նա պատմեց, թէ ինքը մի ժամանակ մե-



տաքսի առևտուր ունէր Նուխիի, Կախի և առհասարակ Լեզգիստանի կողմերում. ժողովուրդը այն աստիճան միամիտ, յիմար և անփոյթ էր, որ ամենևին հասկացողութիւն չունէր չափերի կամ կշիռների վրա: Այն ժամանակը մի պտղաբեր ժամանակ էր և ինքը այն ժամանակ կարողացաւ գնել իր հարստութեան հիմքը: Մարգիկ ոչխարի խելք ունէին: Բայց հիմայ... հիմայ բոլորն էլ «սատանայացել» էին... Գնում էր գիւղերում մետաքս հաւաքելու. մետաքսը այն ժամանակ նոյն արժէքն ունէր, ինչ որ ունի այժմ բամբակը: Ինքը ունէր մի հրաշալի կշեռք, որ միշտ իր հետ էր ման ածում, որովհետեւ գիւղացիների մօտ կշեռք գտնել դժուար էր: Կշեռքը իսկապէս մի հասարակ կշեռք էր, փայտեայ լծակով, յարդից հիւսած թաթերով (նժար), որ կախված էին լծակից կաշուց շինած փոկերով, բայց նա ունէր իր մէջ մի գաղտնիք, որ, օրինակ, չորս ֆունտ ծանրութիւն ունեցող մետաքսը կարելի էր նրա մէջ երկու ֆունտ ծանրութիւն ունեցող քարի հետ հաւասարացնել: Այդ գաղտնիքը գտանվում էր կշեռքի լեզուակի մէջ, որից բռնում և կշռում են: Լեզուակը այնպէս էր յարմարեցրած լծակին, որ եթէ ձեռքդ դէպի քարի կողմը թեքէիր, մետաքսը անհամեմատ թեթեւ կը գար, իսկ եթէ

ձեռքդ դէպի մետաքսի կողմը թեքէիր, մետաքսը անհամեմատ ծանր կը գար: Ուրեմն գնողի կամքիցն էր կախված իր կշեռքը այնպէս գործ ածել, որ միշտ օգուտը իր կողմը մնար: Դա մի հրաշալի կշեռք էր. մի ագուլեցի զօկ քանի քանի անգամ հինգ հարիւր լուբլի էր տուել, որ առնէր այն կշեռքը, և պատրաստ էր հազար էլ տալու, բայց Մասիսեանը չէր ծախել, և մինչև այսօր էլ պահում էր իր մօտ, և միշտ կը պահէ որպէս մի սրբութիւն, որովհետեւ նրանից շատ «խէր» էր տեսել...:

Վերջացնելով իր կախարդական կշեռքի պատմութիւնը, Մասիսեանը սկսեց բացատրել քարերի որպիսութիւնը, որ այն ժամանակ գործ էին ածվում որպէս չափ: Կշեռքի որոշված քարեր կամ չափեր չը կային, ասում էր նա, այլ քսան հատ ռուսաց արծաթեայ ամբողջ լուբլիանոց մանէթների ծանրութիւնը համարվում էր մի ընդունված չափ. և ինքը միշտ ընտրում էր Եկատերինայի ժամանակից մնացած ահագին մանէթները և նրանցով էր կազմում իր կշեռքի ծանրութեան չափը: Ահա այն ժամանակն էին առատ հունձքի տարիները... մի զօկի համար պատմում էին, թէ շատ տեղերում իր աջ ոտն էր գործ ածում որպէս չափ, զնում էր կշեռքի մէկ թաթի մէջ, իսկ



միևնույնը մետաքս էր ածել տալիս, ասում էր, թէ ոտս 5 ֆունտի ծանրութիւն ունի, և հուփ էր տալիս ոտը, որքան ուժ ունէր, և 5 ֆունտի տեղ 10 ֆունտից աւելի մետաքս էր կշռում... և զօկերը այն ժամանակ հարստացան... Հիմալ ո՛ւր են այն ժամանակները... գրնացին... էլ լեռ չեն գայ... ով խելք ունէր, իր բեռը բեռնեց... ով խելք չուներ, մնաց քաղցած...

Մասիսեանը պատմում էր այդ ամենը այնպիսի մի հասարակ կերպով, կարծես թէ, խօսում էր բոլորովին սովորական մի բանի վրա: Նա երանութիւն էր տալիս անցեալ ժամանակներին, երբ մարդիկ միամիտ էին, երբ կարելի էր խաբել նրանց... Անծանօթ պարոնը լսում էր նրան, երբեմն գլուխը շարժելով, վերջապէս ձանձրացաւ նա, և վերկենալով, ասաց.

— Մնաք բարեաւ:

Նա հեռացաւ և նրա ետեւից Մասիսեանը ասաց.

— «Աւանակ»....

— «Աւազակ».... կրկնեց իր մտքումը անծանօթը և անյայտացաւ փողոցների խաւարի մէջ:

ՃԳ.

«Լաւ է տան շուներ լինել, քան թէ տան

պստիկը»... ամեն ինչ նրան են հրամայում, ամեն բան նրան են անել տալիս, թէ տիկինը, թէ աղան, թէ ծառան և թէ աղախինը՝ բոլորը նրան գործի են դնում:

Այն օրից, որ Միքայէլը դուքնի աշակերտ դարձաւ, թէև նրա դրութիւնը մի աստիճան բարձրացաւ, բայց նրա աշխատութիւնները աւելի և աւելի անտանելի դարձան: Խեղճ տղան մի րոպէ ևս հանգստութիւն չուներ, նա պէտք է և տանը ծառայէր և խանութումը: Առաւօտեան դեռ բոլորը քնած, դեռ արևը չը ծագած, նա ոտքի վրա էր, սամօվարը կրակ էր գցում, ամենի կօշիկները սրբում էր, բակը աւելում էր, այդ բաւական չէր, պէտք էր և ջրով սրսկել, որ նա վեր էր առնում բակից անցնող առուակից: Ախ, այդ բակի մաքրելը ամեն առաւօտ նրա համար մի ահագին տանջանք էր. փոշին, կարծես, մաղվում էր խարխուլ և տորոված պատերից, իսկ յատակը քարած չէր, այլ նոյնպէս հողից, որ միայն պնդացել էր մարդկանց ոտքերի տակ:

Չը նայելով այս բոլոր բազմատեսակ զբաղմունքներին, Միքայէլը դարձեալ ժամանակ էր գտնում, իր փոքրիկ զասագիրքը առնելով, քաշվել տան մի խուլ անկիւնում և լուռ ու մուռջ իր դասը սերտել: Նա սաստիկ սէր ուներ կարգաւ սովորելու, և կարծես՝ բնազդու-



մով հասկանում էր, թէ դա մի օր իրան հարկաւոր կը լինի, բայց սովորում էր որպէս մի արգելված բան: Մասիսեանը ատում էր բոլոր կարգացողներին և նրա ատելութիւնը աւելի սաստկացաւ, երբ իր որդին, Ստեփանը, գիմնագիւլից տուն դարձաւ, երբ նրա մէջ գտաւ մի հակառակորդ, որի հետ երբեք չէր կարող հաշտվել:

Միքայէլը ընտրում էր միայն գիշերվայ ժամերը ընթերցանութեան համար, երբ տան մէջ բոլորը քնած էին, երբ ոչ ոք նրան խանգարել չէր կարող: Նրան բնակութեան համար տուել էին հին փայտանոցը, որ այժմ ծառայում էր որպէս «խորթանոց», այսինքն մի այնպիսի տեղ, ուր պահվում են տան անպէտք կարասիները: Այնտեղ կարելի էր տեսնել գործածութիւնից ընկած զանազան տեսակ անօթներ, ժանգոտած մեխեր, երկաթի կտորներ, կտորած բահեր, բրիչներ, ատամները մաշված սղոցներ, ջարդված կժեր, կճուճներ, պատառոտած հին կօշիկներ, հողաթափներ, թօկի կտորներ, բամբակ գգելու մի ջարդված մեքենայ, — այսպիսի և ուրիշ տեսակ անպէտք բաներ, որ փռում էին փոշու և բորբոսի ներքոյ:

Այդ խուղը, առանց օդի և առանց լոյսի, նմանում էր մի մեծ հաւաքուենի, որ մի նեղ ծակ միայն ունէր, որ ծառայում էր որպէս

մուտք, և որտեղից ներս մտնելու համար նրա փոքրիկ բնակիչը պէտք է բաւական թեքէր իր մէջքը: Այստեղնայնիւ, Միքայէլը գոհ էր իր բնակարանով, որովհետեւ առանձին էր: Թէև նրա մէջ գտնված մթերքը այնքան շատ տեղ էր բռնել, որ Միքայէլի համար մնացել էր մի անձուկ անկիւն միայն, որը նա մաքրելով, և սառն, խոնաւ յտտակի վրա մի կտոր հասիր տարածելով, այնտեղ պառկում էր: Նրա դօշակը այդ կոշտ և խարտոցի նման հիւսված հասիրն էր, որ սաստիկ ցաւեցնում էր կողքերը. նրա բարձր իր հագուստն էր, որ հանում էր, ծալում էր և դրնում գլխի տակը. նրա վերմակը աղաչի հին, բրբրված մուշտակն էր, որ յայտնի չէր, թէ ինչ ժամանակներից էր մնացել, և որի վրա մագերի հետքերն մի քանի տեղ միայն երեւում էին: Այդ ողորմելի անկողնի մէջ պառկում էր նա, քնում էր խորին, հանգիստ քնով, որովհետեւ միշտ յոգնած էր լինում:

Մի անգամ գիշերից բաւական անցել էր, Մասիսեանի դատարկ տան մէջ տիրում էր խորին անապատական լռութիւն: Ամեն տեղ մութն էր, միայն Միքայէլի խուղի մէջ գեռ լոյս էր երևում: Նոյն միջոցին մէկը ման էր գալիս պարտեզի մէջ, և այնքան հանդարտ կերպով, կարծես զգուշանում էր,



որ քալելի խշխշոցը լսելի չը լինէր։ Անցնելով Միքայէլի խուղի մօտից, նա նկատեց լոյսի նեղ շառաւիղը, որ դռնից դուրս ցոլանալով, տարածվել էր գետնի վրա։ Նա գլուխը կռացրուց և ներս մտաւ։ Միքայէլը պառկած էր իր հասիւրի վրա, և ձեռքը նեցուկ տալով երեսին, գլուխը վեր էր բարձրացրել բարձից։ Նրա աչքերը նայում էին, բայց նա ամենևին չը շարժվեցաւ, և կարծես, չը նկատեց, որ մէկը մտաւ իր մօտ։ Նա գտանվում էր մի այնպիսի ինքնամոռացութեան մէջ, երբ միտքը դադարում է գործելուց և չոգնած անդամների վրա տիրում է մի տեսակ մեռելային թմրութիւն։ Նրա մօտ բաց դրած էր իր դասագիրքը։

— Ե՛յ... հէ՛յ... դէսը քշէ գառները, դէսը... բացականչեց կիսաքուն Միքայէլը։

— Խեղճ տղայ, նա երբէք իր գառները մոռանալ կարող չէ, ասաց ներս մտնող պատանին։

Դա Ստեփանն էր։

Նա իր սովորութեանը համեմատ եկել էր Միքայէլի հետ պարապվելու, նրա դասերին նայելու։ Բարեսիրտ պատանին այս և այն կողմ մտիկ տուեց, որ մի յարմար տեղ գտնէ նստելու, և նստեց բամբակ գդելու ջարդված մեքենայի վրա։ Միքայէլը դեռ անշարժ, նոյն

դրութեան մէջ պառկած էր։ Պատանին ձեռքով կամաց խթեց նրան, որ զարթնի։

— Խփիր, խփիր... թէկուզ սպանես, էլի ոչինչ չեմ ասի... կոչեց Միքայէլը։

— Նա զառանցութեան մէջ է, խօսեց Ստեփանը։— Խեղճ տղայ, տեսնես, ինչ է պատահել։

— Այդ ես եմ, Միքայէլ, զարթիր։

Միքայէլը գլուխը բարձրացրուց և նստեց։

— Դու դարձեալ այդպէս անհոգ կերպով ես քնած, հազար անգամ քեզ ասել եմ, որ կը հիւանդանաս, խօսեց Ստեփանը կարեկցութեամբ նայելով, թէ որպէս նա պառկած էր մերկ հասիւրի վրա։

— Ախ, ո՛ւր էր, որ հիւանդանալի... որ մեռնէի... մըմնջաց փոքրիկ սպասաւորը ողորմելի ձայնով և սկսեց հեկեկալ։

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, ի՞նչու ես լացում, աշխատում էր հանգստացնել նրան Ստեփանը։

Միքայէլը պատմեց աղալի այն օրվայ բարբարոսական վարմունքը իր հետ, ցոյց տուեց իր մարմնի վրա կապտած, սևացած տեղերը, որ առաջ էին եկել նրա փայտի հարուածներից, ասաց, թէ իրան փակեցին խանութի ստորերկրեայ սարդափում, այնտեղ ծեծեցին, ամբողջ օրը այնտեղ բանտարկված մնաց, կա-



մենում էին գիշերն էլ թողնել, բայց ինքը շատ վախեցաւ. յետոյ խանութի մեծ գործակատարը աղաչեց աղային, նրան ներեցին, և աւելացրուց, թէ ինքը ոչ մի գործով յանցաւոր չէր, ի գուր տեղը ծեծեցին, և շատ ծեծեցին...լաւ էր, որ ուշքից գնաց և չէր ըզգում, թէ որպէս էին ծեծում....

—Անգումթ...մռնչեց, պատանին և սկսեց ցաւակցաբար քննել Միքայէլի մարմնի ծեծված տեղերը, յետոյ բոլորովին զայրացած, հարցրուց. —Ի՞նչ բանի համար այսպէս նահատակեցին քեզ:

Միքայէլը յայտնեց, թէ աղան շատ անգամ նրան ասել էր, թէ տանը ինչ որ պատահում է, բոլորը իրան «խաբար տայ», — թէ ինչ են անում, ինչ են ուտում, ո՞վ է գալիս, ո՞ւր են գնում, տիկինը ում հետ է խօսում, Ստեփանը որտեղ է ման գալիս, և այլն. — Իսկ ինքը թէև ամեն բան իմանում էր, բայց չէր յայտնում, ասում էր, թէ ոչինչ չը գիտէ, և երբ աղան միւս աշակերտներից տեղեկանում էր, նրա վրա միշտ բարկանում էր, թէ «լակոտ», դու ի՞նչու ես ինձ խաբում: Իսկ այն օր տիկինը տուել էր նրան մէկ մանէթ և ասել էր. Միքայէլ, շուտ վազիր բազարը, մի քիչ տանձ, խնձոր և ծիրան գնիր, Եփրեմ աղայի կնիկը գալու է մեր տունը:» Միքայէլը գնացել և

տիկնոջ պատուէրը կատարել էր. աշակերտներից մէկը աղային խաբար էր տուել, բայց ինքը ուրացաւ, թէ սուտ է և այդ մասին նրան ծեծեցին:

Ի՞նչու էիր ուրանում:

— Ես գիտէի, պատասխանեց Միքայէլը, որ աղան պիտի գար տուն և խանութի հետ դալմադալ սարքէր, մտածեցի, թէ աւելի լաւ էր, որ ես ծեծ ուտէի, քան թէ նա խանութին մի վատ խօսք ասէր:

— Որեմն դու խանութին սիրում ես:

— Սիրում եմ, նա ինձ չի ծեծում, բայց աղան միշտ ծեծում է, միշտ ծեծում է... Ես այստեղ չեմ մնայ, կը փախչեմ, կը գնամ, կը կորչեմ, հերիք է, որքան ծեծվեցայ....

Պատանին աշխատում էր հանգստացնել նրան, խրատելով, որ այսպէս բան չանէ, թէև իրան լաւ յայտնի էր նրա վիճակի դառնութիւնը, թէև ինքը գիտէր իր հօր անգթութիւնը, բայց փախչելը ոչինչ նպատակի չէր հասցնի, որովհետև նրան կրկին յետ կը բերէին և աւելի խստութեամբ կը սկսէին վարվել, որպէս այդ պատահել էր մի քանի անգամ: Որովհետև Միքայէլը մի տեսակ ստրուկ էր, մի տեսակ գրաւական էր այն փողի փոխարէն, որ նրա հօրեղբայրը պարտական էր աղային: Թէ պետք էր առաջ մտածել, որ



այս պարտքից ազատվէր նրա հօրեղբայրը, այնուհետեւ Միքայէլի ազատութիւնը կը հեշտանար: Եւ ինքը, Ստեփանը, յոյս ունի, որ շուտով իր միջոցները կը ներեն օգնելու նրա հօրեղբօրը, միայն մտածում է, թէ Միքայէլը իրանց տնից դուրս գալուց յետոյ ինչ գործով պիտի պարապվէր, որովհետեւ չէր ցանկանում, որ նա կրկին վերադառնար իր հայրենական տունը և գիւղական կեանք վարէր, այլ համոզված էր, որ եթէ նա օրինաւոր կըրթութիւն ստանար, կարող էր ժամանակով մի նշանաւոր մարդ դառնալ:

Բարեսիրտ պապանու խրատները, որքան և ազնիւ զգացմունքից բխած, որքան և մարդասիրական լինէին, դարձեալ այն ըոպէում չէին կարող ազդել Միքայէլի վրա, որ միայն իր վերքերի ցաւն էր զգում, խորհելու և մըտածելու ընդունակութիւնը կորցրել էր:

— Չէ, ասաց նա, ինչ որ էլ պատահելու լինի, կը փախչեմ, գլուխս մի տեղ կը թաղցնեմ, էլ չեմ գնայ մեր գիւղը, որ այնտեղից լետ բերեն, կը կորչեմ մի ուրիշ տեղ...

Ստեփանին աւելի վախեցնում էր փոքրիկ Միքայէլի յուսահատութիւնը, և ծանօթ լինելով նրա համարձակ և անվեհեր բնաւորութեանը, կասկածում էր, մի գուցէ խեղճ տղան մի փորձանքի մէջ գցէր իր անձը: Բայց

չը գիտէր, թէ ինչ պէտք էր անել: Երկու վիճակակիցներ—մէկը որդի, միւսը սպասաւոր—շատ լաւ հասկանում էին միմեանց դրութիւնը, բայց որդին աւելի դժբախտ էր, քան թէ սպասաւորը, որովհետեւ աւելի զարգացած լինելով, նրա վրա աւելի սաստիկ ազդում էր բռնութեան կոպտութիւնը. բայց սպասաւորի վրա ըոպէական տպաւորութիւն ունէր. և նրա մարմնի կապոյտ ուռուցքների բժշկվելու հետ՝ գուցէ կանցնէր և սրտի կսկիծը:

Ստեփանը երկար նստած բամբակի ջարդված մեքենայի վրա, խրատում էր, մխիթարում էր դժբախտին, որին նա շատ սիրում էր, գտնելով նրա մէջ այնքան լաւ յատկութիւններ, որ գուցէ պիտի փչանային, պիտի աշաւաղվէին այն ապականված մթնոլորդի մէջ, ուր նրան ձգել էր վիճակը: Նա խօսում էր խիստ տաք և ոգևորված կերպով, թէ ինքը հաւատացած է, թէ Միքայէլը կը հետևի իր խրատներին, չի հեռանայ, այլ կը մնայ և կը սովորի այն բոլորը, ինչ որ ինքը ցանկանում է նրան սովորացնել և ժամանակով լաւ մարդ կը դառնայ: Միայն պէտք է համբերել, պէտք է դիմանալ, և գլխաւորը՝—պէտք է աշխատել: Զիթային ճրագի աղօտ լոյսը, ընկնելով եռանդոտ պատանու գունաթափ դէմքի վրա, տալիս էր նրա երեսի գեղեցիկ գծագրու-



Թեանը մի առանձին վայելչութիւն: Նա խօսում էր առանց դադարելու, շուտ շուտ ուղղելով գլխի խիտ մազերը, որ թափվում էին ընդարձակ ճակատի վրա:

Կարգալով և շատ կարգալով զանազան գրքեր, նրա գլխում խիստ շուտ ձևակերպվեցաւ այն ընկերական լուսաւոր գաղափարը, որ լեցնում է մարդու սիրտը մի սրբազան զգացմունքով՝ սիրել, կարեկցել, և օգնել նեղեալներին, վշտացածներին, հարստահարվածներին, և հալածել կոպիտ բռնասիրութիւնը: Դառնալով հօր տունը, այնտեղ գտաւ անախորժութիւններ և զգուանք միայն, — մօր մշտահոս արտասուքը և քոյրերի ճնշված վիճակը տեսաւ: Տեսաւ մի հայր, որը, որպէս խաւարեցնում էր ընտանիքի բարօրութիւնը, որպէս զրկում էր նրան ամեն վայելչութիւններից, որը որպէս իր տունը շինել էր մի կատարեալ դժոխք, — այնպէս էլ իր առւտրական տունը դարձրել էր կատարեալ աւազականոց: Եւ զարմանալին այն էր, որ նրա հայրը, այդ հին աւազակը, նայում էր իր որդու վրա, որպէս մի գողի վրա, և թոյլ չէր տալիս մինչև անգամ իր խանութը մտնելու: Այդ մարդը, որ այնքան համակրում էր գողերին, և խաբեքներին, նոյնը կասկածում էր իր որդու մասին որը բոլորովին հեռու էր այս տեսակ ախտէ-

րից: Այդ մի անբացատրելի հակասութիւն է: Գողութիւնը, խաբէլութիւնը նրա կարծիքով պախարակելի չէին լինի, եթէ որդին գողանար ուրիշից, բայց երբ հօր փողերը ծախսում էր, առանց աշխատելու նրանց տեղը կրկնապատիկ լեցնել, — դա գողութիւն էր:

Բարեսիրտ պատանին վերջացնելով իր խրատները, խորհուրդ տուեց Միքայէլին չը պառկել հասիլի վրա, թէ գետնի խոնաւութիւնից կարող էր աւելի հիւանդանալ նա, և խոստացաւ, թէ առաւօտեան կը տանէ նրան բժշկի մօտ, և մարմնի ծեծված տեղերը դարմանել կը տայ:

— Զէ, չեմ ուղի, ձայն տուեց Միքայէլը, եթէ աղան դիտենալ, մի զալմաղալ էլ գրաւրա կը սարքէ, ինչպէս որ արեց, երբ Գալիանէի համար բժիշկ բերեցիք:

Միքայէլի երկիւղը մասամբ իրաւացի էր. աղան ահագին փոթորիկ բարձրացրուց, երբ առաւօտեան իմացաւ, թէ Գալիանէի համար բժիշկ էին բերել, և մինչև անգամ մարդ ուղարկեց, իմացում տուեց բժշկին, որ «չը համարձակվի» միւս անգամ իր տունը մտնել:

— Այդ ոչինչ, պատասխանեց Ստեփանը, — ես այնպէս կը սարքեմ, որ նա չի իմանայ: Բայց հիմայ պէտք է քեզ համար մի մահճակալ պատրաստել:



Ստեփանը սկսեց քրքրել «խորթանոցի» մէջ ածած փուր—չրփուր բաները և գտաւ մի կոտորած դրան կտոր, որի երկու տախտակներն էին մնացել. տախտակների մի ծալը դրեց բամբակի մեքենայի վրա, իսկ միւս ծալը ամրացրուց պատուհանի մէջ. մահճակալը արդէն պատրաստ էր:

—Ահա դրա վրա կը քնես այսուհետեւ, ասաց նա Միքայէլին:

—Բայց երբ աղան տեսնէ, հարցրուց Միքայէլը վախկոտ ձայնով. —նա ասել է, որ այդ բաներին ձեռք չը տամ, ոչ մէկը տեղից չը շարժեմ:

—Առաւօտեան կրկին իրանց տեղը կը դնես, իսկ գիշերները այսպէս կը սարքես քեզ համար, հիմալ խօսորվեցար...

—Դէ, բարի գիշեր:

Պատանին հեռացաւ:

ԺԴ.

Անցաւ երեք տարի ևս:

Միքայէլը այժմ մեծացել, բաւական շնորհալի տղայ էր դարձել, բայց նրա վիճակի մէջ մի առանձին փոփոխութիւն չէր եղել: Մօտաւորապէս հինգ տարի կը լինէր, որ նա ծառայում էր Մատիսեանի թէ տանը և թէ խա-

նութումը, և ամենալաւ գործակատարներից մէկը կարելի էր համարել նրան, բայց տակաւին ոչինչ վարձատրութիւն չէր գտել, թէև նրա հօրեղբօրը, Աւետ ապօրը, խոստացել էին, թէ խանութի աշակերտ դառնալուց յետոյ ռօճիկ կը նշանակեն: Միքայէլին դեռ անընդունակ էին համարում շատ բաների մէջ. նա երբէք չէր կարողանում սովորել, թէ որպէս պէտք էր հասկանալ «լաւ» և որպէս պէտք էր հասկանալ «վատը»: Վաճառականները առանձին նշանախօսութիւններ ունեն, որպէս աւագակները ունեն արգօթեան լեզու:

Վաճառականի ճարպկութիւնների գաղտնիքը ըմբռնելու համար, վաճառականի արգօթը սովորելու համար, պէտք է ասած, որ Միքայէլը իրաւ որ անընդունակ էր: Նա դեռ չը գիտէր, թէ որպէս պէտք է արշինը պտտացնել, որ, օրինակ, 10 արշին երկայնութիւն ունեցող կտաւը կարելի լինէր 11-ի հաւասար դուրս բերել. նա դեռ չը գիտէր, թէ կշիռների և չափերի մէջ ինչ տեսակ խարդախութիւններ պէտք էր բանացնել: Եւ այս էր պատճառը, որ նրան անդադար լսել էր տալիս աղայի յանդիմանութիւնները՝ «յիմար, դու մարդ չես դառնալու»... Այդ բոլորը նա ոչ թէ չը գիտէր, ոչ թէ չէր կարող կատարել աւելի լաւ



և աւելի ճարպիկ կերպով, քան թէ միւս գործակատարները, բայց ատոււմ էր, զգվում էր, անբարոյականութիւն էր համարում: Բնականից պարզ և չքաղցած գիւղացի տղան, մի բարի բախտով հանգիպելով Ստեփանի նման ազնիւ պատանուն, նրա ազդեցութեան տակ, աւելի զարգացաւ, աւելի մաքուր բնաւորութիւն ստացաւ: Լուսաւոր որդին յաղթեց խաւարասէր հօրը Միքայէլի կրթութեան վերաբերութեամբ:

Ստեփանը այժմ Մօսկվայի համալսարանի բժշկական մասնում ուսանող էր: Միքայէլը երբէք չէր կարող մոռանալ այն տխուր գիշերը, որի առաւօտը պատանին պիտի ճանապարհ ընկներ: Նա զրկվում էր մի լաւ բարեկամից, որ շատ անգամ մխիթարել էր նրա կեանքի դառն ընկերները, որ ներշնչել էր նորա մէջ այնքան բարի մտքեր: Նա նստած իր ողորմելի խուղի մէջ անքուն սպասում էր մի անգամ ես տեսնել նրան իր մօտ, մի անգամ ևս լսել նրա խօսքերը: Յանկարծ Ստեփանը ներս մտաւ, բերելով իր հետ մի փոքրիկ արկղիկ. «քեզ համար է, Միքայէլ, ասաց նա, զրքեր են, դու այնքան սովորել ես, որ կարող ես կարդալ, և հասկանալ, կարգաւ և շատ կարգաւ այդ զրքերը»: Միքայէլը ուրախութեամբ ընդունեց թանգազին ընծան, և այն

օրից զրքերի արկղը թագցրել էր իր խուղի մէջ, և շատ անգամ ամբողջ գիշերներ անց էր կացնում ընթերցանութեամբ, թէև շատ բան չէր հասկանում:

Մասիսեանի խանութի ծառայողների մէջ Միքայէլը միայն էր, որ պանդուխտ էր, միւսները քաղաքում կամ ծնողներ կամ ազգականներ ունէին և գիշերները իրանց տներն էին գնում: Նրանք միայն խանութի հետ գործ ունէին և ազատ էին աղալի տնային ծառայութիւններից: Այդ հոգսը մնացել էր Միքայէլի վրա միայն, թէև նա այժմ բաւական բարձր էր մի հասարակ սպասաւոր լինելուց, և այն ստոր ծառայութիւնները, որ նրան անել էին տալիս, մինչև անգամ վերաւորական էր նրա համար: Տիկին Մարիամը շատ անգամ ասել էր իր ամուսնին, որ մի նոր սպասաւոր վարձէ և Միքայէլը ազատ մնալ տնային ծառայութիւններից, բայց միշտ նրա խնդիրքը մնացել էր անկատար, ստանալով աղալից մերժողական պատասխան. «ես մոռնիմ այդ հաց չունեմ, որ նրան ուտացնեմ, հոգին չի դուրս գալ, թող տան բանն էլ անէ, դուքանի բանն էլ»:

Բայց այդ «մոռնիմ այդ» հացը Միքայէլի վրա շատ թանգ էր նստում: Զը նայելով իր վրա բարգված անտանելի աշխատութիւններին,



այն օրից, որ նա մտել էր Մասիսեանի տունը, և որից անցել էր Հինգ տարի, — այսքան տարվայ ընթացքում նա ոչ միայն կօպէկ փող չէր ստացել աղայից, այլ նրա համար մի նոր հագուստ ևս չէին կարել տուել: Նա դեռ ևս հագնում էր տան հնոտիքները, որ տիկին Մարիամը կարկտնում և յարմարացնում էր նրա համար: Բայց նա խանութում ստացած «շագիրդանաներից»\*) Հինգ տարվայ ընթացքում յետ էր գցել մի փոքրիկ գումար, որ հասնում էր քսան ռուբլու, և այդ փողերով կարել էր տուել իր համար մի ձեռք հագուստ, որ դեռ միանգամ ևս չէր հագել, և այն հագուստով չէր երևացել աղայի աչքին, այլ ծածուկ պահում էր, որ գատկին իրանց գիւղը գնալու ժամանակ հագնէ:

Մասիսեանը առհասարակ սիրում էր իր գործակատարներին վատ հագնված տեսնել. նրա կարծիքով հագուստը մերկութիւնը ծածկելու համար էր և ոչ թէ վայելչութեան համար: Եւ մաշված հագուստով գործակատարը միշտ վայելում էր նրա առանձին հաւատարմութիւնը. «փողի զադըր իմացող է», նկա-

\*) «Շագիրդանայ» նշանակում է այն փոքրիկ ընծան, որ լինում է մի քանի կօպէկներով, որ ստանում են խանութպանների աշակերտները:

տում էր նա: Բացի դրանից, իր անձնական «եսի» տեսակէտից կշռելով ամեն ուրիշ մարդու վարմունքը, նա խիստ անվայել էր համարում տեսնել մէկին, որ հետևում է նորա-ձեռութիւնների, որ իր վրան-գլուխը զարդարում է, քանի որ ինքը, աղան, այնքան մեծ հարստութեան տէրը, երբէք չէր փոխում իր հագուստի ձևերը, որպէս չէր փոխում իր մարմնի կաշին: Մասիսեանի ճաշակին այն աստիճան սովորել էին գործակատարները, որ ամեն կերպով աշխատում էին յարմարվել: Նրանք, ուրիշ քաղաքներում գեղեցիկ հագնվում էին, շուայլ ապրում էին, ոսկի ժամացույց էին կրում ոսկի շղթայով, կառքերով էին գլորնում, — բայց երբ պատահում էր վերադառնալ աղայի մօտ հաշիւի կամ մի ուրիշ գործի համար, բոլորովին կերպարանափոխվում էին, և յայտնվում էին մաշված հագուստով, ողորմելի-խոնարհական դէմքով և հին քօշերով: Մասիսեանը այն բնաւորութիւնն ունէր, ինչ ուզում ես արա, միայն նրա աչքը չը տեսնէ: Ամեն բան նրա մէջ յաջորդաբար, և մինը միւսին համապատասխանող օրէնքներով էր գնում. նա, որպէս չէր փոխում իր հին տան շինուածքի ձևը, որպէս չէր փոխում իր ընտանիքի կազմակերպութեան ձևը, որպէս չէր փոխում իր խանութում ընդունված առևտրա-



կան եղանակի ձևը,—այնպէս էլ չէր փոխում իր հագուստի ձևը: Դա անշարժութեան կատարեալ յատկանիշն է: Մի մարդ, մի ժողովուրդ և վերջապէս մի ամբողջ ազգ, երբ շուտ-շուտ է փոխում իր հագուստի ձևերը, այնպէս էլ շուտ փոխում է իր հասարակական կեանքի ձևերը:

Միքայելի նոր հագուստ ունենալը թէև մի գաղտնիք էր, բայց տան մէջ շատերը գիտէին. գիտէր տիկինը, գիտէին և նրա երկու աղջիկները՝ Գալիանէն և Հռիփսիմէն:

Այդ երկու անմեղ արարածները այժմ բաւական փոխվել էին. Գալիանէն էլ չէր հագում, առողջ էր, միայն տարիների հետ որքան նրա արտաքին կերպարանքը ալլանդակվում էր, այնքան նրա բնաւորութիւնը, հոգեկան յատկութիւնները գեղեցիկ կերպարանք էին ստանում: Հռիփսիմէն, ընդհակառակն, ձևակերպվել, սիրունացել և մի նագելի օրիորդի դէմք էր ստացել, բայց նա մնացել էր դարձեալ ծաղրող, դարձեալ արհամարհող և մի և նոյն հպարտը, որպէս էր միշտ: Հպարտութիւնը յատուկ է սիրուն աղջիկներին: Բոլոր տանեցիքը սիրում էին Միքայելին բացի Հռիփսիմէնից. նա դեռ պահպանել էր իր սառն յարաբերութիւնները դէպի գիւղացի «առաջի քօթօթը», որի առաջին տարիների

կեանքից պատմում էր շատ և շատ ծաղրական էպիգրամներ, երբ նա անկիրթ, անփորձ և անտաշ լայտնվեցաւ նրանց տանը: Բայց Հռիփսիմէն այրվում և մինչև անգամ վիրաւորվում էր, երբ Միքայելը նրա կատակներին պատասխանում էր իր արհամարհական լռութեամբը:

Տան աղջկայ սէրը դէպի տան սպասաւորը շատ անգամ սկսվում է կատակներից: Ծաղրել, ատել և պախարակել, դրանք մի տեսակ ցոյցեր են, երբ դժուար էր համարձակ ասել. «ես սիրում եմ քեզ» կամ «դու ինձ դուր ես գալիս»: Բայց Միքայելը այնքան հասած էր, որ չէր կարող չը նկատել Հռիփսիմէնի խորամանկութիւնները, և երբ սառնութեամբ էր վերաբերվում դէպի նրա կատակները, միշտ լսում էր այսպիսի խօսքեր. «ի՜նչ ես էդքան փքվում... ուզում եմ, գնամ տրեխներդ բերեմ... ես ջէր պահել եմ»... Եւ գնում, բերում, ցոյց էր տալիս գիւղացու տրեխները, որ հագած, առաջին անգամ Միքայելը նրանց տունը մտաւ: Այդ մի կծու հեգնութիւն էր Միքայելին չիղեցնելու համար նրա նախկին վիճակը և խորտակելու նրա հպարտութիւնը:

Վարդավառի տօնն էր: Փողոցներում երեսաները ջուր էին ածում միմեանց վրա, վազվզում էին, գոռում, գոչում էին. հարևան



աղջիկներն, հաւաքված դրացու տան պարտէզում, երգում էին, «վիճակ էին գցում» և «ջան գիւլում» էին երգում: Ամեն տեղ ուրախ և զուարթ փայլում էր. կեանքը, ամեն տեղ մարդիկ անհոգ զուարճութեամբ կատարում էին տօնական հանդէսը: Միայն Մասիսեանի տան մէջ ամեն ինչ նոյն էր, ոչինչ չէր փոխվել սովորականից: Չաշից լետոյ երկու քոյրերը, Գայիանէն և Հռիփսիմէն, իրանց ամենօրեայ հագուստներով ման էին գալիս պարտէզի մէջ. տիկին Մարիամը իր սենեակում խօսում էր մի կնոջ հետ, որի որդուն աղան բանտարկել էր տուել պարտքի համար, և նա եկել արտասուելով խնդրում էր, որ տիկինը բարեխօսէ աղայի մօտ, նրա որդուն ազատեն քանտից. «նա շատ ջահել է, անփորձ է, կը մեռնի կսկիծից. թէ պարտքը նրա հօր պարտքն է, որ ոչինչ չէ թողել, և իրանք ուտելու հացի կարօտ են» և այլն: Խեղճ կինը առանց դադարելու խօսում էր, աղաչում էր, և լաց էր լինում: Տիկին Մարիամը ցաւում էր, որ ոչինչով նրան օգնել կարող չէ, թէ ինքը աղայի գործերում միջամտելու համարձակութիւն չունի, աւելի լաւ կանէր, եթէ նա ուղղակի գիմէր աղային: Իսկ աղան տանը չէր:

Միքայէլը, օգուտ քաղելով տօն աւուր հանգստութիւնից, գնացել էր մի քանի ծա-

նօթների հետ ման գալու. նա վերադարձաւ բաւական ուրախ տրամադրութեան մէջ, և տեսնելով աղջիկներին պարտէզում, դիմեց նրանց մօտ: Երկուսն էլ լճակի մօտն էին. Գայիանէն հացի փշրանք էր ձգում ձկներին, իսկ Հռիփսիմէն, մերկացնելով իր գեղեցիկ, կլորիկ թեւքը, խաղում էր ջրի հետ, ափովը այս և այն կողմ ցրվելով:

— Եդ ի՞նչպէս է, որ դուք չէք գնացել «ջան գիւլում» երգելու, հարցրուց Միքայէլը մօտենալով աղջիկներին. — Խաչը վկայ, լաւ չէք արել. ախ, որքան աղջիկներ են հաւաքված ձեր հարևան Սարիսօջենց պարտէզում, «վիճակ» են գցում. ես մի քանի տղերքի հետ գնացինք, մեզ ներս չը թողեցին սատանաները...

— Հայրս չը թողեց, որ մենք էլ գնայինք, պատասխանեց Գայիանէն տխուր կերպով:

Հռիփսիմէն նկատելով, որ Միքայէլը և իր քոյրը զբաղված են խօսակցութեամբ և իր վրա չեն նայում, լճակից լեցրուց մի ահագին կուժ ջրով, և լանկարծ վրա վազելով, բոլորը միանգամով թափեց Միքայէլի վրա:

Միքայէլը շփոթվեցաւ: Հռիփսիմէն հեռուից ծիծաղում էր. «լաւ լողացար, վաղուց չէիր լողացել», իսկ Գայիանէն հանգստացնում էր նրան, աշխատելով թրջված հագուստը ցամաքացնել:



— Վնաս չունի, Վարդավառ է, էսպէսի ժամանակում չեն բարկանում:

— Ձէ, ես նրա համար չարեցի, որ Վարդավառ է, խօսեց Հռիփսիմէն, չը դադարելով իր ուրախ ծիծաղից. — Ես Միքայէլին լեղացրի, որ գնայ իր նոր շորերը հագնէ, չէ՞ իմանում, որ էս օր տօն է:

Միքայէլը ամօթահարկեցաւ իր անտեղի վըրդովմունքի պատճառով, և դառնալով դէպի Հռիփսիմէն հարցրուց:

— Դու ի՞նչ գիտես, որ ես նոր շորեր ունեմ:

— Գիտեմ... գիտեմ թէ որտեղ էլ պահել ես, ուզում ես, գնամ դուրս բերեմ:

Եւ նա առանց Միքայէլի պատասխանին սպասելու, սկսեց վազել դէպի նրա խուղը, որ շատ հեռու չէր. Միքայէլը վազեց նրա ետևից, որ արգելէ իր պահուստը երևան հանելուց. իսկ կաղլիկ Գալիանէն չը կարողանալով նրանց հասնել, հեռուից կանչում էր իր քրոջը, որ լետ դառնայ: Բայց Հռիփսիմէն արդէն գտնուում էր «խորթանոցի» մէջ և շտապով քրքրում էր այնտեղ ածած անպէտք մթերքը, որի մէջ պահված էր Միքայէլի նոր հագուստը:

Միքայէլը բռնեց նրա ձեռքից, աշխատում էր արգելել, բայց Հռիփսիմէն ընդիմանում էր: Երկուսն էլ երկար քաշքշում էին միմեանց:

Այդ միջոցին մի քանի անգամ նրանց ձեռքերը հանդիպեցին միմեանց, մի քանի անգամ նրանց գլուխները շփվեցան միմեանց հետ, և ամեն անգամ երկուսի համար ևս անբացատրելի մի դող ցնցում էր նրանց քնքոյշ ջղերը...

— Դու ի՞նչու ես ցանկանում, որ ես հագնված լինեմ, հարցրուց Միքայէլը, թույլ տալով, որ նա անէ, ինչ որ ուզում է:

— Այս նոր շորերի մէջ դու լաւ ես երևում, շատ լաւ ես երևում... ասաց փոքրիկ աղջկը հագիւ լսելի ձայնով, որ կտրատվում էր սրտի բաբախումից:

— Որ էդպէս է, քո խաթրու կը հագնեմ, պատասխանեց Միքայէլը անմեղ ժպիտով:

— Դէ, հագիր, ես գնում եմ:

Հռիփսիմէն դուրս եկաւ փոքրիկ խուղից թշերը շառագունած, աչքերը վառվում էին խորին, անբացատրելի ուրախութեամբ:

Մեծ քոյրը տեսնելով նրան, մի անորոշ և մթին զգացմունք, տրեց նրա սրտին, այն զգացմունքը, որ վրդովեցնում է աւելի չափահաս և փորձված աղջկան, երբ նկատում է իրանից կրտսերի մէջ որ և է անվայել համարձակութիւն: Բայց Գալիանէն Միքայէլի մասին շատ լաւ կարծիք ունէր. գիտէր նրա պարզամտութիւնը, գիտէր, որ նա փոքր հասակից իրանց տան մէջ սնվելով, մե-



ծանալով, այն աստիճան ընտանիացել էր, որ մի տեսակ քոյր-եղբայրութիւն էր առաջ եկել նրա և Հռիփսիմէի մէջ: Բայց նախանձի նման մի բան նրան խռովեցնում էր, թէ ինչու Միքայիլը աւելի ուրախ էր լինում, երբ Հռիփսիմէն նրա հետ խօսում էր, թէ ինչու նա այնպէս շուտ կատարեց Հռիփսիմէի հաճութիւնը և հագաւ իր նոր շորերը, որոնք նա ուխտել էր հագնել այն ժամանակ միայն, երբ գնալու կը լինէր իրանց գիւղը:

Որքան Հռիփսիմէն շատախօս և թեթեւամիտ էր, այնքան Գալիանէն ծածկամիտ և լուռ ու մունջ էր: Կարծես թէ, նա իր հասակից աւելի վաղ պառաւած լինէր: Գուցէ մարմնի բնական արատաւորութիւնը սովորեցրուց նրան կենտրոնանալ իր մէջ, ինքն իր հետ մտածել, երբ արտաքին աշխարհը նրա վրա շատ փոքր ուշադրութիւն էր դարձնում: Այսպիսի աղջիկները մաղձոտ են լինում և միշտ ատելութեամբ են նայում դէպի իրանց շրջապատը, բայց Գալիանէն մի բացառութիւն էր կազմում: Նա չափից դուրս բարի և ներողամիտ աղջիկ էր և մի առանձին գուրթ ունէր դէպի Միքայիլը, որի վիճակի մէջ գտնում էր բաւական նմանութիւն իր հետ: Ամեն անգամ սեղանի վրա կամ մի ուրիշ ժամանակ, երբ նրան մերգ էին տալիս, իր բաժնի մի մասը պա-

հում էր, «էդ էլ Միքայիլի համար», ասում էր նա: Մայրը, եղբայրը և Հռիփսիմէն նայում էին միմեանց երեսին և ծիծաղում էին: Տանեցիք կատակի առարկայ էին շինել Գալիանէի բարեսրտութիւնը դէպի որը և անբախտ տղան:

— Իր նշանածին չէ մոռանում, ասում էր Հռիփսիմէին:

— Սիրահարված է, ասում էր Ստեփանը:

— Ես Գալիանէի փեսան պիտի խլեմ, աւելացնում էր Հռիփսիմէն:

— Ա՛խ, ինչ կռիւ, ինչ ծամփետոց կը լինի ձեր մէջ, վրա էր բերում Ստեփանը:

Գալիանէն լռութեամբ լսում էր այդ բոլորը, երբ չափը անց էին կացնում, նրա աչքերը լցվում էին արտասուքով:

— Ես կոյս պիտի դառնամ, ասում էր նա, ինձ փեսա պէտք չէ, թող Հռիփսիմէն ուրախանայ...

— Ի՞նչու ես կոյս դառնում, մէջ էր մտնում Ստեփանը, լաւն այն չէ, որ պսակվէք Միքայիլի հետ, զնաք գիւղը, վար կը վարէք, կով կը պահէք:

— Դ՛ու էլ ես ծիծաղում, Ստեփան, երբ այդպէս է, ես դրանից լետոյ էլ Միքայիլի հետ չեմ խօսի, ասում էր Գալիանէն և արտասուալի աչքերով հեռանում նրանց մօտից:



Տիկին Մարիամը լսում էր որդու և աղջիկների կռիւը, ծիծաղում էր. — Հանգստացիր Գալիանէ, ի՞նչու ես բարկանում, Միքայէլը մեր տան տղան է, օտար չէ:

Տան չորս սլատերի մէջ փակված երկու քոյրերը, որոնք ոչ մի օտար տղայի երես չէին տեսնում, շատ բնական է, որ իրանց խօսակցութեան և զգացմունքի առարկայ շինէին տան սպասաւորին: Եւ Մասիսեանի ընտանիքի մէջ վերոգրեալ խօսակցութեան նման վիճաբանութիւններ շատ անգամ գիպել էին Միքայէլի ականջին, և նա այնուհետեւ իրան հեռու էր պահում աղջիկների հասարակութենից, թէև կատակները բոլորովին անմեղ և միամիտ սրբտերից էին բղխում, բայց Միքայէլի մօտ տակաւին մնացել էր գիւղացի տղայի ամաչկոտութիւնը:

ԺԵ

Մի անգամ Մասիսեանը Մօսկվայի իր գործակատարից նամակ ստացաւ, որի մէջ խընդրում էր ուղարկել իր մօտ մի օգնական, որովհետեւ տկարութեան պատճառով ինքը մինակ չէր կարողանում գործերը օրինաւոր կերպով կատարել: Այս նամակը մեծ գլորդոց գցեց Մասիսեանի խանութի գործակատարների մէջ,

և նրանցից ամեն մէկը ցանկանում էր, որ իրան ուղարկեն: Բայց և ոչ մէկի ընդունակութիւնը չէր համապատասխանում նամակի բովանդակութեանը, որովհետեւ նրա մէջ գրված էր, որ օգնականը, բացի հայերէնից, պէտք է «անպատճառ» գիտենայ ռուսերէն գրել կարգալ և խօսել: Մասիսեանի մօտ գտնված գործակատարների մէջ չը կար այսպիսի մէկը, և նա մեծ մտատանջութեան մէջ էր, թէ որտեղից կարող էր գտնել:

Մի երեկոյ այս մտածութեան մէջ աղան տուն դարձաւ, և իսկոյն չը մտաւ իր սենեակը, այլ նստեց «Իշոտիքի» վրա, որ դրած էր ընկուզենու հովանու տակ, և պահանջեց սառը ջուր, որ գովացնէ իր ծարաւը: Միքայէլը իսկոյն կատարեց նրա հրամանը, և կանգնեց աղայից փոքր ինչ հեռու ոտքի վրա, սպասելով, չունի՞ արդեօք մի ուրիշ բան ևս հրամայելու:

— Կանչիր այստեղ խանութին, դարձաւ նա դէպի Միքայէլը:

Քանի մի ըոպէից յետոյ տիկին Մարիամը յայտնվեցաւ իր ամուսնի մօտ, նա ևս Միքայէլի նման կանգնած, սպասում էր լսել նրա հրամանը: Աղան նշան արեց, որ նստէ: Տիկինը տեղաւորվեցաւ նրա մօտ «Իշոտիքի» վրա: Աղան յայտնեց Մօսկվայի նամակի բովանդա-



կութիւնը և կամենում էր լսել իր «խանութի» կարծիքը, թէ ումը յարմար էր ուղարկել: Տիկին Մարիամին խիստ զարմացրուց այս մտերմութիւնը, որովհետև իր ամուսնական կեանքում այդ առաջին անգամն էր, որ աղան խորհրդակցում էր նրա հետ, այն ևս մի այնպիսի առարկայի վրա, որ բոլորովին անծանօթ էր իրան:

— Այդ ձեր գիտենալու բանն է, պատասխանեց տիկինը, ումը որ լաւ էք համարում, ուղարկեցէք:

Միքայէլը, որ հեռուից լսում էր նրանց խօսակցութիւնը, որ վաղուց առիթ էր որոնում իրան առաջարկելու, վստահութեամբ մօտեցաւ և ասաց.

— Ինձ ուղարկեցէք, աղալ:

Աղան խոփու կերպով նայեց նրա վրա, ուզում էր բարկանալ, բայց լակամայից ծիծաղեց:

— Դու ինչ գիտես, որ քեզ ուղարկեմ, լաւոտ:

— Ես համ հայերէն, համ ռուսերէն գրել, կարդալ և խօսել գիտեմ, պատասխանեց նա մի առանձին ինքնավստահութեամբ:

— Դու... դու երբ սորվեցար:

— Սորվեցալ... ինձ ու ինձ սորվեցալ... ասաց նա, վախենալով յայտնել իր վարժապետի,

Ստեփանի անունը:

Թէ տիկինը և թէ աղան երկուսն էլ մնացին զարմացած, Մասիսեանի տան մէջ ոչ ոքին յայտնի չէր, թէ նա կարդալ գիտէր: Եւ իսկոյն տիկնոջ գլխումը ծագեց այն միտքը, որ վաղուց նրան տանջում էր, որ ցանկանում էր Միքայէլին առժամանակ հեռացնել իր տրնից, վախենալով, մի գուցէ Հռիփսիմէի հետ պատահէր այն, ինչ որ պատահեց իր աղջիկներից մէկի, Սօնայի հետ, որը սերահարկելով գործակատարի վրա, փախաւ հօր տնից, և գիւղումը նրա հետ պսակվեցաւ:

— Ել ինչու էք ուրիշին պտուում, խօսեց տիկինը, Միքայէլից լաւը չը կալ, ուղարկեցէք, թող գնալ «մարդ» դառնալ, մեր մեծացրած տղան է:

— Ռուսերէն գիրք ունե՞ս, հարցրուց աղան:

— Ունեմ:

— Գնա, բեր, կարդա, տեսնեմ:

Միքայէլը վաղեց դէպի իր խուցը և ուրախութիւնից մոռացաւ, որ գլուխը կուցնէ նեղ դռնից ներս մտնելու համար, և ճակատը սաստիկ զարկվեցաւ դրան շրջանակի վերնափայտին: Բայց նա ուշադրութիւն չը դարձրեց ցաւի վրա և ներս մտաւ: Նա բաց արեց արկղը, այն գրքերով լիքը նուիրական արկղը, որ ընծայել էր նրան Ստեփանը և վեր առեց



գրքերից մէկը: Այն ժամանակ նա մտաբերեց բարեսիրտ պատանու խօսքերը, «կարգա՛, Միքայէլ, շատ կարգա՛, մի օր հարկաւոր կը լինի քեզ կարգալը:» — Այժմ նրա խօսքը կատարվեցաւ, մտածում էր Միքայէլը, և բոլոր սրտով ցանկանում էր թռչել Մօսկվա, մի անգամ ևս տեսնել իր սիրելուն:

Միքայէլը բերեց ռուսերէն գիրքը և երկչոտ աշակերտի նման կանգնեց աղայի մօտ:

— Դէ, հիմայ կարգա՛, տեսնեմ:

Միքայէլը սկսեց վարժ և կանոնաւոր կերպով կարգալ, աղան ուշադրութեամբ լսում էր, թէ և մի բառ ևս չէր հասկանում:

— Դէ, հիմայ գրէ՛:

— Ի՞նչ գրեմ:

— Գրէ, որպէս թէ գրում ես Մօսկվայի գործակատարին. «Այս անգամ ուղարկված 200 հակ բամբակների մի մասը խալիս (զուտ) Ամերիկայի սերմից է, մնացածները խառն են տեղային բամբակի հետ, վերջին հակերի վրա առանձին նշաններ են դրված, որ դու մուշտարուն ցոյց տալու ժամանակ ճանաչես, և կարողանաս Ամերիկայի բամբակի տեղ անցկացնել:»

— Հիմայ կարգա՛:

Միքայէլը կարգաց:

— Գրեցի՞ր «առանձին նշաններ են դրված»:

— Գրեցի. «առանձին նշաններ են դրված»... կրկին կարգաց Միքայէլը և իր կողմից նկատեց.

— Վայ թէ մուշտարին «առանձին նշաններ» ունեցող հակերից մէկը բաց անել տայ, յետոյ...

— Զայնդ կտրի, լակոտ, Մօսկվայի գործակատարս քեզ նման լիմար չէ, նա կը հասկանայ, թէ ինչպէս պետք է սարքել բանը... ասաց աղան բարկութեամբ, և դարձաւ դէպի աիկինը.

— Ասում ես ուղարկիր, դէ, ո՞նց ուղարկեմ, ես ճանաչում եմ էդ առանակին, դա «մարդ» չի դառնայ:

Բայց իսկապէս ոչ բամբակ էր ուղարկված, ոչ Ամերիկայի սերմից, ոչ տեղային սերմից, և ոչ էլ «առանձին նշաններ» էին դրված խառնալված հակերի վրա, որ գործակատարը ճանաչելով, չք սխալվէր, և կարողանար վատ բամբակը լաւ յատկութիւն ունեցողի տեղ անցկացնել: Միայն աղան գրել էր տալիս այն, ինչ որ ստեղծել էր նրա երեւակայութիւնը, մի նոր խաղ խաղալու համար Մօսկվայի բիրժայի վրա:

Միքայէլը շատ փոշմանեց իր անզգույշ նկատողութեան մասին, և տիկին Մարիամը նոյնպէս դժգոհ մնաց նրա անփորձութեան հա-



մար, որով գրգռեց աղայի անվստահութիւնը, որը պահանջում էր անպայման հպատակութիւն այն բոլոր խարդախութիւնների մէջ, ինչ որ պահանջում էին նրա առևտրական շահերը:

Տիկինը մտածեց մի կերպով բանը շինել:

— Վնաս չունի, ասաց նա, ջէր տղայ է, կը գնայ, կը տեսնի, կը սովորի:

— Ախար ի՞նչ կը սովորի, այսքան տարի չը սովորեց, գրանից յետոյ էլ ի՞նչ է կարող սովորել:

Միքայելը կանգնած, լսում էր այդ բոլորը, որպէս մի դատապարտեալ:

Նոյն միջոցին ներս մտաւ մի մարդ, կարտուղով, սև արխալուղով, որի վրայից հագել էր մի մոխրագոյն մաշված սերթուկ երկայն ու լայն փեշերով, և ոտներին հագել էր քոշեր սպիտակ գուլքաների վրա, որոնք կեղտոտութիւնից ցեխի գոյն էին ստացել: Նա իր ձեռքին բռնած ունէր մի հաստ փայտ, որ ինքըն էր շինել:

— Սիմօն Եագօրիչը եկաւ, ասեցին միաձայն, երբ տեսան նրան, իր հաստ փայտը տըփտըփացնելով ներս մտնելիս:

Դա աղայի ազվակատն էր, մի հին պօլիցիական չինովնիկ, որին դուրս էին արել ծառայութիւնից չափազանց արբեցութեան պատ-

ճառով, և եկել էր այն կնոջ գործի համար, որի որդին բանտարկված էր իր պարտքը աղային չը վճարելու պատճառով:

— Լաւ ժամանակ եկար, Սիմօն Եագօրիչ, քեզ էի սպասում, ասաց աղան:

— Ինչպէս չը գայի, այդ անգգամը (բանտարկեալի մօր մասին էր խօսքը) զահլայ է տանում, պատասխանեց նա և եկաւ նստեց նոյն «իշոտիքի» վրա, աղայի մօտ:

Նա բաւական յոգնած էր երևում և փոշոտած, կարտուղը գլխից առեց, թեքովը սրբեց ճակատի քրտինքը, և ջիբիցը հանելով քթախոտի մեծ տուփը, մի բուռն «էնֆիայ» վեր քաշեց դէպի իր ահագին քթի պնջածակերը, յետոյ ոգի և շունչ առնելով, գուլարթացաւ, և բարերար տուփը «թաւազա» անելով աղային, ասաց:

— Քաշիր, լաւն է, Աստուած հասցրուց, էսօր գջլեցի մէկից, բանը շինեցի սուղումը...

Աղան ուշադրութիւն չը դարձնելով նրա քաղաքավարութեան վրա, հարցրուց:

— Դու էն ասա, ի՞նչ արեցիր «այն անգգամի» հետ:

— Չէն քաշում, լաւն է ասում եմ, Ստամբօլի բուրնուլթի է, Աստուած հասցրուց, շատ ժամանակ էր, որ պտուռւմ էի:

— Է՛հ, քէփդ եկել է, Սիմօն Եագօրիչ, ա-



սան, ի՞նչ արեցիր էն «անգգամի» հետ, ասաց աղան մի փոքր պինդ ձայնով:

— Օրհնած, էլ ո՛ւր ես բարկանում, պատասխանեց փաստաբանը պատառոտած հին աղլուխով թափտալով «բռնութիւն» փոշին իր ընչացքի վրայից, որ դեղնել և «բռնութիւն» գոյն էր ստացել:

— Դէ, արի, էսպիսի մարդու հետ խօսիր, ասաց աղան գլուխը շարժելով. — Ես ինչ եմ ասում, նա ինչ է պատասխանում: — Ասա, ի՞նչ պէս վերջացրիր այն կնոջ հետ:

— Ել ինչպէս պէտք է վերջացնէի, հէրն անիծեցի, ինչ որ ունէր, չունէր, բոլորը ծախել տուեցի:

— Աղայի դէմքը պայծառացաւ մի անբացատրելի ուրախութեամբ:

— Փողերը, հարցրուց նա:

— Փողերը բերել եմ:

Փաստաբանը հանեց ջիւղիցը մի շորի կտորի մէջ փաթաթած թղթադրամները, և առանց համբարելու, դողդոջուն ձեռքով տուեց աղային:

— Այ տղայ, Միքայէլ, մի ստաքան արաղ բեր Սիմօն Եագօրիչին, այն մեծ ստաքանով, իմանում ես, ասաց աղան և սկսեց համբարել փողերը:

— Օրհնած, մէքիչ շուտ ասէիր, դու չես

իմանում, որ Սիմօն Եագօրիչը առանց եդ զահրումարի ապրել չի կարող, խօսեց փաստաբանը և անհամբերութեամբ սպասում էր կենսատու ըմպելիքին:

Բայց Միքայէլը մի երկրորդ սխալ ևս գործեց, որ ոչ սակաւ հրաւիրեց իր վրա աղայի բարկութիւնը. նա հրամայեց «մեծ» ստաքանով բերել արաղը, բայց այդ «մեծ» բառը պէտք էր հասկանալ «փոքրի» տեղ, որպէս խանութումը «լաւ» բառը գործ էր ածվում «վատի» տեղ. — և բերեց նա ահագին ստաքանով արաղ և տուեց Սիմօն Եագօրիչին: Դա կատարեալ սպիրտ էր առանց մի ուրիշ խառնուրդի, բայց նա միանգամով կուլ տուեց:

— Այ, սիրտս հովացաւ, շատ ապրիս, ասաց փաստաբանը դատարկած բաժակը լետ տալով Միքայէլին:

Բայց աղան իր խոժոռ ականարկութեամբ արդէն հասկացրել էր Միքայէլին նրա գործած մեծ սխալը, և այս անգամ խեղճ տղան բոլորովին լուսահատվեցաւ, թէ Մօսկվայ գնալն երբէք չը պիտի յաջողվէր իրան:

Բայց տիկին Մարիամին զբաղեցնում էր նոյն րօպէում մի ուրիշ տխուր միտք, երբ տեսաւ փաստաբանի բերած փողերի ծրարը, որ գոյացել էր այն «անգգամի» կալքը աճուրդով ծախել տալուց, այն ողորմելի կնոջ կայքը, որի



որդին բանտարկված էր, որը քանի օր առաջ եկել էր իր մօտ և գլխով ինքնուրույն, իսկ այժմ աղայի անգլոթեամբ մի մաքուր ընտանիք պէտք է մաշվէր և ոչնչանար դառն աղքատութեան մէջ:

— Շնորհակալ եմ, Սիմօն Եագօրիչ, ասաց աղան և բաժանեց փողերի ծրարից մի տասն ռուբլիանոց կարմիր թուղթ և տուեց փաստաբանին: — Ես էլ քեզ փէշքաշ, որ սաղացրիր փողերս:

Սիմօն Եագօրիչը ընդունեց «փէշքաշը» այնպիսի մի խոնարհութեամբ, քիչ էր մնացել, որ համբուրէ աղայի ձեռքը: Աղան առատաձեռն էր այնպիսի դէպքերում, որպէս լաւ որսորդները միշտ բաժին են հանում իրանց շներին վերաւորված երէի մսից:

Բայց Միքայէլի խնդիրը դեռ մնացել էր անվճիւ: Տիկին Մարիամը նկատելով, որ փաստաբանի բերած փողերը աղային բաւական չաւորամադրութեան մէջ բերեցին, մտածեց օգուտ քաղել այդ հանգամանքից և կրկին բարձրացնել Միքայէլի Մօսկվա գնալու հարցը:

— Կարդացէք, Սիմօն Եագօրիչ, Խնչպէս է գրած այդ նամակը, ասաց նա, տալով փաստաբանին Միքայէլի մի քանի ընկերացիներին գրած նամակը:

Փաստաբանը հանեց ծոցից ահագին ակնոց-

ները, զետեղեց ահագին քթի վրա, և հանդիսաւոր կերպով սկսեց կարդալ, կարծես թէ, կարդում էր մի ճառ. «Այս անգամ ուղարկված 200 հազ քամբակներից մի մասը»... և այլն:

— Գրած է «առանձին նշաններ են դրված», հարցրուց աղան, երբ փաստաբանը վերջացրեց ընթերցանութիւնը:

— Ինչպէս չէ, գրած է. «վերջին հակերի վրա առանձին նշաններ են դրված»... և «առանձին նշաններ» բառերի տակը խափ էր քաշած, պատասխանեց փաստաբանը:

— Հաւանում եմ:

— Ո՞վ է գրել:

— Մեր Միքայէլը:

— Հոգիս վկայ լինի, որ ինձանից լաւ է գրել, ասաց փաստաբանը ձեռքը սրտին դնելով. — Ես 22 տարի պօլիցումը գրագրութիւն եմ արել, 15 տարի Թ... մօվրովի մօտ եմ գրագրութիւն արել, բայց իմ գիրը դրա մօտ մի կօպէկ չի արժենայ:

Փաստաբանի չափազանց գովասանութիւնը մասամբ հետեւանք էր այն ահագին ստաքանով ուրաղի, որ քանի ընկերացիներին առաջ Միքայէլը խմացրել էր նրան, և կամենում էր դրանով վարձատրել սպասաւորի մատուցած ծառայութիւնը: Այսուամենայնիւ, Սիմօն Եագօրիչի վր-



կայուլթիւնը, որպէս գիտնականի խօսք, բաւական լաւ ներգործութիւն ունեցաւ Հարցի յօգուտ Միքայէլի վճռվելու վրա, և աղան խոստացաւ, որ անպատճառ կողարկէ նրան Մօսկվա:

Երեք օրից յետոյ, վաղ առաւօտեան Մասիսեանի դրանը սպասում էր մի ճանապարհորդական սալակ, դուրս եկաւ Միքայէլը, իր նոր շորերը հագած, նրա յետ դուրս եկան աղան և տիկին Մարիամը: Միքայէլը առաջ մօտեցաւ տիկնոջը, համբուրեց նրա ձեռքը և ստացաւ նրա մայրական օրհնութիւնը, և յետոյ համբուրեց աղայի ձեռքը և ստացաւ նրա հայրական «բարի խրատները», որպիսիները շատ անգամ լսել էր: Յետոյ նա խիստ ուրախ և պայծառ դէմքով նստեց սալակի վրա: Սալակը շարժվեցաւ: Անցնելով Մասիսեանի տան աջ թիւքից, յանկարծ վերելից մի բան ընկաւ նրա սալակի մէջ. դա մի փունջ ծաղիկ էր. յետ նայեց պատանին, տեսաւ, Գայիանէն և Հռիփսիմէն կտուրի վրա կանգնած, նրան գրկիով էին անում: Նա շատ ուրախացաւ, բայց մի բան մնաց նրա համար անորոշ, թէ երկու աղջիկներից որը ձգեց փունջը, և այդ միտքը նրան տանջել սկսեց...

## ԵՐԿՐՈՐԴ ՍԱՍ

Ա.

Անցել էր մօտաւորապէս մէկ տարի այն օրից, երբ Միքայէլը ճանապարհ ընկաւ դէպի Մօսկվա: Կիւրակէ օր էր: Մօսկվայի խուլ և յետ ընկած փողոցներից մէկում, Հին տան մէջ, ուր վարձով տալիս էին կահաւորած սենեակներ, մի պատանի, մաշված և գունաթափ դէմքով, գրասեղանի հանդէպ նստած, աշխատում էր: Նա, երևի, դեռ լուացված չէր, թէ և օրից բաւական անցել էր, և դեռ չը սանրված խիտ մազերը թափվել էին նրա մերկ պարանոցի վրա: Նա խալաթի տեղ հագած ունէր իր ձմեռվայ Հին պալտօն և հողաթափների տեղ կրում էր իր կալօշները: Օրը մառախլապատ էր և սաստիկ ցուրտ. ձնային թեփուկները քամուց մաղվելով, զարկվում էին սենեակի սառած ապակիներին և տխուր, աններգաշնակ ձայներ էին հանում: Սենեակը վառած չէր, բայց պատանին, երևի, ցրտութիւն չէր զգում և եռանդով գրում էր: Երբեմն նա վառում էր իր փոքրիկ չիբուխը, և կարծես, նրա ծրխովը աշխատում էր ջերմացնել իր սառած անդամները: Գրասեղանի վրա, որ բաւական ընդարձակ էր, անկարգ կերպով ածած էին զանազան թղթեր, տետրակներ, գրքեր, լրագրի



Համարներ, որոնց մէկի վրա, դիզած էր մի բռան չափ ծխախոտ: Բացի դրանցից, նրանց հետ խառն կարելի էր տեսնել՝ փոքրիկ սրուակներ զանազան մեծութեամբ, որոնց մէջ ածած էին գոյնըգոյն փոշիներ և հեղուկներ, այլ և մի քանի քիմիական և ֆիզիքական գործիքներ, ածուխի մեծ-ճեծ կտորներ, որոնցով, երևի, նա փորձեր էր անում, և մի մարդկային կառավար:

Այդ բոլորը իր խառնափնթորութեամբ նմանութիւն էր տալիս Փառաստի գրասեղանին:

Սենեակը բոլորովին մերկ էր. մի քանի աթոռներ, մի մահճակալ, մի լամպայ, գրքերի աստիճանակը, — ահա նրա բոլոր կարասիքը: Այստեղ ապրում էր Ե...գաւառի առաջին Հառուստի որդին, մի յղքատ ուսանող — Ստեփան Մասիսեանը:

Դուռը զարկեցին, ներս մտաւ աղախինը:

— Մի պարոն Հարցնում է ձեզ:

— Թող մտնէ, ասաց պատանին անփոյթ կերպով և շարունակեց իր պարապմունքը:

Ներս մտաւ մի ուրիշ պատանի, բաւական ճաշակով հագնված, և տեսնելով ուսանողին, աղշած և կանգնած մնաց: Ուսանողը, գլուխը վեր բարձրացնելով, ոչ սակաւ զարմացմամբ սկսեց նայել եկուորի վրա:

— Ա՛խ, այդ դուն ես, Միքայէլ, ինչպէս

փոխվել ես, Հազիւ ճանաչեցի, կոչեց նա և գրկեց եկուորին:

Միքայէլը մի բառ անգամ խօսել չը կարողացաւ:

— Որտեղից որտեղ...դու, Մօսկվայում...ինչպէս լայտնվեցար այստեղ, Հարցրուց ուսանողը, չը թողնելով նրան իր գրկից:

— Դէ, Հիմայ նստենք, պատմիր:

Նստեցին միմեանց հանդէպ: Միքայէլը պատմեց, թէ ինքը որպէս օգնական ուղարկված էր նրա հօր գործակատարի մօտ, որը տկարութեան պատճառով մենակ չէր կարողանում կատարել գործերը: Մօտաւորապէս մի տարի կը լինի, որ ինքը գտնվում է Մօսկվայում և այդ միջոցում միշտ ցանկացել է տեսնել Ստեփանին, բայց չէ կարողացել, որովհետեւ աղան սաստիկ հրաման էր գրել գործակատարին, որ ամեն կերպով արգելէ Միքայէլի յարաբերութիւնները իր որդու հետ, որ որդին մի գուցէ «փչացնէ և խելքից հանէ» իր ծառայողին: Բայց գործակատարը քանի օր առաջ մեռաւ և նրան թաղել տալուց յետոյ իսկոյն վազեց Ստեփանի մօտ:

— Շատ վատ մարդ էր, աւելացրուց Միքայէլը, մի ըոպէ ևս աչքից չէր հեռացնում ինձ:

— Ես չեմ ճանաչում այդ անպիտանին, պա-



տասխանեց Ստեփանը արհամարհական կերպով. — դու ա՛յն ասա՛, հիմա՛յ ի՛նչ ես շինում ա՛յստեղ:

Միքայէլը յայտնեց, թէ ինքը այժմ կատարում է մեռնող գործակատարի պաշտօնը. թէ նա իր կենդանութեան ժամանակ գրել էր աղային, որ ես կարող եմ կառավարել նրան յանձնված գործերը և արձակուրդ էր խնդրել, որ աղան թող տա՛ նրան ժամանակաւորապէս վերադառնալ իր տունը առողջութիւնը ուղղելու համար, որովհետեւ Մօսկվայի օդը վնասում էր նրան, բայց աղան թող չը տուեց և այնքան տանջվեցաւ, մինչև մեռաւ:

— Այս բոլոր փոփոխութիւնների մէջ այսքանը միայն լաւ է, խօսեց Ստեփանը, որ դու ա՛յստեղ կը մնաս և ես առիթ կունենամ կրկին քեզ հետ պարապվելու: Դու խօ չե՞ս թողել կարգալու սէրը:

— Չէ, Ստեփան, ասաց Միքայէլը աշակերտի ամօթխածութեամբ, ես կարդում էի, միշտ կարդում էի այն գրքերը, որ դու ինձ տուեցիր:

Միքայէլը զարմանում էր, որ նա իր հօր, մօր և քոյրերի մասին ոչինչ չէր հարցնում, և իրանց տան դրութիւնովը չէր հետաքրքրվում:

— Նամակ ստանում ես տնից, հարցրուց նա:

— Ոչ, և չեմ էլ ցանկանում ստանալ, պատասխանեց Ստեփանը սառնութեամբ. — ի՛նչ կայ, բոլորը նոյնը կը լինի, ի՛նչ որ տեսել եմ: Այսպէս չէ:

— Այսպէս է: Դու էլ չե՞ս գրում:

— Չեմ գրում:

— Միքայէլին աւելի անհանգստացնում էր Ստեփանի աղքատ կեցութիւնը, որ աչքի էր ընկնում չքաւորութեան բոլոր դառնութեամբ: Բացի դրանից, նա ամենևին առողջ չէր երեւում. պատանեկութեան առողջ հասակի մէջ ուժաթափվել և մաշվել էր նա, որպէս մի կմախք: Աշխատութիւնը, ծանր, անընդհատ աշխատութիւնը համարեա սպառել էր նրա մէջ կենսական ամեն գօրութիւն: Սենեակը, որի մէջ բնակվում էր նա, բոլորովին զրկված կրակից և ջերմութիւնից, որ իր խոնավութեամբ մթին գերեզմանի նմանութիւն էր բերում, բաւական էր սպանելու նրա առողջութիւնը: Սարսափելի է լինում ուսանողի դրութիւնը, երբ նա պէտք է սովորէ և պէտք է մի և նոյն ժամանակ պատերազմէ աղքատութեան հետ: Ամենաթանաքին ժամերը, որ պիտի նուիրված լինէին ընտրած մասնագիտութիւնը ուսումնասիրելու համար, մասամբ զոհվում են կողմնակի պարասովունքների, որ նա ծախսելու փող ունենայ, որ նա քաղցած



չը մնայ: Միքայէլին չէին կարող նկատելի չը լինել այս բոլորը, և նա խիստ մտերմութեամբ հարցրուց:

— Ի՞նչով ես ապրում:

— Ի՞նչով, քիչ գործ կայ, որով կարելի էր ապրել. — դասեր եմ տալիս, թարգմանութիւններ եմ անում, աշխատակցում եմ մի լրագրի:

Միքայէլը այժմ այնքան զարգացած էր, որ կարող էր հասկանալ, թէ իր բարեկամի այս տեսակ երկրորդական պարապմունքները, խլեղով նրանից շատ ժամանակ, կը թուլացնէին նրա ուսման ընթացքը, և բացի դրանից, բոլորովին կը խանգարէին նրա առողջութիւնը, եթէ նա չը կազդուրէր իրան հանգստութեամբ օրվայ մէջ գոնէ մի երկու ժամ: Այս պատճառով առաջարկեց նրան ընդունել իրանից ամեն ամիս մի գումար, որ կարող էր ապահովացնել նրա ապրուստը:

— Այդ անկարելի է, պատասխանեց Ստեփանը:

— Ի՞նչու, հարցրեց Միքայէլը զարմանալով:

— Ինչ աւելի փող պէտք չէ: Բացի դրանից, քեզ յայտնի է, որ իմ հայրը չէր կամենայ, եթէ նրա փողերից կը տալին որդուն: Բայց եթէ այդ բանը ծածուկ կանես դու, երբ նա կը հասկանայ (և անկարելի է, որ չը հասկանայ) այն ժամանակ կը վնասես քո ասպարէզին:

— Ես իմ փողերից եմ տալու, ես այժմ ու՞ճիկ եմ ստանում, որը ինչ պէտք չէ:

— Յետոյ պէտք կը լինի:

Միքայէլը սկսեց աւելի թախանձել, որ ընդունէ, անպատճառ ընդունէ. աւելացնելով, թէ ինքը շատ բաներով պարտաւոր է համարում իրան, և ցանկանում է մի փոքրիկ ծառայութիւն անել իր բարեկամին, և շատ պիտի տխրի, եթէ իր առաջարկութիւնը չընդունվի: Եւ յայտնեց, եթէ Ստեփանը չէր ուզում ձրի նուէր ընդունել, կարող է մի ժամանակ լետ դարձնել, երբ ուսումը կը վերջացնէ, երբ ինքը փող կունենայ:

Ստեփանը ուսանում էր բժշկական մասնում և համոզված էր, թէ իրան սպասում է լաւ ապագայ, թէ կարող էր մի օր վերադարձնել իր ստացած գումարը: Միւս կողմից, նա տեսնում էր, որ Միքայէլի բարերարութիւնը բաւական դիւրութիւն կը տար իրան աւելի յաջողակ կերպով շարունակել իր ուսումը, որ պահանջում էր աւելի ժամանակ և աւելի աշխատութիւն, մինչդեռ հացի համար եղած երկրորդական պարապմունքները զրկում էին նրան գլխաւոր աշխատութիւնից: Բայց վախենում էր Միքայէլին փորձանքի մէջ գցելուց, մանաւանդ նա ինքը ասաց, թէ աղան առաջուց զրած էր եղել մեռնող գործակատարին,



որ արգելէ ամեն տեսակ յարաբերութիւն իր որդու և Միքայէլի մէջ:

—Դժուար է, Միքայէլ, շատ դժուար է, ասաց նա:

—Ոչինչ դժուարութիւն չը կայ, ես իմ ռօճիկի հետ կարող եմ վարվել՝ որպէս ես կամենում եմ:

—Իսկն ալն է, որ չես կարող: Միթէ չեն ճանաչում իմ հօրը. դու ոչինչ սեփականութիւն չունես, քո անձն էլ մինչև անգամ նրան է պատկանում, քանի որ նրա ձեռքի տակն ես գտնվում:

Երկար խօսելուց յետոյ երկու բարեկամները բաժանվեցան և փողի խնդիրը մնաց անվճիռ:

—Դու դարձեալ կը դաս ինձ մօտ, այնպէս չէ՞, ասաց Ստեփանը նրան ճանապարհ գցելու միջոցին.—ես կը տամ քեզ նոր զրքեր կարգալու համար:

—Կը գամ և շուտ շուտ կը գամ:

Միքայէլը թէև խոստացաւ իր ռօճիկը տալ Ստեփանին, թէև ամենայն սիրով ցանկանում էր օգնել նրան, բայց մի բան չէր մտածում, թէ որքան դժուար էր իրագործել: Նա իր ռօճիկը չէր ստանում, ալ մնում էր աղայի մօտ աճելու համար: «Որդի, գրում էր նրան Մասիսեանը, ռօճիկդ եթէ վեր առնես, ի՞նչ

պիտի անես, կը խարջես, կը փչացնես, թող մնայ ինձ մօտ, ես կը պահեմ, և կը շահեցնեմ քեզ համար, և վերջի օրումը մի լաւ թանխահ կը շինեմ, յետոյ քեզ կը տամ:» Հիմալ Միքայէլը ինչ եղանակով կարող էր հասկացնել աղային, թէ իր ռօճիկը իրան պէտք էր, թէ կամենում էր ամսէ ամիս ստանալ, որովհետև նա ծախսի կարօտութիւն չունէր, նրա բոլոր ծախսը, թէ ուտելիքի, թէ հագնելիքի և թէ կացարանի համար ստացվում էր Մասիսեանի առևտրական տնից, որի մասին նշանակված էր մի որոշ գումար:

Արեւելքում վաճառականը և վաճառականութիւնը միշտ ունեցել են հասարակութեան աչքում պատուաւոր նշանակութիւն: Արեւելեան վէպերի և առասպելների մէջ «խօջայների» անունները համարեա խալիֆաների անունների չափ յարգելի տեղ են բռնել, որպէս առաքինութեան և արդարութեան օրինակներ: Եւ հայերը, որպէս ասիական վաճառականներ, պէտք է անմասն չը լինէին այն ազնիւ յատկութիւններից, որ ունեցել են իրանց հետ յարաբերութիւն ունեցող միւս ազգերն, որպիսիներ եղել են պարսիկները, ասորեստանցիք և մանաւանդ արաբները:

Եւ իրաւ, հայ վաճառականների մէջ ևս ղեռ մնացել են մի քանի գեղեցիկ սովորու-



թիւներ, որոնք տակաւին չեն կորցրել իրանց նահապետական ձևը: Դրանցից մէկն է վաճառականի մօտ ծառայող գործակատարի որդեգրութիւնը: Տեսնում ես, մի տղայ, շատ անգամ ստոր, աղքատ բնտանիքից, շատ անգամ բոլորովին որբ, մտնում է վաճառականի մօտ. բաւական է, որ նրա աղան նկատէ, թէ տղան շնորք ունի, ընդունակ է առաջ գնալու, սկսում է այնուհետև նրա վրա առանձին խնամք տանել: Թէև նշանակում է ռօճիկ, բայց փողը նրա ձեռքը չէ տալիս, պահում է իր մօտ, շահեցնում է, մինչև գործակատարը առևտուրի մէջ աւելի վարժվելով, զարգանում է, և այնուհետև իր աղայի օգնութեամբ իր համար առանձին վաճառականութիւն է սկսում: Աղան միանգամով վճարում է նրա շատ տարիների ռօճիկը, որ իր առևտուրի մէջ շահեցրել էր, և իբրև վարձ նրա հաւատարիմ ծառայութեան, իրանից էլ մի բան աւելացնում է, և նա ունենում է մի զրամագլուխ, որով կարող էր իր սկսած գործը շարունակել: Նա ստանում է և կրեդիտ իր բարերարից, որով հետզհետէ ընդարձակում է իր վաճառականութիւնը: Այս տեսակ գործակատարները համարվում են աղայի որդեգիրներ: Աղան իր համար փառք և պատիւ է համարում, որ կարողացաւ հասցնել մի «մարդ»: Այդ «մարդը» կոչ-

վում է աղայի «չըրաղ», — այսինքն մի ճրագ, որ վառեց աղան մի աղքատ բնտանիքի սև օրին լոյս տալու համար: Եւ ամեն մի աղա այնքան աւելի յարգելի է լինում իր հասարակութեան մէջ, որքան շատ թւով հասցնում է «չըրաղներ»:

Բայց Մասիսեանը աւելի գործնական կէտից էր նայում չիշեալ սովորութեան վրա: Նա էլ իր գործակատարների ռօճիկը, կամ ամբողջապէս և կամ մի մասը, իր մօտ էր պահում, խոտանալով շահեցնել և վերջը հնար տալ նրանց առանձին առևտուր սկսելու: Իսկ այս մի խորամանկ միջոց էր գործակատարին միշտ կապված պահելու իր հետ կամ միշտ նրա սանձը իր ձեռքում պահելու համար: Ռօճիկը իր մօտ պահելով, Մասիսեանը միշտ ունէր իր ձեռքում մի զրաւական, մի երաշխաւորութիւն գործակատարի կողմից, որ ստիպեցնում էր նրան անպայման հնազանդ լինել: Որովհետև մի անհաւատարմութիւն նկատածին պէս, աղան կարող էր իսկույն նրան դուրս անել, և ողորմելի գործակատարի ամբողջ տարիների ծառայութեան վարձը վեր առնել որպէս տուգանք: Եւ շատ անգամ բոլորովին անմեղ մի գործակատարի մեղադրում էր նա անհաւատարմութեան մէջ և կտրում էր ռօճիկը: Եւ զրանով պէտք է բացատրել Մասիսեանի առևտրական



տան գործակատարների անդադար փոփոխու-  
թիւնը:

Վերադառնալով Ստեփանի մօտից, Միքայէ-  
լը հէնց այն օրը գրեց աղային, խնդրելով, որ  
իրան թոյլ տայ ամսէ ամիս վեր առնել իր  
դօճիկը, պատճառ բերելով, թէ նպատակ ու-  
նի դնել վիճակախաղի տօմսակներ և իր բախ-  
տը փորձել այդ բանի մէջ: Նա ստացաւ մեր-  
ժողովան պատասխան, աղան լալտնում էր,  
թէ դա «սարսաղութիւն» է, թէ ինքն է նրա  
բախտը, թէ ամեն բան իրանից պէտք է սպա-  
սէ, և խորհուրդ էր տալիս իր խրատներին  
հետեւել, որ վերջը կարողանայ օրինաւոր  
«մարդ» դառնալ: Այս պատասխանը սաստիկ  
զայրացրուց Միքայէլին, և պատրաստ էր լալտ-  
նել աղային, թէ բոլորովին կը թողնէ իր գործա-  
կատարութիւնը, եթէ աղան չը յօժարվի ըն-  
դունելու նրա խնդիրքը: Բայց նա չը գրեց:  
Թէև Միքայէլը վերջին ժամանակներում բո-  
լորովին ճանաչել էր Մասիսեանի հոգին, թէև  
ամենևին չէր հաւատում նրա խոստմունքնե-  
րին, այնուամենայնիւ նրանից հեռանալ ևս  
չէր կարող, ոչ այն պատճառով, որ գուցէ կը  
զրկվէր աղայի մօտ ունեցած իր փողերից, ոչ,  
բայց կար մի առանձին պատճառ, որ կապում  
էր նրան որպէս Մասիսեանի ընտանիքի, նոյն-  
պէս և նրա գործերի հետ: Միքայէլը դեռ և

չէր մոռացել ծաղիկների այն փունջը, որ ձգե-  
ցին նրա սայլակի մէջ, երբ նա հեռանում էր  
Մասիսեանի տնից....

Բ.

Միքայէլը կենում էր Մօսկվայի բերժայից  
ոչ այնքան հեռու մի գերմանացի աղքատ ըն-  
տանիքի մէջ, ուր տուել էին նրան մի փոքրիկ  
սենեակ, ուտելիքը և սպասաւորութիւնը  
իրանց վրա ընդունելով: Փոքրիկ, կօկիկ բնա-  
կարանը իր հասարակ և միշտ մաքուր պահ-  
ված կարասիներով բոլորովին համապատաս-  
խանում էր Միքայէլի համեստ բնավորու-  
թեանը: Այստեղ հանգիստ և ազատ էր ըզ-  
դում նա իրան, և երբեմն նստած լուսամու-  
տի հանդէպ, նայում էր դէպի փողոցէն անց-  
նող խաչաճամուկ ամբօխի հոսանքը, տես-  
նում էր իր առջևը շարված ահագին տները,  
և դարմանում էր, երևակայելով, թէ ինքը  
գտանվում է մի կախարդված աշխարհում, որ  
իր համար նոր էր, որ իր համար անձանօթ  
էր: Այսպիսի բայէները շատ անգամ նրան  
յիշել էին տալիս հայրենիքը. նրա միտքը  
թռչում էր հեռու և հեռու դէպի Արաքսի  
ափերը, տեսնում էր այնտեղ իրան հովուա-  
կան ցուպը ձեռին, տրեխները հագած, ահա-



գին մորթէ գդակը գլխին, քշում էր գառնե-  
րը դէպի խոտաւէտ արօտամարդերը: Ի՞նչ մեծ  
տարբերութիւն անցեալի և ներկայի մէջ: Հո-  
վիւ Կալօի և Բօրսայի հերոս Միքայէլի մէջ:

Մի երեկոյ յայտնվեցաւ նրա մօտ Ստեփանը,  
որ բերում էր իր հետ մի ահագին կապ գրքե-  
րի. նա դրեց սեղանի վրա իր բեռը և ընկաւ  
բազկաթուռի մէջ: Պատանին սաստիկ յոգնած  
էր երևում, բայց նրա գունաթափ դէմքը  
փայլում էր ուրախութեամբ: Միքայէլը պատ-  
մեց նրան, թէ ինչ պատասխան ստացաւ ա-  
ղայից իր ռօճիկի մասին:

— Ես ուրիշ կերպ չէի սպասում, պատաս-  
խանեց Ստեփանը արհամարհանքով. — այդ ո-  
չինչ, մօտ եկ, քեզ ցոյց տամ, թէ ինչ գրքեր  
են դրանք:

Միքայէլը մօտեցաւ գրասեղանին և աշա-  
կերտի հետաքրքրութեամբ սկսեց նայել գրքե-  
րի վրա:

— Դրանից, ցոյց էր տալիս Ստեփանը թեր-  
թելով գիրքը, դու կը ծանօթանաս ֆինան-  
սական և բանկային գործառնութեանց հետ.  
այդ միւսը քեզ կը ծանօթացնէ զանազան տե-  
սակ հում բերքերի հետ, որ արդիւնաբերվում  
են այլ և այլ երկրներում. իսկ այդ երրորդից  
կը ծանօթանաս գործարանների և առհասա-  
րակ գործարանական արհեստագործութեան

հետ: Բայց այդ չորրորդը մի գեղեցիկ վէպ է,  
կարգա՛, երբ կը ձանձրանաս առաջիններից, դա  
կը կրթէ քո հոգին և ճաշակը:

Միքայէլը ուրախ-ուրախ վեր էր առնում  
դեռ չը կտրված գրքերը, նայում էր, և կրկին  
դնում գրասեղանի վրա:

— Մոռացայ ասել քեզ, շարունակեց Ստե-  
փանը, ես արդէն թոյլտուութիւն ստացայ քո  
մասին, որ իբրեւ ազատ լսող, դու կարողանաս  
յաճախել այստեղի առևտրական դպրոցը, շա-  
բաթը երկու անգամ, ժամանակ կունենան:

— Շաբաթը երկու անգամ, կրկնեց Միքա-  
յէլը մտածելով, ինչու չէ, ժամանակ կունենամ:

— Շատ գեղեցիկ, ուրեմն ես էգուց առաւօ-  
տեան կը գամ, քեզ կը տանեմ և կը յանձ-  
նեմ դպրոցի տեսչին:

Նա վերկացաւ:

— Յտեսութիւն, առաւօտեան ութ ժամին  
քեզ մօտ կը լինեմ:

— Ո՛ւր ես շտապում, մի փոքր սպասիր,  
իսկոյն թէյ կը տան, խնդրում էր Միքայէլը:

— Չեմ կարող, ինձ մի քանի տեղ ևս պէտք  
է անցնել:

Նա հեռացաւ:

— Ո՛րքան բարի է նա, մտածում էր Միքա-  
յէլը Ստեփանի հեռանալուց յետոյ, — բայց որ-  
քան բարի է, այնքան էլ հպարտ է: Ես ձրի



չը պիտի ընդունեմ նրա բարերարութիւնը. մեր երկուսի վիճակը շատ նման է միմեանց. նա փողի աղքատ է, իսկ ես — կրթութեան: Պէտք է լրացնենք մէկս միւսի կարօտութիւնը. եթէ նա ինձանից ոչինչ ծառայութիւն չի ընդունի, դրանով կը վերաւորէ ինձ, և առիթ կը տայ ինձ ևս չընդունել այն հոգատարութիւնը, որ նա ունի իմ մասին: Բայց ի՞նչ եղանակով օգնել...

Վերջին հարցը Միքայելին մտաւորացնութեան մէջ ձգեց: Նա չէր ցանկանում անազնիւ լինել, եթէ ոչ, շատ հեշտ էր ամեն տարի մի չորս կամ հինգ հարիւր ըուբլի տալ Ստեփանին և այնպէս անցկացնել Մասիսեանի հաշիւներին մէջ, որ նա ոչինչ չը հասկանար: Բայց կամենում էր իր սեփական փողից տալ, և այդ փողը նա չունէր: Նրա ռօճիկը, որպէս նրա անձը, ազան ցանկանում էր իր ձեռքում պահել:

— Ես պէտք է ցոյց տամ այդ լիմար ծերուկին, որ նրա տուած ռօճիկի կարօտութիւն չունեմ, որ ես ուրիշ կերպով էլ կարող եմ փող վաստակել, մտածեց նա, և մօտեցաւ գրասեղանին, սկսեց գրել մի նամակ:

Միքայելը Մօսկվայի բերժայի վրա այնքան անուն, այնքան վարկ և հաւատարմութիւն էր ստացել, որ վաճառականներից շատերը, ո-

րոնք այնտեղ գործակատարներ չունէին, առաջարկում էին նրան կօմիսիօնով զանազան յանձնարարութիւններ կատարել: Նա հաշոււմ էր, որ այս կերպով կարող էր բաւական գումար վաստակել, բայց որպէս զի իր աղայից ծածուկ չը մնայ, յայտնեց նրան նամակով:

Այս նամակի ոճը և մտքերի արտայայտութեան ձևը այլ ևս չէին պայմանաւորվում ծառայողի երկչոտ և խոնարհական ոգու ներշնչութեամբ, նա բովանդակում էր իր մէջ ազատ և անկախ մարդու խօսքը: Միքայելը յայտնում էր, թէ ամեն կողմից իրան առաջարկում են զանազան առևտրական յանձնարարութիւններ կատարել կօմիսիօնով, թէ ինքը կարող էր բոլորի պահանջներին բաւականութիւն տալ առանց Մասիսեանի գործի ընթացքը թուլացնելու կամ նրա շահերին վնասելու: Գոյացած արդիւնքի մասին նա յայտնում էր, թէ մի մասը ինքը կը վեր առնի, որպէս իր աշխատութեան վարձատրութիւն, իսկ միւս մասը կը մտցնէ Մասիսեանի հաշիւի մէջ, որպէս նրա օգուտը: Նամակը վերջացնում էր, աւելացնելով, եթէ ազան կրնդդիմանայ իր այս ձեռնարկութեանը, այն ժամանակ ինքը ստիպւած կը լինի հրաժարվել նրա գործակատարութենից և իր համար առևտրական ազատ կօմիսիօնների պաշտօն կատարել:



Մասիսեանին սկզբում վրդովեցրուց այս նամակը. առաջին անգամն էր, որ նրա գործակատարը, նրա ստրուկը, վստահանում էր նրա հետ այս աստիճան համարձակ լինել: Բայց ինչ կարող էր անել: Գործը դժուար տեղ էր հասցրել: «Նս գիտէի, մռնչում էր նա, որ այն անի՝ ծածը կը լրբացնէ նրան»... Այս խօսքերով ակնարկում էր նա Ստեփանին, մտածելով, թէ անկարելի էր, որ Ստեփանը հանգուցեալ գործակատարի մահից յետոյ յարաբերութիւն չը սկսէր Միքայէլի հետ, նրանից փող պոկելու նպատակով: Բայց նրա վրդովմունքը մի փոքր մեղմացաւ, երբ աւելի լաւ մտածեց նամակի բովանդակութեան վրա: Մասիսեանը այն տեսակ մարդերից էր, երբ շահ կար աչքի առջև, նա միւս վերաւորանքները շուտով մոռանում էր: Միքայէլը յայտնում էր, որ իր կօմիսիօներութիւնից գոյացած արդիւնքի մի մասը կանցկացնէ աղայի հաշիւի մէջ. ինչու զրկել իրան այդ օգտից: Բայց միւս կողմից, աղան մտածում էր, որ Միքայէլը ինքն էլ կը շահվի, ինքն էլ փողի տէր կը դառնայ, — այդ նրան հաճելի չէր կարող լինել, որովհետեւ նա սիրում էր իր գործակատարներին միշտ աղքատ տեսնել, և աղքատութեան մէջ պտուռում էր նրանց հնազանդութիւնը: Ինչպէս պէտք էր հաշտեցնել այդ երկու ծայրերը: Իրան զրկել

օգտից, որ նա էլ զրկված լինի, — վճռեց Մասիսեանը: Այդ անկարելի էր: Միքայէլը յայտնում էր, եթէ աղան չը համաձայնվի իր պայմանների հետ, ինքը ստիպված կը լինի հրաժարվել նրա գործակատարութիւնից և իր համար առանձին գործ սկսել: Բայց կորցնել Միքայէլի նման մի գործակատար, դժուար էր աղայի համար. ոչ ոք չը կար, որ նրա տեղը բռնէր: Մասիսեանը յակամայից յայտնեց իր յօժարութիւնը, բայց մտքումը դրեց իր ժամանակին ուրիշ կերպով պատժել նրան....

Որքան Միքայէլի նամակը խիստ էր, այնքան աղայի նամակը մեղմ էր: Նա յայտնում էր իր հայրական ուրախութիւնը նրա յառաջադիմութեան մասին, բարեմաղթում էր աւելի ևս յաջողակ և բաղդաւոր լինել, թէ իր համար պարծանք էր համարում, որ «իր հասցրած» աշակերտը վերջապէս «մարդ» է դառնում, և աւարտում էր նամակը, խորհուրդ տալով, որ Միքայէլը աւելի լաւ կանէ, եթէ իր կօմիսիօներութիւնից գոյացած արդիւնքից այն մասն ևս, որ իրան է պատկանելու, կը մտցնէ աղայի առևտրական գործի մէջ, և վերջը տօկոսով միասին կը ստանայ իր ուժիկի հետ, երբ աղան նրա համար մի առանձին առևտրական տուն զը բաց անէ:

— Դու ինձ այլ ևս չես կարող խաբել, ա-



սաց ժպտալով Միքայէլը, երբ կարդաց աղայի նամակի վերջին տողերը. — Ես քեզ արդէն ճանաչում եմ:

Պ.

Միքայէլի աշխատութիւնները այժմ աւելի ծանրացան. նա բացի Մասիսեանի գործերից կատարում էր այժմ ուրիշ վաճառականների բազմաթիւ յանձնարարութիւններ. շաբաթը երկու անգամ յաճախում էր առևտրական գըպըցը դասեր լսելու. առիթ էր գտնում այս և այն գործարանները տեսնելու և նրանց կադմակերպութեան հետ ծանօթանալու, իսկ տանը պարագում էր ընթերցանութեամբ, և շատ փոքր ժամանակ ունէր հանգստանալու: — Այս բոլորը այնքան խորթ, այնքան օտարոտի էին երևում տեղային հայ վաճառականներին, որ Միքայէլի վարմունքը ընդհանուր խօսակցութեան և բամբասանքի նիւթ էր դարձել նախանձոտների բերանում: Մի քանիսը առանձին նամակներով յայտնեցին աղային, թէ ինչ «մոլորութիւնների» մէջ էր ընկել նրա գործակատարը: Բայց ազան ուշադրութիւն չը դարձրեց նրանց մատնութիւններին, երբ նոր տարվայ սկզբում ներկայացրած ընդհանուր հաշիւի ցուցակի մէջ գտաւ մի խոշոր թուա-

նշան—5000 ռուբլի, որ Միքայէլը բաժին էր հանել աղային իր կօմիսիօներական գործակատարութեան արդիւնքից: Նա ստանում էր աղայից ռօճիկ 1000 ռուբլի միայն, և նրա բոլոր գործերը կատարելուց յետոյ 5000 ռուբլի օգուտ էր տալիս. ինչու չը պիտի գոհ լինէր աղան, երբ շատ էլ ցանկանար, դարձեալ չէր կարող ոչինչ ճնշում գործ դնել Միքայէլի վրա, որ այժմ մի կերպ անկախ դիրք էր հիմնել իր համար:

Մօսկվայում կային ամեն կողմից հայ վաճառականներ. — Հաշտարխանից, Նոր-Նախիջեւանից, Թիֆլիսից, Ղարաբաղից, Երևանից, Ադուլիսից, և մինչև անգամ Թաւրիզից: Դրանց օրվայ ամեն մի ժամում կարելի էր գտնել բիրտայի առջև, թէև բիրտան փակված լինէր, թէև գործը այնտեղ դադարած լինէր: Որպէս մոլեռանդ բրահման, հայ վաճառականը երբէք չէ հեռանում այդ առևտրական տաճարից, և մի առանձին գոլարճութիւն է զգում, նայելով նրա փակված դռների վրա: Բայց Միքայէլը սովորութիւն չուներ յայտնվել այնտեղ կէսօրից յետոյ, երբ գործը դադարած էր, և այդ շատ բարկացնում էր վաճառականներին, որ վերաբերում էին նրա հպարտութեանը: Բայց նա առհասարակ խորշում էր այդ վարախօս և դատարկապորտ հասարակութիւնից,



որ մի ուրիշ զբաղմունք չէր ճանաչում, որ իր հայկական նեղ շրջանից չէր դուրս գալիս, և հաւաքվելով այնտեղ, կամ զբաղված էին լինում կոշտ-կոպիտ կատակներով, և կամ կեղտոտ բամբասանքներով էին պարապում: Հայ վաճառականը շնորք չունի, որ իր ժամանակը աշնպէս կարգադրէ, որ գործի ժամանակը գործ կատարէ, հանգստութեան ժամանակը հանգստանայ, իսկ պարապ ժամանակը մի ուրիշ բան սովորէ: Բացի իր ծանօթ վաճառականութիւնից, ոչ մի ուրիշ գործ չէ հետաքրքրում նրան. բացի իր հայկական նեղ շրջանից, նա մի օտար հասարակութիւն չէ ճանաչում: Եւ այդ է պատճառը, որ նա միշտ մնում է միակողմանի, անտաշ, անկիրթ, և ուր որ գնում է, դարձեալ վերադառնում է իր հայրենիքը նույն ոգւով, նույն սրտով և նույն բնաւորութեամբ, որպէս դուրս էր եկել:

Մօսկվայում, որպէս ամեն տեղ, մի երկրի հայ վաճառականը սաստիկ ատելութիւն ունէր դէպի մի օտար երկրացին ընդհանրապէս, օրինակ, ղարաբաղցին ատում էր զօկին, զօկը թիֆլիսեցուն և այլն: Իսկ մի և նոյն երկրի վաճառականը ատում էր իր երկրացուն մասնաւորապէս, օրինակ, մի հաշտարխանցին միւս հաշտարխանցուն չէր կարող համբերել: Ամեն մէկը պատրաստ էր վնասել իր ընկերին, թէև

գիտենար, որ օտարին 10 կօպէկ վնաս տալով, ինքը 20 կօպէկ պիտի վնասվէր: Խօսքի անկեղծութիւն չը կար նրանց մէջ. բոլորը մէկ մէկու խաբում էին, թէև բոլորն էլ ցոյց էին տալիս միմեանց սաստիկ մտերմութիւն: Դատարկ կեանքը, անգործութիւնը շինել էր նրանցից մի տեսակ վայրահաչներ, որ մինը միւսին կծելու սովորութիւն ունէր:

Տեսնում ես, հայ վաճառականների հասարակութիւնը խմբված է բիրժայի առջև, ամեն տեսակ ասիական և եւրօպական հագուստներով. նրանք բարձր ձայնով խօսում են, ծիծաղում են, հռհռում են, ամենեւին չը նեղվելով, թէ իրանց վրա կարող էին ուշադրութիւն դարձնել, թէ հրապարակի վրա այդ անվայելուչ էր: Նրանք պատմում են միմեանց զանազան տեսակ անեկդօտներ, կամ պատահած անցքեր, որ ցոյց են տալիս ամեն մի երկրացու յատկութիւնը:

— Գիտէ՞ք, մի անգամ «ծառգարդարի» տօնին զնացել էինք եկեղեցի, պատմում էր մի զօկ խորամանկ դէմքով և շիւ աչքերով. — երբ ժամը վերջացաւ, դուրս եկանք եկեղեցու բակը, այնտեղ խմբով կանգնած, մտիկ էինք տալիս կնիկներին, մին էլ տեսնենք, բոլոր զօկերը մօտեցան ղարաբաղցի պարոն Ն...ին, և նրա ձեռքը բռնելով, ասեցին. «շնորհաւոր տօնա-



խմբութիւն:» Արաբաղցին զարմացած հարցրուց.— «Ի՞նչ տօնախմբութիւն, այսօր իմ տօնը չէ:» — Ի՞նչպէս չէ, ասաց մի զօկ, դու չե՞ս իմանում, որ այսօր Յիսուս Քրիստոս էշի վրա նստած, Երուսաղէմ մտաւ:»

Բոլորը ծիծաղում, հռհռում են զօկի լիմար սրախօսութեան վրա, որովհետեւ զարաբաղցուն էշ մականունն էին տալիս, և Քրիստոս էշով էր Երուսաղէմ մտել, ուրեմն այն օրը պէտք է զարաբաղցու տօնախմբութիւնը լինէր:

— Սխալվում էք, ասում է մի վիրաւորված զարաբաղցի, այդ անունը ի զուր են կպրել մեզ. հայերի մէջ ամենախելօքը էլի զարաբաղցին է, թէև նա զօկի սատանայութիւնը չունի. բայց սատանան երբեմն երկու ոտքով է թակարգի մէջ ընկնում: Լսեցէք, ձեզ պատմեմ, թէ ինչ պատահեց միանգամ մի զօկի հետ այստեղ:

— Պատմեցէք, պատմեցէք, լսելի է լինում ամեն կողմից:

— Մի անգամ մի զօկ ծախել էր մի ռսի 100 հակ բամբակ, ասաց զարաբաղցին, ցոյց տալու համար նա բաց արեց մի քանի հակեր, որոնք, ի հարկէ, մաքուր տեսակիցն էին. մի ուրիշ զօկ, զօկերի սովորութեանը համեմատ, մատնեց ընկերին, մուշտարուն յայտնելով, թէ

բոլոր հակերը ցոյց տուած օրինակի համեմատ չեն: Մուշտարին ստիպեցաւ բաց անել տալ ուրիշ շատ հակեր. տէր Աստուած, ի՞նչ ասես, չէր դուրս գալիս հակերի միջից. — մաշված ակելներ, փայտէ կոտրած գդալներ, հին քօշեր, փալասի կտորներ, և յանկարծ դուրս է գալիս մի հակի միջից էշի մի ահագին փալան: Այս անգամ ռուսը ալ ևս համբերել չը կարողացաւ, և դառնալով դէպի զօկը, ասաց «Այդ, երեւի, ձեր հօր վերարկուն է»... Զօկը առանց կարմրելու պատասխանեց «Мая атѣпѣ большой кухни синѣ (ուռեց ասել, թէ իմ հայրը մեծ օջախի որդի է) если онѣ ѣшакѣ блѣ, мнѣ такой таварѣ нѣ блѣ (այսինքն եթէ նա էշ լինէր, ես այսքան ապրանք չէի ունենալ):»

Զօկերը բաւական կոտրվեցան զարաբաղցու պատմութիւնով, բայց դարձեալ աշխատում էին հաստատել, թէ իրանց հայրենակցի արածը մի խելօքութիւն էր, թէ էշի հին փալանը ոչինչ արժէք չունի, բայց եթէ նրան յաջողվէր բամբակի տեղ անցկացնել, բաւական կը շահվէր և այլն, և մի և նոյն ժամանակ պնդում էին, թէ էշ մականունը միմիայն զարաբաղցուն է յատկանիշ, և իբրև փաստ պատմում էին զանազան անեկդօտներ:

Մի անգամ սաստիկ կարկուտի ժամանակ,



ասում էր մի զօկ, Ղարաբաղում գիւղացիները հաւաքվում են, ասելով, թէ մեր արտերին ինչ լինում է, թող լինի, գնանք, գոնէ տանուտէրի արտը ազատենք: Եւ ամեն մէկը վեր է առնում իր տնից, որը մի փալաս, որը մի կապերտ, որը մի եօրդան, որը իր եափուկներն, վազում են դէպի տանուտէրի արտը, և փռում են նրա վրա. ցորենի հասկերը գիւղացիներին ոտքի տակ ջարդվում են, տրորվում են և գետնին հաւասար են դառնում: Այդ էշուլթիւն չէ, հարցնում է զօկը, դառնալով դէպի Ղարաբաղին:

— Բայց այն մոռացել էք, պատասխանում է Ղարաբաղցին, որ զօկը պանիրը դնում է բանկայի մէջ, դրսից հացը քսում է բանկային և ուտում, երեւակայելով, թէ պանիր է ուտում: Մի անգամ որդին գալիս է, տեսնում է դուքնի դուռը փակ է, հացը քսում է դրանը և այնպէս ուտում. հայրը վրա է հասնում, «ի՞նչ ես անում», հարցնում է նա: — «Պանիր եմ ուտում, հայր», պատասխանում է որդին: — «Փչացած, չէիր կարող համբերել, մինչև ես դալի, հիմալ բոլոր պանիրը կերած կը լինես», ասում է հայրը և սկսում է որդուն ծեծել:

Յետոյ պատմում են այն առակը, թէ ինչպէս Ղարաբաղցի գիւղացիները «դառուրման» ցանեւ էին արտումը, որ ոչխար բուսնէր, և

քանի օրից յետոյ գնացել, տեսել էին, որ մըրջիմները հաւաքվել են ցանված դառուրմայի վրա, և ուրախանալով ասել էին, — «Հիմալ որ պստիկ են, այսքան են, երբ մեծանան, ոչխարի սուրուններ կունենանք»:

Նոյն միջոցին մի հաշտարխանցի մէջ է մըտնում, կամենում է խօսել:

— Դու սուս կ'աց, ասում են նրան, — հաշտարխանցին հէնց որ խօսեց, ղալմաղալ կը սարքէ. հաշտարխանցին միշտ «պրաշնեխան» ծոցումը պատրաստ ունէ: Մի անգամ մի հաշտարխանցի գտնում է մի ծրար լիքը թղթադրամով. «փո՛ւ, ասում է, ես կարծում էի կռիւի թղթեր են»:

Նոր նախիջևանցին կամենում է պաշտպանել հաշտարխանցուն:

— Դուք երկուքդ մի հարազատ հօր որդիք էք, պատասխանում են նրան, այն զանազանութեամբ միայն, որ հաշտարխանցին իստակ ռսացել է, բայց նոր նախիջևանցին դեռ ոչ ուս է, և ոչ թաթառ:

Մէջ է մտնում թիֆլիսեցին:

Նրան ասում են, — վրացին խօ խելք չունի, բայց թիֆլիսեցին մի հաւի խելք ունի: Մի թիֆլիսեցի Կ. Պօլսում շատ էր ցանկանում կարմիր լօբի ուտել և չէր գտնում. ընկերները նրան ծաղրելու համար առնում են մի



քիչ սպիտակ լօբի, ներկում են և տալիս են նրան. լօբին տաք ջրի մէջ իր ներկը կորցնում է և կրկին առաջին գոյնն է ստանում: Միւս օրը թիֆլիսեցին գրում է իր կնոջը. «այստեղ կարմիր լօբին շատ վատն է, հէնց որ ջրի մէջ գցում ես, սպիտականում է:»

Այս տեսակ լիմար կատակներ էին մեր վաճառականների ամենօրեայ խօսակցութեան առարկան, երբ հաւաքվում էին բիրժայի առջև կէս օրից յետոյ, այս տեսակ դատարկախօսութիւններով նրանք մաշում էին իրանց ժամանակը: Մի մարդ, որ չէր երևում նրանց մէջ, դա էր Միքայէլը:

Դ.

Մօսկվայի հայ վաճառականը առհասարակ իրան հեռու է պահում հայ ուսանողներից, որոնք մեծ բազմութեամբ գտնվում են այդ քաղաքում, թէև ուսանողը նրա բարեկամը կամ մօտ ազգականը լինէր: Վաճառականը ատում է ուսանողի ուրախ և վատնող հասարակութիւնը, որը շատ անգամ նրանից փող է առնում, երբէք վերադարձնելու մասին չը մտածելով: Միայն Միքայէլն էր, որ յարաբերութիւն ունէր ուսանողների հետ և Ստեփանի միջոցով շատերի հետ ծանօթ էր: Ինչպէս

նրա հօրեղբայր Աւետը գիւղացիների մօտ այնքան յարգանք էր վայելում, որ բոլորը նրան «ապեր» էին կոչում, այնպէս էլ Միքայէլը մի և նոյն կոչումն էր ստացել ուսանողներից: Հարկաւոր էր բարեգործական նպատակով մի ներկայացում տալ, հարկաւոր էր մի աղքատ կամ հիւանդ ուսանողի համար հանգանակութիւն հաւաքել. — դիմենք «ապօրը», ասում էին ուսանողները, — նա վաճառականներից մի բան կը գլլէ:

Մի գիշեր Միքայէլի փոքրիկ սենեակը սովորականից աւելի կենդանացած էր, հաւաքված էին մի քանի երիտասարդ վաճառականներ, ծխում էին և խօսում էին: Զրագի աղօտ շառաւիղներն հազիւ լուսաւորում էին փոքրիկ սենեակի մառախուղը, որ թանձրացած էր ծխից և թէյի մեքենայից բարձրացող շողիներից, որը եփ էր դալիս սեղանի վրա: Ինքը Միքայէլը ածում էր զաւաթները և մատուցանում էր իր հիւրերին:

— Ինչ որ ուզում ես, ասա, քեզ մօտ միշտ տխուր է լինում, ասաց Միքայէլին հիւրերից մէկը:

— Ի՞նչու, հարցրուց նա ժպտելով:

— Նրա համար որ, ոչ կարտ կայ, ոչ նարդի կայ, մի խօսքով խաղալու ոչինչ չը կայ:

— Խաղացէք, ձեզ ո՞վ է արգելում:



— Ի՞նչպէս խաղանք, երբ դու չես խաղում:

— Ես էլ կը մասնակցեմ:

— Փողով:— Մենք առանց փողի չենք խաղում:

— Եւ մեծ փողով, մէջ մտաւ հիւրերից մի ուրիշը:

— Ինչու անպատճառ մեծ փողով, երբ ժամանակ անցկացնելու համար էր, պատասխանեց Միքայէլը:

— Ժամանակ անցկացնելը ո՞րն է, խօսեց առաջինը արհամարհանքով. — մեզ մօտ ամեն գիշեր հազարներ են խաղում:

Դուռը բաց եղաւ, խօսակցութիւնը ընդհատվեցաւ: Մի պատանի, կանգնած շէմքի վրա, ձայն տուեց իր ընկերներին. — Մտէք, նրանք շատ են այստեղ... Վերջապէս գտանք...

Ներս մտան երեք ուսանողներ: Նրանցից մէկը դրեց սեղանի վրա մի թերթ թուղթ, և դառնալով դէպի Միքայէլի հիւրերը, խօսեց ճառական եղանակով.

— Պարոններ, այդ նուիրատուութիւնը մի այնպիսի բարի նպատակի համար է, որ ամեն մի հայ, որի սրտումը մնայել էր զգացմունքի մի կաթիլ անգամ դէպի տաճկաստանցի մեր եղբայրները, դէպի նրանց կրած հարստահարութիւնները ու տառապանքը, չի պիտի զլանայ իր օժանդակութիւնը, ուստի խնդրում

եմ, ձեզանից ամեն մէկը, որքան կարող է, թող ստորագրէ:

Կարծես, վաճառականների գլխին սառն ջուր ածեցին:

— Ե՛հ, զահլայ տարան իրանց ստորագրութիւններով... ասաց նրանցից մէկը գլուխը մի կողմ շրջելով:

— Մենք ո՛ւր... տաճկաստանցին ո՛ւր... խօսեց միւսը արհամարհանքով. — մեր երեխերքի դարդը չենք կարողանում քաշել:

— Ի՞նչ բանի համար է ստորագրութիւնը, հարցրեց մի ուրիշը կասկածաւոր կերպով:

Ուսանողները մնացին շուարած:

— Մի և նոյն է ձեզ, թէ ինչ բանի համար է, պատասխանեց նրանցից մէկը վշտացած ձայնով. — բայց քանի որ դուք այսպէս սառն կերպով ընդունեցիք մեր առաջարկութիւնը, կարծեմ հարկաւոր էլ չէ, որ իմանաք, թէ ինչ բանի համար է:

Միքայէլը ոչինչ չը խօսեց. նրան յայտնի էր իր հիւրերի անտարբերութիւնը:

Ուսանողները հեռացան: Միքայէլը գնաց նրանց ճանապարհ զցելու:

— Ահա մեր դրամատէրները — մեր նիւթական զօրութիւնը — ի՞նչ կարելի է յուսալ այդ անսիրտ դիակներից... ասաց ուսանողներից մէկը:



— Փնւ, Կրողը տանէ ձեզ...

Նրանք Հասան սանդուղտներին, որ ցած էր տանում գէպի տան գլխաւոր մուտքը։ Այնտեղ Միքայէլը հարցրեց։

— Ի՞նչ նպատակի համար է ստորագրութիւնը։

Ուսանողները մտածութեան մէջ ընկան, և ընդհանրական լռութիւնից լեռնոյ նրանցից մէկը պատասխանեց։

— Դա մի գաղտնիք է... բայց ձեզնից ծածկել պէտք չէ... դուք մերն էք... Գիտէք, որ Կ. Պօլսի պատրիարքի նուիրակներից մէկը արդէն գտնվում է Պետերբուրգում, իսկ միւսը Լօնդօնում, Տաճկաստանի հայոց խնդիրը միմազից է կախված. գործելու ժամանակ է. մենք պատրաստում ենք մի երիտասարդ արտասահման ուղարկելու համար, որ այնտեղ պրօպագանդա անէ մամուլի միջոցով։

Միքայէլի գէմքը ընդունեց խիստ ուրախ արտայայտութիւն։

— Դա շատ գեղեցիկ միտք է, ասաց նա։ — Ո՞վ է գնացողը։

— Զեր բարեկամը, պ. Ս. Մասիսեանը։

— Զարմանում եմ, որ նա այդ մասին ինչ ոչինչ չէ յայտնել։

— Նա չափազանց ծածկամիտ մարդ է։ Նա

ցանկանում էր, որ դուք գիտենայիք լեռնոյ, երբ ինքը գնացած կը լինէր։

— Այդ մի և նոյն է, խօսեց Միքայէլը, — ասեցէք Ստեփանին թող ինչ մօտ մտնէ, ես կը կարգադրեմ, ինչ որ պէտք է նրա ճանապարհորդութեան համար։ Ուսանողները սեղմեցին Միքայէլի ձեռքը և հեռացան։ Վերադառնալով իր հիւրերի մօտ, Միքայէլը նրանց ոչինչ չը յայտնեց, բայց շատ վրդովվեցաւ, երբ նկատեց, որ նրանք տակաւին ծաղրում էին ուսանողներին, և տակաւին պախարակում էին նրանց վարմունքը։

— Երևի, ջիւղերի խարջլուխը պոծել է, ասում էր մէկը։

— Իրանք քաղցած մեռնում են, բայց տաճկաստանցիների դարդն են քաշում, ասում էր միւսը։

— Ախար հանգստութիւն չհունենք այդ մուրացկանների ձեռքից, խօսեց մի ուրիշը. — քանի որ առաջ մօտեցնում են մի թերթ, «ստորագրեցէք մի բան, ասում են, յօգուտ Ալաշկերտի գաղթականների»։ — Հէնց որ լսեցի, իծաներս հաւաքվեցան, բերանս բաց արեցի. «տօ, հեռացէք, ասեցի, ձեր էլ... ալաշկերտցու էլ...»

Միքայէլը այլ ևս համբերել չը կարողացաւ։



— 25 կարելի այսպէս անգլխութեամբ վերաբերվել դէպի ազգային գործերը, ասաց նա վրդովված ձայնով. ազգի իւրաքանչիւր անդամը պարտաւոր է իր կարողութեան չափով նպաստել ընդհանրութեանը. մենք փող ունենք, պէտք է փողով օգնենք. նրանք (ուսանողները) խելք ու գիտութիւն ունեն, պէտք է խօսքով օգնեն. մի ուրիշը սիրտ ունի, պէտք է զօրաւոր բազուկներով օգնէ, — ամեն մի հայ իր ունեցածից չը պիտի խնայէ, և երբ բոլորը այսպէս կը վարվեն, այն ժամանակ տաճկաստանցի հայը կարող կը լինի ազատ շունչ քաշել:

— Լաւ, լաւ, նրա խօսքը կտրեց հիւրերից մէկը. — ազգային գործերը մի կողմ դրէք, մենք մեր բանի վրա մտածենք: Բերէք կարտերը:

— Ես, իրաւն ասեմ, այժմ խաղալու ամենեւին ախորժակ չունեմ, պատասխանեց Միքայէլը:

— Այդ խօսքով կամենում էք ասել, թէ վերկացէք և գնացէք: Մենք այստեղ քարոզներ լսելու համար չենք եկել, խօսեց հիւրերից մէկը, կանգնելով:

— Եթէ իմ տունը ձեզ ձանձրացնում է, համեցէք, ձեզ զօռով այստեղ ոչ ոք չի պահում:

Հիւրերը դժգոհութեամբ հեռացան. մնացին

նրանցից երկուսը միայն: Դրանք երիտասարդ, վաճառականներ էին, այն տեսակներից, որոնք թէև մի բան հասկանում են, բայց դեռ նահապետական պատկառանքով համարձակութիւն չունեն հակառակել իրանցից հասակաւորներին, թէև վերջինների յայտնած միտքը բոլորովին սխալ կամ վնասակար լինէր, և այս պատճառով բոլոր խօսակցութեան ժամանակ նրանք լուռ էին: Բայց երբ մենակ մնացին Միքայէլի հետ, լեզուները բացվեցան:

— Ախ, որքան մեռած, որքան անկարեկից սրտեր ունեն այդ մարդիքը, ասաց նրանցից մէկը. — ոչինչ չէ գրաւում դրանց, ոչինչով չեն հետաքրքրվում, ինչ որ իրանց շահերի կամ իրանց գործերի սահմանից դուրս էր: Ազգ, ազգակից և ընդհանուր մարդկութիւնը դրանց համար նշանակութիւն չունեն, երբ նրանցից որ և իցէ օգուտ չեն սպասում, և ամեն բանի վրա նայում են առևտրական կէտից:

Միքայէլը, որ նոյն րոպէում խիստ գրգռված դրութեան մէջ էր գտնվում, վեր բարձրացաւ գիւանից, որի վրա պառկած էր, և բաւական տաք կերպով պատասխանեց:

— Դոնէ այսքանը գիտենային, գոնէ օրինաւոր առևտրականներ լինէին, բայց հաւատացնում եմ ձեզ, որ այդ էլ չը գիտեն: Հին սերունդը աւելի լաւ էր տանում իր առևտրա-



կան գործերը, քան թէ նորը, որը զանազան-  
վում է այսքանով միայն, որ իր հայրերի ա-  
սիական փափախի տեղ կրում է եւրոպական  
շլեւապա, առանց եւրոպացու գլուխը ունենա-  
լու: Հին սերունդը թէև տգէտ էր, թէև  
խիստ սահմանափակ տեղեկութիւններ ունէր  
վաճառականութեան մասին, բայց գոնէ այն-  
քան յանդուգն չէր, որ առևտուր սկսէր իրա-  
նից աւելի հմուտ ազգերի հետ. նա ընտրում  
էր այնպիսի ժողովուրդներ, որ իրանից աւե-  
լի տգէտ էին, և կարողանում էր խաբել նը-  
րանց: Բայց նոր սերունդը այդ զգուշութիւնն  
էլ չունի, և չը նայելով իր տգիտութեանը,  
սկսել է առևտուր անել աւելի վարժված և  
աւելի հմտութիւններ ունեցող ազգերի հետ  
(և ի՞նչով կարող է մրցութիւն անել) և դրա  
համար էլ միշտ խաբվում է, միշտ կորցնում  
է: Նա գործ ունի եւրոպացու հետ, առանց  
նախապէս եւրոպացու խորամանկութիւններին  
տեղեակ լինելու:

Միքայէլի դատողութիւնները խիստ երևե-  
ցան և նրա երիտասարդ հիւրերից մէկը պա-  
տասխանեց:

— Այսուամենայնիւ բացառութիւններ կան:

— Բացառութիւնները շատ աննշան են: Ե-  
թէ մնացել է մեր հայերի մէջ հարստութիւն,  
դա ըստ մեծի մասին հայրերի վաստակածն է.

որդիքը չը կարողացան պահպանել հայրերից  
ստացած ժառանգութիւնը: Ես կարող եմ մատ-  
ներով համբարել, թէ քանի քանի տներ  
սնանկացան այս մի քանի տարվայ ընթաց-  
քում, և սնանկութիւնը այնքան աւելի շուտ  
էր վրա հասնում, երբ որդիքը առևտուր էին  
սկսում աւելի քաղաքակրթված ժողովուրդնե-  
րի հետ. օրինակ, համարեա մեր բոլոր վաճա-  
ռականները ոչնչացան, որոնք գործ սկսեցին  
Մարսէլիայի և Մանչեսթերի հետ, իսկ Ռու-  
սաստանում նրանք դիմանում են, և կարելի է  
ասել շահվում են, որովհետև ռուս վաճառա-  
կանի հասկացողութեան աստիճանը չէ բարձ-  
րանում հայերից, և մինչև անգամ ստոր է:

Միքայէլի խօսակիցները մտածութեան մէջ  
ընկան, նրանք լսում էին բոլորովին իրանց  
համար նոր մտքեր:

— Մեր մէջ առհասարակ պակասում է այն  
բանը, ինչ որ կոչվում է վաճառականական  
գիտութիւն, շարունակեց նա: — Մեր մէջ ամեն  
մի ձեռնարկութիւն կատարվում է՝ ոչ թէ առա-  
ջուց խորհված և կարգադրված պատրաստակա-  
նութեամբ, այլ անգիտակցաբար, մինը միւսի օ-  
րինակին հետևելով: Տեսնում ես, մէկը սկսում  
է բամբակ գնել, իսկոյն միւսները սկսում են  
գնել մի և նոյն մթերքը, առանց որ և իցէ որոշ  
հաշիւ աչքի առջև ունենալու: Մէկը սկսում



է մետաքս գնել, շուտով մի մեծ բազմութիւն հետեւում է նրա օրինակին: Եթէ հարցնելու լինես այդ պարոններից, ինչո՞ւ էք առնում, որտեղ պիտի ուղարկէք. նրանք կը պատասխանեն. «Կիրակոսը և Մարկոսը առնում են, մենք էլ պէտք է առնենք. մենք խօ նրանցից պակաս չենք»:

—Այդ կատարելապէս ուղիղ է:

—Մի բան որ ժառանգեց նոր սերունդը, և որ պահպանում է ամենայն ճշգրտութեամբ, դա է հայրերի խաբեբայութիւնը: Վաճառականութիւնը աւելի ընկնում է այն ժամանակ, երբ խաբեբայութիւնը ընդունվում է որպէս գլխաւոր պայման: Այժմ թէ եւրօպական և թէ Ռուսաստանի առևտրական հրապարակների վրա մեր երկրի արդիւնաբերութեան անունը կոտրված է, որովհետև բամբակի մէջ, բուրդի մէջ և մինչև անգամ մետաքսի մէջ, ինչ ասես, խառնում են: Ոչ ոք չէ հաւատում մեզ: Մեր մթերքը առանց բաց անելու, առանց բոլորը աչքից անցկացնելու, չեն գնում. մինչդեռ եւրօպացին մի փոքրիկ օրինակ ցոյց տալով, հարկւրաւոր կապված հակեր է վաճառում, և բոլորը դուրս են գալիս ցոյց տուած օրինակի համեմատ, և մի և նոյն տեսակից:

Միքայէլը երկար խօսում էր վաճառականական խարդախութիւնների վրա և երևան

էր հանում հայ վաճառականի բոլոր կեղտերը, որով ապականված է նա, աւելացնելով, թէ այդ կեղտը տարածվում է ամբողջ հայ ազգի վրա, որովհետև օտարազգին մեզ ճանաչում է վաճառականների երեսով, որոնք թափառում են երկրագնդի ամեն կողմերում, և մի քանի անպիտանների պատճառով վատ կարծիք է կազմում ամբողջ ազգի մասին, մինչդեռ նրա մեծամասնութիւնը, որ բաղկացած է արհեստաւորներից և երկրագործներից, խիստ բարի և բարոյական մարդիք են:

—Հիմա տեսէք, ինչ բարիք կարելի է սպասել այդ փչացած և անբարոյականացած հասարակութիւնից, որի համար ոչինչ բան սուրբ չը կայ, աւելացրեց նա, — և մենք զարմանում ենք, վրդովվում ենք, երբ տեսնում ենք հայ վաճառականի անկարեկցութիւնը դէպի տաճկաբնակ իրանց եղբայրների տառապանքները մահմեդական լծի ներքոյ:

Արդէն կէս գիշերից անցել էր, երբ Միքայէլի մնացած երկու հիւրերն էլ հեռացան և նա մնաց մենակ: Նա փորձ փորձեց խկոյն պառկել և քնել, բայց չը կարողացաւ, մի հոգեկան խռովութիւն անհանգստացնում էր նրան: Նա սկսեց լուռ անց ու դարձ անել իր փոքրիկ սենեակի մէջ: Նրա միտքը զբաղված էր նոյն բոպէսում Ստեփանով, այդ ոգելից և միշտ-



Ծածկամիտ պատանին այժմ լանձն էր առել մի նպատակալարմար ձեռնարկութիւն, որին չէր կարելի չը համակրել: Բայց ինչու ծածուկ էր պահել իրանից, մտածում էր Միքայէլը, միթէ չէր հաւատում իրան, միթէ ինքը արժան չէր նրա մտերմութեանը: «Ոչ, ոչ, նա աւելի հպարտ է, քան թէ կարելի էր, նա խորհում է օգնող ձեռքից, որպէս օձից... Բայց իմ վերաբերութեամբ, — դա վիրաւորական է»...

Ե.

Յնակարանը, որի մէջ կենում էր Միքայէլը, բաղկանում էր երկու սենեակներից և մի խոհարանից, որ մի և նոյն ժամանակ ծառայում էր որպէս մառան: Սենեակներից մէկի մէջ ապրում էր մի գերմանացի աղքատ ընտանիք, իսկ միւսի մէջ Միքայէլը: Դա այն թշուառ ընտանիքներից մէկն էր, որ զրկվելով աշխատող ձեռքից՝ տան տղամարդից, ապրուստի հոգսը մնում է հանգուցեալի կնոջ վրա: Անբաղդ ալրիին փոքր չէր օգնում նրա չափահաս աղջիկը, աշխատասէր Իդան, որոնք բացի իրանցից պետք է կերակրէին երկու փոքրիկ երեխաներ: Ընտանիքի հայրը դերձակ էր, որի մեռնելուց յետոյ նրա ամբողջ խանութը վաճառվեցաւ պարտքի փոխարէն: Իդան կարեր

էր վեր առնում մի ֆրանսիական մօդնի մագաղինից և մօր հետ միասին կարում էին: Միքայէլի, որպէս «տնուորի», կենակցութիւնը մեծ մասնով թեթեւացնում էր խեղճ ընտանիքի տնտեսական ծանրութիւնը, և այս պատճառով նրա վրա լաւ խնամք էին տանում, տալով մի առանձին կահաւորած սենեակ, կերակուր և սպասաւորութիւն:

Մի առաւօտ Միքայէլը, գրասեղանի մօտ նստած, շտապով նամակներ էր գրում փոստային հասցեւելու համար, Իդան սուրճ ներս բերեց, և դնելով նրա մօտ փոքրիկ կլորիկ սեղանի վրա, հարցրեց.

— Ի՞նչ շուտով կը դուրս գնաք:

— Ի՞նչու էք հարցնում:

— Ես կամենում էի կարգի դնել ձեր սենեակը: Յետոյ ժամանակ չեմ ունենայ:

— Ինձ մնում է դեռ հինգ-վեց նամակներ գրել, ասաց Միքայէլը շարունակելով իր գործը. — դուք կարող էք, ինչ որ ուզում էք, անել:

— Ես գուցէ կը խանդարէի ձեր պարապմունքը:

— Ընդհակառակն... Ոչ:

Իդան բարձրահասակ և վայելչակազմ մի օրիորդ էր թաւախիտ, շիկագուն գիսակներով և պայծառ համակրական դէմքով. նրա ծաւի



աչերը կրում էին իրանց մէջ կապուտակ երկնքի և՛ փայլը և՛ գեղեցկութիւնը: Նա այն առաւօտ սովորականից աւելի ուրախ էր երեւում, և չը նայելով, որ Միքայէլը զբաղված էր, անգագար ընդհատում էր նրա պարապմունքը զանազան հարցերով:

— Ա՛խ, որքան անփութ էք դուք, ձեզ մօտ ոչ մի բան իր տեղը չէ մնում, ամեն ինչ թաւալվում է յատակի վրա, խօսում էր մանկահասակ օրիորդը, մաքրելով և կարգի դնելով սենեակի իրեղէնները:

— Այգ, երեւի, ձեզ շատ հոգս է պատճառում, Իգա, ես կաշխատեմ ալսուհետեւ աւելի մաքրասէր լինել, պատասխանեց Միքայէլը ժպտելով:

— Ոչ, ինձ հոգս չէ պատճառում, միայն ես սիրում եմ ձեր սենեակը միշտ սարքված տեսնել, ասաց օրիորդը փոքր ինչ շառագունելով:

— Դուք շատ բարի էք, Իգա:

Օրիորդը, վերջացնելով իր գործը, մօտեցաւ Միքայէլին, և ձեռքը դնելով նրա ուսի վրա, սկսեց նրա ետեւից գլուխը կռացրած նայել տողերի ընթացքին, թէ որպէս գրում էր նա, և որպէս նրա գրիչը արագ վազում էր փօստայի սպիտակ թերթի վրա:

— Ի՛նչպէս ծուռ ու մուռ տառեր են, ա-

սաց նա իր տեղից շարժվելով, և սիրուն դուլխը թեքելով մի արդէն վերջացրած և սեղանի վրա դրած նամակի վրա: — Ամեն օր քանի՞ նամակ էք գրում:

— Երբեմն տասն և երբեմն աւելի:

— Եւ դրա համար էլ ամբողջ գիշերը չէք քնում:

— Դուք ինչ գիտէք:

— Ես գիտեմ... ես շատ անգամ նկատում եմ, որ մինչև լույս ձեր սենեակում ճրագը վառվում է և լսելի է լինում ձեր քայլերի ձայնը: Ես էլ խիստ սակաւ եմ քնում...

Միքայէլը ոչինչ չը պատասխանեց: Օրիորդը, երեւի, փոշմանեց իր միամիտ նկատողութիւնից, և վեր առնելով նամակներից մէկը, ասաց.

— Ես ոչինչ չեմ ջոկում, ոչ մի ազգի տառերի նման չեն, բայց գեղեցիկ են: Ես շատ կը ցանկանայի սովորել այդ տառերը, և այն լեզուն, որով գրում էք:

— Ձեր ինչի՞ն է պէտք:

— Դուցէ մի օր հարկաւոր կը լինի... պատասխանեց օրիորդը ուրախ ժպիտով և դուրս վազեց սենեակից: Նա այլ ևս չեա չը նայեց, կարծես, ամաչեց իր ասած խօսքից, և որպէս յանցաւոր, աշխատեց շուտ հեռանալ:

Միքայէլի գրիչը մի քանի րոպէ դադարեց



գրեցուց. նրան տիրեց մի տեսակ հսգեկան խռովութիւն. «Խեղճ աղջիկ»... մտածեց նա մի առանձին ցաւակցութեամբ, «ես ի՞նչով կարող եմ փարատել քո սրտի դարձը»... Միքայէլը վաղուց նկատել էր, որ Իգան հետաքրքրվում է իրանով, որ նա շատ անգամ գիշերներն անքուն է մնում, երբ ինքը իր սենեակում զբաղված էր, և շատ անգամ մօտենում է նրա լուսամուտներին, որ տեսնէ, արդեօք քնած էր իրանց տնուորը, թէ ո՛չ: Այս բոլորը Միքայէլը համարում էր մանուկ աղջկայ այն հետաքրքրութիւնը, որ աշխատում է ամեն բան գիտենալ, որպէս չի կարող համբերել, մինչև չը գիտենայ, թէ իր մօր կողպած պահարանի մէջ ինչ էր թաղցրած: Բայց այսօր նա պարզ յայտնեց իր սրտի զաղտնիքը, որին չէր սպասում Միքայէլը: Նա ցանկանում էր սովորել Միքայէլի ազգի լեզուն և գրերը, այն մտքով, «գուցէ մի օր հարկաւոր կը լինէին»... Իգան հանաք չէր անում, նա բաւական ծանրամիտ աղջիկ էր: Նա մտածում էր սովորել հայի լեզուն և հայի գալուստիւնը, մի հայ սիրելու համար: Իսկ ո՞վ էր այդ հայը: Իգան սիրում էր Միքայէլին, բայց սրպէս պէտք էր պատասխանել նրա սէրին. — ահա այդ միտքն էր, որ սկսեց տանջել Միքայէլին: Միքայէլը իր սրտում չէր գտնում ոչ մի հա-

մապատասխանող զգացմունք դէպի գեղեցիկ օրիորդի սէրը: Նա միայն յարգում էր նրան որպէս մի պատուասէր օրիորդ, որպէս աշխատասէր աղջիկ, որ իր վրա էր առել անբախտ բնտանիքի ապրուստի բոլոր հոգսերը: Միքայէլը կարող էր համակրել նրան, բայց սիրել — հազիւ թէ:

Միքայէլը ինքն էլ չը հասկացաւ, թէ որպէս վերջացրեց իր նամակները. նա շտապով ծրարեց, կնքեց, և վեր առնելով, կամենում էր դուրս գալ իր սենեակից, յանկարծ ներս մտաւ Ստեփանը: Նա սառն և անխռով կերպով, որպէս միշտ, ձեռք տուեց Միքայէլին և գնաց նստեց բազկաթոռի վրա, ուր սովորաբար նստում էր, երբ Միքայէլի մօտ էր գալիս:

— Նս եկայ քեզ մօտ մի կարեւոր գործի համար, ասաց նա թույլ ձայնով:

— Գիտեմ, պատասխանեց Միքայէլը, ինձ արդէն յայտնի է քո նպատակը, դու կը ստանաս ինձանից, որքան պէտք է քո արտասահմանի ճանապարհորդութեան համար:

— Այդ չէ, ասաց Միքայէլը հանգիստ կերպով. — կարգաւ այդ հեռագիրը:

Միքայէլը սկսեց կարգաւ մի երկար հեռագրաւոր, որ բաղկացած էր աւելի քան քսան տողից: Նա իսկոյն գունաթափվեցաւ: Հեռագիր-



ըր Հաղորդված էր Ստեփանի անուշով և բովանդակում էր հետևեալ տողերը. «Զեր Հայրը վախճանվեցաւ յանկարծակի կաթուածահարութեամբ, շտապեցէք, առանց ժամանակ կորցնելու, հասնել այստեղ: Նրա գործերը բոլորովին խառն դրութեան մէջ են. մեծ կորուստ է սպառնում մեր կայքին, եթէ շուտափոյթ հոգատարութիւն չը լինի: Ստացէք նախապէս Միքայէլի հաշիւները և Մօսկվայի առևտրական տունը փակեցէք»... և այլն: Ստորագրած էր «Մարիամ»:

Միքայէլը բոլորովին սառած մնաց: Նրան, աւելի քան Ստեփանին, յայտնի էր այդ անբախտութեան սարսափելի հետևանքները:

— Ես պատրաստ եմ այս բոլորիս յանձնել քեզ իմ ձեռքում գտնված գործերի բոլոր հաշիւները, միայն դու աշխատիր չուշանալ այստեղ, ասաց նա, դուրս բերելով գրասեղանի պահարանից ահագին հաշուետօմարները:

— Ես պատրաստվում եմ գնալ արտասահման, պատասխանեց Ստեփանը իր սովորական սառնասրտութեամբ. — Ինչ կանչում է այնտեղ մի աւելի մեծ պարտաւորութիւն, քան թէ իմ հօր գործերը:

— Ես քեզ հետ համաձայն եմ, խօսեց Միքայէլը. — բայց մտածիր, որ դու բոլորովին կանքատացնես քո մօրը, քո քոյրերին և քեզ: Հեռա-

գրի միտքը բոլորովին ուղիղ է, որ ձեր ժառանգութեանը սպառնում է մեծ կորուստ: Ինչ բաւական յայտնի է, թէ հանգուցեալը որպէս էր վարում իր գործերը. նա իր բոլոր հաշիւները իր գլխումն ունէր, հիմա որ վախճանվեցաւ, բոլորն իր հետ տարաւ: Այժմ ամեն ինչ մնացած կը լինի աւագակ գործակատարների ձեռքում, — շատ հստկանալի է հետեւանքը...

— Այդ աւագակները նա ինքն է պատրաստել իր համար, խօսեց Ստեփանը զգուշանքով. — «Հեղեղի բերածը էլի հեղեղը կը տանէ»... Ուրիշ կերպ լինել կարող չէր...

Միքայէլը չը գիտէր ինչ անել: Նրան յայտնի էր Ստեփանի հաստատամտութիւնը, բայց միւս կողմից, տեսնում էր վնասը, որ կարող էր առաջ գալ նրա յամառութիւնից: Նա փորձ փորձեց մի կերպով համոզել իր բարեկամին, որ կատարէ մօր խնդիրքը, որը այնքան ցաւալի սրտով դիմում էր որդու օգնութեանը:

— Աւելի լաւ չէր լինի, ասաց նա, որ դու չետաձգէիր արտասահմանի ճանապարհորդութիւնը, մինչև կարգի կը գնէիր քո հօր գործերը:

— Անկարելի է:

— Ուրեմն ի՞նչ պէտք է արած:



— Ես դրա համար էլ քեզ մօտ եկայ. լսիր, Միքայէլ, ինձ համար ոչինչ նշանակութիւն չունի իմ մօր կանչելը, երբ լսում եմ հազարաւոր մայրերի ձայնը, որոնք Թիւրքիայից մեզ ձեռք են մեկնում և օգնութիւն են խընդրում: Ես պիտի գնամ, պիտի ճանապարհորդեմ ամբողջ Եւրօպա և ինչ կարող եմ, կը կատարեմ: Իսկ ինչ որ վերաբերում է իմ հօր գործերին, ես մի այսպիսի կրիտիկական ընդհանուր չունեմ մի ուրիշ բարեկամ բացի քեզանից: Ես յոյս եմ դնում քո բարեսրտութեան վրա. դու կարող ես աւելի լաւ կատարել այն բոլորը, ինչ որ ես կը գծաւարանայի անել: Ինչ կը ստանաս ինձանից կատարեալ հաւատարմութիւնով և շուտով ճանապարհ կընկնես: Համաձայն ես:

Միքայէլը տեսնելով, որ ուրիշ ելք չը կար, որ իր բարեկամի ժառանգութիւնը կարող էր բոլորովին ոչնչանալ անհաւատարիմ ձեռքերում, ընդունեց նրա առաջարկութիւնը:

— Ուրեմն ժամանակ կորցնել պէտք չէ, ասաց Ստեփանը ուրախ գէմքով. — այս ընդհանր գնանք նօտարի մօտ, ես կը տամ քեզ հարկաւոր թղթերը:

Նոյն առուր գիշերային պահուն Միքայէլը պատրաստում էր իր ճանապարհային չէմօզանը և հաւաքում էր իր սենեակի իրեղէնները:

Եւ նոյն ընդհանուր նրան զբաղեցնում էր այն միտքը, թէ ի՞նչ պէտք էր ասել Իգային, որ պէս պէտք էր յայտնել նրան: Իհտէր, որ խեղճ աղջիկը շատ պիտի տխրի, երբ կը լսէ նրա գնալը: Եւ իրան, Միքայէլին, ոչ սակաւ ծանր էր բաժանվելը այդ բարի և խաղաղ ընտանիքից, որի հետ այնքան ընտելացել էր նա, ուր անց էր կացրել այնքան ախորժելի ժամեր և ուր գտել էր այնքան քնքոյշ խնամատարութիւն: Բայց ինչու չէր յայտնվում Իգան, ամեն օր այս ժամին նա թէյ էր ներս բերում, իսկ այժմ ո՞րտեղ էր նա:

Ներս մտաւ նրա մայրը:

— Ո՛ւր մնացիք, պարոն, ասաց նա հետաքրքիր կերպով աչք ձգելով բաց չէմօզանի վրա. — այսօր ճաշին երկար սպասել տուեցիք մեզ:

— Զբաղված էի, պատասխանեց Միքայէլը, — ո՛ւր է Իգան, չէ երևում:

— Նա ինչ որ իր հաշուով չէ այսօր, ասաց պառաւը վշտացած կերպով. — առաւօտեան գանգատվում էր, թէ գլուխս ցաւում է, ամբողջ օրը ոչ կերել է և ոչ խմել, հիմա էլ պառկած է: Տէր Աստուած, ինչ կը լինի մեզ հետ, եթէ նա կը հիւանդանայ:

Եւ ողորմելի պառաւի խորշոմներով պատած աչքերում երևացին արտասուքի կաթիլ-



ներ: Միքայելի վրա սաստիկ ներգործութիւն ունեցան նրա խօսքերը և մտածեց իսկոյն վազել բժիշկ հրաւիրելու:

— Իսկ դուք պատրաստվում էք, պարոն, երևի մի տեղ ունիք գնալու, հարցրեց պառաւը փոքր ինչ հանգստանալուց յետոյ:

— Այո, մայրիկ, ես պատրաստվում եմ գնալ իմ հայրենիքը:

— Ե՞րբ:

— Էգուց վաղ-առաւօտեան:

Խեղճ պառաւը բոլորովին սառած մնաց:

— Ցաւալի է, շատ ցաւալի է, ասաց նա դողդոջուն ձայնով, — մեզ հեշտ չի լինի բաժանվել ձեզանից, մենք այնքան սովորել էինք միմեանց, ինչպէս որդի սիրում էինք ձեզ: Հիմա՛յ պիտի գնաք....

— Ո՞վ գիտէ, գուցէ շուտով կը վերադառնամ, մխիթարում էր նրան Միքայելը:

— Թող Աստուած յաջողութիւն տալ ձեզ, որդի, գնացէք, ուրախացրէք ձեր ծնողներին:

Պառաւը չը գիտէր, որ Միքայելը զուրկ էր ծնողներից, որ նա որբ էր մնացել հէնց երեսայութեան ժամանակից:

— Ի՞նչ պէտք է անել Իգայի հետ, հարցրեց նա, — կարելի է նա ծանր հիւանդ է, կարելի է բժշկի պէտք ունի:

— Աստուած գիտէ, որդի, նա ոչինչ չէ ա-

սում, այդ նրա հին սովորութիւնն է, տեսնում ես, գունատվել, դեղնել է ինչպէս աշնան տերև, բայց չէ տսում, թէ որ տեղն է ցաւում և տանում է իր հիւանդութիւնը միշտ ոտքի վրա, և չի էլ դադարում գործելուց:

— Կարելի՞ է մտնել նրա մօտ:

— Ինչու չէ, գնանք:

Միքայելը պառաւի հետ ներս մտան կից սենեակը, ուր մանկահասակ օրիորդը առանց հանվելու պառկած էր վարագոյրներով առաքաստաւորված մահճակալի վրա: Մայրը լեռքաշեց վարագոյրը և ճրագի լոյսը ընկաւ նրա բորբոքված դէմքի վրա, որ վառվում էր տենդային շառագունութեամբ, իսկ աչքերի մէջ փայլում էր անբացատրելի կրակ:

— Ի՞նչ է պատահել ձեզ հետ, Իգա, հարցրեց Միքայելը, սաստիկ սարսափ գգալով իր մարմնի վրա:

— Ոչինչ, պատասխանեց օրիորդը թույլ ձայնով, — փոքր ինչ տաքութիւն եմ զգում, և գլուխս կրկին սկսեց ցաւել, բայց կանցնի, այսպէս շատ անգամ է պատահում ինձ հետ:

Նա դարձեալ գլուխը դրեց բարձի վրա, կարծես, կամենում էր ցոյց տալ, թէ պէտք էր իրան հանգիստ թողնել: Մայրը ձեռքից բաց թողնեց վարագոյրը և նա ծածկվեցաւ խորհրդական առաքաստների յետքում:



—Նա ծանր հիւանդ է, դարձաւ Միքայէլը դէպի շուարած մայրը.— ես ինկոյն բժիշկ կը հրաւիրեմ: Միայն դուք մի յայտնեցէք, թէ առաւօտեան ես գնալու եմ, և աւելացրեց նա:

—Ես գիտեմ... ես բոլորը գիտեմ... լսելի եղաւ վարագործի ետեւից հիւանդի թոյլ ձայնը և նրան հետեց լացի տխուր հեկեկանք:

Միքայէլը չը լսեց այդ, և առանց ժամանակ կորցնելու հեռացաւ. իսկ պառաւ մայրը մօտեցաւ իր դստերը և սկսեց հանգստացնել նրան:

Կէս ժամից յետոյ եկաւ բժիշկը, նա յայտնեց, թէ օրիորդի հիւանդութիւնը շատ երկիւղալի չէր, թէ դա մի թեթեւ տաքութիւն էր, որ շուտով կանցներ, միայն պէտք էր անխնամ չը թողնել, եթէ ոչ, կարող էր սաստկանալ: Նա մի քանի պատուէրներ տուեց, դեղեր գրեց և հեռացաւ:

Այժմ Միքայէլին պէտք էր վազել ապտեկը, որովհետեւ տան մէջ այս ծառայութիւնը կատարող ուրիշ մէկը չը կար:

Գիշերը հիւանդը անցկացրեց տենդային գառանցութեան մէջ, իսկ առաւօտեան լուսաբացին մօտ հանգստացաւ և քնեց: Բոլոր ժամանակը հիւանդի մայրը և Միքայէլը գտանվում էին նրա մօտ:

—Հիմայ դուք գնացէք, պարոն, նա քնեց, ասաց պառաւը հազիւ լսելի ձայնով.— շնորհակալ եմ ձեր քարեարտութեան համար, գնացէք, պատրաստվեցէք, դուք ճանապարհորդ էք:

Մտնելով իր սենեակը, Միքայէլը սկսեց անհանգիստ կերպով անցուգարձ անել. նա դտանվում էր սաստիկ խռովութեան մէջ: Իր կեանքում նա երբէք մի այդպիսի դժուարին, անհնար և անել դրութեան չէր հանդիպել: Երկու զգացմունքներ նրա մէջ մաքառում էին միմեանց հետ: Մի կողմից իր ամենասիրելի բարեկամը, Ստեփանը, դրել էր նրա վրա մի ծանր պարտականութիւն. Մասիսեանների ընտանիքի բաղդը և դժբաղդութիւնը այժմ կախված էր նրա կամքից. նա պիտի գնար և պիտի կարգի դնէր հանգուցեալ աղայի աւերված գործերը. մի ամենաթեթեւ անհոգութիւն կարող էր զրկել նրա ընտանիքը օրական հացից: Իսկ միւս կողմից, մի նազելի արարած այժմ հիւանդ դրած էր անկողնի մէջ. նրան ձգել անխնամ, նրան թողնել անօգնական, — այդ նոյնպէս դժուարին էր:

Ի՞նչպէս պէտք էր հաշտեցնել այդ երկու դժուարութիւնները.— բարեկամի սէրը և կնոջ սէրը, — որը պէտք էր նախադասել: Բայց մի թէ Միքայէլը սիրում էր նրան: Ամբողջ հինգ տարի



նա կենում էր այս տան մէջ, երբէք մի այսպիսի զգացմունք չէր վրդովել նրա սիրտը, և երբէք ինքը՝ օրիորդը սիրոյ մի ամենաթեթեւ արտայայտութիւն չէր ցոյց տուել նրան: Բայց այն րոպէից, երբ լսեց, թէ նա հիւանդ է, և հէնց այս գիշեր, երբ լսեց անկողնի վարադուրներէ ետեւից նրա լաց լինելու ձայնը իր գնալու մասին, — իսկոյն մի խորին, անբացատրելի ըզգացմունք սկսեց խռովել նրա սիրտը: Ի՞նչ էր այդ, սէր, թէ մի խաբուսիկ կերք, կամ թէ կարեկցութեան զգացմունք, որ նա ունէր դէպի ամեն նեղեալները, որոնց պէտք էր օգնութեան ձեռք մեկնել: Այդ չէր կարողանում որոշել Միքայէլը, նա այդ հոգեկան մթին և անվերժանելի խնդիրները լուծելու համար խիստ անփորձ էր:

Երկար նա անքուն անցուղարձ էր անում իր փոքրիկ բնակարանի մէջ, երկար ծանր մտածութիւններ զբաղեցնում էին նրա բորբոքված երեւակայութիւնը, մինչև ժամատներից լսելի եղաւ առաւօտեան զանգակի ձայնը: Գիշերը աննկատելի կերպով անցել էր: Յանկարծ նրա աչքը ընկաւ կապված և բոլորովին պատրաստ չէմօդանի վրա: Այդ անշունչ և խուլ առարկան, կարծես, սկսեց խօսել նրա հետ, կարծես, ազդեց նրա վրա, ցոյց տալով մի անհրաժեշտութիւն, որից փախչելը անհնարին էր: Դա

մի և նոյն չէմօդանն էր, որ առաջին անգամ դրած ճանապարհային սալակի վրա, նա հեռացաւ Մասիսեանների տնից. դա յիշեցրեց նրան այն փունջ ծաղիկը, որ երկու աղջիկները աղալի տան կտուրից ձգեցին նրա սալակի մէջ... և իսկոյն Գալիանէի և Հռիփսիմէի նազելի դէմքերը պատկերացան նրա երեւակայութեան մէջ...

Նոյն միջոցին փողոցից լսելի եղաւ կառքի դղրոցը և քանի րոպէից յետոյ Միքայէլի սենեակի շէմքի վրա յայտնվեցաւ կառապանը:

— Պարոն, ասաց նա գլուխ տալով, — դուք հրամայեցիք առաւօտեան շուտ գալ, ներեցէք, որ մի քիչ ուշացայ:

— Լաւ, վեր առ այդ չէմօդանը, դուրս տար, մի փոքր սպասիր, ես շատ չեմ ուշանայ, ասաց Միքայէլը րոպէական մտածութիւնից յետոյ:

Դա նոյն կառապանն էր, որին վարձել էր Միքայէլը գիշերը բժշկի մօտ գնալու ժամանակ, և որին պատուիրել էր վաղ — առաւօտեան գալ և իրան տանել երկաթուղու կայարանը:

Հասել էր վճռական ժամը: Միքայէլը մի քանի րոպէ ևս վարանեցաւ, յետոյ մօտեցաւ



գրասեղանին, վեր առեց մի կտոր թուղթ և գրեց հետևեալ տողերը.

«Մնաք բարեալ, Իդա, ընդունեցէք այդ փոքրիկ նուէրը, որպէս եղբայրական սիրոյ մի նշան: Դա պէտք կը գայ ձեզ կարօտութեան ժամերում, երբ դուք կը պատրաստվէք տնօրինել ձեր բախտը և ապագան»...

Նա ստորագրեց նամակը, և դնելով նրա հետ թղթադրամների մի հաստ ծալք, կնքեց, և դուրս եկաւ: Մտնելով հիւանդի սենեակը, նա գտաւ պառաւին դեռ նստած իր դստեր անկողնի մօտ:

— Ես եկայ ձեզ մնաս բարեալ ասելու, տիկին:

— Դուք արդէն գնում էք, ձայն տուեց պառաւը շփոթվելով:— Կամենում էք, զարթեցնեմ Իդային:

— Մի անհանգստացնէք, այդ կարող է վնասել նրան:

— Ա՛խ, նա որքան կը տխրի, երբ կը զարթնի և կը տեսնի, որ դուք գնացել էք:

— Իդան շատ բարի է, նա կը ներէ իմ անբաղաճավարութեանը, ասաց Միքայէլը ձեռքը տանելով դէպի ծոցը, և դուրս բերելով հաստ ծրարը, — խնդրեմ, լանձնեցէք նորան այս նամակը:

Միքայէլը վերջին անգամ մօտեցաւ հիւան-

դին, երբ նա դեռ ևս քնած էր: Ոչինչ այնքան յափշտակիչ և կախարդապէս — հրապուրող չէր կարող լինել, որպէս այդ քնքոյշ և սքանչելի մարմինը, որ դրած էր անկողնի մէջ: Հարուստ և թաւախիտ գիսակները կիսով չափ ծածկել էին նրա գունաթափ դէմքը, իսկ նուրբ, կիսաբաց շրթունքը, կարծես թէ, շշնջում էին հազարաւոր գեղեցիկ խօսքեր... Նոյն միջոցին նրա մերկ ձեռքը ընկած էր վերմակից դուրս, որպէս մի բարեկամական ձեռք, որ պատրաստ էր անջատման ողջոյնը ընդունելու: Միքայէլը զգուշութեամբ բարձրացրեց այդ ձեռքը, սեղմեց իր շրթունքին, և վերջին անգամ հայեացք ձգելով նազելի դէմքի վրա, հեռացաւ:

Պառաւը եկաւ նրա հետ մինչև տան դուռը, և օրհնելով ճանապարհ գրեց:

Նոյն առուր առաւօտը մի ուրիշ երիտասարդ ևս, շրջապատված մի քանի ուսանողներով, ճանապարհ ընկաւ դէպի Անգլիա: Ուսանողները համբուրվեցան նրա հետ և ճանապարհ գրին այս խօսքերով. «գնա հայրենիքի գաւաճի, թող Վարդանի և Ներսէսի ոգին օգնէ քեզ»...



Պետրոս Մասիսեանի յանկարծահաս մահը խիստ ցաւալի ներգործութիւն ունեցաւ նրա ամբախտ ընտանիքի վրա: Տիկին Մարիամը շուարված, խելքը կորցրած, չը գիտէր, թէ ինչ պէտք էր անել: Ընտանիքը ոչ մի օրինաւոր բարեկամ չուներ: Հանգուցեալի մերժող, բացասող և եսական բնաւորութիւնը նրան այն աստիճան առանձնացրել էր, որ մեռնելուց յետոյ մի մարդ չը գտնվեցաւ, որ նրա անփորձ, անտեղեակ ժառանգներին բարի խորհուրդներ տար անտէր մնացած կալքի մասին: Ինքը, տիկին Մարիամը, թէև խելացի և հասկացող կին էր, բայց տղամարդի խստութիւնը նրան այն վիճակի մէջ էր դրել, որ ամբողջ իր ամուսնական կեանքում, տան չորս պատերից դուրս, չը գիտէր, թէ իր տղամարդը ինչով է զբաղված, կամ նրա գործերը ինչ դրութեան մէջ են: Եւ այս պատճառով, երբ վախճանվեցաւ նա, որ ամեն բանի վրա իշխում էր, որ ամեն ինչ կենտրոնացրել էր իր ձեռքում, որ, բացի իրանից մի ուրիշ տէր չէր ճանաչում, որի կինը, որդին, զաւակներն անգամ իր համար օտարներ էին, — երբ վախճանվեցաւ այդ բռնակալ միապետը, այնուհետև սկսեցին տիրել այն մարդիքը, որոնք

Հանգուցեալի ձեռքի յաջողակ գործիքներն էին, որոնք կրթված, վարժված և կատարեալագործված էին նրա դաստիարակութեան համեմատ, — գողութեան և խաբէութեան մէջ...

Մասիսեանի տան միակ բարեկամը մնացել էր Սիմօն Եագօրիչը. աղայի մահից յետոյ ասպարէզը բացվեցաւ այդ պօլիցիական հին աւագակի առջև. նա, որ առաջ աղայի փաստաբանն էր և վարում էր նրա դատաստանական գործերը, այժմ դարձել էր տիկին Մարիամի գլխաւոր խորհրդատուն:

Մի գիշեր տիկին Մարիամը և իր երկու աղջիկները՝ Գայիանէն և Հռիփսիմէն, բոլորն էլ սև հագած, հաւաքվել էին իրանց սենեակում: Սիմօն Եագօրիչը նստած էր ճրագի մօտ, և ահագին ակնոցները հագցրած ահագին քթի վրա, ձեռքումը բռնած ունէր մի կտոր թուղթ, որը երբեմն մօտեցնում էր աչքերին, երբեմն հեռացնում էր, և երբեմն ծնկի վրա դնելով թուղթը, խորին մտածութեան մէջ էր ընկնում: Նա նմանում էր մի հնազէտի, որ նրստած լուռ, կիսամաշ արձանազրութեան առջև, աշխատում է կարգաւ անվերժանելի իերօգլիֆները: Դա մի հեռագիր էր: Տիկին Մարիամը և նրա աղջիկները անհամբերութամբ սպասում էին Սիմօն Եագօրիչի բացատրութեանը, որովհետև այդ հեռագրիցն էր կախված նրանց



Թէ ուրախութիւնը և թէ տրտմութիւնը:  
Հեռագրի բովանդակութիւնը խիստ պարզ  
էր և բաղկանում էր մի քանի տողերից միայն.  
«Իմ գալը անկարելի է, ես ճանապարհ գրեցի  
Միքայէլին, նա կը կարգադրէ բոլոր գործերը,  
որպէս հարկն է»: Ստորագրված էր՝ «Ստե-  
փան Մասիսեան»:

Հեռագրի սառն, կարճ և լակօնական բո-  
վանդակութիւնը անբաւականացուցիչ էր տի-  
կին Մարիամին. մօր հետաքրքրութիւնը չէր  
կարող գոհանալ այս մի քանի անսիրտ խօս-  
քերով. «Իմ գալը անկարելի է», հաղորդում  
էր որդին. ինչո՞ւ համար անկարելի է, ի՞նչ էր  
պատահել, — ահա այս հարցերը սկսեցին տան-  
ջել մօրը: Մայրը մի ուրիշ պատճառի մասին  
մտածել չէր կարող, բացի նրանից, թէ որդին  
հիւանդ պէտք է լինէր, որ չէր կարողացել  
կատարել նրա խնդիրքը:

— Ախ, ինչ կը լինի պատահած, ասում էր  
նա ցաւալի ձայնով. — Ստեփանս բարի էր, շատ  
բարի, նա ինձ մենակ չէր թողնի. ախ, Տէր  
Աստուած, ինչ կը լինի պատահած...

Սիմօն Եագօրիչը հանգստացնում էր նրան.

— Օրհնած, հալբաթ մի բան կը լինի պա-  
տահած, որ չի կարողացել գալ:

Գայիանէն և Հռիփսիմէն թէև նոյնպէս  
տխրեցին իրանց եղբօր մասին, բայց սրտով

ուրախ էին, որ միևսանգամ կը տեսնեն Միքա-  
լէլին: Մի քանի տարվայ ընթացքում նրա  
մասին լսել էին այնքան շատ բաներ, որ Մի-  
քայէլը դարձել էր նրանց համար մի տեսակ  
առասպելական արարած:

Բայց Սիմօն Եագօրիչի վրդովմունքին չափ  
չը կար. նա յոյս ունէր, եթէ Ստեփանը գալ  
չը կարողանայ, անպատճառ իրան կը նշանա-  
նակէ գլխաւոր հաւատարմատար: Այժմ նրա  
ծրագիրը փոխվեցաւ: Նա աւելի շահաւետ էր  
համարում գործ ունենալ անփորձ և անփոյթ  
Ստեփանի հետ, քան թէ հմուտ Միքայէլի  
հետ, որի «սատանայութիւնները» վաղուց  
յայտնի էին նրան: Այդ հին գալը մտքումը  
դրած ունէր մի մեծ ճարակ ստանալ հանգու-  
ցեալ աղայի կայքից, որից ամեն մարդ իր կող-  
մըն էր քաշում:

Նա մտքով դարձաւ դէպի հանգուցեալի ի-  
շատակը և այսպէս դուրս թափեց իր տհա-  
ճութիւնը Միքայէլի մասին.

— Հոգիդ թող լոյսի մէջ լինի, Պետրոս ա-  
ղայ, ձայն արձակեց նա երեսը խաչակնքելով.  
— Դու էիր իմանում, թէ Սիմօն Եագօրիչը ինչ  
մարդ է... ամեն բանի մէջ նրա հետ մասլա-  
հաթ էիր անում, վեքսիլները տալիս էիր և  
ասում. Սիմօն Եագօրիչ, ինչպէս խելքդ կը կրտ-  
րէ, էնպէս արա. տանում էի, մի քանի օրվայ



մէջ փողերը սաղացնում էի. բայց հիմայ իմ երեսին էլ չեն ուզում մտիկ տալ... Աստուած միայն գիտէ, թէ որքան եմ չարչարվել ես այս տան շահերի համար...

— Սիմօն Նազօրիչ, դու էլի մերն ես, պատասխանեց նրան տիկինը, սիրտ տալով:— Դու էլի կը մնաս քո գործին և ամեն բան քո խորհրդովը կը կատարվի:

Ծերունի փաստաբանը ընդունեց խիստ միամիտ կերպարանք և կարեկցութեամբ յայտնեց.

— Աստուած է վկայ, որ իմ սիրտը ցաւում է. ես իմ օրը անց եմ կացրել, այսօր կամ, էգուց կարելի է մեռնեմ. հիմայ փողն ու հողը ինձ համար դիփ մէկ են. աշխարհիցս ի՞նչ եմ տանելու. մի պատանք ինձ համար բաւական է... Բայց իմ սիրտը, տես, դրանց համար է ցաւում (նա ցոյց տուեց Գալիանէի և Հռիփսիմէի վրա) դրանց համար եմ աշխատում.... Ստեփանը, ոնց որ լինի տղայ է, իր գլուխը կը պահէ, բայց դրանք աղջիկներ են...

Տիկին Մարիամը զարմացած լսում էր ծերունի խաբէբայի խօսքերը, նա հասկանալ չէր կարողանում, թէ ինչ էր նրա միտքը:

— Հիմայ եթէ հանգուցեալ աղան գերեզմանից աչքերը բաց անէր և տեսնէր այս բոլորը, խեղճ մարդու սիրտը կը տրաքէր բարկութիւնից: Ախ, Աստուած, ովքեր են կանգնած նրա

գործերի գլխին,— մի ծծկեր տղայ, որը սևը սպիտակից ջոկել չէ իմանում... (Նա ակնարկում էր Միքայէլին:) Նա Սիմօն Նազօրիչն եմ, որը քաղաքը ինձ ճանաչում է. 22 տարի պօլիցիայում գրագրութիւն եմ արել, 15 տարի թ... մօվրովի մօտ եմ եղել. մազերս սպիտակել են սուգերումը ման գալով, ամեն զակօնները «հայր մերի» նման իմանում եմ. բայց ինձ էլ բանի տեղ չեն դնում...

Սիմօն Նազօրիչը, ինչպէս ամեն խորամանկ մարդիկ, սովորութիւն ունէր միշտ իր «ետեի միտքը» լեզուի տակին պահել, պարզ չը խօսել: Բայց տիկին Մարիամը նկատում էր, որ նա մի բան ասել էր ուզում, միայն կամ չէր վստահանում, կամ թողնում էր, որ տիկինը ինքը հասկանայ և առաջարկէ նրան:

— Ի՞նչ էք կամենում, Սիմօն Նազօրիչ, հարցրեց նա համբերութիւնը հատնելով:

Ծերունին, մի բուռն ծխախոտի փոշի վեր քաշելով իր քթի պնշածակերից, ոգևորվեցաւ, սիրտ առեց, և մի քանի անգամ հազալով, կրկին վեր առեց հեռագիրը, և նորից սկսեց բացատրել նրա իմաստը:

— Դիտէք ի՞նչ կայ, տիկին, այս հեռագրով Ստեփանը իմացում է տալիս ձեզ, որ իր փոխարէն ուղարկում է Միքայէլին հօր գործերը կարգի դնելու համար. կը նշանակէ, նա իր



կողմից տուել է Միքայելին մի թուղթ, որին ասում են դավերն օտ: Բայց օրէնքով նա իրաւունք չունէր իր մօր կամ քոյրերի կողմից տալ մի այսպիսի թուղթ. նա կարող էր միայն իր կողմից տալ: Եւ այսպէս էլ կը լինի: Հիմայ մնում է, որ դուք ձեր կողմից և ձեր աղջիկներին կողմից մի այսպիսի թուղթ տաք ինձ, այն ժամանակ կը տեսնէք Սիմօն Եագօրիչը ինչեր կանէ ձեզ համար, և ո՞նց ամեն բան տեղնի տեղը կը սարքէ...

Տիկին Մարիամը մտածութեան մէջ ընկաւ և ըրպէսական լռութիւնից յետոյ պատասխանեց.

— Տեսնենք... թող Միքայելը գայ, կը մտածենք...

— Չէ, դուք չէք իմանում, տիկին, մտածեցէք, լաւ մտածեցէք, նրա խօսքը կտրեց՝ ծերունի խաբեբան ծանր եղանակով. — այնտեղ, փողոցում ձեր մարդու խանութները «փէշատել» են, դուք տանը հանգիստ նստած էք: Մարդ կուզէ, որ եղած չեղածը ազատէ... Իմանում էք:

Հանգուցեալ աղայի խանութները կնքելը մի լոկ օրինական ձև էր, մի լոկ կառավարչական նախազգուշութիւն էր, մինչև նրա ժառանգները յայտնվէին, բայց Սիմօն Եագօրիչը մի այնպիսի նշանակութիւն տուեց, որ անտեղեակ

տիկին Մարիամին բոլորովին սարսափի մէջ գցեց: Տիկինը խանութի կնքվելը հասկանում էր այն մտքով միայն, երբ պէտք էր նրա միջի կայքը աճուրդով ծախել կամ գրաւել: Եւ այս պատճառով նրա վրա մեծ ազդեցութիւն ունեցաւ Սիմօն Եագօրիչի այն խօսքը, թէ «մարդ պէտք է, որ եղած-չեղածը ազատէ» և այդ մարդը ինքն էր:

— Ի՞նչպիսի թուղթ պէտք է, Սիմօն Եագօրիչ, հարցրեց նա:

— Դրա «զակօնը» ես եմ իմանում, իմ բանն է, պատասխանեց նա հպարտութեամբ. — առաւօտեան կը գնանք նօտարիոսի մօտ, ես այնտեղ գրել կը տամ և բանը կը վերջացնեմ:

— Յետոյ խանութների «փէշատը» կը վերցնեն, այնպէս չէ:

— Մէկ օրումը վերցնել կը տամ. դուք ջէր Սիմօն Եագօրիչին չէք ճանաչում:

Տիկինը համաձայնվեցաւ, որ նրան կը տայ բոլոր հարկաւորած թղթերը, միայն թէ «իւր երեսերքի հացը չը կտրէին» և Սիմօն Եագօրիչը ուրախ, ինքնաբաւական դէմքով վեր կացաւ, և կամենում էր հեռանալ, ասելով.

— Ես էգուց առաւօտեան կը գամ և ձեզ կը տանեմ նօտարիոսի մօտ:

— Սպասիր, Սիմօն Եագօրիչ, կանգնեցրեց նրան տիկինը. — դուք մի բան չը խմեցիք:



— Դէ բերէք, օրհնած, բերանս էլա թըջեմ,  
էնքան խօսեցի, որ բօղազս չորացաւ:

— Հռիփսիմէ, դարձաւ տիկինը դէպի աղ-  
ջիկը.

— Սիմօն Եագօրիչին մի բաժակ արաղ հա-  
մեցէք արէք:

— Հռիփսիմէն կատարեց մօր հրամանը, և  
պօլիցիական հին արբեցողը, խմելով իր սի-  
րած ըմպելին, օրհնեց և հեռացաւ:

Դրսումը սաստիկ մութն էր, այնպէս որ,  
ինչպէս ասում են, եթէ մատդ կոխէիր մէկի  
աչքը, չէր տեսնի: Սիմօն Եագօրիչին խաւա-  
րի միջից մօտեցան մի քանի հոգի, որոնք,  
կարծես, նրան սպասում էին: Նրանց մէջ  
սկսվեցաւ մի այսպիսի գաղտնի խօսակցու-  
թիւն:

— Եթէ պօլիցիական ուշադրութիւն կը դարձ-  
նէ, այն ժամանակ մենք կորած ենք...

— Մեզ կարող են մատնել ևս...

— Աւելի լաւ կը լինէր, որ խանութի ետեւի  
անյայտ դուռը նոյնպէս կնքէին, որպէս միւս-  
ները...

— Այժմ նա ոչինչ բանի չէ ծառայում... ա-  
մեն բան վերջացած է...

— Դուք գնացէք, անհոգ կացէք, պատաս-  
խանեց Սիմօն Եագօրիչը իր խօսակիցներին: —  
Ես ամեն բան սարքել եմ, ինչ որ պէտք է...

Խօսող խումբը իրանց սև մտածութիւննե-  
րի հետ անյայտացան գիշերային մթութեան  
մէջ: Դրանք հանգուցեալ աղայի խանութի  
գործակատարներն էին...

Սիմօն Եագօրիչի գնալուց յետոյ տիկին  
Մարիամի սենեակը մտան երկու կին դրացի-  
ներից, որոնք եկել էին նրան մխիթարելու  
համար: Նրանցից մէկը պառաւ էր, միւսը  
մանկահասակ, որ բաւական թարմ և սիրուն  
դէմք ունէր:

Սովորական խօսակցութիւններից յետոյ, որ  
առհասարակ գործ են դնում սգաւորներին  
մխիթարելու համար, հիւրերից մէկը, պառա-  
ւը, դարձաւ դէպի տ. Մարիամը այս հարցով.

— Ախար պատմիր, մէկ տեսնեմ, ի՞նչպէս  
պատահեց այդ ցաւալի դէպքը:

Պառաւի հարցմունքը հանգուցեալ աղայի  
վախճանի մասին էր. տ. Մարիամը հարիւր  
անգամ պատմել էր նրա հրաշալի մահուան  
պատմութիւնը, այժմ ստիպվեցաւ լցուցանել  
և իր նոր հիւրերի հետաքրքրութիւնը:

— Դիշերից բաւական անցել էր, ասաց նա,  
— Գայիանէն և Հռիփսիմէն վաղուց քնած էին.  
աղայի սենեակում ճրագ չէր երևում. նա էլ  
քնած էր. ես միայն մնացել էի անքուն, կար-  
ծես, մի բան, որը ինքս էլ չեմ իմանում թէ  
ինչ էր, խռովեցնում էր ինձ և անհանգիստ



էր անում: Ա. քաղաղները վաղուց սկսել էին կանչել, ես տակաւին նստած էի ճրագի մօտ և կարկտնում էի նրա (աղայի) գուլբանները: Յանկարծ լսում եմ նրա սենեակից մի խուլ ձայն, որ կրկնվեցաւ մի քանի անգամ: Սիրաս սկսեց դողդողալ և իսկոյն վազեցի նրա մօտ: Տեսնում եմ, խեղճը իր քնած տեղից դուրս է եկել և ընկել է թախտի վրա: Նա սարսափելի խուլութեան մէջ էր: Երբ ինձ տեսաւ, վերկացաւ, նստեց: Ես զարհուրեցայ, երբ նրկատեցի նրա դէմքը. բոլորովին փոխվել էր, այլանդակվել էր և մահուան գոյն էր ստացել, իսկ աչքերի մէջ վառվում էր սոսկալի կրակ:

— Տունս քանդվեցաւ... ձայն տուեց ճառորմելի կերպով:

— Ի՞նչ է պատահել, հարցրի ես սարսափելով, և մօտեցայ նրա ձեռքերը բռնեցի, որոնցով անխնայ ծեծում էր իր գլուխը և փետում էր մազերը:

Ես մտածեցի, թէ նա ցնորված պէտք է լինի. նրա բոլոր շարժմունքները, խօսքերը ցոյց էին տալիս, թէ այլ ևս չէ իշխում իր վրա: Բայց շուտով հանգստացաւ և դարձեալ կրկնեց մի և նոյն խօսքերը:

— Մեր տունը քանդվեցաւ... մենք կորած ենք... և աչքերը ծածկեց ձեռքով, սկսեց լաց լինել:

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, միւսանգամ հարցնում եմ ես:

— Ել ինչ պէտք է լինի, «ոսկի աքաղաղը» մեռաւ... պատասխանեց նա խորին տխրութեամբ:

— Ի՞նչպէս թէ մեռաւ:

— Մեռաւ... իմ աչքով տեսայ»...

Ես դարձեալ մտածեցի, թէ խելքից գնացած պէտք է լինի, որովհետեւ այսպիսի ցնորքներ վերջին տարիներում շատ անգամ պատահում էին նրա հետ:

Ես փոքր ինչ հանգստացրի նրան, և խընդրեցի, որ պատմէ, թէ երբ տեսաւ, կամ ինչպէս մեռաւ «ոսկի աքաղաղը»:

Նա պատմեց, թէ տեսաւ, որ «ոսկի աքաղաղը» երևեցաւ նրան իր ոսկի հաւի հետ, իրանց ոսկի ճտերով. նրանք պտըտում էին տան պարտեզի մէջ, թռթռում էին և զուարճանում: Յանկարծ օդի միջից վրա հասան մի քանի ուրուրներ: Խեղճ հաւը իր աքաղաղի հետ երկար պատերազմում էին ուրուրների հետ, որ ազատեն իրանց ճտերը նրանց ճանկերից, բայց ազատել չը կարողացան. բոլորին յափշտակեցին, տարան, և ոսկի հաւը «ոսկի աքաղաղի» հետ պատառ-պատառ անելով, թողեցին, թռուռն, և կրկին անյայտացան ուրուրները օդի մէջ:



— Գուհ, երեւի, երազ ես տեսել, պատասխանեցի ես, աշխատելով մխիթարել նրան:

— Երազ... երազը ո՞րն է... ես իմ աչքով տեսայ... և «ոսկի աքաղաղից» մնաց ինձ մի փետուր միայն... տես, տես, ինչպէս արիւնոտ է... դեռ արիւնը չէ ցամաքել...

Եւ նա ձեռքը մեկնեց դէպի ինձ, որպէս թէ ցոյց էր տալիս այն ոսկի փետուրը, որ մնացել էր նրան «ոսկի աքաղաղից», բայց ետ նրա ձեռքում ոչինչ չը տեսայ: Նոյն միջոցին կրկին տիրեց նրան սարսափելի խռովութիւն, կրկին նա ալեկոծութեան մէջ ընկաւ: Յետոյ փոքր առ փոքր հանգստացաւ: Յանկարծ դողդոջաց ամբողջ մարմնով, երեսը կծկվեցաւ, աչքերը փակեց, «մեր տունը քանդվեցաւ»... և ոչնչեց վերջին անգամ, թուլացաւ և ընկաւ գետնի վրա...

Տիկին Մարիամի պատմութիւնը սարսափ գցեց լսողների վրա, Գալիանէն և Հռիփսիմէն լաց էին լինում, և նրա հիւրերը նոյնպէս չը կարողացան զսպել իրանց արտասուքը:

— Ի՞նչ էր այդ «ոսկի աքաղաղը», հարցրեց նրանցից մէկը:

— Նա մեր տան բախտն էր, մեր բոլոր հարստութիւնը նրանից էր կախված, պատասխանեց տ. Մարիամը:

Տիկինը ոչ սակաւ սնահաւատ էր, քան թէ

Հանգուցեալ աղան. առհասարակ Մասիսեանների ամբողջ ընտանիքը հաւատում էր «ոսկի աքաղաղի» բարերար ազդեցութեանը, բացի Ստեփանից:

— Այդ իրաւ է, հաստատեց տիկնոջ խօսքը կնիկներից մէկը. — ամեն տան բախտը մի-մի բանի վրա հիմնված է լինում. երբ նա անհետանում է, բախտաւորութիւնն էլ իր հետ է տանում: Ես ճանաչում եմ մեր քաղաքացիներից մէկին, որի համար պատմում էին, թէ նրա տան մէջ բնակվում էր մի օձ, որ ամեն գիշեր ածում էր իր բոյնի առջև սխտորի կրճեպներ. տանեցիքը հաւաքում էին, պահում, և առաւօտեան տեսնում էին, որ բոլոր կճեպները զուտ ոսկի էին դարձել: Մի անգամ տանեցիներից մէկը, որ յիմար էր, խփեց, կրտրեց օձի ձագերից մէկի պոչը. օձը բարկացաւ, էլ այնուհետև չերևեցաւ, նրանք զրկվեցան ոսկուց, և սկսեցին հետզհետէ աղքատանալ:

Տիկին Մարիամը և իր հիւրերը երկար խօսում էին այս տեսակ սնահաւատութիւնների վրա և գիշերը աննկատելի կերպով անցնում էր: Յետոյ նրանք կրկին դարձան դէպի աղալի խորհրդաւոր մահը:

— Բայց ի՞նչ ասաց բժիշկը, երբ միւս օրը եկաւ մարմինը քննեց, հարցրեց կնիկներից մէկը:



—Նա պատասխանեց, թէ կա թո՛ւ ած ք է ստացել, պատասխանեց տ. Մարիամը:

—Հոգը նրանց գլխին, նրանք ինչ են հասկանում այս տեսակ բաները...

Ե.

Միքայէլը, աւելի քան հինգ տարի բացակայ լինելով Մասիսեանների տնից, վերջապէս վերադարձաւ այնտեղ: Այս հինգ տարվայ ընթացքում նա գլխաւորապէս բնակվել էր Մօսկվայում, ամեն տարի ներկայ էր գտնվել Նիժնի-Նովոգորոդի տօնավաճառին, և մի քանի անգամ գնացել էր Մարսելիա, որտեղից ճանապարհորդել էր զանազան եւրօպական քաղաքներ:

Նրա կրկին յայտնվելը Մասիսեանների տանը նույնպիսի հետաքրքրութիւն չարժեց, որպէս եղաւ նրա առաջին յայտնվելու ժամանակ, երբ դեռ նոր էր բերված գիւղից: Առաջ գիւղից նա եկաւ այնտեղ գիւղական կոշտութեամբ, որի ամեն մի խօսքը, ամեն մի շարժումները ծաղրածութեան առարկայ էր դառնում ամբողջ ընտանիքի համար, — իսկ այժմ նա վերադառնալով եւրօպական քաղաքներից, բոլորովին ուրիշ մարդ էր դարձել, կրթված, տաշված և կոկված. այժմ նրա ամեն մի վարմունքը, ա-

մեն մի խօսքը հրաւիրում էր իր վրա պատկառանք և համակրութիւն:

Այս հինգ տարվայ ընթացքում Մասիսեանների տան մէջ շատ բան փոխվել էր, ինչպէս փոխվել էր և ինքը՝ Միքայէլը: Տիկին Մարիամը բաւական ծերացել էր. հոգսը, տխրութիւնը և տանջանքը բոլորովին մաշել էին նրան: Քայիանէն այժմ նմանում էր կուսանոցի պառաւ ապաշխարողի, որին պակաս էին «տէրօղորմեան» և սե հագուստը: Իսկ Հռիփսիմէն աւելի ձեւակերպվել էր, աւելի վայելչակազմ հասակ էր ստացել և աւելի գեղեցկացել էր: Նրա մանկական յամառ կամապաշտութիւնը այժմ տեղի էր տուել խիստ նազելի և փափուկ քնքշութեան: Նա գտնվում էր այժմ այն բախտաւոր հասակում, որին կարելի էր սիրել և որից կարելի էր սիրվիլ:

Տան մէջ ոչինչ չէր փոխվել, ամեն ինչ գրտանվում էր իր հին ձևի մէջ, ամեն ինչ իր տեղն էր. միայն մի բան պակաս էր, և դա էր—աղան:

Մի շաբաթ անցել էր, ինչ որ Միքայէլը հասել էր Ե...քաղաքը, և այս մի շաբաթում Մասիսեանների համար նա համարեա աննկատելի մնաց: Ամբողջ օրը զբաղված էր հանգուցեալ աղայի գործերով: Առաւօտեան վաղ դուրս էր գնում և վերադառնում էր գիշերը



շատ ուշ, բոլորովին յոգնած, և երբեմն այն աստիճան վրդովված, որ անկարելի էր նրա հետ խօսել կամ տեսնվել: Նրա համար պատրաստել էին այն սենեակը, ուր մի ժամանակ բնակվում էր Ստեփանը: Ամեն անգամ, երբ տուն էր դառնում նա տ. Մարիամը անհամբերութեամբ մտնում էր նրա մօտ և հարցնում.

— Ի՞նչ շինեցիք:

— Դեռ ոչինչ... լինում էր Միքայելի սովորական պատասխանը:

Մի գիշեր գրում էր նա այս երկար նամակը Ստեփանին:

«Ես գտայ ձեր հօր գործերը այն դրութեան մէջ որպէս նախագուշակում էի: Խանութները համարեա դատարկված էին, և այն ապրանքները, որոնք փոքր ի շատէ արժէք ունէին, յափշտակված էին: Գիտէք ո՞ւմ ձեռքով. — ձեր հօր հաւատարիմների, գործակատարների ձեռքով: Աղայի յանկարծակի մահը հնար էր տուել այդ աւազակներին կատարել իրանց փափազը, իսկ տեղական վարչութեան անհոգութիւնը աւելի դիւրութիւն էր ընծայել յափշտակութեան գործին:

«Ես ոչոքի չեմ մեղադրում: «Խելացի մարդը կը գողանայ», ասում էր ինձ յաճախ հանգուցեալ աղան, և գողութիւնը ընդունում էր-

որպէս գլխաւոր պայման կեանքի մէջ: Եւ այս մտքով նա պատրաստեց իր ձեռքի տակ եղող մարդերնց կատարեալ գողեր, վարժված և փորձված գողեր, բայց չէր հասկանում ողորմելին, որ այն զէնքը, որ նա պատրաստում էր օտարների համար, մի օր աւելի սարսափելի կերպով կը դառնար դէպի ինքը...

«Ես պէտք է հանդիպէի շատ արգելքների, մինչև կարողանայի ուղղել և կարգի դնել ձեր հօր աւերված գործերը: Ամեն ինչ այնպէս փճճված է, ամեն բանի մէջ այնպիսի անլուծանելի հանգոյցներ են գցել, որ հազիւ թէ կարելի էր բաց անել: Եւ դժուարինն այն է, որ այս բոլորի հետ կապված են այնպիսի քրէական յանցանքներ, որ եթէ պարզվելու լինէին կատարված չարագործութիւնները, շատերը պէտք է ճանապարհ դրվէին դէպի Սիբիր, որը կարծեմ, ոչ ձեզ և ոչ ինձ հաճելի կը լինէր:

«Երևակայեցէք մի այսպիսի խաբէյութիւն. ձեր հայրը իր կենդանութեան ժամանակ ունէր մի փաստաբան (դուք չէք ճանաչում այդ անպիտանին) մի մարդ, ինչպէս ասում են, որ ամեն ծակ մտել և դուրս էր եկել, մի «չաթուքէսան», որ իր կեանքի մեծ մասը փտեցրել ու մաշել էր ստոր ծառայութիւնների մէջ, ուր յաճախ գործվում են անիրաւու-



թիւներ, ուր ծառայողը, որքան էլ ազնիւ լինէր, չէր կարող չը սովորել զանազան տեսակ խաբէյութիւններ: Այդ մարդը ձեր հօր փաստաբանն էր, որ անխղճաբար կողոպտում էր նրա պարտականներին, իսկ աղալի մահից յետոյ, խելքից հանելով ձեր միամիտ մօրը, դառնում է նրա և ձեր քոյրերի կողմից հաւատարմատար, այլ և խնամակալ անչափահաս աղջիկների վրա: Ոչխարի հօտը յանձնվում է դայլի ձեռքը: Այնուհետև այս աւագակը, միանալով գործակատարների հետ, կատարում են ձեր հօր կալքի վերաբերութեամբ աննկարագրելի անիրաւութիւններ:

«Մի փոքրիկ գաղափար տալու համար գործված չարութիւնների մասին, բաւական է լինել մի քանի փաստեր. շատ մարդկանց ձեռքում երևում են կեղծ պարտամուրհակներ, իբր թէ ձեր հօրից տուած, որոնցով պարտաւորվում է նա վճարել բաւական խոշոր գումարներ այս և այն անձանց: Ինձ յայտնի է, որ հանգուցեալ աղան փողի կարօտութիւն չունէր և ոչ ոքից պարտքով փող չէր առնում: Բայց որտեղից յայտնվեցան այդ պարտամուրհակները: Այդ բոլորը շինել և սարքել էին գործակատարները. նրանցից ամեն մէկը գիտէր իր ձեռագիրը ձեր հօր ստորագրութեանը նմանեցնել: Աեզ յայտնի է, որ հանգուցեալ աղան

անգրագէտ մարդ էր, և բացի իր անունը ստորագրելուց, ուրիշ ոչինչ չը գիտէր, իսկ անգրագէտ մարդու ստորագրութեանը նմանեցնել՝ շատ հեշտ է: Բանն այն է, որ լիշեալ պարտամուրհակները ներկայացրել են դատարանը պահանջման համար, և որբերի խնամակալը, և մի և նոյն ժամանակ ձեր մօր փաստաբանն ու հաւատարմատարը հաստատել է կեղծ պարտամուրհակների վաւերականութիւնը:

«Բրքերը այս բոլորը և երևան հանել գործված անիրաւութիւնները, որքան դժուար են, այնքան էլ հեշտ են, միայն որպէս լիշեցի վերևում, գործերի հետ կապված են մեծ քրէական յանցանքներ, որ շատերի կորստեան պատճառ կը լինեն: Ես թողում եմ ձեր վճռին, և կը սպասեմ ձեր հրահանգներին:

«Ես դեռ լիշում եմ այն խօսքերը, որ ինձ ասեցիք Մօսկվայում, «հեղեղի բերածը էլի հեղեղը կը տանէ»... Այսպէս էլ եղել է: Հանգուցեալը իր հարստութիւնը այնպիսի անհաստատ և խաբիսու հիմքերի վրա էր դրած, որ ուրիշ կերպ սպասել չէր կարելի. պէտք է նրա մահից յետոյ ամեն ինչ ոչնչանար, և ամեն ինչ ցնդվէր օդի մէջ... Ձեր մայրը ոչ մի գործից տեղեկութիւն չունի. նա, որ իր ամուսնի մահից յետոյ պէտք է տէր լինէր և պէտք է պահպանէր նրա թողած ժառանգու-



թիւնը, իր անփորձութիւնից, իր տգիտութիւնից, մատնել է բոլորը գազանների բերանը: Նւ ի՞նչով է մեղաւոր նա: Կինը, որ իր ամուսնի կենդանութեան ժամանակ նրա ընկերը և գործակիցը չէ համարվում, որին փակում են տան չորս պատերի մէջ, որը չը գիտէ, թէ ինչ է շինում իր մարդը գրսում, — երբ հասնում է վերջինի մահը, շատ հասկանալի է, որ ամեն ինչ կը մնայ օտարների ձեռքում: Ձեր հայրը ինքն էր պատրաստել իր կործանումը.... Գոնէ մնացած լինէին օրինաւոր հաշուէտօմարներ, այդ էլ չը կայ, և եղածները մէջտեղից առնված են»...

Յետոյ նկարագրում էր աղայի մահը, և նրա տեսիլքը «ոսկի աքաղաղի» մասին, և թէ այդ բախտաւորութեան և հարստութեան աներեւոյթ պաշտպանից մնացել էր աղայի ձեռքում մի ոսկի փետուր միայն...

Նւ համեմատելով այդ տեսիլքի երազական ալեգորիան իրականութեան հետ, նամակագիրը աւելացնում էր. — «ոսկի աքաղաղից» մնաց ձեր հօր ձեռքում մի ոսկի փետուր միայն... այնպէս էլ «ոսկի աքաղաղի» արտադրած հարստութիւնից կը մնայ նրա ժառանգների ձեռքում մի փոքրիկ մասը միայն... Բայց ի՞նչ էր իսկապէս այդ «ոսկի աքաղաղը», որ իշխում էր ձեր ընտանիքի բախտաւորութեան

վրա, որ իր բարերար ազդեցութեամբ յաջողեցնում էր ձեր հօր գործերը, — ուրիշ ոչինչ, բայց միայն խաբէյութիւնը, խորամանկութիւնը, խարդախութիւնը, անազնութիւնը, և այլ անբարոյական յատկութիւններ, որոնք մարմնացած, և մի աներեւոյթ ոգու կերպարանք ստացած, տիրում էին գործերի վրա... Մեռաւ հմուտ գործադրողը, նորա հետ և մեռաւ «ոսկի աքաղաղը»... Նս այսպէս եմ բացատրում ձեր տոհմային հին աւանդութեան իմաստը, թող սնահաւատները այլապէս մտածեն»:

Իր նամակի վերջում Միքայէլը տեղեկութիւն էր տալիս Ստեփանի մօր և քոյրերի մասին, և երկար խօսում էր Հռիփսիմէի մասին, թէ որքան գեղեցկացել էր նա և որքան շնորհալի աղջիկ էր դարձել և այլն:

Նամակը կնքում էր նա, երբ հերս մտաւ տ. Մարիամը. նա տխուր դէմքով եկաւ, նրստեց Միքայէլի մօտ:

— Գրեցի՞ք Ստեփանին, որ շուտ գայ, չուշանայ, հարցրեց նա:

— Իմ գրելը աւելորդ էր, նա կը գայ, երբ իր գործերը կը վերջացնէ, պատասխանեց Միքայէլը:

— Ա՛խ, ի՞նչ կը լինի մեր վերջը մինչև նրա գալը...

— Ես կարծում եմ, որ շատ լաւ կը լինի,



Ստեփանը ինքը ձեզ համար մի մեծ հարստութիւն է, ուրիշ ի՞նչ էք ուզում. բախտաւորութիւն է այնպիսի որդի ունենալ:

— Ես ձեր խօսքերին հաւատում եմ, պատասխանեց տիկինը մի փոքր մխիթարվելով. — Ես կը ցանկանայի աղքատ լինել, օրական հացի կարօտ լինել, միայն նա ինձ մօտ գրտնվէր... Ես վախենում եմ մեռնել առանց նրան տեսնելու...

— Կը տեսնէք, շուտով կը տեսնէք, տիկին, նա ձեզ կարօտ չի թողնի:

— Մեր մասին ի՞նչ գրեցիք...

— Շատ բան գրեցի... ամեն ինչ գրեցի...

— Գրեցի՞ք, որ «ոսկի աքաղաղ» մեռաւ:

— Գրեցի...

— Ախ, այդ ինչ դժբախտութիւն էր... հաւաքելով կոչեց տիկինը, և թաշկինակը սեղմեց աչքերին:

— Բայց Ստեփանը մի նոր բախտ, մի նոր «ոսկի աքաղաղ» կը ստեղծէ ձեզ համար, որը այն չի լինի, ինչ որ էր առաջ... պատասխանեց Միքայէլը:

Տիկինը ուրախացած դուրս գնաց:

Այն օրից, որ եկել էր Միքայէլը, Գայիանէն և Հռիփսիմէն միանգամ ևս առիթ չէին ունեցել տեսնվելու և խօսելու նրա հետ. երբեմն հեռուից միայն տեսնում էին, բայց

հէնց որ նա մօտենում էր, նրանք փախչում, մտնում էին իրանց սենեակը: Միքայէլը չէր զարմանում այդ օտարոտի վարմունքի վրա. որովհետեւ իր երկրի սովորութիւնն իրան վաղուց յայտնի էր: Տարիներով միասին ապրած, միասին մեծացած, երկու քոյրերն և ընտանեցած Միքայէլը այժմ այն աստիճան խորթացել և օտարացել էին, որ չէին կամենում ճանաչել միմեանց: Իսկ այդ խորթութիւնը առաջ չէր գալիս Միքայէլի մի քանի տարվայ բացակայութիւնից, այլ նրանից, որ նա այժմ բաւական աճել և չափահաս էր դարձել, և երկու աղջիկներն ևս գտանվում էին այն հասակում, որ նրանց այժմ անպատշաճ էր թողնել օտար տղամարդի մօտ: Եւ այն պատճառով, հէնց առաջին օրը, երբ եկաւ Միքայէլը, նրանց մայրը պատուիրեց աղջիկներին.

— Գիտէք ի՞նչ կայ, թէև Միքայէլը ձեր եղբօր տեղն է, բայց հիմայ դուք մեծ աղջիկներ էք դարձել, ձեր հասակում ամօթ է, որ աղջիկը մեծ տղի հետ խօսէ:

Երկու քոյրերը մի քանի օր պահեցին լիշեալ պատուէրը, բայց յետոյ նրանց մէջ սկսեց վեցաւ մի այնպիսի խօսակցութիւն, որ շատ նման էր բողոքի:

— Գիտես, Գայիանէ, այսօր Միքայէլը գալիս էր դրսից, ես կանգնած էի փողոցի դրան



մօտ, դուռը զարկեց, ես բաց արի, «բարով  
Հռիփսիմէ», ասաց ինձ ժպտելով, բայց ես  
ոչինչ չը պատասխանեցի: Նա գլուխը քարշ  
գցեց և անցկացաւ, գնաց իր սենեակը: Յետոյ  
ես այնքան ամաչեցի, այնքան ամաչեցի... անխ,  
Հիմայ ի՞նչ կը մտածէ նա. չի՞ ասի այս աղջի-  
կը իստակ չիմար է:

— Զի ասի, պատասխանեց Գայիանէն սառ-  
նութեամբ. — Նա մեր երկրի սովորութիւնն լաւ  
է իմանում:

— Ի՞նչ սովորութիւն, Հարցրեց Հռիփսիմէն  
մի փոքր զայրացած կերպով. — միթէ Միքայէ-  
լը մեզ Համար օտար է, ի՞նչու չը պէտք է  
խօսենք նրա հետ:

— Օտար չէ, Հռիփսիմէ, քոյրիկ, բայց ի՞նչ  
կասեն ուրիշները:

— Ի՞նչ պիտի ասեն, ո՞վ ի՞նչ գործ ունի,  
եթէ մենք մեր տան մէջ կը խօսենք մեր տան  
տղի հետ:

Գայիանէն նկատելով քրոջ վրդովմունքը,  
որ առաջ էր եկել այն օրվայ Միքայէլի հետ  
հանդիպելուց, իր խօսքերի մէջ ընդունեց ա-  
ւելի խրատական ձև, պատասխանելով.

— Ճշմարիտ է, մենք մեր տան մէջ ում  
հետ որ խօսելու լինենք, այդ ոչ դի չէ վե-  
րաբերում, բայց դու չե՞ս իմանում, որ տան

պատերն էլ ականջ ունեն, ինչ որ լսեն, խա-  
բարը, որտեղ ասես, կը տանեն:

— Հա թող տանեն, ի՞նչ կայ:

— Այն ժամանակ մեր անունը կը կոտրվի,  
Հազար տեսակ բամբասանքներ կը շարադրեն  
մեր մասին:

— Ախար Միքայէլը մեր եղբոր տեղն է:

— Հա թող լինի, օտար հօր որդի է:

— Ուղիղն ասեմ քեզ, Գայիանէ, ես շատ  
եմ ուզում, որ խօսեմ Միքայէլի հետ. տես-  
նում եմ, ինչ շնորքով տղայ է դարձել:

— Տեսնում եմ... պատասխանեց Գայիանէն  
խորհրդաւոր ձայնով:

— Ես կ'արժում եմ նրա հատը չը կայ մեր  
քաղաքում:

— Զը կայ...

Այս խօսակցութեան միջին վրա հասաւ  
նրանց մայրը և երկու քոյրերը իսկոյն լռեցին:

Ը.

Անցաւ ձմեռը, անցաւ գարունը, անցաւ  
վեց ամիս այն օրից, որ վախճանվել էր ա-  
ղան: Օրը կիրակի էր: Այս օրը նշանաւոր էր  
Մասիսեանների համար նրանով, որ այսօր  
պէտք է նրանք դուրս գային սգից, պէտք է  
փոխէին իրանց սևերը և հագնէին սովորական



Հագուստ: Իսկ Միքայելի Համար նշանաւոր էր նրանով, որ Գայիանէն և Հռիփսիմէն այսօր առաջին անգամ պէտք է Հագնէին այն Հագուստը, որ ինքը կարել էր տուել նրանց Համար և բերել էր Մօսկվայից:

Կնիկների մի բազմութիւն առաւօտեան վաղ եկել էին Մասիսեանների տունը կատարելու լիշեալ ծէսը. նրանց սեւերը փոխեցին, յետոյ եկեղեցի տարան, այնուհետեւ զնացին Հանգուցեալ աղալի գերեզմանի վրա Հոգեհանգիստ կատարելու: Գերեզմանատնից զնացին Մասիսեանների այգին, որ հեռու չէր այնտեղից, որովհետեւ վճռված էր այգիում ճաշել: Գայիանէն և Հռիփսիմէն իրանց նոր Հագուստի մէջ հիանալի էին: Կնիկների Հասարակութեան մէջ բացի Միքայելից մի ուրիշ տղամարդ չը կար. նա էլ հեռուից հեռու էր գրնում և նրանց խումբի մէջ չէր խառնվում:

Մտնելով այգին, հիւրերը հաւաքվեցան ճիւղերից հիւսված տաղաւարի մէջ, որ հովանաւորված էր ծիրանի ահագին ծառերով: Այնտեղ տ. Մարիամը սկսեց զբաղվել կերակուրների պատրաստութեամբ և հասակաւոր հիւրերից մի քանիսը, որպէս ընդունված է տնից դուրս ճաշելու ժամանակ, սկսեցին օգնել նրան, իսկ ոմանք, որոնք մանկահասակներ էին, զնացին այգին պտտելու և միրգ

ուտելու, մինչև սեղանը պատրաստ կը լինէր: Բայց Գայիանէն և Հռիփսիմէն, մի խումբ աղջիկների հետ միացած, բաժանվեցան կնիկներից և սկսեցին այգու մի ուրիշ կողմը բզբօսնել:

Միքայելին զգալի եղաւ իր գրութեան անտանելութիւնը, ոչ ոք չէր մօտենում նրան բացի պառաւ կնիկներից, որովհետեւ նա տղամարդ էր, որովհետեւ ջահել աղջիկների և մանկահասակ հարսների յարակցութիւնը նրա հետ անպատշաճ էր: Նա առանձնացաւ այգու մի հեռաւոր կողմը և այնտեղ գտաւ ծերունի այգեպանին:

— Բարեւ, Խաչօ:

— Աստուծոյ բարին քեզ, աղա:

— Ծառերի պտուղները այս տարի սակաւ են երևում, այսպէս չէ՞, Խաչօ:

— Մեր մեղքից խաղողն էլ պակաս է, աղալ, պատասխանեց այգեպանը ներքին գլխով:

— Ի՞նչ է պատճառը:

— Ո՞վ է իմանում... Աստուած գիտէ... Բայց ես իմ կարճ խելքով այսքանը գիտեմ, որ այն օրից, երբ Պետրոս աղան վախճանվեցաւ, Աստուծոյ խէր-բարաքաթը այս այգիից վերացաւ: Բայց առաջ պէտք էր տեսնել, կատարեալ դրախտ էր այդ այգին. ծառերի ճղները այն-



քան ծանրանում էին պտուղներից, որ պէտք էր ամենի տակին նեցուկ տալ, որ չը կոտորվէին. խաղողը խօ չափ չուներ. ամեն եկող զնացող ուտում էր, տանում էր, էլի մնացածով ամեն տարի հարկւր կարասից աւելի գինի էինք լեցնում, հիմալ ի՞նչ կայ...

— Ես կարծում եմ, պատասխանեց Միքայէլը, այս բոլորը նրանից է, որ այս տարի ծառերի տակը չես բրել տուել, Խաչօ, խաղողի որթերն էլ, տեսնում ես, խոտի մէջ կորել են, քաղհան չես անել տուել:

— Ձէ, աղա, գրանից չէ:

— Ասլա ընչից է:

— Գու, երեւի, չէս լսել այն դժբախտութիւնը:

— Ո՞ր դժբախտութիւնը:

— «Ոսկի աքաղաղի» մահը...

— Լսել եմ...

— Հիմա իմացում, նրանից է: Նա երբ մեռաւ, ամեն բան տակնուվրա էլաւ, ոչ ծառն է պտուղ տալիս, ոչ որթը խաղող. կարկուտը մէկ կողմից, թրթուրը միւս կողմից սկսեցին փչացնել բոլորը:

Միքայէլը ոչինչ չը պատասխանեց:

— Աւելի քան քսան տարի ես այս այգիում ծառայում եմ, շարունակեց ծերունի այգեպանը. — բոլոր ծառերին այնպէս եմ սիրում, որ-

պէս իմ զաւակներիս. տես, այս մատներովս եմ պահել, մշակել և հասցրել բոլորը (նացուց տուեց իր կոշտացած մատները) բայց հիմալ, ուղիղն ասած, սիրտ չէ մնացել ինձանում, ամեն բան աչքիցս ընկել է, մանաւանդ այն օրից, երբ ականջիս հասաւ այն ցաւալի լուրը...

— Ի՞նչ լուր:

— Ասում են, այս այգին պիտի ծախվի պարտքի տեղ. հէնց որ լսեցի, կարծես սրտումս մի դանակ ցցեցին: Ո՞վ էր տեսել մի այսպիսի բան: Հանդուգեալ աղայի հարստութիւնը այնքան շատ էր, որ եթէ Արազի առջևը լեցնէիր, ջուրը կը կանգնացնէր. ի՞նչ եղաւ, որտեղ կորաւ, որ հիմալ այգին էլ են ծախում:

— Ձի ծախվի, Խաչօ, դարդ մի արա, միութարում էր նրան Միքայէլը:

— Այ, Խաչօն կը մեռնի, եթէ այս այգին կը ծախվի, պատասխանեց նա հառաչանքով և կոշտացած ձեռքով սկսեց սրբել աչքերի արտասուքը:

Խաչօի տխրութիւնը առանց պատճառի չէր. այգիի վրա արդէն կապանք էր դրված պարտքի փոխարէն վաճառելու համար, բայց Միքայէլի աշխատութեամբ աճուրդը մի քանի ամսով յետ էր ձգած:

Միքայէլը ոչ սակաւ տրտում, քան թէ ծե-



րունի այգեպանը, մի քանի մխիթարական խօսքեր ասաց նրան և հեռացաւ:

Այսուամենայնիւ, այգիումը ամեն ինչ անդորր էր և զուարճալի. օդի խաղաղութեան մէջ մի տերև անգամ չէր շարժվում. իսկ արեգակի այրող ճառագայթները, ոսկեղէն կայծերով, թափվելով տերևախիտ ծառերի վրա, չէին անցնում նրանց անթափանցիկ և կանաչազարդ կամարներից: Նրանց հովանու տակ զովասուն օդը խիստ թարմ ու կազդուրիչ էր: Այստեղ առանձնացած երգեցիկ թռչունները, ուրախ-ուրախ թռչկոտում էին մի ուրիշ գէպի միւսը, և օդի խուլ լուրթեան մէջ լսելի էր լինում նրանց քաղցր ձայնը: Բայց գեղեցիկ բնութեան թովիչ հրապույրը ամենևին չէր ազդում Միքայէլի վրա, ամենևին չէր գրաւում նրան: Նա մոլորվածի նման, խիստ տխուր ինքնամոռացութեան մէջ, պտըտում էր ծառազարդ ճեմելիքներով, և նրա աչքերը անխորհուրդ կերպով նայում էին տունկերի ուղիղ շարքերի վրա, որոնք երկու կողմից կազմում էին, կարծես, կանաչազարդ պատեր:

Նա տեսաւ հեռուից աղջիկների խումբը, որոնք անտառային յաւերժահարսանց նման վազվզում էին, ճախրում էին և զուարճանում էին ծառերի մէջ: Նա մի կողմ քաշվեցաւ, որ իրան չը տեսնեն: Ուրախ խմբից երկուսը

բաժանվելով, հանդարտ քայլերով անցնում էին նրա մօտից: Նրանք որոնում էին խոտերի մէջ թագնված երեք թերթիկներ (\*) և աշխատում էին գտնել չորս թերթ ունեցողը: Մէկը Հռիփսիմէն էր, միւսը անծանօթ աղջիկ:

— Ի՞նչու համար ես այսքան պտըտում, հարցրեց անծանօթը:

— Ա՛խ, թէ գտնէի... պատասխանեց Հռիփսիմէն, չը դադարելով իր քնքշիկ ձեռքերով քրքրել խոտերը:

— Ախր ասա՛, ի՞նչ պիտի անես:

— Ուզում եմ բաղդս փորձել:

Անծանօթ աղջկայ գէմքի վրա երևաց մի հեգնական ժպիտ, և խուլ ակնարկութեամբ պատասխանեց.

— Դու արդէն քո բաղդին հասել ես... էլ ինչ պէտք է...

— Ձէ, Նազանի, սուտ են խօսում, ասաց Հռիփսիմէն շառագունելով:

— Սուտը ո՞րն է, ողջ քաղաքում խօսում են...

— Ի՞նչ են խօսում:

— Ասում են, որ ձեր տան տղան, — ի՞նչ է

\*) Երեք թերթիկ մի բոյսի անուն է, որ գործ է ածվում կախարդութիւնների մէջ.



անունը, — հա, Միքայելը քեզ սիրում է:

— Ձեմ իմանում, Նազանի, խաչը վկայ, չեմ իմանում...

— Բայց դու, սիրում ես:

— Ես....

«Եսի» պատասխանը Միքայելը չը լսեց: Նրանք անցան: Բայց այս խօսակցութիւնը սաստիկ ազդեց Միքայելի վրա: Մինչև այնօր Հանգուցեալ աղալի գործերը և նրա ամբախտացած ընտանիքի հոգսերը այն աստիճան զբաղեցրել էին Միքայելին, որ նա երբեք ժամանակ չէր ունեցել խօսելու իր հոգու և սրտի հետ: Մինչև այնօր նա միանգամ ևս չէր հետաքրքրվել Հռիփսիմէով, միանգամ ևս, ինչպէս ասում են, մուշտարու աչքով չէր նայել նրա վրա: Բայց այսօր նա առաջին անգամ տեսաւ նրան, որպէս պէտք էր, այսօր Հռիփսիմէն երևեցաւ նրան իր գեղեցկութեան բոլոր հրապուրանքով, այսօր նա կախարհելու չափ աննման էր:

Կէսօրից բաւական անցել էր. ժամանակ էր ճաշելու. և ամեն կողմից աղջիկների ու կնիկների բազմութիւնը սկսեցին հաւաքվել տաղաւարի մօտ, ուր պատրաստած էր սեղանը: Միքայելը սպասում էր երկու ծանօթների, որոնք խօսք էին տուել գալ այդին և նրա հետ միասին ճաշել: Վերջապէս այստեղե-

ցան նրանք: Միքայելը իր քայլերը ուղղեց դէպի նրանց կողմը: Նրանք երկու աստիճանաւորներ էին, որ ծառայում էին դատարանում:

— Մենք ուշացանք, այնպէս չէ, ասաց նրանցից մէկը սեղմեցով Միքայելի ձեռքը:

— Շատ չէք ուշացել, կնիկները դեռ նոր են նստել սեղան, պատասխանեց Միքայելը, ձեռքը մեկնելով դէպի տաղաւարի կողմը, և ցոյց տալով նրանց:

— Օ — հօ, ինչ ահագին բազմութիւն է, բացականչեց աստիճանաւորներից մէկը. բա՛ մենք նրանց հետ չե՞նք ճաշելու:

— Շատ ցանկալի կը լինէր, բայց ո՞վ կը թողնէ, ասաց Միքայելը, և մի և նոյն ժամանակ նրա տխուր դէմքի վրա երևեցան մի տեսակ ցնցումներ:

— Ասացէք, խնդրեմ, այդ ի՞նչ բանի նման կը լինի, երբ մենք առանձին պիտի ուտենք, նրանք առանձին:

— Իմ կարծիքով, մի առանձին հաճութիւն էլ չէ կարելի զգալ մեր կանանց հասարակութիւնից. ի՞նչ կարող ես խօսել. ոչ դու նրանց կը հասկանաս, ոչ նրանք քեզ. պիտի լուռ ու մուռջ նստես, ու նայես երեսներին: Մենք աւելի կը խանդարենք նրանց քէֆը, եթէ խառնվելու լինենք նրանց մէջ:



Այսպէս խօսելով, Միքայէլը իր հիւրերի հետ դիմեցին ահագին տանձենու տակը, ուր նրանց համար առանձին սեղան էր պատրաստված: Ծերունի այգեսպանը սպասաւորի պաշտօն էր կատարում:

Սեղանի վրա խօսակցութիւնը ըստ մեծի մասին Մասիսեանի մահուան, «ոսկի աքաղաղի», Սիմօն Եագօրիչի, և աղալի գործակատարների չարագործութիւնների մասին էր, որոնք այն ժամանակ հասարակաց խօսակցութեան առարկայ էին դարձել:

— Գիտէք, Միքայէլ, ասաց ծառայողներից մէկը. — նրանց չորսին էլ այսօր կալանաւորեցին, այժմ բանտումն են:

Խօսքը Սիմօն Եագօրիչի և Մասիսեանի երեք գործակատարների մասին էր:

— Այժմ շատ ուշ է... պատասխանեց Միքայէլը սառնութեամբ: — Դրան ասում են՝ «հարսանիքից լետոյ երաժշտութիւն»... Այժմ ոչինչ նշանակութիւն չունի կալանաւորելը, որովհետեւ կողոպտած ապրանքների մեծ մասը արդէն ոչնչացրել են:

— Բայց նրանք Սիբիր կը կորչեն:

— Ի՞նչ օգուտ, դրանով Մասիսեանի զաւակների փորը չի կշտանայ:

— Զարմանալի է, ես մինչև այսօր երեւակայել չեմ կարող այս տեսակ աւագակութիւն:

— Զարմանալին այն է, որ աւագակները այսքան ժամանակ պաշտպանվում էին... պատասխանեց Միքայէլը դառն վրդովմունքով: — Ես այնքան չեմ ցաւում, որ այդ չարագործները դատարկեցին Մասիսեանի հարուստ կրպակները, բայց ամենամեծ կորուստն այն է, որ գողացան մի արհղ լի պարտամուրհակներով, և չնչին վարձատրութիւններ ստանալով, տուեցին Մասիսեանի պարտականներին. այլ ևս չեմ խօսում այն բանի վրա, որ հանգուցեալի անունով կեղծ պարտամուրհակներ շինեցին և տուեցին այս և այն խաբեբայի ձեռքը: Այս գործը մի այնպիսի բաղադրեալ քրեական գործ է, որ եթէ օրինաւոր կերպով քննվելու լինի, շատերը կը մերկացվին, որոնց վրա դեռ ևս ոչ ոք կասկած չէ տանում...

— Իսկ այդ անպիտանները ի՞նչ արեցին այնքան փողերը:

— Չէք լսել, «գողը գողից գողացաւ, Աստուած տեսաւ, զարմացաւ»: — Փողերը տուեցին իրանց նման գողերին, որոնք նրանց պաշտպանում էին... Մասիսեանի տունը քանդվեցաւ և նրանից տասը-քսան տուն շինվեցաւ...

— Ուրեմն այդ ընտանիքը բոլորովին կադրատանալ:

— Դեռ ևս չը գիտեմ... եղաւ Միքայէլի խօսքը:



ձաշից յետոյ Միքայէլի հիւրերը ցանկացան լողանալ գետի մէջ, որ հոսում էր այգիի կողքից։ Ինքն ևս նրանց հետ գնաց, թէև լողանալու ցանկութիւն չունէր։ Նոյն միջոցին կնիկներն նոյնպէս վերջացրել էին իրանց ճաշը. նրանք էլ տարածվեցան այգիի մէջ և սկսեցին զբօսանք անել։

Միքայէլը հասնելով գետի ափը, բաժանվեցաւ իր ընկերներէից։ Նա պառկեց խոտերի վրա, հովանաւոր ընկուզենու տակին, և լուռ մտախոհութեան մէջ մտիկ էր տալիս գետի հոսանքին, տեսնում էր, թէ որպէս ջրի կոհակները զարկվելով ժայռերին, փրփրալով և կատաղելով, յառաջ էին վազում։

Այս գետին նայելով, Միքայէլը մտաբերում էր Արաքսը, որի ափերի մօտ անցուցել էր իր մանկութեան ամենագեղեցիկ օրերը, մտաբերում էր իր ընկերներին, այն սիրելի և բարեսիրտ ընկերներին, որոնց հետ այնքան երջանիկ էր ինքը. մտաբերում էր Շուշան տատին և Աւետ աղօրը, որոնք վաղուց գերեզման էին դրած... Եւ մանկութեան օրերը երազի նման գալիս ու անցնում էին նրա լիշողութեան մէջ, որպէս իր մօտից անցնող գետի սրընթաց հոսանքը, որ արտայայտում էր մի աղմկալի կեանք...

Այգիի այդ մասը բոլորովին սահմանափակ-

վում էր գետով, և ծառերը տեղ-տեղ կպած էին եզերքին։ Յանկարծ նրա ականջին զարկեց մի ճիչ, որ խառնվեցաւ խուլ աղաղակների հետ։ Կայծակի արագութեամբ վեր թռուաւ իր տեղից և վազեց դէպի կոչող ձայնը, որ վտանգ էր գուշակում։ Նրա աչքերի առջև հանդիսացաւ մի ալեպիսի տեսարան. մի քանի աղջիկներ, սարսափած, ուշակորոյս եղած կուչ էին եկել թփերի մէջ... Հռիփսիմէն ընկած էր գետին... և մի ահագին կատաղած շուն առել էր նրան իր թաթերի մէջ... Որթերի տակին նեցուկ տուած ցիցերից մէկը դուրս քաշելը և կատաղած գազանի գրկին խփելը մի ըոպէի գործ եղաւ, երկրորդ զարկին շունը գլորվեցաւ և անշարժ մնաց։

Օրիորդը անվնաս էր, միայն նրա աջ թևքի վրա երևում էր թեթև կեղեքումաձք, որից դուրս ցայտող արիւնը կարմիր բծերով ներկել էր նրա ամառնային հագուստի թևքը։ Միքայէլը գիտէր, թէ որքան վտանգաւոր բան էր կատաղած շան կծելը, և առանց ժամանակ կորցնելու, գրկեց ուշակորոյս աղջկան և հասցրեց մօր մօտ, որի գրութիւնը ոչ սակաւ ցաւալի էր, երբ լսեց իր դստեր հետ պատահածը։

Բոլոր հիւրերի վրա տիրեց սարսափ և ամեն մէկը շտապում էր տուն դառնալ։ Հռիփ-



սիմէին դրեցին ձիան վրա և իսկոյն տարանք աղաքը:

Թ.

Հռիփսիմէի վերքը անվնաս էր, բժշկի հետազօտութիւնից երևաց, որ նա առաջ էր եկել շան ճանկրտելուց և ոչ կծելուց: Մի շաբաթից յետոյ նա կարողացաւ ոտքի կանգնել, բայց տակաւին իրան թուլ էր զգում. դէմքը գունաթափվել էր և աչքերի մէջ փայլում էր, կարծես, մի տեսակ շրջմուխի հուր:

Հռիփսիմէի թւքի վերքը բժշկվեցաւ, բայց նրա փոխարէն բացվեցաւ մի ուրիշ վերք անմեղ աղջկայ սրտումը, մի վերք, որ առաջ է գալիս Աստղիկի որդու սուր սլաքից...

Մինչև այնօր անխոցելի էր մնացել Հռիփսիմէի սիրտը, իսկ այժմ սկսեց տանջել նրան մի անորոշ, մթին զգացմունք, որ ինքն էլ չը գիտէր թէ որպէս պէտք էր բացատրել: Նա միշտ տխուր էր, միշտ լուռ էր և միշտ աշխատում էր փախչել ընկերութիւնից և առանձնանալ, և շատ անգամ ակամայ արտասուքը թաց էր անում նրա գեղեցիկ, սևորակ աչքերը:

Տիկին Մարիամը չէր կարող չը նկատել իր սիրելի դստեր յանկարծակի փոփոխութիւնը.

«Ի՞նչ է պատահել քեզ, աղջի», հարցնում էր նա, — «ոչինչ»... լինում էր Հռիփսիմէի սովորական պատասխանը:

Քույրերը աւելի մտերիմ են լինում և շատ անգամ բաց են անում միմեանց առջև իրանց սրտերը: Այն գաղտնիքը, որին չը կարողացաւ հասնել մայրը, աշխատեց բաց անել երէց քույրը՝ Գալիանէն:

— Այդ ի՞նչ է, Հռիփսիմէ, աշնան տերևի նման օրըստօրէ գեղնում ես, մի օր հարցրեց նա, երբ միասին նստած էին իրանց տան պարտիզում:

— Ես էլ չեմ իմանում, քույրիկ, պատասխանեց Հռիփսիմէն, գլուխը դէպի ցած խոնարհեցնելով:

— Չէ, մի բան կայ, դու չես ուզում ինձ ասել. մի բան կայ, ես իմանում եմ...

Հռիփսիմէն ոչինչ չը պատասխանեց, և տակաւին գլուխը քարշ գցած, մատներով խաղում էր խոտերի հետ, աշխատելով ցրվել իր սրտի ամբոխմունքը:

— Դու խօս ոչինչ չես ուզում ինձ ասել, Հռիփսիմէ, հէնց գիտես, որ ես չեմ իմանում, խօսեց Գալիանէն կատակի ձև տալով իր խօսքերին, — ուզում եմ բոլորը ասեմ:

— Ի՞նչ ասես:



— Ասեմ, թէ ինչու ես դու այսպէս մաշ-  
վում:

— Ձեմ ուզում լսել, ոչինչ մի ասա, պա-  
տասխանեց Հռիփսիմէն, վերկացաւ, և կամե-  
նում էր հեռանալ:

— Նստի՛ր, մի գնա, բռնեց նրա ձեռքից  
Գալիանէն:

Հռիփսիմէն դարձեալ նստեց քրոջ մօտ: Գա-  
լիանէն շարունակեց.

— Հռիփսիմէ, քոյրիկ, ի՞նչու ես ամաչում,  
ինչու ես թողնում ինձանից քո ցաւը, ես  
իմանում եմ, որ դու մէկին սիրում ես...

Հռիփսիմէն դարձեալ լուռ մնաց, միայն  
նրա գունաթափ դէմքի վրա երևաց թեթե-  
կարմրութիւն, նրա աչքերը վառվեցան, և  
այդ նազելի, անխօս աչքերը ամեն ինչ յայտ-  
նեցին հետաքրքիր քրոջը: Գալիանէն զրկեց  
նրան և համբուրեց: Կրտսեր քոյրը գլուխը  
չը բարձրացրեց իր մտերմի գրկից և սկսեց  
խուլ կերպով լաց լինել:

Երբ մի փոքր հանգստացաւ, խօսեց նա.

— Քոյրիկ, խաչը վկայ, որ չեմ իմանում,  
արդեօք սիրում եմ, թէ ոչ: Բայց այնօրից,  
երբ պատահեց այն անցքը, երբ կատաղած  
շունը քիչ էր մնացել, որ ինձ պէտք է պա-  
տառ-պատառ անէր, ես հանգիստ չեմ: Թէ  
արթուն եմ լինում և թէ քնած, միշտ նրան

եմ տեսնում... և միշտ նրա հետ խօսում...

— Բայց արթուն ժամանակը նրա հետ չես  
խօսում, նկատեց մեծ քոյրը ժպտելով:

— Մտքումս խօսում եմ... պատասխանեց  
Հռիփսիմէն, — բայց հէնց որ տեսնում եմ նը-  
րան, ուզում եմ խօսել, մի բան ասել, լեզուս  
կապվում է, չեմ իմանում, թէ ինչ պէտք է  
ասել... Կարծես, նա էլ ինձանից փախչում է,  
և այդ աւելի է տանջում ինձ... Տեսնում եմ,  
վերջին օրերում նա խիստ ուշ է վերադառ-  
նում տուն, և եկածին պէս, մտնում է իր  
սենեակը և դռները փակում: Առաւօտեան  
խօ նրա երեսը չես տեսնի...

Երկու քոյրերի խօսակցութիւնը Միքայէլի  
մասին էր: Նրանք երկար և երկար խօսում  
էին այսպէս, մինչև երեկոյեան վերջալոյսը  
սկսեց հետզհետէ աղօտանալ, և ծառախիտ  
պարտէզի մէջ տիրեց գիշերային մթութիւնը:  
Դա ամառնային այն խաղաղ և փափուկ գիշեր-  
ներից մէկն էր, երբ ցերեկվայ խեղտող տօ-  
թից լետոյ մարդը կազդուրվում է, ազատ է  
շնչում, զգալով մի տեսակ ոգևորիչ զուար-  
ճութիւն: Երկու քոյրերը դեռ նստած խօսում  
էին: Բայց չէին նկատում, որ մէկը ծառի  
ետեից լսում էր նրանց,

— Գնանք տուն, ասաց Գալիանէն կանգնե-  
լով:



— Դեռ վաղ է, մի փոքր մանգանք, շատ նստեցինք, պատասխանեց Հռիփսիմէն ներքին վրդովմունքով:

Նրանք սկսեցին պտըտել պարտէզի ճեմելիքների մէջ, ուր այժմ լուսինը ծառերի սաղարթախիտ ոստերի միջից թափում էր իր արծաթափայլ լոյսը: Իսկ այն անձնաւորութիւնը, որ ծառի ետեւում թաղնված, լսում էր երկու քոյրերի խօսակցութիւնը, շարժվեցաւ իր կանգնած տեղից և հանդարտ քայլերը ուղղեց դէպի տ. Մարիամի սենեակը:

Այդ անձնաւորութիւնը Մասիսեանների ընտանիքից կտրված, տարիներով հեռացած, և աչքից ընկած անդամներից մէկն էր, որ երկար անջատումից վերջը երկու անգամ միայն յայտնվեցաւ այս տան մէջ, առաջին անգամ, երբ կատարվում էր հանգուցեալ աղայի թաղման հանդէսը, երկրորդ անգամ, երբ Հռիփսիմէն հիւանդ էր: Դա այն դժբախտ զաւակն էր, որի մասին աղան խօսելիս, երբէք անունը չէր լիշոււմ, իր բերանը չը պղծելու համար, այլ միշտ ակնարկում էր այսպիսի արտաբերութեամբ. «այն անզգամը»... Դա տիկին Մարիամի այն աղջիկն էր, որին կոչում էին Նունէ, որը հասակն առնելով, երբ նկատեց, թէ հայրը իրան մարդու տալու վրա չէ մտածում, երկար տանջվելէն յետոյ, վերջապէս

սիրահարվեցաւ իր հօր գործակատարներից մէկի վրա, և տնից փախչելով, գիւղումը պսակվեցաւ նրա հետ:

Մտնելով մօր սենեակը, Նունէն գտաւ նրան մենակ: Նրազի լոյսը ընկնելով նրա գեղեցիկ կազմուած և ուղղաձիգ հասակի վրա, երևան հանեց նազելի պատկերը: Ո՛րպիսի զարմանալի նմանութիւն նրա և Հռիփսիմէի մէջ: Հռիփսիմէն, այդ փոքր ինչ հնացած, փոքր ինչ մաշված արիգիմալի ճիշդ պատճէնն էր, միայն աւելի թարմ և աւելի զուարթ, քան թէ իր երէց քոյրը:

Նունէն պատմեց մօրը Գայիանէի և Հռիփսիմէի խօսակցութիւնը, որ լսել էր պարտէզում:

— Ես այդ նկատում էի... ասաց մայրը, երբ նրա աղջիկը վերջացրեց իր պատմութիւնը:— Բայց ի՞նչ պէտք է արած:

— Այսքանը պարզ է, որ Հռիփսիմէն սիրահարված է, խօսեց Նունէն աւելի մերձ նստելով իր մօր մօտ, և ձայնը մեղմացնելով.— հիմա՞յ պէտք է գիտենալ՝ արդեօք Միքայէլն էլ նոյնպէս սիրո՞ւմ է նրան, թէ ո՛չ:

— Ի՞նչ կերպով գիտենալ, հարցրեց մայրը.— Միքայէլը խիստ ծածկամիտ տղայ է, նրանից շուտով բան հասկանալ չէ կարելի:

— Սէրը ծածկել չէ կարելի. նա ինքն իրան



կը լայտնվի. որքան էլ մարդ ծածկամիտ լինի, իրան պահել չէ կարող: Լսիր, մայրիկ, պէտք է աշխատել անպատճառ այս բանը գլուխ բերել...

Մի քանի րոպէի մէջ ուրախութիւնը և տրտմութիւնը փոփոխակի կերպով արտայայտվում էին տ. Մարիամի բազմաՀոգ դէմքի վրա. նրա սիրտը բաբախում էր, որպէս մի տերև, որ դողդողում է քամուց:

— Միթէ կարելի՞ է բանը գլուխ բերել, Հարցրեց նա, ինքն էլ իր խօսքերին չը հաւատալով:— Ես, իրաւն ասած, Նոռնէ, բոլորովին շուարած եմ, չեմ իմանում, թէ ինչ պէտք է անել... Ա՛խ, եթէ— Տէրը մի արասցէ — Հռիփսիմէն իր բաղձանքին չը հասնի, ա՛խ, ինչ կը լինի նրա վերջը...

— Դու անՀոգ կաց, մայրիկ, նրանք իրանց բանը կը շինեն, պատասխանեց Նոռնէն աւելի փորձված և աւելի գործադէտ կնոջ վստահութեամբ. — միայն պէտք է թող տալ իրանց կամքին, այն ժամանակ «ջուրը իր ճանապարհը կը գտնէ...»

— Դժուար է... պատասխանեց մայրը կասկածաւոր կերպով, — շատ դժուար է: Հիմա Միքայէլին ձեռքից ձեռք խլում են, ամեն կողմից աղջիկներ են առաջարկում, և ի՞նչ աղջիկներ, հարուստ տներից և ահագին բա-

ժինքներով: Բայց մենք ի՞նչ ունենք... այն ուրիշ բան կը լինէր, եթէ աղան կենդանի լինէր, եթէ մենք մեր առաջուայ վիճակի մէջ լինէինք...

Եւ անբախտ կնոջ աչքերից վերջին խօսքերի հետ գլորվեցան արտասուքի խոշոր կաթիլներ: Նոռնէն սկսեց սիրտ տալ նրան:

— Ես չեմ կարծում, ասաց նա, որ Միքայէլը փողի մտիկ տալ. Հռիփսիմէն նրա համար մի մեծ հարստութիւն է:

— Ե՛հ, որդի, բոլոր աշխարհը փողի է մըտիկ տալիս: Տեսնում ե՞ս, հիմա մեզ վրա ոչ ոք չէ ուզում նայել, բայց առաջ... — Առաջ պատիւ էին համարում, երբ մենք խօսում էինք մէկի հետ, երբ մենք մէկին արժանացնում էինք մեր հայեացքին:

— Այդ ճշմարիտ է, բայց ես դարձեալ կասեմ, մայրիկ, որ Միքայէլը փողով խաբվող չէ. նա, ինչպէս ասում են, ինքը բաւական փող ունի:

— «Աւել պատառը փոր չի ծակում», իմանում ե՞ս: Փողից ո՞վ է կշտացել, որ նա կըշտանայ:

— Այսուամենայնիւ, ես յոյս ունեմ, որ այս բանը գլուխ կը գալ, պատասխանեց Նոռնէն: — Պէտք չէ յուսահատվել:

— Տեսնենք... ասաց մայրը դարձեալ յուսա-



Հատ կերպով: — Տեսնենք Աստուած ինչ կը յաջողէ:

Ներս մտան Գայիանէն և Հռիփսիմէն բաւական ուրախ դէմքերով. մօր և երէց դստեր մէջ խօսակցութիւնը ընդհատվեցաւ:

Նոյն միջոցին Միքայէլը մենակ էր իր սենեակում. նրա սեղանի վրա դրած էր մի բաց նամակ. նա կրկին վեր առեց նամակը և սկըսեց կարդալ: Դա նրա մի քանի ամիս առաջ գրած նամակի պատասխանն էր, որ ստացել էր Ստեփանից:

— Բոլոր տողերից արտայայտվում է նրա մեծահոգութիւնը, խօսում էր Միքայէլը ինքն իրան, — այս նամակի մէջ նա նոյն խստասիրտ, արհամարհող և մեծամիտ Ստեփանն է, ինչ որ եղել է միշտ: Ես յայտնել էի Հօր մահուան մանրամասնութիւնները, նրա թողած «Հարստութեան ոչնչանալը, ահա ինչ է պատասխանում ինձ. «Ես, որպէս բժիշկ, իմ Հօր Հարստութեան վրա նայում էի բոլորովին բժշկական կէտից: Երբ հիւանդ մարմնի վրա յայտնվում է թարախով լիքը մի պալար, ես սպասում եմ, որ նա կամ ինքն իրան ծակվի և թարախը դուրս թափվի նրա միջից, կամ գործ եմ գնում իմ նշտարը... Հաւաքված նեխութիւնը կենդանի մարմնի մէջ միշտ վտանգաւոր հետեւանքներ կարող է ունենալ: Իմ

Հօր Հարստութիւնը մի հսկայական պալար էր, լցված՝ անմաքուր շարաւով, և ամբարված ամեն տեսակ ապականութիւններով: Նրա գործակատարները, թէև չարամտութեամբ, բայց կատարեցին մի տեսակ բժշկի պաշտօն, — ծակեցին պալարը և դուրս թափեցին փտութիւնը... Հիւանդը չը դիմացաւ ցաւին և մեռաւ... Բայց ժառանգները առողջացան»... Մի քանի տողից յետոյ շարունակում էր, խօսելով գործակատարների մասին. «Հանգիստ թողէք, ի սէր Աստուծոյ, այն ողորմելիներին, նրանք յանցաւոր չեն, նրանք իմ Հօր ամենալաւ աշակերտներն են, և գեղեցիկ կերպով իրագործեցին նրանից առած դասերը... Ո՛վ սովբեցրեց նրանց գողութիւնը... ես ցաւում եմ այդ ողորմելի արարածների մասին: Խնայեցէք նրանց:»

Դռները բացվեցան և ներս մտաւ Հռիփսիմէն:

— Հը՞մ, ի՞նչ կայ:

— Անթրիքը պատրաստ է, մայրս խնդրեց, որ շնորհ բերէք, պատասխանեց նա բեկբեկված ձայնով:

— Օ՛, ինչ քաղաքավարի լեզուով ես խօսում դու, Հռիփսիմէ, այդ ե՞րբ սորվեցար, ասաց Միքայէլը, նստած տեղից վեր բարձրա-



նալով, և մանուկ օրիորդի երկու ձեռքերն էլ առնելով իր ավերի մէջ:

Հռիփսիմէն շառագունեցաւ և ոչինչ չը կարողացաւ պատասխանել:

— Հանաքը մի կողմ մնալ, ես դարձեալ զգուշացնում եմ քեզ, Հռիփսիմէ, դու շատ վատ ես պահում քեզ. դու դեռ ոչ բոլորովին առողջ ես, կարող ես կրկին հիւանդանալ, երբ այս գիշերվայ պէս ման կը գաս սարտեղում: Այնտեղ շատ խոնաւ է, մանաւանդ վերջին անձրևից յետոյ:

— Դու տես՞ր, երբ ես ման էի գալիս, հարցրեց օրիորդը, ուղիղ Միքայէլի երեսին նայելով:

— Տեսա՞յ: Գայիւանէն ևս քեզ հետ էր, առաջ նստած էիք, յետոյ վեր կացաք և սկսեցիք ման գալ:

— Երևի, դու լսեցի՞ր ևս, թէ ինչ էինք խօսում մենք... հարցրեց օրիորդը թեթև ժրպիտով:

— Ես ոչինչ չը լսեցի. ես սովորութիւն չունեմ լրտեսել ջահիլ աղջիկների գաղտնի խօսակցութիւնը. — այգլիսի բան Նունէն է անում...

— Ա՛սրդ, հարցրեց օրիորդը սուր ձայնով. — ուրեմն նա լսում էր... այ, սատանայ...

Միքայէլը, ինչպէս սովորաբար անում են,

«իզը գտաւ» այսինքն, իր կորցրած առարկայի հետքերի վրա հանդիպեց: Անցնելով պարտեզի միջից, իրաւ, նա տեսել էր՝ երկու քուրբերին միասին նստած և խօսելիս, այլ և նրկատել էր Նունէին, որ ծառի ետևում թաքնված, ախանջ էր դնում նվանց խօսակցութեանը: Այդ դէպքը հետաքրքրեց նրան, և մտածում էր, թէ Նունէն, առանց առանձին պատճառի, մի այնպիսի կասկածաւոր դիրք չէր բռնի իր քուրբերի վերաբերութեամբ: Իսկ այժմ Հռիփսիմէի շփոթութիւնը և նրա սիրուն դէմքի ներկը ստուգեցին Միքայէլի կարծիքը:

— Տեսա՞ր, որ ես բոլորը իմանում եմ... դարձաւ նա դէպի օրիորդը:

— Դու ոչինչ չես իմանում, պատասխանեց Հռիփսիմէն ծիծաղելով. — դու ուզում ես ինձանից խօսք քաշել...

— Ի՞նչպէս խօսք քաշել:

— Որ գիտենաս, թէ ինչ էինք խօսում Գայիւանէի հետ... բայց ես չեմ ասի, որքան էլ խնդրես, չեմ ասի...

— Դու չես ասի, բայց Գայիւանէն կասէ, նա բարի աղջիկ է:

— Իսկ ես չամ եմ:

— Դու կամակոր ես:

— Լաւ, լաւ, եկ գնանք, հիմալ սպասում



են քեզ, ասաց օրիորդը, և բռնելով Միքայելի ձեռքից համարեա զօռով սկսեց նրան դուրս տանել:

Այժմեան Հռիփսիմէն չէր մի քանի շաբաթ առաջվայ ամօթխած և երջոտ Հռիփսիմէն, այլ նոյն փոքրիկ, ուրախ և աշխուժով լի Հռիփսիմէն, ինչ որ էր հինգ-վեց տարի առաջ, երբ միանգամ վարդավառի տօնին ոտքից ցզուռ թրջեց Միքայելին, և զօռով ստիպում էր, որ իր նոր հագուստը հագնէ: Իսկ այժմ Միքայելը կանգնած էր նրա առջև, ճաշակով հագնված, բարեկիրթ մի երիտասարդ, որի իւրաքանչիւր ձևերից երևում էր ազնիւ և շիտակ մարդու ուղղամտութիւնը: Նա ընդունեց օրիորդի հրաւերը և նրա հետ միասին մտան տ. Մարիամի սենեակը, ուր նա իր աղջիկների հետ բոլորել էին ընթրիքի սեղանի շուրջը:

Այգու անցքից յետոյ Մասիսեաններն ընտանեկան յարաբերութիւնները Միքայելի հետ բոլորովին փոխվեցան, այժմ նա վայելում էր այդ գերդաստանի անդամակցութեան կատարեալ ազատութիւնը: Տ. Մարիամը նրան ասում էր. «ես այժմ երկու որդի ունեմ, մէկը դու ես, միւսը Ստեփանը: Գայիանէն, Հռիփսիմէն և Նունէն, առանց քաշվելու մտնում էին նրա սենեակը, մաքրում էին, կարգի էին

դնում, և շատ անգամ կցում էին նրա հետ փոքրիկ խօսակցութիւններ: ձաշը և ընթրիքը միասին էին ուտում, և երբեմն առաւօտեան թէյը միասին խմում, եթէ մի կարևոր գործ չէր պահում Միքայելին իր առանձնաւանդում: Երեկոյեան զբօսանքը պարտէզում և զրոյցները մանուկ օրիորդների հետ արդէն սովորական էին դարձել: Միքայելը ըստ մեծի մասին պատմում էր նրանց իր ճանապարհորդութիւններից և խօսում էր շատ բաներ Մօսկվայի ու Եւրօպայի կեանքից: Իսկ այն գիշեր մի առանձին խօսակցութիւն ընթրիքի սեղանի վրա տեղի չունեցաւ, միայն Միքայելը հաղորդեց Ստեփանից ստացած նամակի բովանդակութիւնից այնքան միայն, որքան կարելի էր:

Ժ.

Մասիսեանի ընտանիքին հասած գժբաղդութիւնը և ահագին հարստութեան մի քանի օրուայ մէջ ոչնչանալը՝ իսկապէս այն դառն և աղետալի ներգործութիւնը չունեցաւ թշուառ ընտանիքի վրա, որքան սպասելի էր: Կեանքը շարունակվում էր իր սովորական ընթացքով. ոչինչ չէր փոխվել, ոչինչ չէր պակսել, և կարելի էր ասել, որ այժմ աւելի կենդանի և ա-



ւելի խաղաղ կերպարանք էր ստացել: Եւ իրաւ, ի՞նչ էր կորցրել այդ միշտ-անբախտ ընտանիքը, ի՞նչ բանից էր զրկվել նա:—Ոչինչից:

Մասիսեանի Հարստութիւնը նրա ընտանիքի Համար մի երեւակայական ցնորք էր, որպէս նոյն իսկ «ոսկի աքաղաղի» գոյութիւնը: Ընտանիքը միայն լսել էր, թէ Հարստութիւն ունի, իսկ այժմ լսում էր, թէ այն Հարստութիւնը այլ ևս չը կայ: Մասիսեանի Հարստութիւնը առւտրական հրապարակի մի լոկ զարդ էր, նրա բարիքները չէին թափանցում ընտանեկան շրջանի մէջ, որ միշտ զուրկ էր կեանքի ամենահամեստ վայելչութիւններիցն անգամ: Եւ որովհետեւ ընտանիքը մասնակից չէր Հարստութեան վայելման մէջ, բնականաբար այժմ չէր կարող ցաւ գգալ նրա կորստեան համար: Հարստութիւնը պատկանում էր մի մարդու միայն և նրա հետ գերեզման մտաւ: Այդ մարդը «աղան» էր...

Բայց կար և մի ուրիշ պատճառ, որի մէջ Մասիսեանի ընտանիքը միխթարութիւն էր գտնում: Միքայէլի քաղցր վարմունքը, նրա անկեղծ անձնագոհութիւնը, նրա ջերմ կարեկցական սէրը բոլորովին մոռանալ տուեցին հասած դժբախտութիւնները: Միքայէլի մէջ գտնում էին ամենը, ինչ որ կորցրել էին:

Որքան երջանկութիւն է բերում ընտանի-

քի մէջ սէրը, միաբանութիւնը, ազատութիւնը, մանաւանդ երբ իշխում է նա տիրող բռնակալութիւնից յետոյ: Իսկ ջերմ — լուսապայծառ աւուր բերկրութիւնն է ազգում, երբ անցել էր բքաբեր փոթորիկը: Մասիսեանի ճնշված, տանջված և տարիներով մի ուրախ օր չը վայելած ընտանիքը, յանկարծ իրան մի նոր աշխարհի մէջ էր գտնում, երբ Միքայէլը մտցրեց այնտեղ կեանքի լոյսը և ջերմութիւնը: Այդ ընտանիքը, — ուր կինը բացի նրանից, որ կտրված էր արտաքին աշխարհից, այլ իր գերզաստանական նեղ շրջանի մէջ ևս՝ զարձեալ զուրկ էր տղամարդի յարակցութիւնից, — այժմ դեռ նոր էր առնում մարդկային վայելչութեան այն քաղցր համը, որ մատակարարում է նրան բնկերական կեանքը: Նա դեռ նոր էր հասկանում, որ երջանկութիւնը և բարօրութիւնը միայն դրամի մէջ չէ կայանում, դրամի, որի ժանգից ամբարված և անշարժ դրութեան մէջ թոյն է գոյանում, այլ՝ կայ և մի ուրիշ բան, որը երբ պակասում է, ընտանիկան օջախը դժոխքի է փոխարկվում: Հանգուցեալ աղալի օրերում այս տունը կտաւրեալ դժոխք էր. իսկ Միքայէլը մտցրեց այնտեղ այն կենսագործող զօրութիւնը, որ դժոխքը դրախտի է փոխում. դա էր — սէրը:

Անցաւ ամառը. տիրեց ձմեռը: Այդ երկու



եղանակները իրանց յատկութիւններով—ցըր-տութիւնով և ջերմութիւնով—կարծես, մի և նոյն բնական ներգործութիւնն են անուամար-դերի վրա, ինչ որ անում են առհասարակ բո-լոր մարմինների վրա: Վերջին դպրոցական ա-շակերտը գիտէ, որ ջերմութիւնը փափկացնում է և ընդարձակում է մարմինները, իսկ ցրտու-թիւնը խտացնում է և կուչ է բերում նրանց: Նոյնը պատահում է և մարդերի հետ տարվայ տաք և ցուրտ եղանակներում: Ամառը իր ջեր-մութիւնով ցրվում է և բաժանում է նրանց միմեանցից, իսկ ձմեռը մօտեցնում է, մի տեղ է հաւաքում և աւելի սերտ կերպով սեղմում է նրանց միմեանց հետ: Ձմեռը մարդկային ըն-կերական կեանքը աւելի ամբողջական կերպա-րանք է ստանում: Նոյնը լինում է և ընտա-նիքի մէջ: Դրսի ցուրտը ներս է մղում բնա-կիչներին սենեակների չորս պատերի մէջ և աւելի սեղմում է, կպցնում է նրանց միմեանց հետ: Յարաբերութիւնները շօշափում են մի-մեանց և առաջ է գալիս մի տեսակ շփումն: Եւ որպէս մինչև անգամ անշուշտ մարմինների միմեանց հետ շփվելուց և քսքսվելուց դուրս-նում է կրակ, այնպէս էլ կենդանի մարմին-ների սերտ յարաբերութիւնից առաջ է գալիս մի ուրիշ ջերմութիւն, որ կոչվում է սէր: Եւ այս էր պատճառը, որ տ. Մարիամի սենեակը,

որ այժմ ծառայում էր որպէս ընդունարան, շատ անգամ կենդանանում էր ուրախ և զուարթ խօսակցութիւններով, ուր հաւաքված էին լի-նում նրա աղջիկները, Միքայէլը և երբեմն ուրիշ հիւրեր:

Նունէն դեռ չէր հեռացել իր հայրենական տնից, այժմ նա գիւղից բերել էր տուել իր երկու զաւակներին, փոքրիկ Նարկեգին և Ռոստոմին: Այդ փոքրիկների թւում աւելացել էին երկու ուրիշ երեխաներ ևս՝ Մարգարիտը և Աւետիսը, որոնք Միքայէլի հօր եղբօր՝ Աւետ ապօր զաւակներն էին: Նրանց հայրը վաղուց մեռած էր, իսկ մայրը գիւղացի կնիկների սովորութեան համեմատ ուրիշ մարդու էր գը-նացել: Միքայէլը վեր էր առել իր մօտ որ-բերին պահելու և խնամելու համար, որպէս նրանց հայրը իրան պահել և մեծացրել էր, երբ ինքը ծնողներից որբ մնաց:

Տասն տարի կը լինէր, որ Մասիսեանների տունը երեխայ չէր տեսել, այժմ կրկէ՝ կենդա-նացաւ նա անմեղ մանուկների ուրախ ճլվլո-ցով: Տունը առանց երեխաների ամալի անա-պատի նման է, որ զուրկ է լինում նոր աճող և թարմ բոյսերից:

Մի անձն միայն պակաս էր, որ կը լրաց-նէր ընտանեկան երջանկութիւնը և դա էր Ստեփանը: Վերջին նամակներից երևում էր,



որ նա տակաւին չէ կարող գալ, այլ երկար կը մնայ արտասահմանում:

Հանգուցեալ աղայի աւերված գործերը համարեա կարգի էին դրված, որքան հնարաւոր էր և որքան կարելի էր: Միքայէլը բոլորովին թողեց այն բոլորը, ինչ որ արդէն գողացվել էր, ինչ որ յափշտակվել էր... «գերեզմանից մեռելը լետ չես բերի», ասում էր նա, և միանգամայն ապարդիւն էր համարում կորածի ետեւից ման գալը: Նա մտածում էր, թէ վաճառականութեան մէջ ինքը աւելի կարող էր վաստակել, քան թէ այն գումարը, որ սուղերում կեանք մաշելով և ժամանակ կորցնելով, կարելի էր լետ խել յափշտակողներից: Միայն նա աշխատեց ազատել կեղծ պարտատէրների ձեռքից Մասիսեանների տունը, այգին և մի քանի անշարժ կալուածքներ, մասամբ ապացուցանելով պարտատէրների ձեռքում գտնված թղթերի անվաւերականութիւնը, և մասամբ վճարելով նրանց պահանջը: Միքայէլի մօտ Հանգուցեալի կայքից առաջուց մնացել էր մի գումար Մօսկվայի առևտրական հաշիւներից և այդ գումարով նա թափեց նրանց անշարժ կալուածքները: Այժմ անբախտացած ընտանիքի ասրուստը ապահովված էր չափաւոր եկամուտով, որով կարող էր նա վարել բաւական հանգիստ և համեստ կեանք:

Մինչև այն օր Միքայէլը իրան մոռացել էր, նա իրան չէր տեսնում, որպէս մի մարդ, որ յափշտակված մի ընդհանուր գաղափարով, գործում է միայն հասարակաց շահերի համար, առանց մտածելու իր անձի վրա ևս, թէ ինքըն էլ մի փոքրիկ աշխարհ է, թէ ինքն էլ իր առանձին պէտքերը ու կարիքները ունի: Նա իր վիճակը այն աստիճան կապված էր տեսնում Մասիսեանների ընտանիքի ճակատագրի հետ, որ շատ բնական էր համարում իր անձնագոհւոթիւնը: «Նս պէտք է բաժանորդ լինեմ այս ընտանիքի անբախտութեանը, մտածում էր նա, մինչև ինչ կը յաջողվի բոլորովին վերականգնել նրա բախտաւորութիւնը:» Այդ բոլորի մէջ նրան առաջնորդում էր պարտականութեան մի սուրբ զգացմունք, թէ ինքը այն տան տղան է եղել, նրա օգը շնչել է, նրա հացով սնվել է, թէև այն մի կտոր հացը տուել էին նրան դառն տանջանքների զնով... Բայց ո՞վ էր տանջողը.— մի մարդ, որ այժմ չը կար... բացի նրանից, բոլոր միւսներն միշտ խնամել և միշտ սիրել են նրան, իսկ նոյն սէրը այժմ վառվեցաւ աւելի ջերմութեամբ և մոռանալ տուեց սև անցեալը...

Բայց կար և մի ուրիշ բան, որ Միքայէլին կապում էր այդ ընտանիքի հետ. նա վերջին ժամանակներում աւելի և աւելի սաստիկ կեր-



պով զգուժմ էր, թէ սիրում է Հռիփսիմէին, թէ առանց նրան ապրել չէ կարող և թէ նա կը բախտաւորացնէ իրան: Եւ մի և նոյն սէրը նկատում էր նա մանուկ օրիորդի կողմից: Բայց մինչև այն օր նրանց մէջ ոչ մի բերանացի խոստովանութիւն չէր եղել, թէ սիրում են միմեանց, միայն եղել էին խօսակցութեան մէջ միմեան ակնարկութիւններ, լուռ և իմաստալից ժպիտներ, աչքերի թափանցող հայեացքներ, յօնքերի խորհրդաւոր շարժումներ. որոնցով Հայաստանի աղջիկը աւելի որոշ կերպով կարողանում է յայտնել իր սրտի կրքերը, քան թէ լեզուով: Միքայէլը որքան էլ կըրթված լինէր, դարձեալ նրա մէջ մնացել էր շատ բան, որ թոյլ չէին տալիս նրան շեղվել ընդունված նախապաշարմունքներից և տեղական սովորութիւններին հակառակ ընթացք բռնել: Իսկ Հռիփսիմէն բոլորովին համոզված էր, թէ իր ձեռքի և սրտի մասին պէտք էր խօսել իր մօր հետ:

Մի առաւօտ նրա մօտ ներս մտաւ Հռիփսիմէն. դրսի ցրտի ազդեցութիւնից նրա թշերը կարմիր վարդի քնքոյշ գոյնն էին ստացել:

— Դու ասում էիր, որ շապիկներից մի քանիսի կօճակները կտրված են, եկայ, որ տանեմ, կարեմ, խօսեց նա, կանգնելով սենեակի դրան մօտ:

— Ահ, որքան անբաղաքավարի ես դու, Հռիփսիմէ, ասաց Միքայէլը մօտենալով նրան. — առաւօտեան, երբ մարդի մօտ են մտնում, առաջ բարևում են, յետոյ մօտենում են ձեռք են բռնում, յետոյ քէֆն են հարցնում, յետոյ մի քանի լաւ լաւ խօսքեր են ասում, ժպտում են, ծիծաղում են, և վերջը լալտնում են, թէ ինչու համար են եկել:

— Ես դրանք չեմ իմանում, ես եկայ շապիկները տանելու, պատասխանեց օրիորդը, աւելի կարմրելով:

— Հանաք եմ անում, Հռիփսիմէ, այսպէս աւելի լաւ է, աւելի պարզ և համեստ է. ես սիրում եմ պարզութիւնը, խօսեց Միքայէլը, բռնելով նրա երկու ձեռքից: — Բայց որքան հոգատար ես դու, Հռիփսիմէ, ես գիշերը ասեցի, թէ շապիկների կօճակները կտրված են, կարծում էի, կը մոռանաս մինչև առաւօտ:

— Ես մոռացկոտ չեմ...

Միքայէլը դուրս բերեց շապիկները, և տալով օրիորդին, ասաց՝

— Նս կուգէի, որ նստէիր այստեղ, իմ սենեակումը կարէիր:

— Ի՞նչու, կարծում ես, որ կը սխալվե՞ի կարի մէջ, և կօճակները իրանց տեղում չէ՞ին



լինի, և դ՞ուք պիտի ցոյց տաս ինձ, թէ որպէս պէտք էր կարել:

— Չէ, ես գիտեմ, որ դու շնորհալի աղջիկ ես, միայն ցանկանում եմ, որ այստեղ, իմ աչքերի առջև նստած, այնպէս կարես:

Օրիորդը առեց կարը և լուռ նստեց լուսամուտի մօտ:

— Բայց կը խնդրեմ, որ չը խանգարես ինձ, ասաց նա, սկսելով իր գործը:

— Չեմ խանգարի, միայն կը պատմեմ զանազան բաներ, որպէս զի չը ձանձրանաս:

— Երևի, դարձեալ քո ճանապարհորդութիւններից:

— Այդ հաճելի չէ՞ քեզ:

— Հաճելի է, բայց...

— Բայց ի՞նչ:

— Այնքան չէ գրաւում:

Միքայէլը մտածութեան մէջ ընկաւ:

— Ապա ի՞նչ կուզես, հարցրեց նա, — ուզում ես, որ հէքսթր ասեմ:

— Հէքսթր պառաւ կնիկներն են ասում:

— Կը պատմեմ, թէ ինչպէս եւրօպայում աղջիկները մարդի են գնում: Կամենում ես:

— Պատմի՛ր:

— Այնտեղ աղջիկները այստեղացոց նման ամաչկոտ չեն, որ տղամարդերից փախչեն, և որին սիրում են, իրանց սիրտը նրա առջև չը

բաց անեն: Այնտեղ աղջիկը ազատ է. սիրած տղի հետ խօսում է, ման է գալիս, պարում է և զանազան զուարճութեան տեղեր է գնում:

— Յետոյ նրանց մայրերը ի՞նչ են ասում, չեն արգելում, ընդհատեց օրիորդը Միքայէլի պատմութիւնը:

— Չեն արգելում, որովհետեւ գիտեն, որ իրանց աղջիկները այնքան լաւ կրթված են, որ մի վատ բան չեն անի, և թող են տալիս, որ աղջիկները իրանք տղին ճանաչեն, նրա բնաւորութիւնը, ուսումնասիրեն, — նրա սովորութիւնները, խելքը, բարքը, գիտութիւնը, պարապմունքը, մի խօսքով նրան վերաբերեալ ամեն բան գիտենան, որ չը սխալվեն իրանց ընտրութեան մէջ, արդեօք նա կարող էր լինել արժանաւոր ամուսին, թէ ոչ: Եւ երբ ամեն ինչ իրանց պահանջին համապատասխան են գտնում, այն ժամանակ միայն յայտնում են իրանց սէրը, որովհետեւ ամուսնութիւնը խիստ ծանր լուծ է, երբ կինը խաբվում է, լետոյ շատ և շատ անբախտ է լինում...

— Երևի, մի և նոյն քննութիւնները անում են և տղամարդիկը աղջիկների վերաբերութեամբ, հարցրեց Հռիփսիմէն խորհրդաւոր կերպով:

— Ի հարկէ անում են:

— Այդ լաւ է...



— Ես իմ պատմութիւնը վերջացրի, Հռիփ-սիմէ, Հիմա դու պատմիր, այստեղ աղջիկները ինչպէս են փեսայ ընտրում:

— Դու խօսիմանում ես...

— Մոռացել եմ, լաւ չեմ իմանում:

Մանկահասակ օրիորդը սաստիկ ներքին դժուարութեամբ պատասխանեց.

— Այստեղ աղջկան տղի մօտ չեն թողնում. եթէ պատահում է, որ նա մէկին սիրում է, պէտք է իր սէրը թաղցնի իր սրտում, ոչ ոքի յայտնելու իրաւունք չունի... և մինչև անգամ նոյն տղին, որին սիրում է...

— Ինչպէս դու... ասաց Միքայէլը, առնելով օրիորդի գողգոջուն ձեռները իր ականջի մէջ.

Նա ոչինչ չը պատասխանեց և նրա գեղեցիկ աչքերում երևացին արտասուքի խոշոր կաթիլները:

— Տա՛ր, ինչ էլ տա՛ր այն երկիրը, ուր աղջիկները ազատ են... ասաց նա, զսպելով իր խորին վրդովմունքը:

— Կը տանեմ, Հռիփսիմէ, երբ դու իմ կիներ կը լինես, պատասխանեց Միքայէլը ոչ սակաւ այլալուծեամբ: — Ասա՛, Համաձայն ես:

— Այո... պատասխանեց օրիորդը խուլ ձայնով:

Միքայէլը կամեցաւ գրկել նրան, բայց նա

թողեց չըվերջացրած կարը և շտապով դուրս վազեց նրա սենեակից:

Միքայէլը կանգնած մնաց, որպէս սառած և քար կտրած:

— Սարսափելի աղջիկ, ձայն արձակեց նա երկար ապշութիւնից յետոյ. — ամեն մի դէպքում երևում է նախապաշարմունք... մի գրկախառնութիւն, մի Համբոյր, մի գգուանք անգամ նա մեղք է Համարում, քանի որ տէրտէրը չէր կարդացել նրա գլխին պսակի ծխական խօսքերը:

Նոյն աւուր երեկոյեան պահուն, երբ դեռ նոր մայր էր մտել արեգակը, երբ սկսել էր դրսում ցուրտը սաստկանալ, Միքայէլը փակված էր իր սենեակում, և տխուր, մտայնող կերպով, մէկ-մէկ բերանն էր դնում ընչացքի նորաբոյս մազերը, և ատամներով կտրատում էր նրանց ծայրերը, կարծես, նրանք արգելում էին նրան խօսել և իր սրտի ցաւը արտայայտել: Իսկ սենեակի միւս կողմում նունէն ուղղում էր վառարանի մէջ դրած փայտերը, որ վատ էին վառվում և թացութիւնի ծխրտում էին, և սուլելով արձակում էին հտեսակ մեղամաղձական ձայն:

— Կրակը հառաչում է... խօսեց Նունէն սընահաստութեամբ. — դա վատ նշան է...

— Ի՞նչու, հարցրեց Միքայէլը, կարծես,



զարթնելով իր մտայուզութիւնից:

— Ձեմ իմանում, այսպէս ասում են, երբ կրակը տխուր ձայն է արձակում. ասում են լաց է լինում, պատասխանեց մանկահասակ կինը, չը հեռանալով վառարանի մօտից:

— Ամեն մի թարմ նիւթ, որի մէջ դեռ մընացել էին կեանքի նշույլներ, այսպէս տխուր ձայն է հանում, երբ մօտեցնում ես կրակին... նկատեց Միքայէլը:

— Ինչպէս քո սիրտը... ասաց Նուենէն խորհրդական ժպիտով:

— Եւ ինչպէս քո քրոջ՝ Հռիփսիմէի սիրտը... կրկնեց Միքայէլը:

— Հանաքը մի կողմը կենայ, ի՞նչու կռուեցաք մօրս հետ, հարցրեց Նուենէն, մօտենալով և նստելով Միքայէլի մօտ:

— Ձը կռուեցանք, բայց բաւական տաք կերպով վիճեցինք: Մի՞թէ մայրդ ինձանից վիրաւորվել է:

— Ձի վիրաւորվել... բայց սիրտը մի փոքր կոտրված է երևում...

— Դու ինքդ դատիր, Նուենէ, մի՞թէ կարելի է այս աստիճան նախապաշարված լինել: Մեր վիճաբանութիւնը այստեղից սկսվեց. ես յայտնեցի իմ սէրը, համբուրեցի մօրդ աջը և խնդրեցի Հռիփսիմէի ձեռքը: Նա ուրախացաւ, շատ ուրախացաւ, համբուրեց իմ ճակատը և

օրհնեց մեզ: Յետոյ, երբ խօսք եղաւ պսակի մասին, նա ասաց, թէ ես պէտք է մի քանի ամիս ևս սպասեմ, մինչև աղալի մահվան օրից մի տարի անց կը կենայ, որովհետև մարդիկ կը բամբասէին մեզ, եթէ սգաւոր տարին չը լրացրած, մենք հարսանիք կանէինք: Դրա վրա մենք վիճեցինք:

— Ի՞նչու ես շտապում:

— Դու էլ քո մօր խելքին ես, Նուենէ, դու չես իմանում իմ նպատակները. ես պէտք է կրկին վերադառնամ Մօսկվա, եթէ մի քանի ամիս ևս այստեղ կուշանամ, ես անպատճառ կը կորցնեմ իմ կլիենտները, որոնց համար զանազան վաճառականական գործեր էի կատարում, և ես կը զրկվեմ իմ շահերից, իմանում եմ: Բացի դրանից, ես Հռիփսիմէին պէտք է ինձ հետ վեր առնեմ. նրան պէտք է աշխարհ մտցնել, որ մի փոքր կրթվի, բան սորվի: Նա շատ լաւ աղջիկ է, շատ խելք ունի, բայց դեռ շատ բան պակասում է նրան օրինաւոր կին լինելու համար:

— Այս բոլորը չը յայտնեցիք մօրս:

— Ի՞նչպէս չը յայտնեցի, նա էլի իր ասածըն է ասում. «աղջիկս, եթէ ինձանից հեռացնես, ես ցաւից կը մեռնեմ» և ուրիշ այսուպիսի խօսքեր: Ես չեմ հասկանում, մի՞թէ լաւ կը լինի, որ պսակվեմ, թողնեմ և դնամ,



և տարիներով մնամ օտարութեան մէջ, որ-  
պէս անում են այդ մեր հայ վաճառականնե-  
րը:—Ես կը ցանկայի գիտենալ, թէ Հռիփսի-  
մէն ի՞նչ է մտածում, առաւօտից նրան չեմ  
տեսել:

—Նա այսօր սպանվածի պէս է, այս և այն  
անկիւնն է մտնում և լուռ լաց է լինում:

—Խեղճ աղջիկ:

Միքայէլի խօսքերը, կարծես, բաց արեցին  
Նունէի հին վերքերը, և նա բաւական զգալի  
ձայնով պատասխանեց.

—Այսպէս, սիրելի Միքայէլ, ծնողների  
նախապաշարմունքը շատ անգամ պատճառ է  
դառնում զաւակների անբախտութեանը: Մեր  
գերդաստանի վրա, կարծես, մի անէծք կայ,  
որ նրա որդիները երբէք բախտաւոր լինել  
կարող չեն: Մեծ քոյրս ինքն իրան խեղդեց...  
սխալ, որքան բարի, որքան սիրուն աղջիկ էր  
նա. նրա մահուան մէջ մի այնպիսի գաղտնիք  
կայ, որ անկարելի է առանց սարսափելու  
լսել... Իսկ իմ պատմութիւնը քեզ յայտնի է.  
ես ինչով եմ մեղաւոր, որ այժմ աշխարհը ինձ  
դատաւարտում է որպէս վատ կին: Իմ մայրը  
իսկապէս լաւ կին է. բայց ի՞նչ անես, նա  
անում է այն, ինչ որ տեսել է, ինչ որ սո-  
վորել է...

Խեղճ կինը ինքն սրտի հետ դուրս էր թափում

դառն վշտերը, նա իր կեանքում այնքան  
տանջել էր սև նախապաշարմունքից, որ նրա  
բոլոր ճնշող զօրութիւնը իր անձի վրա էր  
փորձել: Երբ ամեն ինչ ասաց, նա դարձաւ  
դէպի Միքայէլը այս խօսքերով.

—Դու անհոգ կաց, սիրելի Միքայէլ, ես  
կը գնամ մօրս մօտ և ամեն ինչ կը վերջա-  
ցնեմ, որպէս դու ցանկանում ես: Մենք, բո-  
լոր քոյրերս, անբախտ եղանք... դոնէ, թող  
Հռիփսիմէն բախտաւորվի...

Մի շաբաթից յետոյ Ե... քաղաքի եկեղեցի-  
ներից մէկի մէջ կատարվում էր պսակի  
խորհուրդ: Հռիփսիմէն և Միքայէլը ուրախ  
դէմքերով կանգնած էին սեղանի առջև: Մար-  
դերի շատ փոքր բազմութիւն ներկայ էր հան-  
դիսին: Պսակը վերջացաւ և հանդիսականները  
մէկ-մէկ մօտեցան և շնորհաւորեցին հարսին ու  
փեսային: Յետոյ փոքրիկ բազմութիւնը ժամի  
դրանը սպասող կառքերի մէջ նստած, դիմե-  
ցին դէպի Մասիսեանների տունը:

Նոյն գիշերը Միքայէլը ստացաւ Ստեփանից  
մի այնպիսի հեռագիր. «Շնորհաւորում եմ քո  
բախտաւորութիւնը. իմ հօր քանդված տունը  
քեզանով կրկին կեանք ստացաւ. այսուհետև  
դու կը լինես այդ բնտանիքի իսկական «Ո ս-  
կի աքաղաղը»:









15n. 46068P

am 2or

904

ՀՀ Ազգային գրադարան



NL0686158



